



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

✓ Lt.n  
315

1999

# ՄԻՐԶԱՅ ԵՒ ԱՆՆԱՅ

Վ Գ Բ Ա Յ Ի Ր

Ո. Գ. ԲԱՐԵՈՒՅԱՐԵԱՆՅ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ԵՍԲՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

1843



Զմիշտնիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

1876





ՅՖ. 318

4 315-60

Հայրենասէր Եղբայր Գ. Մ. Վ. Մ.

Ժամանակն, որ խոր ամենաճախ ժանիքներով աշխարհիս մէջ գտնուած ազգ եւ ազնիք ծախելով ոչնչութեան մէջ անցայտ արած է եւ կ'անէ տակաւին, երբէք չկարողացաւ եւ բնաւ չէ կարող ծախել առաքինեաց եւ դիւցազանց արարքներն. չէ կարող չնչէլ նոցա յաւերժական յիշատակներն եւ խրեանց դիակաց հետ 'ի խորս գերեզմանաց թաղել նոցա անմահ անուաներն: Քանզի ամենայն դարուց մէջ գտնուած են հայրենասիրութեամբ վառուած վեհ անձինք, որք առաքինեաց եւ դիւցազանց անուաներն եւ քաջագործութիւններն ոսկեղէն տառերով դրոշմել տուած են պատմութեանց եւ վիպասանութեանց էջերու մէջ, որք մինչեւ ցայսօր անջինջ մնացած են յաջորդ սերնդոց մէջ:

Ներկայ դարուս մէջ, Հայրենասէր Եղբայր, նոյն սուրբ նախասնձու ազգասիրութեան կրակն Չեր սրտի մէջ եւս վառուած կը տեսնուի, որով խնդրեցիք յինէն խնամախցի Միրզայի եւ Աննայի վիպական խնցքերն գրել, որք անտարակոյս եմ, թէ անհաճոյ պիտի չ'երեւին Հայ Հայրենեաց առտնին կենցաղն սիրող ազգայնոց:

Կը խոստովանիմ, որ Չեր այս խնդիրն իմ կարողութեանէս վեր էր, բայց առ Չեզ ունեցած եղբայրական սէրս կը պարտաւորէր զիս չ'խուսափիլ: Քանզի Չեր այս նպատակն յաւետ ընդհանուրի օգտին պէտք է ծառայէ, որով կ'ուզէք անցելոյն յիշատակն անկորուստ պահպանել, ներկայիս երիտասարդաց եւ օրիորդաց ամուսնական նշմարիտ սիրո:

օրինակ մի սուչ եւ սպագային զգուշութեան տիրար ըն-  
ծալել : Վասն որոյ սիս Չեր ներողամտութեան վերայ վշու-  
տանհանալով մեռնարկեցի եւ աւարտելով Չեզ կը նուիրեմ  
իրբեւ իմ երկասիրութեանս առաջին պտուղ :

Բայց , Հայրենասէր Եղբայր , թէեւ ներկայ դարուս մէջ  
մերազնեայ ուսումնասէրներէն ոմանք եւրոպական վիպա-  
սանութեանց մեւերն , ոներն եւ դարձուածներն կը սիրեն ,  
սակայն եւ ընտրեցի Հայաստանի ոմով գրել այս վիպասա-  
նութիւնն . որ թէեւ անշուք , բայց հայրենի մեւ եւ տի-  
պար կը կրէ :

Մոյն վիպասանութեան մէջ ակներեւ պէտք է տեսնէք ,  
որ սէրն կը խօսի , քան թէ շեզուն , զգացումն կը խօսի ,  
քան թէ բերանն , սիրուն ու հոգին քան թէ արիւն ու մար-  
մինն : Մոյն վիպասանութեան մէջ պէտք է պարզապէս  
տեսնէք , որ Միրզայի եւ Աննայի սէրն չ'մամիր այն երի-  
տասարդաց եւ օրտորդաց սիրոյն , որք յետ նշանախօսու-  
թեան առ ժամանակ մի զիրեար պատրելէն զկնի կը բա-  
ժանին կեղտ անուն թողլով հասարակութեան մէջ : Պէտք  
է տեսնէք որ Միրզայի եւ Աննայի նշանտուքի հիմն ժա-  
մանակիս նորանեւ եւ օտարոտի սովորութեանց նշանտուք-  
ներու պէս նիւթական շահուց եւ ակնկալութեանց վերայ  
չէր հաստատուած . այլ անկեղծ սիրոյ , փոխազարծ զգաց-  
մանց եւ համամիտ կամաց վերայ : Պէտք է տեսնէք , որ  
Միրզայի եւ Աննայի սպագայ միութեան եւ Իրջանկութեան  
կապն մեծագումար ուկիներով եւ ծաւրագին օժիտներով  
կապուած չէր , որովք շատ անգամ ամուսնութեան երջան-  
կութիւնն թշուառութեան կը փոխուի , խէթ եւ ատեղու-  
թիւն կը տիրեն , սէրն կը տարագրի ընտանեկան շարկէն ,  
անհաւատարմութիւնն մտտ կը գտնէ արձակ համարձակ

եւ անբարոյականութիւնն կը տապալէ ընտանեկան սուրբ  
չինուածն . այլ կապուած էր այն մեծ եւ եղեմական սիրով ,  
որովք գերդատանք կը սրբանան , ընկերականութիւնն  
կ'ազնուանայ եւ ազգ ու ազինք կը վերականգնին :

Հայրենասէր Եղբայր , այս գործոց մէջ կատարուած իր-  
դութիւնքն այնքան նշմարիտ են , որ իրական պատմութեան  
տիպ կը կրեն . բայց որովհետեւ Հայաստանի չինական կե-  
նաց , սովորութեանց եւ ներկայ շարակից անցից նկարա-  
գիրներ կան , ուստի շատ համարեցի վիպասանութիւն ա-  
նուանել :


Մոյն վիպասանութեան մէջ ջանացի ամփոփել քաղհա-  
նաւորաց , գուղանաւորաց , խտասհարաց , հնձողաց , հար-  
սանեաց , սիրոյ , հայրենեաց եւ բարեկեղանի երգեր եւս ,  
որք ոչ միայն Միրզայի եւ Աննայի վէպին վայց կը տան ,  
այլ եւ խիստ հետաքրքրաշարժ պէտք է լինին մեր սիրելի  
հեռաւոր ազգայնոց :

Արդ՝ կը յուսամ թէ սիրով կ'ընդունիք իմ վիպասանա-  
կան երախայրիքն եւ կ'որոնէք դորա մէջ ոչ եթէ ճարտա-  
րահիւս մեւեր եւ քերթուածներ , այլ հայրենի սովորութիւն-  
ներ , հայրենի յիշատակներ , հայրենի նահապետական վա-  
րուց բարուց նկարագիրներ եւ հայկական ընտանեկան կեն-  
ցաղի պատկերներ , որք անշուշտ քաղցր են ամեն Հայու-  
թիւն եւ Հայաստան սիրողաց համար . որով

Մնամ Գոյղ

Ո . Գ . ԲԱՐԵՍԻՈՒՏԵՐԵԱՆԾ

Ի Ղարաբաղ :



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ծագլահասակ Երևուրդի փ պիտուր յիշարարներն :

Աշնան վերջին օրերն են, խաչենու գաւառին Խնածախ դիւրն տխուր տեսարան կը ներկայացնէ : Կը տեսնուէին միայն սզալի գէմքեր, տխուր տեսարաններ և բարոյական ցառոց պատկերներ : Բոլոր բնակչաց գիմաց վերայ սև սզոյ խորաթափանց հետքեր կը նշմարուին, մեծաց և փոքունց աչաց մէջ դեռ արտասուաց կայլակներն կը փայլին : Շինին վարի կողման մօտ մի տան միջէն լալկան կանանց աղիողորմ և ներդաշնակ սզոյ ձայնն տակաւին կը լսուի, որով լսողաց գլխոյն մազերն ցլեց ցլեց կը սնկուին և ամբողջ մարմիններն կը սրսուան :

Գիւղի հարաւային կողմն երկու ճանապարհաց մէջ տեղ սուրանկին կազմող տերեւաթափ այգի մի կ'երևի, որոյ վերի կողմն մի ծառի տակ՝ թափուած տերեւոց վերայ նստած քսան տարեկան ծաղկահասակ օրիորդ մի կը տեսնուի, որ իւր գլուխն աջ ուսին վերայ ծռած, աջ ձեռքն ծնօտին վերայ դրած, արտասուալի աչքերն տխուր առարկայի մի վերայ յառած, կը սզայ անմիթիթար : Իւր ձախ ձեռքն նուիրական թաշկինակ մի բռնած է, որով մերթ ընդ մերթ իւր աղբերակունքներէն թափուող արտասուղն կը սրբէ, և մերթ ընդ մերթ ամբողջ թաշկինակն բռն մէջ ժողովելով՝ իւր ձախ ծնկան վերայ կը յենու :

Օրիորդին թուխ մազերն ցիրուցան մեղմ անձրեւէն կը շաղօտին : Սպիտակափայլ ճակատին նուրբ գիծերն արտամութենէ այլլայլուած են : Քաջաթուխ և սուր արականունքներով շրջապատուած՝ նախշուն և մեծ աչքերն շատ արտասուց քամեւէն կարմրուտած և վշտահար են : Հեծկլտանք և հառաչանք միայն լսելի կը լինին և բոլոր գէմքն աննկարագրելի տխրութեան ստուերներով մածուած է :

Ահա օրիորդին կերպարանաց արտաքին երևոյթն է, զոր ամեն տեսողք կը նշմարեն. բայց թափանցենք նորա սրտի և հոգւոյ խորքն: Ի՞նչ բարոյական աւերակներ, և ողբալի կործանումներ, քայքայուած շէնքեր և մեծամեծ փլատակներ. ի՞նչ անտանելի ցաւեր, մեծամեծ կսկիծներ և ի՞նչ անբուժելի վէրքեր: Անդ կը տեսնուի սիրոյ մեծագոյն հրդեհ մի, և սորա բազմաձաւալ բոցերով խորոված սիրա, դալկահասար միտք, և ճենճերեալ հոգի:

Ո՛հ, եթէ հնար լինէր մտանել օրիորդին հոգւոյն տաճարն, այն տեղ կը տեսնէիր նոր թաղուած քսան և հինգ տարեկան պարթեալուս մի առաքինի պատանուոյ դերեզմանն: Այո՛, այն տեղ կը տեսնէիր անմուաց յիշողութեան կրակով լի խնկաման մի, որով սիրոյ զգացմանց անուշահոտութիւնն կը բուրբէր: Այո՛, կը տեսնէիր նոյն դերեզմանի վերայ տապանաբար մի և նորա վերայ սիրոյ զրջաւ քանդակուած սոյն համաբօս արձանադիրն.

«Աստ հանդիւ ընդ հոգւոյս  
Հոգի Միրզայ սիրելոցս»:

Եւ երբ այս ամենը տեսնէիր, այնուհետեւ դիւրաւ կը համոզուէիր, որ սոյն օրիորդն միայնակ՝ բոլոր գիւղացւոց չափ վիշա, ցաւ, հեծութիւն և կսկիծ ունի:

Ի՞նչ էր արդեօք ողորմելի օրիորդին այսչափ տրամութեան, սգոյ և արտասուաց շարժախիթն:

Նորա նստած այդէն քարընկէց հեռի գերեզմանատուն մի կար, ուր շիրիմ մի կ'երևէր առանց տապանաբարի: Նոյն գերեզմանի թուրք եղած հողէն և նոր դրուած քարերէն յայտնապէս կ'իմացուէր, որ հանդուցեալն նոր թաղուած է: Շիրմին երկայնութենէն կ'իմացուէր, որ նոր թաղուածն բարձրահասակ հանգուցելոյ շիրմն է. իսկ սիրուած ծաղկիներէն և գլխոյն կողմն դրուած ծաղկահաչիս պսակէն դիւրաւ կ'ենթադրուէր, որ այն տապանին մէջ ամփոփեալն նշանուած և ամուսնութեան պսակէն զրկուած երիտասարդ է:

Գերեզմանատան չորս կողմնին բայց են, շիրմն օրիորդին նրա-

տած տեղէն կ'երևի, ըստ որում նորա նստած տեղն գերեզմանատունէն փոքր ինչ բարձր է: Սգաւոր կոյնն իւր արտասուալի նայուածքն ծաղկապսակ գերեզմանէն ամենեկն չ'հեռացընէր: Վասն զի այն տեղ ամենազօր մաղնիս մի կայ, որ բուռն զօրութեամբ օրիորդին աչքերն սրտին հետ առ ինքն կը քաշէ: Բայց թշուառուհին որչափ կը նայի, նոյնչափ կ'աւելանան իւր վերաւոր սրտի ցաւերն, կսկիծներն և մորմոքներն:

Այնպէս կ'երևէր թէ այդուն մէն մի ծառերն և տունկերն մի մի ցաւալի և տրամախիթ յիշատակներ կը ձղէին օրիորդին մտաց մէջ: Վասն զի նա ծառէ ծառ և թուփէ թուփ անշնչալու ժամանակ տեղ տեղ վայրելի մի կանգնելով՝ ողորմելի շարժմամբ կ'որորէր իւր գլուխն:

Այն ինչ նա այսպէս լալով և արտասուելով բոլոր այդին ման կը գայ, և հին յիշատակներով զգածուած կը տառապի և մորմոքուելով կը սոգայ, և ահա բարձրահասակ կ'ին մի, նոյնպէս տրամութեամբ զգածուած, այդուոյն դունէն ներս կը մտնէ և ուղղակի օրիորդին մօտ կ'երթայ, և զնա այս վիճակին մէջ դանելով սիրան կը ճմլուի: Գթսթ կ'ինն ուրիշ հարբ չ'դտնելով՝ զօրիորդն կը գրկէ, նորա պարանոցաւ կը փարի, և նորա արտասուածոր երեսներն համբուրելէն յետոյ, կը ջանայ այսպիսի համոզկեր խօսքերով մխիթարել:

— Աննայ, սիրուն զուակս, մի այդքան լար և սգար. Աստուծոյ կամքն օրհնեալ եղիցի. նա այսպէս կամեցած է, և դու ևս Նորա սուրբ կամեցողութիւնն օրհնէ և յարգէ: Աննայ, քեզ մատաղ, զՆԱ վերջին անգամ տեսնելդ քեզ համար մեծ մխիթարութիւն համարի, և Աստուծոյ լիաբերան փառք տալով սիրփութիւր ցաւերէդ: Հերիք լաս, աղջիկս, դուցէ այս էր քո ճակատագիրն. եկ տուն երթանք, զուակս, եկ, երթանք տուն:

— Մայր իմ, — կը պատասխանէ օրիորդն իւր ձօր փարելով — միշտ յարգած եմ և կը յարգեմ Աստուծոյ ամենաբարի կամքն. ի բոլոր սրտէ կ'օրհնեմ Նորա օրհնեալ կամեցողութիւնն. սիրով կ'ընդունիմ Նորա յուղարկած ցաւերն, վշտերն և դառն կսկիծներն. կը հնազանդիմ սև ճակատագրիս, և բնաւ չեմ գան-

դատիլ բաղդէս : Սակայն , մայր իմ , — ցառոց սաստկութենէն հատկեալ ձայնիւ կը յաւելցընէ նա թոյլ մարմնով իւր մօր ուսին վերայ յենած — . Աւագ , մայր իմ , բնաւ չ'եմ կարող միթիթարուիլ և հանդարտիլ որ և իցէ համոզումներով , բնաւ չ'եմ կարող չ'ափսոսալ , չ'արտմիլ , չ'լալ և չ'սղալ : Ասան զի յիշողութիւնս անքուն է . երեակայութիւնս միշտ ՆՈՐԱ վերայ յառուած և հոգիս ՆՈՐԱ սիրով վառուած : Մայր իմ , եթէ կարող ես , հրամայէ անմոռաց յիշողութեանս , որ յաւիտեան մոռանայ զՆԱ . պատուիրէ երեակայութեանս , որ բոլորովին հանդարտի . սաստէ դիւրագղած հոգւոյս և սրտիս , որ ՆՈՐԱ սիրոյ բոցերով այլ ևս չ'ձենձերուին . յանդիմանէ աղբերակունք դարձած աչքերս , որ այլ այսուհետև արտասուք չ'թափեն . և դուցէ այսուհետև կը հանդարտիմ , և այլ ևս չ'եմ սղար :

Փոքր ինչ լուծիւն կը տիրէ . մայրն այս խօսքերն լսելով ամեն բան կը մոռանայ , խրատ , համոզում և աղաչանք , և կ'սկսի դառն արտասուօք լալ ամեն կողմանէ յուսահատ : Իսկ օրիորդն տեսնելով , որ իւր մայրն սաստիկ վշտահար եղաւ , արտասուքն կը խօսնէ նորա արտասուաց հետ՝ ասելով .


— Ներէ ինձ , մայր իմ , ներէ ինձ , որ սրտիս ցաւէն մղուեցայ զձեզ \* իս ցաւեցընել : Արի տուն երթանք , մայր իմ , այլ կը հնազանդիմ ձեզ : Մօր ձեռքէն կը բռնէ , վերջին անգամ դերեզմանին վերայ տխուր նայուածք մի կը ձգէ և լուռ ու մունջ տուն կը դառնան :

Գիշերուան ժամն եօթն է . ամեն կողմ թանձր մառախուղ պատած է . անձրևն մեղմագին կը ցօղէ . զիւղին մէջ ամենայն որքնացած է , միայն թշուառ օրիորդն դեռ արթուն է իւր հագուստներով անկողնոյ մէջ նստած , և վշտահար մտածմունքներով հարիւրաւոր յիշատակներ կ'արթննան մտաց մէջ : Քունն փախտաւկան հալածուած է օրիորդին երեք օրուան անքուն աչքերէն : Երեակայութիւնն շիրմին մէջ ամփոփուած պատանին կենդանի կը պատկերացընէ , դողցէս Նորա հետ պարտէզներու մէջ ծաղիկներ կը ժողովէ , արտերու մէջ կը խաղայ , բուրաստաններու մէջ ծաղկեայ պատկեր կը փոխանակէ , աղբերաց վերայ նստած Նորա

հետ կ'ասէ , կը խօսի , պաղոց ընծայներ և ծաղիկեփունջ նուէրներ կը տայ և կ'առնու : Սիրոյ տեղ , սէր . և զղայմանց տեղ , զղացում կը փոխանակէ :

Աերջապէս ցաւալի օրիորդն երեակայութեան և յիշողութեան այսպիսի դառն և միանգամայն քաղցր երազներով յափշտակուած , աննինջ կը յարատեւէ : Այրիկեաններն յաջորդաբար կը սահնին , ժամերն անզղալբար միմեանց կը յաջորդուին , պարզ արշալոյսն կը ծագի , սղաւորն դարձեալ այդին կը փութայ և իւր արտասուալի աչքերն վերստին իւր սղոյ առարկայ դերեզմանին յառած կ'ողբայ այսպէս .

Էն՛ ինչ օր էր , ա՛խ , երբ այս տեղ մին մինու<sup>2</sup> տեսանք ,  
 Ձեռք ձեռքի բռնած մի տեղ<sup>3</sup> այս պախճան մտանք ,  
 Ծաղիկներ քաղցինք , էս ծառի տակ նստանք ,  
 Պսակներ հիւսեցինք մին մինու գլխի դրանք<sup>4</sup> ,  
 Բա՛ էլ ինձ նմանին տէրն ինչպէս տաղ անի<sup>5</sup> ,  
 Երբ ինքն պախճում , քեզ դերեզմանում պենի :  
 Ընբա՛կ<sup>6</sup> էն օրին , երբ կը գայիր ծմակից ,  
 Շուքդ աղբիւրին քցեցիր<sup>7</sup> էն քարին գլխից ,  
 Քեզ դանելու համար շուարեցայ ման դալից  
 Յետոյ երեկոյս էն քարին ետևից .  
 Բա՛ էլ ինձ նմանին տէրն ինչպէս տաղ անի ,  
 Երբ ինքն պախճում , քեզ դերեզմանում տեսնի :  
 Ա՛խ , էն ինչ սըհաթ<sup>8</sup> էր , որ քո նշանի մոմերն ,  
 Զուխտակ վառած ձեռքս տուաւ քո մերն<sup>9</sup> ,  
 Ամեն կողմից լսեցինք « շնորհատոր նշան » բառերն ,  
 Մենք էն օրից ուխտեցինք սուրբ պահել մեր սէրն .  
 Բա՛ էլ ինձ նմանին տէրն ինչպէս տաղ անի ,  
 Երբ ինքն պախճում , քեզ դերեզմանում տեսնի :




1 Էն . Այն : 2 Մէն քուն . Միմեանց : 3 Մէ քեզ . Միատեղ :  
 4 Գրանտ . Գրեցիք : 5 Տաղ անի . Լուել . չ'լալ : 6 Ընբակ . Երբ :  
 7 Գցել . Զգել : 8 Սըհաթ . Ժամ : 9 Մեր . Մայր :

Էն ինչ օր էր, վերջին անգամ մեր տուն եկիր,  
 «Մնաս բարով» ասելով զնացիր Իկտիր,  
 Սուրբ Էջմիածնից ինձ գրեցիր մի գիր,  
 «Աննայ, զիրս ինձնից քեզ ամանաթ, լաւ պահիր».  
 Էլ ինձ նմանին տէրն ինչպէս տաղ անի,  
 Երբ ինքն պախճում քեզ գերեզմանում տեսնի:  
 Ըներակ էն օրին, որ ձիւղ վերայ ծուռ նստած,  
 Սուրբ կախած, փափախոյ կոտրած, պեխոյ ոլորած,  
 Ճէպիդ մին տանձով լիք, միւսն ինձորով հասած,  
 Գողս լցրիւր չափարին<sup>10</sup> զլիւից ձիւցդ ծուռած.  
 Բա՛, էլ ինձ նմանին տէրն ինչպէս տաղ անի,  
 Երբ ինքն պախճում, քեզ գերեզմանում տեսնի:  
 Սչքիցս արիւն կաթեց զիշեր ցերեկ լալով,  
 Սիրտս, թորս խորոված դարձան քո սիրոյ կրակով,  
 Լողմանն էլ գայ, չի սաղանալ<sup>11</sup> իմ ցաւս դեղով,  
 Հոգիս տապակուտծ է ջիկեարիս<sup>12</sup> եղով.  
 Բա՛, ինձ նմանին տէրն էլ ինչպէս տաղ անի,  
 Երբ ինքն պախճում, քեզ գերեզմանում տեսնի:  
 Ո՛հ քո սիրտը դնամ աճապ<sup>13</sup>, որ քո նշանն<sup>14</sup> չի տեսնեմ,  
 Թէ որ եղբերն գնամ, քո պատկերն կը տեսնեմ,  
 Թէ որ մեր տուն գնամ, ամանաթներդ կը տեսնեմ,  
 Թէ որ այս տեղ գամ, ա՛խ, գերեզմանդ կը տեսնեմ.  
 «Քո գերեզմանն, Միրզայ, միշտ իմ հողոյս մէջ ա՛<sup>15</sup>,  
 «Քո Աննայի հողին էլ քո գերեզմաննի մէջ ա՛:

Մի քանի օրէն յետոյ Միրզայի գերեզմանին կից ուրիշ նոր  
 գերեզման մի ևս տեսնուեցաւ:

10 Զոփար. Յանկապատ: 11 Սողանալ. Առողջանալ: 12 Զի-  
 կար. Թորքերն: 13 Աճապ. Արդեօք: 14 Նշան. Յիշատակներն:  
 15 Ա. է:



ՊԼՈՒՆ Ա.

ԽՆԱԾԱԽ ԳԻՒՂՆ

Մինեաց աշխարհին Շուշի կոչուած բերդաքաղաքին հիւսիսային  
 կողմն երեք ժամ հեռաւորութեամբ փոքրիկ բլրակի մի վերայ  
 վաթսուն տունէ բաղկացեալ Հայ բնակիչներով զիւղ մի կայ  
 Խնածախ անուամբ:

Սոյն զիւղին արևելեան և հարաւային կողմերն տարածուած են  
 գեղեցիկ դաշտեր և ձորեր, աղբիւրներ ու առուակներ, տեղ  
 տեղ փոքրիկ բլրակներ, թուփ թուփ անտառակներ և միայնակ  
 բուսած պտղատու և անպտուղ ծառեր, որք զիղին տակէն սկսեալ  
 հետ զհետէ դառ 'ի վայր իջանելով զուարճալի տեսարան կը ձե-  
 ւացընեն: Հիւսիսային կողմանէ շինին մօտէն կը բարձրանան եր-  
 կու սեպաձև դէմ հանդիման կանգնած սարեր, որոց միոյն անունն  
 էլիսա է, իսկ միւսին Ծակ քար: Այս երկու լեռանց միջէն  
 կ'անցնի Խնածախէն Պալլուճայ և բոլոր Խաչենու գաւառն եր-  
 թալու ճանապարհն: Իսկ արևմտեան կողմանէ զիւղին վերի ծայ-  
 րէն սկսեալ գառ 'ի վեր կը բարձրանան ուրիշ մեծ սարեր, որք  
 զարգարուած են կաղնի, թեղի, հացի, վայրենի տանձի, խնձո-  
 ըի, ընկուզի, զղեարի, և ուրիշ շատ տեսակ ծառերով, քաղց-  
 րահամ աղբիւրներով և ջրվէժներով, որք օձապտոյտ ձորոց մի-  
 ջէն դէպ 'ի արևելք սահելով գետակունքներ կը կազմուին, և  
 որոց մէջ կը լողան քանի մի տեսակ համբաւաւոր ձկնուք և ո-  
 բով կ'դառնան շատ ջրաղացներ, կը ջրուին այգիներ, պարտէզ-  
 ներ և ցանքեր:

Վերոյիշեալ լեռանց մէջ կը գտնուին եղջերու, եզնիկ, վայ-  
 րենի այծ, խոզ, փասեան, կաքաւ, լորամարդի և ուրիշ որսա-  
 լու շատ կենդանիք: Ար գտնուին նաև արջ, գայլ, աղուես, կուզ  
 և այլն կենդանիք:

Խնածախ զիւղն բաց 'ի հեռաւոր աղբիւրներէ, ունի նաև եր-

կու պատուական աղբիւրներ, որոց մին Ծակ քարին ստորոտէն կը բղխի և Մեծ աղբիւր կ'անուանի. իսկ միւսն Էլեասին ստորոտէն՝ և Փոքր աղբիւր կը կոչուի: Այս աղբիւրներն ապառած քարէ կը բղխին, սպարզ և արծաթափայլ են, բայց Փոքրին ջուրն աւելի թեթև և առողջարար լինելուն համար՝ համարեալ թէ հիւանդացողներէն շատերն Փոքրին ջուրէն կը խմեն շուտ առողջանալու յուսով:

Գիւղէն չորս ժամ հեռաւորութեամբ կը տեսնուին արևելեան հիւսիսէն արևմտեան հարաւ ձգուած լեռնագօտի, որոց շղթային մէջ տեղն զլուին հպարտ հպարտ անկած և արձանացած է Բողբոսան կոչուած լեռուն: Սոյն լեռանց զառ ՚ի վայրն վերջացած տեղէն սրընթաց կը վաղէ կառկառ գետակն. և սոյն գետակն է, որ կը զատէ Դասէն դաւառն Աւարանդայ գաւառէն:

Խնածախ գիւղի սահմաններն են արևելքէն կառկառ գետակն, հարաւէն՝ Գրաղետի բղխեալ ակունքներէն սկսեալ գետ ՚ի վայր մինչև Փահլուլ գիւղի Որոմնաբլուր (Բիւռուլթողբլուր) անուամբ քարաթումբն, որոյ տակէն սահմանն ուղղակի յիշեալ Գրաղետակէն Փահլուլի ջուրն կտրելով և նոյն ջրեղերն ՚ի վայր մինչև կառկառին խառնուած տեղն: Հիւսիսէն Պալլուճայ գիւղի գետակն. իսկ արևմուտքէն՝ մինչև աչաց տեսութիւնն կը տարածուին բարձրագագաթ սարեր:

Այս գիւղի ընտանի կենդանիքն են, գոմէշ, եզ, կով, այծ, ոչխար, խոզ, ձի և էշ. իսկ բերքերն են ցորեն, գարի, դարնանի, հաճար, կորեկ, կտաւհատ, սորեկ, բակլայ, լուբիայ, խաշխաշ, տանձ, խնձոր, կեռաս, տամն, սալոր, թութ և այլն:

Ինչպէս Արարաբաղու միւս գիւղորեից տուներն, նոյնպէս Խնածախ գիւղի տուներն մեծ մասամբ գետնափոր, ստորերկրեայ և հետեւեալ ձևերով շինուած են:

Հինգ կանդուն խորութեամբ, տասն և ութ կանդուն երկայնութեամբ և տասն և ութ կանդուն լայնութեամբ քառակուսի փորուած են ստփորական տանց բակերն, որոց ոմանց չորս պատերն քարուկիր հիւսուած են, իսկ ոմանց ոչ: Բակերու չորս անկիւններէն մօտ չորս տափակ քարերու վերայ հաստատուած են չորս

լայնաճակատ, հաստ և վերի կողմերն կոնաձև տաշուած փայտեայ սիւներ, որք կոնաձև կողմանէ սիւնէ սիւն և պատէ պատ ամրապնդուած են զեղեցկատաշ յենարաններով: Չորս սեանց զլուսներն երկօրեայ լուսնեկի միջի ձևին նման կարակնաձև հանուած, և նոյն հանուած տեղերն դրուած են երկու հասա, կեղևեալ և անտաշ գերաններ, որոց երկու ծայրերն ճակատ ճակախ կանդնած սեանց վերայէն անցանելով՝ վերի պատից վերայ հաստատուած են, իսկ երկուքն՝ վարի պատից: Գերանաց վերի և վարի ծայրից մօտ գերանէ գերան ձգուած են երկու զոյգ և ջուխտակ փայտեր, սոցա վերայ ևս յիշեալ գերաններէն փոքր ինչ բարակ երկու գերաններ, որք տեղական բարբառով կ'ստուին քերանեղբայր: Գերանեղբարց վերայ դարձեալ ձգուած են զոյգ զոյգ փայտեր, զորս Գրաղետի կ'անուանեն, և ջուխտակաց վերայ ըստ առաջնոյն: Սոյն միմեանց վերայ շարուած գերաններն չորս կողմանէ հետզհետէ կոնաձև կը բարձրանան, որոց ամենուն վերայ շինուած է մի երդիկ, և երդիկին վերայ երկու խաչաձև փայտեր բեւուած: Գերանաց գրսի կողմէն չորս պատերէն սկսեալ մինչև երդիկին ծայրն խիտ առ խիտ ձեղնափայտեր շարուած են, ձեղնափայտից վերայ բաւական թանձրութեամբ փուշ, փշոց վերայ խողան և խողանաց վերայ լցուած են տանց մէջէն ելած բուրջ հողերն:

Վերի նկարադրութենէն յայտնի է թէ այս տուներն առանց պատահանաց և լուսամտի են, միայն թէ մի մի դուռն ունին, որ տեղէն կը մանեն և կ'երնեն տնեցիք, և մի մի երդիկ, որ տեղէն կ'երնեն տանց մէջ վառուած կրակաց ծուխերն: Սակայն տանց չորս պատերու մէջ տեղ տեղ պահարաններ շինուած են, որոց մէջ կը զետեղուին կահ և կարասիք և մանր գործիւնք:

Տանց դրանց վերայ շինուած են զեղեցիկ սրահներ: Լայնութենէ լայնութիւն պատէ պատ ձգուած են երեք նոյնանման սեանց վերայ մի մի գերաններ, (ոմանց տաշուած, իսկ ոմանց անտաշ) գերանաց վերայ փայտամած և փայտամածներու վերայ ծածկուած տանց նման:

Սոյն մանր պարադաներն նկարադրելով մեր նպատակն է զա-

բարբառու բոլոր գիւղորէից տանց վերայ ճիշտ գաղափար տալ, և հասկացընել, որ սոյն պարզ, դետնափոր և անպաճոյճ տանց մէջ կը յարատեան ցարդ նահապետական քաղցր կեանք, համեստ պարզութիւն, բնական առաքինութիւն և միանդամայն հովուական անմեղ կենցաղավարութիւն:

Սոյն փոքրիկ գիւղի մէջ քարուկիր և կամարակապ եկեղեցի մի շինուած է յատուկ ժողովրդեան աշխատութեամբ:

Չ'մտանանք ասելու թէ գիւղի բնակիչք մեծ մասամբ ցորեն-նագոյն, քաջառողջ, պնդակազմ և ուժեղ են, թէ արական սեռն և թէ իգական: Ասան զի օդն առողջարար է, ջուրն թեթեւ, կերակուրներն նահապետական: Թող իւրաքանչիւր տան առաջքն լաւ մշակուած այգիներն, պարտէզներն, շարականոց անկուած ծառերն և շինամիջէն վազող ջուրերն, որոյք միշտ կը գուարճանան բնակիչք:

Այս գիւղի մէջ ծնած և սնած են Միրզան և Անան, որք անդակից և հասակակից են սոյն վիպասանութիւնն գրողին:

ԳԼՈՒԽ Բ.

ՄԻՐՁԱՅ ԵՒ ԱՆՆԱՅ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՁՄԻՄԵԱՆՍ ԿԸ ՏԵՄԵՆՆ

1847 թուականն է, մարտի քսանն, օդն պարզ և առատան գեղաճիճաղ է. գարնանային աւետարեբ արեգակն Քեաթուկայ սարին ետեէն հանց իւր սքանչելի գէմքն և իւր քաղցր ճառագայթներով ողջունեց Ղարաբաղու սարերն ու ձորերն, գաշտերն և բլուրներն: Բնութիւնն համօրէն ցնծութեան կերտարանք ունի: Ասան զի գարնան դունակն կը բացուէր, սևակոյտ ամպերն իւրեանց փոթորկալից ձիւներն կենդանարար անձրեւի կը փոխէին,

ցրտաշունչ հողմերն քաղցրասիւք զեփուներու, առաւօտեան սառնացոյցիչ եղամն սննդարար շողոց տեղի կը տար, լեռներն և բլուրներն իբրև վերակ ծածկող ձիւներն ջուր կը դառնային, գետակներու և առուակներու երեսներն միապաղաղ սալացեալ սառններն կը հալուէին: Մերկացեալ անտառք և այդիք նորափթիթ տերեւներով կը զարգարուէին, անշուք պարտէզներն և դաշտերն կը ծաղկէին և բացուելով կը փայլէին. և վերջապէս ձմրան սաստիկ բռնութենէն որջերու, ձերպերու և քարայրերու մէջ արգելեալ անասունք ազտութեան հրաւեր ընդունած բանտարգելոց պէս դուրս վազելով կ'ընկնէին ամեն կողմ՝ երթալ, վազել, սառանիլ, ոստոստել և աղաղակներով օդն լնթացընել:

Արդէն Խնածախու փոքր աղայք և աղջկունք՝ ի միասին ելած էին ծաղիկներ ժողովելու, յորոց ոմանք վերի աղբիւրի ձորն, ոմանք վարի, իսկ ոմանք վարի գերեզմանատան շրջակայքն, ուր երկու երկու, երեք երեք ցրուած՝ ծաղկանց անուշահոտներն և գեղեցկագոյներն կը հաւաքէին միմեանց հետ ասելով, խօսելով և մանկական թրթրակ լեզուներով մանր երգեր երգելով: Ամենէն վերջն, նոյնպէս ծաղիկ հաւաքելու, կ'ելնէ տասն և հինգ տարեկան պատանի մի՝ սքանչելի կազմուածքով, որոյ նոր լուացած կլորակ գլխոյն գեղեցիկ սանտրուած թուխ մազերն սև զգակին ետեւի կողմէն կախուած մեղմ հովէն կը ծածանին իւր քրնքու շարանոցին աջ ու ձախ կողմերն: Իսկ առաջի կողմէն տղայական անդուշտութենէ բաժանուած երկու փունջ գիսակներն իւր լայն և սպիտակ ճակատին չորս կողմն դուրգուրալով կը ծփային: Թուխ թուխ յոնքերով և վայելուչ արտասնունքներով շրջապատուած, նախշուն և քաղցրահայեաց աչքերն բիւրեղն պէս կը փայլին, լեցուն այտերն և կարմրորակ շրթունքներն վարդի նման կը փայլին:

Նոյնպէս վերի թաղէն տասն տարեկան օրիորդ մի տունէն միայնակ ելած իւրեանց պարտէզն ծաղիկ ժողովելու կ'երթայ: Սա պարզ, բայց մաքուր հայուած է, որոյ սև սաթի նման թուխ մազերու փոքրիկ հիւսակներն կարմիր լաշակին տակէն կախուած՝ անոյշ հովերէն տարուբերուելով՝ բարակ մէջքն կապուած մե-

1843

տաքսեայ դօուոյն հետ կը գրկախառնուին : Լաչակին կոնաձև քղա՛ցն սպիտակափայլ ճակատին վերայ փառաւոր հովանի մը կը ձգէ . աղեղնաձև յօնքերով և նշդարաձև արականոնքով շըջապատուած սև սև աչքերն , վայելչաձև քիթն , վարդափայլ այտերն , կարմրագոյն շրթունքներով պատուած՝ սաստափանման առտաններն իւր մանկական գողարիկ գիմաց և նաղելի հասակին անմեղութեան զարմանալի փայլ և դրոշմ կ'ընծայեն :

Այս պատանին և օրիորդն Չոփուռեանց կալին մօտ միմեանց կը պատահին , որոյ սուր անկիւնէն կը բաժանուին վերի թաղին ճանապարհն վարի թաղինէն : Երկուքն ևս կանդ կ'առնուն վայրիկ մի անխօս զմիմեանս չ'ճանաչելուն համար : Կը փափաղին միմեանց հետ խօսիլ , բայց մանկական վեհերատութիւնն երկոցունց այսից վերայ ամօթխածութեան վարդեր կը բանայ : Օրիորդին հետաքրքրութիւնն կըստիպէ զինքն տղային երեսնն նայիլ , իսկ համեստութիւնն դէպ 'ի գետինն կը դարձընէ իւր անմեղ նայուածքն : Վերջապէս պատանին հուսկ ուրեմն սրտապնդուելով կը հարցանէ .

- Գու որո՞յ աղջիկն ես :
- Զէլէպեանց Առաքելն . — կը պատասխանէ օրիորդն :
- Անունդ ի՞նչ է :
- Աննայ է . — շտաղունելով կ'ասէ օրիորդն և յաւէտ իւր աչքերն գետինն կը յարէ :
- Մօրդ անունը , — դարձեալ կը հարցանէ պատանին հետաքրքրութեամբ :
- Մօրս անունն թաղուհի է :
- Ո՞ւր կ'ըթաս , Աննայ :
- Մեր պարտէզն կ'երթամ ծաղիկ հաւաքելու :
- Զեր պարտէզն ո՞րն է , Աննայ :
- Այս է . — կ'ասէ օրիորդն և պատանուոյն ցոյց կը տայ այգին , որոյ մօտ արդէն կանգնած կը խօսէին :
- Այս պարտէզն ձերն է . վայ , մինչև ցայսօր շտանդամ ես սորա մօտէն անցած եմ , բայց ոչ մէջն մտած եմ և ոչ ձերն լինելն իմացած եմ :

Աննայի հետաքրքրութիւնն շարունակ զինքն կըստիպէ հարցանել և իւր գիմացի պատանուոյն , նորա հօր և մօր անուններն իմանալ , բայց իւր սաստիկ ամօթխածութիւնն զինքն կ'արգելու : Աննայ սիրա կ'առնու և կը հարցանէ .

- Գու որո՞յ տունէն ես և անունդ ի՞նչ է :
- Մանուշարեանց տունէն եմ . հօրս անունն Աւագ է . մօրս՝ Մարիամ , իսկ իմ անունս Միրզայ :
- Միրզայ , արի երթանք մեր պարտէզն և քեզ հետ 'ի միասին ծաղիկներ հաւաքենք . — կ'ասէ օրիորդն , և երկուքն 'ի միասին այ ին կը մտնեն :

Առաքելն այդին , ինչպէս իմացանք , գիւղին հարաւային կողմնէր , և վարի յերեզմանատունէն մի ճանապարհաւ միայն զատուած : Այս այգին երկու ճանապարհաց մէջ սեղն կը դառնուի , որոց մին ուղղակի հարաւ կ'երթայ , իսկ միսն՝ արևելեան հարաւ . ուստի այս ճանապարհաց բաժանուած տեղն սուրանկինն ձև կ'առնու , ուր կանաչեղէնք բազմանալու և ծաղկունք բացուած և բացուելու վերայ են : Արդեանեաց թուփոց վերայ սոխակներն կը ծըլվան . ծառոց վերայ աղու աղանիք կը մնչեն . տատրակներն վճուր կը կանչեն . և սէս սէս թռչնոց ձայնն բունած է բոլոր այգին :

Արդէն ճաշի ժամանակն անցած է , և ամենայն ոք կերակուրն կերած . միայն սոյն պատանին և օրիորդն անօթի մնացած են նոյն այգւոյ մէջ : Բայց ոչ , կարծեմ սխալեցայ , նորա անօթի չէին , այլ գեղեցիկ զօսանքով , քաղցր խօսակցութեամբք և անմեղ զուարճութեամբք կըտայած էին . ծաղկանց անուշահոտութեամբ , թռչնոց քաղցրաձայն երդերով զմայլած , և մէկ խօսքով բնութեան սեղանոյ անզուգական խորտիկներով , գողցէս , յագեալ էին :

— Սիրելի Միրզայ , ամեն օր արի մեր պարտէզն , պառուք հետցեստէ կը հասնին շուտով , և կարող ենք 'ի միասին զուարճանալ : Մի՛ վախիր , հայրս , մայրս չեն նեղանալ քեզմէ , ես նոցա կ'ասեմ , որ Միրզայ իմ ընկերն է :

— Ամեն օր ես չեմ կարող զալ , այլ միայն կ'երակէ օրերն , վասն զի գուզանի հօտաղ<sup>1</sup> եմ :

1. Հօտաղ. Գոթանի և արօրի եղ ու քոմէշ շուրն է :

Վերջապէս Միրզայ և Աննայ ծաղիկներով զարդարուած իրարմէ բաժանուեցան :



ՓԼՈՒՆՑ Պ.

ԿՐԿԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՆԱԽԸՆԹԱՅ ՈՒՒՏԱԴՐՈՒԹԵԱՆ

Միրզայ երբ տուն հասաւ, իւր մօր ձեռքն համբուրեց և զանազան դունաւոր և անուշահոտ ծաղիկներէ կապուած փունջ մի դէպ 'ի իւր մայրն երկարցընելով պարզութեամբ ասաց .

— Մայր իմ, այս ծաղկեփունջն Առաքելեան Աննան կը նուիրէքեզ, որ թէև զքեզ չ'ձանաչեր, սակայն զիս և զքեզ կը սիրէ :

Մարիամ մեծ սիրով կ'ընդունէր ծաղիկն և ուրախութեամբ խառնուած զարմանօք կը կոչէ .

— Մայրդ քեզ մատաղ, Միրզայ, ո՞ր տեսար Աննան, և ինչպէս քեզ տուաւ այս ծաղկեայ սիրուն փունջն :

— Ես ծաղիկ քաղելու կ'երթայի, մայր իմ, վարի գերեզմանատան մօտ մի լաւ պարտէզ կայ, նորա մօտ պատահեցայ Աննային, որ ձեռքէս բռնելով իւրեանց պարտէզն տարաւ, ուր միատեղ զըուցելով և ման դալով ծաղիկներ հաւաքեցինք և իրարմէ բաժանուելու ժամանակ այդ փունջն քեզ համար յուղարկեց :

— Ուրիշ անգամ զինքն տեսած էիր . — անհամբեր վերայ բերաւ Մարիամ :

— Ո՛չ, ամենեւին ո՛չ, այս անգամ միայն տեսայ, շատ լաւ աղջիկ է :

— Ինչո՞ւ դու ևս նորա մօր համար ծաղիկ չ'յուղարկեցիր :

— Ես ևս, մայր իմ, նորա մօր համար մի փունջ ծաղիկ յուղարկեցի, թէև ես ևս նորա մայրն չեմ տեսած :

Հաս բնական է այս, երբ մարդիկ Աստուծոմէ շնորհք մի կը

խնդրեն ուխտիք, և օր մի նոյն շնորհաց ընդունելութեան յանկարծ կ'արժանանան, անպատմելի ուրախութեամբ կը լցուին նոցա կարօտակէզ սրտերն, այնուհետև վայրիկ մի չեն կարող իւրեանց տանց մէջ համբերել. այլ կը փութան իւրեանց բարեկամաց և սիրելեաց մօտ, նոցա ևս հաղորդելու իւրեանց սրտի ուրախութիւնն : Այսպէս ևս անբացատրելի ուրախութեամբ զեղուն էին Թագուհւոյն և Մարիամին սրտերն : Չէր կարելի առանց զմիմեանս տեսնելու երկար ժամանակ համբերել. ուստի իւրեանց զաւակաց կերակուր տուին և փունջերն առնելով միմեանց յայցելութիւն փութացան :

Թագուհի բարձրահասակ, զուարթ, ոսկեհեր և երեսնամեայ կին մի էր : Իսկ Մարիամ միջահասակ, թխամազ և կլորերես : Թագուհին համարեա թէ Խնածախու բոլոր կիներէն կը թեալ, ազնիւ, խոհեմ և զեղեցիկն էր, և միանգամայն ամեն գործոց հետևութիւնքն քաջ հեռատեսողն : Եւ ընդ հակառակն (ճշմարտն խօսելու ստիպուած եմք) Մարիամ անզգոյշ և անհեռատես, և միանգամայն բոլոր եղելութեանց և գործոց հետևութեանց անթափանց :

Մինչդեռ Թագուհի վերէն վար կ'իջնէր, պատհեցաւ Մարիամին Եկեղեցւոյ դրան առաջքն :

— Բարև քեզ, Մարիամ :

— Աստուծոյ հաղար բարին քեզ, Թագուհի ջան, խնամի ջան. ես քո հողոյն մատաղ, ո՞ր կ'երթաս, ես ձեր տունն կը գայի սակաւ ինչ խօսելու :

— Ես ևս նոյն մտքով ձեր տունն կը գայի. բայց այնպէս կ'երևի թէ այս ևս յԱստուծոմէ է, որ սուրբ Եկեղեցւոյս զիմացն պատահեցանք միմեանց : Ուրեմն այս սեղ խօսիլն աւելի լաւ է : Այսօր ընդունեցի սիրելի Միրզային անգրանիկ րնծայն, (ձեռքն բռնած ծաղիկն ցոյց տալով) ուստի այսօր ստիպուած եմ ուխտս կրկին հաստատել : Եթէ դու ևս կը բարեհաճիս, ահա սուրբ Եկեղեցին, թող վկայ լինի իմ և քո մէջ : Սակայն դիտէք, Մարիամ, մեռնիլ կայ, ապրիլ կայ, մահկանացու եմք. ես կը կամուսնանամ, որ մեր ուխտն միայն ես իմանամ, դու և Աստուծո՛ւ : Բայտ

որում եթէ այս ուխտն մեր զառակներն ևս իմանան, Տէրն մի արասցէ, եթէ մինչև հարսանեաց օրն աղջկանս կամ տղայիդ գլխոյն փորձանք մի հանդիպի, կենդանի մնացողն միշտ մեռնողին ախուախովն պէտք է մաշուի, և տրիշ անձ մի առնելն այնուհետև շատ դժուարին պէտք է լինի ողջ մնացողին համար: Գեռութ կամ տասն ասորի պէտք է մինչև հարսանեաց օրն: Իսկ եթէ բնաւ չ'իմանան իւրեանց նշանուած լինիլն, ինչպէս կանխաւ ասացի, Աստուած չ'անէ, եթէ մին մեռնի, միւսն ուրիշէ հետ պատկելն շատ դիւրին է:

— Ա՛խ, Թաղուհի, լեզուդ պապանձուի ոչ, Թաղուհի, ինչպէս ինայեցեր մեր աչքերոյս զառակաց համար այդպէս չարադուշակ բաներ խօսիլ և ուրախութեանց հետ տրամութիւն խառնել:

— Ար զարմանամ քեզ վերայ, Վարիամ, և քո խելքի վերայ, — ասաց Թաղուհի նորա խօսքն կտրելով. — միթէ դո՛ւ մինչև ցայսօր աշխարհիս փորձն չ'առիք: Ինչպէս որ զիշերն ցերեկին ետեւէն կ'երթայ, նոյնպէս արամութիւնն՝ ուրախութեան, նոյնպէս և մահն կենաց: Միթէ մտացած ես զբաժնամալեցի նշանուած տղայի և աղջկան պատմութիւն, որոյ մին չ'պատկուած մեռնելով, միւսն առաջ քեարամին պէս սաստիկ սիրահարութենէ խելքն կորնցոյց մատաղ հասակին մէջ: Աշխարհքին փորձերն և պատահուքն մարդս վարպետ կ'անեն: Վարդիկ պարտաւոր են ամեն փորձութիւններէ և զիպտածք խրատ առնուլ: Ես մեր զառակաց համար թշնամի չեմ, այլ բարեկամ: Ես ահա սորա համար է, որ մինչև ցայսօր օր մի զՄիրզայ մեր տուն չ'կոչեցի և չ'պատուեցի. նոյնպէս թոյլ չ'տուի քեզ, որ ոչ աղջկա կանչես և ոչ պատուես: Աւերջապէս զգուշանամք, Վարիամ, խնդրեմ, զգուշանամք:

— Ես ևս այսօր սիրելի Աննային առաջին նուէրն ընկալայ, որով յանչափս աւրախ եմ, Թաղուհի ջան: Ես ևս կը հաճիմ, որ մեր ուխտն ծածուկ մնայ, զոր օրինակ դու ասացեր: Ուրեմն յիշէ այն ուխտն, զոր՝ Միրզաս առաջին անգամ օրօրոյն կատարած ժամանակս՝ ուխտեցիր: Յիշէ ուրեմն, Թաղուհի ջան, երբ տունս եկիր նորա ծնունդ և մկրտութիւնն շնորհաւորելու, նորա օրօրոյն

զանակաւ խաղեցիր՝ ի նշան անսուտ խոստման. յետոյ նորա մուռոնալիմաթախ սիրուն ճակատն համբուրեցիր: Յիշէ, որ այն վայրկենէն առաջի Աստուծոյ ուխտեցիր և ինձ ասացեր, Վարիամ ջան, «Եթէ Աստուած իմ երկու աղջիկներէս զատ ուրիշ աղջիկ մի ևս պարգևէ, այս տղային պէտք է տամ. վասն զի այսօրուանէ սկսեալ շատ սիրեցի այս մանուկն»:

— Վարիամ, իմ ուխտս ուխտ է, զոր ահաւասիկ կը կրկնեմ առաջի Աստուծոյ սուրբ Եկեղեցոյ դրան մօտ. ահաւասիկ կը կրկնեմ և կ'երեքիկնեմ, եթէ Աստուած երկուքն ևս պահպանելով իւրեանց արբուն հասակին հասուցանէ, Աննաս Միրզայիդ սեփական հարսն է: Ուրեմն, Վարիամ ջան, դու ևս յիշէ և կրկնէ այն ուխտն, եթէ հաստատ ես խօսքիդ վերայ, երբ քանի մի տարիէն յետոյ Աննայիս ծնունդն և մկրտութիւնն շնորհաւորելու համար մեր տուն գալով Աննայիս երկու մուռոնած աչքերն համբուրեցիր: Արդ՝ յիշէ, որ այն օրէն ուխտեցիր և օրօրոյն լուծն խաղելով ասացեր. «Եթէ Աստուած յաջողէ, Միրզայիս հարս պէտք է առնուի»:

— Այն օրէն ուխտած եմ, Թաղուհի, ահա այսօր ևս կրկնելով կը վերահաստատեմ: Թո՛ղ ուրեմն, թո՛ղ վկայ լինին իմ և քո մէջ երկու օրօրոյներու խաղերն. թո՛ղ վկայ լինին այս սուրբ Եկեղեցին և երկինք. թո՛ղ վկայ լինին այս և այդ ծաղկեփունջերն, որ մեր խօսքն խօսք է: Քանի որ առանց առաջնորդի մեր զառակունք միմեանց հանդիպեցան, զմիմեանս ծաղկներով զարդարեցին, զիրար պարաւիզին մէջ սիրեցին և ՚ի միմեանց նուէրներ ընդունեցին, այլ ո՞վ կարող է Միրզայ Աննային զատել և Աննան Միրզայէն առանց Աստուծոյ գե՛մ մեղանչելոյ:

— Լաւ ուրեմն, Վարիամ, շատ լաւ, մտնեք սուրբ Եկեղեցին, Աստուծոյ ՚ի բոլոր սրտէ շնորհակալ լինիմք, մեր զառակաց համար երկար կեանք մաղթեմք. և այս ծաղկներն սեղանին նուիրեմք: Ըստ որում այսպիսի անդրանիկ նուէրներն աւելի Աստուծոյ կը վայելեն քան թէ մարդոյ:

Թաղուհի Վարիամին ձեռքէն բռնելով Եկեղեցին մտին, բեմն համբուրեցին, ծաղիկներն սեղանին վերայ դրին, երեք երեք ծուներ կրկնեցին և այս աղօթքն արին.

«Տէր Աստուած, արժանի արա՛ մեր զաւակներն օրհնած պսակին, խաչելւօր խաչին, կառաչ կարմիր թագին և հարսանեաց առաջաստին» :

— Մարիամ, ահա ամեն բան լրացաւ, հրամէ՛ երթանք մեր տուն փոքր ինչ տեսակցելու :

— Հնորհակալ եմ, ժամանակ չ'ունիմ. վաղն գուդանի հաց առլու կարգն մերն է : Մնաք բարեալ :

— Երթաք բարեալ :

ԳԼՈՒԽ Գ.

ԳՈՒԳԱՆՆԵՐ

Երդէն Խնածախու քաջ տղամարդիկ գարնանին, խաչխաչն, հաճարն, գարնադարին, կտաւհատն, բակլան, լուրիան և սորեկն ցանած, այդիներն, պարտէզներն և ճանապարհի վերայ եղած արտորայքն փուշերով, իսկ սրահից, մեղուանոցայ և դաւ թից շրջապատներն արքայականի ճոպատներով գեղեցիկ հիւսած էին և կարգն հասած էր կորեկ ցանելուն : Ուստի տղամարդիկ խոփ, ձեւիչ և ճամբարակ դարբին Աւարին մօտ տանելով սրել, գօգել, և նորոգել կը ապին. գուդանակապ վարպետք գուդաններն կը պատրաստէին. հօտաղք ճոպան, սամիք, լուծք և ճոպատք, իսկ կանայք, հարսունք և աղջկունք սամէտք և սերմնացո կորեկ :

Եւ որովհետեւ մէն մի գուդանի առ նուազն երեք զոյգ գոմէշ պէտք է և եօթն զոյգ եզն, և տասն լուծքն մի տանէ չէ կարելի բաղլանալ. ուստի ոմանք երեք տուներէ միանալով, ոմանք չորս և ոմանք հինգ՝ ընկերութիւն կը կազմեն և գուդաններն առնելով Գրազետի հարաւային կողմն կ'երթան, ուր արդէն իւրաքանչիւր ընկերութենէ կայնաւոր, ցաքատաւոր և գերանդաւոր անձինք գնա-

լով առաջուց փուշերն և մորենիք կոտորելով և զնոսա տեղ տեղ դիզելով այրած, մաքրած և պատրաստած էին :

Գուդաններն կը հասնեն, եզն և գոմէշ կը լծուին, մաճակալք, մաճկալեղաւրք և հօտաղք երեսներն կը խաչակնքեն և այս մշակական համաւօտ աղօթքն միաբերան անելով ցանքի կը սկսին :

«Տէր Աստուած, դու չարն խափանես և բարին առաջնորդես : Տէր Աստուած, փորձանքէ ազատ պահես զմեզ և մեր գոմէշ ու եզներն, մեր բանին, գործին յաջողութիւն տաս, աշխատանայ շահաւորութիւն, երկրի առատութիւն և աշխարհիս խաղաղութիւն» :

Մաճկալեղաւրք փայտեայ երկար սրբիչներն աջ ուսոց վերայ դրած, միշտ մաճկալաց մօտ պատրաստ են : Նոքա երբեմն զհօտաղներն կը խրախուսեն, եզն ու գոմէշ համաքայլ քշել կը տան, երբեմն գուդանի խոփ և ձեւիչ փշոց արմատներու մօտեցած ժամանակ մաճկալաց կ'օդնեն, որպէս զի գուդանք արմատոց հանդիպելով չ'մնասուին և գործն յետ չ'մնայ : Իսկ երբեմն գուդանայ բերանաւ ժողովուած արմատներն սրբիչներով կը մաքրեն անարգել յառաջ տանելու համար, և շատ անգամ հօտաղաց միաբերան երգել կը տան, որպէս զի գործերն յառաջացընեն :

Բարխուտարեանց գուդանի մաճակալն Բրուտեանց Մկրտիչն էր, մաճկալեղաւրքն Գասպարեանց Գաբրիէլն : Բրուտեանցն, որ Միրզայի կնքահայրն է, միջահասակ, մեծ գլխով, նոսր և իրարմէ հեռի յօնքերով, գեղեցիկ դէմքով, թանձր պիտերով, ստափակ ծնօտով, յաղթմանգամ, ուժեղ, քաղցրաբարոյ և աշխատասէր մարդ էր : Իսկ Գասպարեանցն, որ Աւագեանի քեռին էր, երկայն հասակաւ, միջակ գլխով, պղնձադոյն դիմօք, ուժեղ, քաջալանջ և ծիծաղերես տղամարդ էր :

Օրն պարզ, օդն գեղեցիկ, արեգակն հազիւ թէ նոր գլուխն հանած է : Մաճակալ Մկրտիչն տեսնելով, որ իւրեանց գուդանն այլոց գուդաններէն ծանր կ'երթայ, կը կօչէ .

— Ա՛յ տղայ, Գաբրիէլ, միթէ՛ չես տեսներ այլոց գուդանքն ինչպէս կ'երթան և մերն ինչպէս, քշել չ'տան :

— Թովմաս, քեզ մատաղ Թովմաս, անոյշ ձայնիւ մեռնիմ,  
մի բերանդ բայց, աներոջս հարազատ որդին: Հօտաղներ, ձեր  
հոգոյն մատաղ, դէ՛ Թովմասին հետ միաբերան երդեցէք:

— Փեսայ, սիրական փեսայ, ես քո խօսքն միթէ կը կոտրեմ,  
— պատասխանեց սա Գաբրիէլին և յետոյ բարձր ձայնիւ սկսաւ  
երգել հօտաղաց հետ:

Հայոց արևն ծաղեց սարից, մատաղ ձեր ուսին Թաւար<sup>1</sup>, Թարխան,  
Քունն կտրեց ձեր աչերից, ձեր ուժին մեռնիմ, Լաչին, Թաւուան,  
Գուք ընտրուած հազարներից, Առիւծ, Շահմար Մարալ, Ճէյրան,  
Դէ՛ զօրած խոփեր, սուր ձեւիչներ, գուղանեցէք սարեր, ձորեր,  
Կարմիր օրեր, փափուկ տափեր<sup>2</sup>,  
Քարերն մաքրած, այրուած փուշեր,  
Էրգեն հօտաղք, վաղեն եզան  
Ճոռան անիւք, փախչի Գուղան:

Հոգիս մատաղ ձեր այդ մեծ մեծ աչքերին կէռ կէռ պօզերին<sup>3</sup>,  
Քեակլիկ ճակատին, զօրեղ ոտքերին, ախ ձեր սուրբ աշխատանքին,  
Վեհ պարանոցին, ծաղիկ պոչերին, բարձր հասակին,  
Դէ՛, հա՛ ասեմ իմ սիրական դոմէշներին ու եզներին,  
Կարմիր օրեր, փափուկ տափեր, և այլն:

Հօյոց եզներ, է՛յ դոմէշներ, դարունն հասաւ, ձիւներն անցան,  
Մըջիւն, մեղու ժիր աշխատին, սարեր ձորեր կանաչացան,  
Թեթե քայլով վաղ վաղ յառանջ, ախ արեգակ մի վաղեր,  
Գայէք, եկէք, միշտ միաքայլ, անդին օրեր, ժամեր անցան.  
Կարմիր օրեր, փափուկ տափեր, և այլն:

Գայ իրիկուն, տանիմ յարօտ, իմ՛ դոմէշներ սիրուն եզներ,  
Խմէք պարզ ջուր, ուտէք կուշտ խոտ, շողաթաթախ լցնէք փորեր,  
Նստէք, որոճաք, հանգստանաք, դարձեալ ելնէք դուք՝ ի յարօտ  
Ճակատ ճակատի, պօզեր պօզի զարկէք, խաղաք մինչ առաւօտ:

1. Գոմշոց և եզանց անուանքն են:  
2. Տափ. Գետին:  
3. Պօշ. Եղջիւր:

Դէ՛ զօրած խոփեր, սուր ձեւիչներ,  
Գուղանեցէք սարեր, ձորեր,  
Կարմիր օրեր, փափուկ տափեր,  
Քարերն մաքրած, այրուած փուշեր,  
Էրգեն հօտաղք, վաղեն եզան,  
Ճոռան անիւք, փախչի Գուղան:

Սոյն գուղանէն փոքր ինչ հեռու գուղան մի ևս կայ, որոյ  
մաճկալեղբայրն է տիրացու Շահրամանն, որ և այլոց գուղանաց  
արագ ընթանալն տեսնելով և երգոց ձայն լսելով՝ սրտին մէջ  
կարծես թէ կրակ կը վառուի: Եռանդն լիովին շարժուած այս  
կողմ այն կողմ կը նայի, և տեսնելով, որ հօտաղք լուռ ու  
մունջ և հետևարար թուլամորթ կերպիւ կը քչեն եզն ու գոմէշ-  
ներն, սրբիչն ճամպարակին շղթային մի օղակին մէջ կը ցցէ,  
և իւր բարձր ու հաստ ձայնիւ կըսկսի ձախ ձեռն գօտուոյն վերայ  
դրած, իսկ աջն՝ աջ երեսին:

Իմ գոմէշներ ու քաջ եզներ,  
Կերած, խմա, կուշտ ձեր փորեր,  
Գուղանն թեթե, ուղիղ տափեր,  
Դէ՛ փութացէք շուտ արտեղեր:  
Արևն է փախչում, գալիս գիշեր,  
Մեզնից գողանում ժամեր, օրեր,  
Թաղաւորն ոսկի՛ է ուզում,  
Երախայք հաց, ու տղազում<sup>2</sup>.

Իմ՛ գոմէշներ ու քաջ եզներ և այլն:  
Ձեզ են սպասում, իմ՛ գոմէշներ,  
Տէրտէր, քէօվխայ<sup>3</sup> և շատ հիւրեր  
Կաղեր, կոյրեր և վատ ծոյլեր

1. Ուկի. Տէրութեան հարկ:  
2. Տղալալ. Մանկանց լալու ձեն:  
3. Բէօվխայ. Գիւղապետ:

Ձեզ մատաղ ասեմ մեր զաւակներ  
 Իմ գովէչներ և այլն :  
 Ձեզ են սպասում խաներ , պէյեր ,  
 Եւ անապատներ , մեծ մեծ վանքեր ,  
 Հարսանիք , պսակ և կնունքներ  
 Օ՛ն , լարեցէք ձեր զօրեղ ուսեր  
 Իմ գովէչներ և այլն :

Ա՛խ , ընթերցող , ի՛նչ կը տեսնես , լաւ երևակայէ , և տես  
 թէ ինչպէս մեր հօտաղաց միաբերան երզած եռանդաշարժ ձայ-  
 ներէն խրախուսուած գովէչներն ու եզներն արագ արագ արտեղերն  
 կ'երթան ու կը դառնան : Երևակայէ և տես . ահա անիւք ճուր-  
 չալով արագապէս կը հօլովուին , ձեռք շեղակի գետինն կը ձե-  
 ւեն , խոփերն գետնի տակերն կը մտնեն , գուգանի թևերն ձե-  
 շաց և խոփոց կտրած հողակոշտերն կարդաւ կը դարսեն . երրոց  
 ձայնից արձագանգներն սար ու ձոր բռնած են , անցնող և դար-  
 ձող զմայլած են և կարծես թէ ճանապարհին մէջ շղթայով կա-  
 պուած :

Մաճակալք կը կոչեն .

— Ապրի Թովմանս , զօրանայ Շահրամանն . իսկ Գարրիէլ ա-  
 մնէն յետոյ . — Կեցցէ հարսիս եղբայրն . բայց Միրզայ ցած  
 ձայնիւ կ'ասէ .

— Միրական քուիս , անօթի եմ , մեր հացն երբ պէտք է գայ :

— Քեռիդ քեզ մատաղ , Միրզայ , այժմ կերակուրի ժամա-  
 նակ չէ , այլ գործի , այսօր կերակուր տալոյ կարգն ձերն է . ե-  
 թէ մօրդ բերած կերակուրքն լաւ չ'լինին , միայն քեզ պէտք է  
 կերցընեմ :

— Օ՛ո եկն , եկն , կերակուրն եկն , Միրզային մայրն է բե-  
 րողն . այսօր շատ լաւ կերակուր պէտք է ուտենք . — գոչեցին  
 հօտաղք :

Մարիամ ձիւերես նոր եփած հացերով լի մեծ պայուսակ մի  
 իւրեանց աւանակին բարձած և պայուսակին (խուրջին) մէջ տեղն  
 իւղալի եղինձով լի կաթսան չուանով ամուր կսպած գուգանին  
 մօտ հասաւ և աւանակն կանգնեցընելով ասաց .

— Աստուած կարողութիւն տայ , Աստուած մին հաղար անէ :  
 Գասպարեան Գարրիէլն վազելով բեռն վար առաւ , աւանակն  
 կտպեց և պայուսակին բերանն բանալով ասաց .

— Տեսնեմ ի՛նչ բերած ես , հօրաքոյր իմ , եթէ լաւ չ'լինի ,  
 պէտք է դարձընեմ :

— Ի՛նչ պէտք էր բերելի , Խանէ , քէյէ կերակուր չէի կարող  
 բերել , աղքատի տուն է մեր տունն , հասարակ մարդիկ եմք , ինչ  
 որ Աստուած տուած է , այն բերած եմ , չէն կենայ Աստուած .  
 գիտես այն առածն .

Հօրս կերակուրն այս է ,  
 Իւղալի , անիւղ այս է ,  
 Եթէ կ'ուտես այս է ,  
 Ձես ուտեր այս է :

Այժմ մեր կերակուրն այս է , ազնիւ եղբորդիս , կ'ուզես , կէր ,  
 չես ուզեր , մի ուտեր :

— Բա՛ , բա՛ , բա՛ , սիրելի հօրաքոյրս , այս ի՛նչ պատուական  
 հաց , մածուն , կաթնապուր և իւղալի քիւլ է . ապա յարեց .  
 Մաճակալ , հօտաղներ , գուգանն կանդնեցուցէք , և եկէք , որ  
 տաք տաք ուտենք ճոշն :

Ամենքն եկին և կանաչ խոտերու վրայ նստան , ուր արդէն Մա-  
 րիամ պատրաստած էր սեղանն : Երկու կլայեկուած մեծ ափսէից  
 մէջ դիզուած իւղալի և չամչախառն եղինձոց վերայ կը տեսնուէր  
 երկու մաս թանձրութեամբ ձուազեղ և որոց եզերքներովն շա-  
 րուած էին հացերն և փայտեայ կարմիր գրկալներն : Կաւ եր-  
 կու Գրազեաթի ջրով լի դորակ կային , որոց մին սեղանին վարի ,  
 իսկ մուսն վերի կողմն դրուած էր :

Այն ինչ ամենայն ոք երեսն խաչակնքելով կրսկէր ուտել ,  
 Գասպարեանն հարցուց .

— Տղաք , ի՛նչպէս է հօրաքրոջս տուած ճաշն . կը հաւանիք :

— Կեցցէ Միրզային մայրն . — պատասխանեցին միաբերան և  
 շարայարեցին . — տեսնենք , թէ ամենայն ոք իւր կարգին պէտք

է կարողանայ այսպէս լաւ ճաշ տալ և մաճկալ ու հօտաղք գոհացընել:

— Ուրեմն, եղբարք, ես մեռնիմ<sup>1</sup>, մի լաւ տղամարդօրէն կերէք այս պատուական փիլան:

Միրզային մայրն ամեն բան թողնելով տուն դարձաւ և աշխատաւորք ճան վերջացընելով դարձեալ գործի սկսան:

Եթէ աշխատութիւնն մարդկային հնարած բոլոր գեղեցիկն աւելի զօրաւոր գեղ և ամենագէտ բժիշկներէ կատարեալ և անսխալ բժիշկ անուանեմ, կարծեմ թէ ամենայն մարդ ինձ իրաւունք կը տայ: Ըստ որում աշխատութեան շնորհիւ այնպէս ախորժակով կերին կերակուրներն և խմեցին Գրազետակի ջուրն, որոց վերայ, սիրելի ընթերցող, եթէ տեսնէիր, դու ևս պէտք է զարմանալով ասէիր. — Թագաւորաց և իշխանաց պալատից մէջ պատրաստած անթիւ նիւթերէ բաղկացեալ քաղցրահամ կերակուրքն և Եւրոպայի մէջ հնարուած և արուեստակեալ ողելից ըմպելիք ինչ են այն պարզ ճաշի և ջրոյ հետ բաղդատելով: Քանզի ոչ այսպէս ախորժակով կ'ուտուին և կը խմուին, և ոչ վայելողք այսպէս առողջանան, սնդակազմ, աշխոյժ և զօրաւոր կը լինին, թէև հանապաղ իւրեանց մօտ ունենան Լողմանի նման բժիշկներ:

Մինչև կէսօրին մի ժամ մնացած դարձեալ քշեցին, յետոյ եղ ու գոմէշներն արձակելով խոտաւետ արօաներ տարին. և լաւ կշտացընելէն վերջն Կառկառի ջրէն ջրելով բերին, լծեցին, բրդուշն կերին և դարձեալ երգելով քշեցին մինչև երեկոյ: Այսպէս նաև ամեն գուղանի մարդիկ, որոց մէջ յատուկ մի մի ծերունի սերմանացան կայ: Բարխուտարեանց գուղանի սերմանացանն էր իւրեանց խնամի Տօնին (Գանիէլն), որ երկայնահասակ, մարմնեղ, սպիտակ և թանձրամօրուօք, կարմրերես և հաստապէխ ծերունի մի էր: Գանիէլ իւր կենաց մէջ հիւանդացած չէր, և թէև ութսուն և հինգ տարեկանին մօտ էր, սակայն գեռ զօրեղ էր: Եթէ իւր միակ աչքելոյս Սահակ անուամբ զաւակին ցաւալի

1. Գարաբաղու մէջ, մեծ երբման յնա է:

մահն իւր մօրուքն սևութենէ ՚ի սպիտակութիւն փոխած չ'լինէր, զինքն տեսնող օտարականք զիւրաւ չէին կարող համոզուիլ, որ նա ութսուն և հինգ տարեկան հասած էր: Զոր օրինակ այլ գուղանաց սերմանացանք, նոյնպէս այս սերմանացան Գանիէլն երեք ծուր կրկնեց ցելին մօտ կանաչ խոտից վերայ, զողնոցն կապեց և այս աղօթքն բաղկատարած անելէն յետոյ, կորեկն լեցընելով սերմանեց:

«Տէր Աստուած, դու մին հազար անես, ողորմած Աստուած, մեր բոլոր ցանքերն երաշտութենից, մարտից, կարկուտից և զանազան պատուհասներից միշտ և հանապաղ ազատ պահես»:

Իւրաքանչիւր սերմանացանի ետևէն մի զոյգ գովելով ցախանաւոր կար, որ սերմած տեղերն ցախանելով սերմունքն հողոց տակով կ'անէր: Իւրաքանչիւր գուղան ունի երկու եզնարած, որք ցերեկներն աշխատող եղևք և գոմէշք գիշերներն մինչև ՚ի լոյս ծաղկաւէս մարդաղետիններու մէջ կ'արածեն երկու ամոյ չափ, և որոց ՚ի վարձատրութիւն երկու օր գուղան կը քշեն, բայց հացն և կերակուրքն եզնարածներու կողմանէ կը տրուին: Եզնարածոց երկու օրավարն, զիւղի քահանային մի օրավարն, քեօլխային մի օրավարն և օրավար մի աղքատաց համար վարեցին և այսպէս վերջ տուին աշխատանքին:

Իսկ քողհանն արդէն սկսուած էր:

ԳԼՈՒԽ Ե.

ՔԱՂՀԱՆ

Երկրագնդիս վերայ կը գտնուին տեղ տեղ այնպիսի երկիրներ, հողեր, գաշտեր և արտավայրեր, ուր զօր ինչ սերմանն, նոյնք կը բուսանին. կը գտնուին նաև այնպիսի երկիրք, հողք, գաշտք

և արտավարք, ուր սերմանած սերմերու հետ կը բուսանին տեսակ տեսակ որոմներ, փնասակար բոյսեր, հեղձուցիչ կծուկներ, ժխորակներ և վայրենի կանկառներ ևս: Այս վերջին տեսակէն են Ղարաբաղու լեռնային արտավարքն, զորս հարկ էր քաղհանել և մաքրել արտորայքն արդիւնաբեր անելոյ համար:

Յինանց շաբաթներու մէջ էինք, գարնան ցանքերն մեծ մասամբ ճէմիլուի կողմն էին, ուր տարածուած էին դանանիք, գարնագարիք, հաճարք, սորեկ և կտաւհատք, որք թէև տակաւին կանաչ էին, սակայն իւրեանց հաստատ նշաններով լաւ առատութիւն կը խոստանային մշակաց:

Ճէմիլուին մէջ, որ դիւղէն արևմտեան հարաւ կ'ընկնի, ո՛ր կողմ նայէիր, ամեն արտի մէջ աչքի զարնող ուրիշ բան չէիր տեսնել, եթէ ոչ քաղհանաւոր կին, հարս, աղջիկ և մանր տղայք, յորոց ոմանք սպիտակ հագուած, ոմանք կարմիր, ոմանք կապոյտ և ոմանք սև ու կարմիր ծաղկաւոր Ռուսի տիկոս չիթեր. միայն թէ Չէլէպեանց և Մանուշարեանց արտից մէջ քաղհանաւորք չէին տեսնուիլ:

Չէլէպեանց Յովհաննէսն, որ դեռ կենդանի է, մօտ երեսուն և երեք տարեկան, միջահասակ, աշխոյժ և ծիծաղկոտ տղամարդ էր: Սոյն երեսասարդն գրեթէ դիւղացոց մէջ ամենէն ընտիր ձիւնան պիսիոզ, լաւ հեծնող, զինուց և զարդուց պատուական տեսակներն գործածողն էր: Ա՛րեթայ գոմն կը մտնէ, իւր աշխէտ նժոյզն իւր ձեռօք կը թամբէ և սանձն նորա բերանն դնելով դուրս կը քաշէ և իւր յատկացեալ օղակէն կը կապէ և ինքն իւր տեսակն կը մտնէ: Թամբի սփուտցին վերայ դեղին կլապիտոնով բանուած ծառերն և մետաքսէ կանաչ թելերով շինուած տեղք, կարմիր գունով ասղնէգործած պտուղք և այլ և այլ կաղմուածոց բանուածքն արևելեան ընտիր վարպետաց ձեռագործքն կը յիշեցընէին տեսնողաց: Երկու տաղստանեան ընտիր աղբախաններն սպիտակ կլապիտոնով բանուած՝ կարմիր կաշուամանին մէջ թամբին աջ ու ձախ կողմերէն կախուած էին, որոց զլեռնայն արծաթեայ նրբագործ խնձորներն բունէն դուրս մնալով՝ արեգակէն կը փայլէին: Համանման կաշուամանի մէջ թամբին պարանոցէն

ձիոյն աջ առաջի ոտին վերայ կախուած կ'երեւէր արծաթեայ բաժակ մի ճանապարհին ջուր խմելու համար:

Փոքր ինչ յետոյ դուրս կը գայ Յովհաննէս յոտից ցգլուխ զարդարուած և զինուած: Կանաչ և կարմիր գործուած մետաքսեայ խաչմալ շալվարին տակէն կ'երեւին Գանձակի երկարպարանոց և բարձրակրունկ մուճակներն: Չեան պէս սպիտակ ասպահանեան աբխալուցին վերայէն կախուած արծաթեայ կամարն և կամարէն կախուած խաչմալ երկսայրոյն փղոսկրեայ դաստապանն: Վայելուչ կրծոց վերայ խաչաձև կը փայլին վառօդի և կնդակաց փղոսկրեայ շարանաց արծաթապատ կապերն: Թիկանց վերայ կը տարուբերուէր անդրական երկփող ընտիր հրացանն. Մուղայի գուռ, մոխրագոյն զգակն կողմնակի դէպ 'ի աջ կողմն գլուխն դրած: Չէլէպեանցն այսպէս զրահաւորուած ձին կ'աշտանակէ և դէպ 'ի ճէմիլու կը սրանայ:

Յանքերու մօտ կը հասնի, չորս կողմերն ման կը գայ, զորս և յուսացածէն շատ և շատ աւելի լաւ կը դանէ, միայն թէ քաղհանելու կարօտութիւն կը տեսնէ: Աստուծոյ փառք տալով ձիոյն զլուխն դէպ 'ի Շաքար աղբիւրն կը դարձընէ, ջրական մօտ կանգ կ'առնու, արծաթեայ բաժական ջուր կ'առնու, կը խմէ և վերստին տուն կը գառնայ: Հազիւ թէ աղբիւրէն միջոցապէս Երևան քաղաքը, և ահա կը պատահի վայրենի այծեման զոր հրացաններով թաւալըլըր դետին կը փռէ և հետն աստիճաններ կը բերէ:

Միջոցապէս Երևան քաղաքը  
Ստեփանակերտ  
ԱՂՅԱՐԱՆ

Յովհաննէս նոյն երեկոյ պատուէր սուա հարսանց, աղջկանց և մանր տղոց հետեւալ առաւօտուն ճէմիլու փոթալու և շուտով քաղհանելու. և խոստացաւ բոլոր աղջկանց համար միաստեսակ նոր հագուստներ կտրել տալու, Համբարձման տօնին հաղնելու համար, որ մօտ էր:

Հազիւ թէ արշալուտոյ առաջին ճառագայթներն արձակեցան, բոլորն ևս ելին, պատրաստուեցան, սպասուոր Գանիէլն իւրեանց հետ առին, հաց, պանիր, կարագ, քամած մածուց, կանաչեղէն և մի գատարկ դորակ աւանակին բառնալով՝ դէպ 'ի քաղհանելիք արտն դնային: Գրեթէ հազիւ կէս միջն հեռացած էին

իւրեանց տունէն, պատահեցան Մարիամին, որ իւր Սէնէմ օրի-  
որդին և Միրզա պատանւոյն հետ նոյնպէս ճէմիլու քաղհանի  
կ'երթար: Կէս ժամէն աւելի երթալիք ճանապարհ ունէին, ուս-  
տի Մարիամ, Թաղուհի և Նախշուն (Յովհաննէսին հարսն է) ա-  
ռաջէն կ'երթային տնային իրերու վրայ խօսելով, ճալահիբ,  
Հոհիսիմէ (Աննայի քորքն են) և Սէնէմ միջէն, բուրդ գզելու,  
գուլպայ հիւսելու, գորգ, պայուսակ և կարպետ գործելու վե-  
րայ խօսակցելով: Իսկ Միրզայ և Աննայ վերջէն կ'երթային ձեռք  
ձեռքի տուած ծաղիկներ հաւաքելու, փունջ փունջ կապելու,  
միատեղ խօսելու և խաղալու վերայ:

Արեղակն նոր ծաղած է, արևմտեան զեփիւռն անոյշ կը փչէ,  
Թռչնոց ձայներն Գրազետակի ջրվէժներու ձայնից հետ խառնուած  
հոգեպարար զուարճութիւններ կը բանան անցորդաց համար: Միր-  
զայ և Աննայ երբեմն յետ մնալով ծաղիկ կը քաղեն, գեղեցիկ  
փունջեր կը փոխանակեն, երբեմն վազելով դարձեալ իւրեանց  
ծնողաց և քեռք ետևէն կը հասնին: Իսկ երբեմն ամենալաւ ծա-  
ղիկ տեսած ժամանակ երկուքն ևս վազելով կը ջանան 'ի միմեանց  
յափշտակել:

Կանաչ զմրուխտի պէս կը փայլին գարնանոյ, հաճարի, գար-  
նայարուոյ և այլն ցանքերն, որն բլրակի վերայ, որն ձորոց մէջ  
և որն հարթ և հաւասար գետիներու վերայ: Բաժանման ժա-  
մանակն եր արդէն, 'ի միմեանց զատուեցան այս ընտանիքն իւրա-  
քանչիւրն գէպ 'ի իւր արտն. միայն թէ Միրզայ և Աննայ մեծ  
գովարութեամբ կարողացան բաժանիլ իրարմէ:

Հետզհետէ բոլոր քաղհանաւորք ժողովուեցան. Ձէլէպեանց  
արտէն սակաւիկ ինչ հեռի շատ հարս, աղջիկ և կանայք կային,  
որք 'ի միասին քնքուշ ձայնիւ երգեցին:

Մեր գարնանիք ողողած, ցողած դիշերային շաղերով,  
Ա', ծածանին, խայտան, ցնծան առաօտեան հովերով,  
Առաա, պարարտ հասկեր հասցնեն Հայաստանի արևով,  
Հնձներ, կ'ասեմք, հորեր լցնենք, մի տեղ վայլենք խերով, բա-  
րով:

Յերեր վարուած Հայ տղամարդով, սերմերն մաղուած կոյս ձեռ-  
քերով

Ջուր էք խմել Հայոց թուխպով, քաղեր հանուած Հայ հարսներով,  
Հողեր օրհնուած, պարարտ երկիր, լաւ չափարուած<sup>1</sup> ցախերով,  
Դէ' մեր արտեր, պտուղ բերէք ամբարներով, հորերով:

Օրհնեալ լինին այն ամպեր, որ տան ձեզ թոր<sup>2</sup> օրերով,  
Ապրին Հայ տղամարդիկ, որ հնձնն, կապեն կեմերով<sup>3</sup>,  
Ջօրանան մեր գոմէշներ ու եզներ, որ կրեն<sup>4</sup>, կ'ասեն կամներով,  
Ծլին ծաղիկն հարսն ու աղջիկ Հայոց, որ հունցեն, եփեն թորենով<sup>5</sup>:

Այս երգի ձայնէն նախանձելով ձորի միւս երեսին քաղհանա-  
ւորք զմիմեանս կը մեղադրեն լուռ և մունջ քաղհանելուն հա-  
մար, և ահա նոքա ևս սկսան երգել:

Արեն ծաղեց յարևելից,  
Ա', մեր արտեր շողշողան,  
Հողերն կախուած հասկերից  
Մարգարտի պէս փողփողան,  
Չեփիւռ փչեց հասկ հասկի,  
Թուփ թուփի հետ բարև տան,  
Դէ' Հայոց հարսներ, աղջիկներ:  
Առէք մանգաղ 'ի քաղհան:

Հայոց եզնով, գոմշով վարուած,  
Սուրբ հողերն ցախով մաղուած,  
Հայրենի երկրում մեր արտեր  
Ծլած, ծաղկած, փունջ փունջ կանգնած:

1. Չափարէ՛. Յանկապատել:
2. Թոր. Անձրև:
3. Կէ՛. Որայն սեղմելու կապն:
4. Կրէլ. Բերել:
5. Թորէն. Թոնիր:

Գէ՛ Հայոց հարսներ, աղջիկներ,  
Առէք մանկաղ, ՚ի քաղհան:

Հայոց նոր փեսայի ցանած,  
Հայոց նոր հարսի քաղհանած,  
Եւ փեսայուի հարսնացուի  
Իրար սիրած, նշանուած.

Գէ՛ Հայոց հարսներ, աղջիկներ,  
Առէք մանկաղ ՚ի քաղհան:

Առատտեան հովեր փշեն,  
Սորեկ, հաճար զերար գրկեն,  
Պիւլպիւլն վարդին, տաարակն մարոյն  
Սիրովն վառուած ահա երգեն.

Գէ՛ Հայոց հարսներ, աղջիկներ,  
Առէք մանկաղ ՚ի քաղհան:

Հայոց արեն, Հայոց լուսին,  
Հայոց աստղերն, Հայոց երկին,  
Եւ լուսաբերն զիշեր, ցերեկ  
Միշտ ճեմում են մէջ մեր արախն.  
Գէ՛ Հայոց հարսներ, աղջիկներ,  
Առէք մանկաղ ՚ի քաղհան:

Աստուած սիրէք, Հայոց ամուսնի,  
Հայոց ցանքին բերէք ջուրեր  
Եղեմական չորս գետերից  
Ա՛խ, մեր նախնեաց սուրբ ջրերից.  
Գէ՛ Հայոց հարսներ, աղջիկներ,  
Ամէն ասէք զուք միաբան:

Այս երգոց ձայնէն բոլոր քաղհանաւոր կանանց, հարսանց և աղջկանց աշխոյժն ու եռանդն կը բաղմապատկի. կըսխիւն արագ արագ վատ բոյսերն հանել, ՚ի բաց նետել և արտերն մաքրել:

Ա՛խ, ձեր սուրբ աշխատանքին մատաղ, Հայաստանի մայրեր և քոյրեր: Ագիւն ընթերցող, Ղարաբաղու Հայոց կանայք, հարսուհիք և աղջկուհիք մեղի, թոյլ, անգոր և փափուկ մեծցած չեն, այլ մայրենի կաթամբ սնած, մանկութենէ ծանր աշխատանաց մէջ կըթուած, անային և անդային զործոց մէջ եփուած, տաքութեան և ցրտութեան, անձրևի և սաստիկ ձիւնի վարժուած և վերջապէս նահապետական կենաց ամեն տեսակ աշխատանաց բովոց միջէն իբրև ոսկի զտուած, ելած և հեռաբար ժիր, զործօնեաց, բաղմաշխատ և առնացի բնութեան տէր:

Մեր քաղհանաւոր մայրերն և քոյրերն արտերու վարի ծայրերէն մանելով ամենայն քաջութեամբ վերի ծայրերէն կ'ելնեն: Հանած քաղհաններն եթէ սակաւ են, իւրեանց սեղերն կը ձգեն. եթէ փոքր ինչ շատ, ցանքերու նօսը տեղերն. իսկ եթէ խիստ շատ, տեղ տեղ գտնուած ապուած քարերու, փուշերու և կամ շտաբարան (հովանաւոր) ծառոց արմատներու վերայ կը ձգեն և կ'անցնին և աշխատութենէն յետոյ համով և ախորժակով հաց կ'ուտեն և երեկոյան գէ՛մ տուն կը դառնան:

ԳԼՈՒԽ Զ.

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Ժամանակն Համբարձման կիւրակէ օրն է. զիւղի ժողովրդեան մեծ մասն տանց մէջ կը գտնուի, արեղակն տակաւին նոր կը ծագի, զիւղի զանգակն ծանր ծանր կը հնչի և զժողովուրդն Բանասրահ ուխտի կը հրաւիրէ ըստ սովորութեան նախնեաց:

Արդէն տղամարդիկ ցանքերէն, ցանկապատներէն և ցելերէն շրժած էին, իսկ կանայք քաղհաններէն:

Արք և կանայք, երիտասարդք և կուսանք ամենքն զարդարուած,

սղուած և ուտեստներ առած զիւղէն սկսեալ մինչև Բանոր Նան միշտ զառ ՚ի վեր պէտք է երթային . բայց այնքան զուարճալի էր այս ճանապարհորդութիւնն , որ բնաւ ուխտաւորք դժուարութիւն և ճանճրոյթ չէին զգար : Ըստ որում զիւղէն սկսեալ մինչև կէս ճանապարհ , ուղոյն երկու կողմերն տարածուած արտօրէից ասոք հասկերն ծիծաղախիտ ծովու ալեաց նման զմայլելի տեսքով կը ծածանէին հիստիային զեփիւսներէն՝ յուրախութիւն մշակաց : Խումբ խումբ երիտասարդաց միաձայն երգոց հոգեպարար ձայնից հետ խառնուած՝ բիր տեսակ թռչնոց գայլայլիկներն անբացատրելի քաղցրութիւն կը մատակարարէին լսելեաց : Իսկ կէս ճանապարհէն վեր , այս և այն կողմէն բարձրացած և դադարներով իրարու կցուած ծառոց թանձր ստուերքն հովանի կը լինէին և կը թեթևեցնէին ճանապարհի երկայնութիւնն :

Միրզայ և Աննայ ևս զարդարուած այս ճանապարհին միմեանց կ'ընկերանան , անմեղ աղանեաց պէս երգեր մնջելով , խօսելով և պատմութիւններ անելով համբաբայլ կ'երթային : Միրզայի և Աննայի մայրերն ևս Մարիամ և Թագուհի իրարու հետ կը խօսակցէին և այս միջոցին Գասպարեան Գարբիէ ըն մեր ետեւէն հասաւ ձիով և կ'ուզէր զՄիրզայ իւր գաւակն առնուլ . բայց Միրզայ աւելի լաւ համարեցաւ Աննայ օրիորդին հետ ՚ի միասին ոտքով քալել քան թէ զատուելով ձիով երթալ : Սակայն իւր սիրական քեռի Գասպարեանն իւր թեւէն բռնելով գաւակն առաւ և ձին քշելով անյայտացաւ :

Քանի մի ժամէն հետզհետէ դալով բոլոր ժողովուրդն ամբողջացան ՚ի Բանոր Նան : Բանոր Նանի զեպիւններն զիւղն միւս բոլոր գետիկներու ամենապատուական մասն են , թէ պողաբերութեան կողմանէ և թէ շքեղ տեսարանի կողմանէ : Քանզի տեղն խիստ բարձրանդակ է , յորմէ պարզապէս կ'երևին Ղարաբաղու բարձր լեռանց շղթայաձև գօտիներն՝ յարևմուտս , Խաչնու ամբողջ գաւառն ՚ի հիւսիս , Արվատեան ձիւնապատ և մշտսառնոց լեռինք , Աւտեաց գաւառն և Արր գետի եզերաց շամբուտն՝ յարևելս . Վարանդու գաւառի մի մասն՝ և Շուշի քաղաքն՝ ՚ի Հարաւ : Բանոր Նանի տափերու վերի կողմն մորենիներով շրջա-

պատուած և վաղեմի անտառներով զերար զրկած կը տեսնուին , ուր հնազոյն աւերակ մի կայ փոքրիկ բլրակի մի վերայ , որ եկեղեցոյ փլատակ կը կարծուի , մի քանի թուփակ ծառոց հովանեաց ներքև : Այս քարակոյտ աւերակի հարաւային կողմն մամապատ գերեզմանաբարեր կ'երևին , յորոց սակաք ամբողջապէս բաց են անվերժանելի տառերով , շատերն՝ կիսաբաց , և մեծ մասամբ թերևս անյայտացած : Քարակոյտի մէջ տեղն՝ երեսն գէւղ ՚ի յարևմուտ՝ երկու կանդնաչափ երկայնութեամբ քարէ խաչ մի կայ կանգուն , որոյ բաց կողմերն ամբողջապէս վառուած մոմերով զարդարուած են (առանց աշտանակաց՝ խաչ քարին փակցուցած) որք են ուխտաւորաց բերած մոմերն : Ահա այս է Բանոր Նան :

Թուփակ ծառոց տակ ասա և անդ խարոյկներ վառուած են , որոց վերայ կաթսաներն խաչուներով կ'եփին : Արիշ կրակներ ևս վառուած են , որոց վերայ փայտեայ շամփուրներով միս կը խորովեն երիտասարդք : Ժողովուրդն ծառոց փառաւոր հովանեաց տակ դալարադեղ խոտոց վերայ կարդաւ նստած է . ծերունիք առանձին , արք առանձին և կանայք առանձին : Ծերունի քահանայ մի կը տեսնուի , որ կռնակն մի մեծ քարին տուած Սաղմոս կը քաղէ : Մեծ շերեփն աջ ձեռքն ոտքի վերայ կանդնած հեզահողի խոհարար և միանգամայն մատակարար կայ , որ կերակրոց

1. Թէ որ ընտանիք մնացած է այս աւերակն և ինչ էնչ է այս ուխտաւորէն , հասարակ արշանաբարութիւն չկայ արախոտից մեջ . մայն ինչ թերուանէ՛ այս պէղծութիւնն և ծանօթութիւնն կը պան հարցանուցայ : «Մեր պապերն և հայրերն այսպէս տառաքած են մեզ , այս խաչ քարէն քով Բանոր Նան անուամբ պարտաւորապէս հարկեցանն կայ , որոյ վերայ յամանակաւ եկեղեցի մի շինուած է , որոյ հասարակ նշաններն են կրօնի խորհրդերով պիղծուած արախոտն : Այս նահապետական Պարսից բանութեան յամանակ իւր անքին հասարակ շինութեան լայն կողմնայն պէղ նահապետութեան է : Եւ ըստ նախնի ոտքնաթափման ամբողջ աստի ուխտի կը գանձ այս պէղ , միանգամայն որդոց որդի տանդիւրով » : Նան բարն Վարաբաղու լեզուաւ մեծ մայր կը նշանակէ , իսկ Բանոր բարն արքէն յայտնի է , որ բանող կը նշանակէ :

Համն կը տեսնէ, ոմանց աղ կը ձդէ, ոմանց տակի կրակն կը սասակացընէ և ոմանցն կը պակասցընէ. սփռոցներն ծաղկախառն խոտոց վերայ փռել և պատրաստի տարածել կը հրամայէ բոլոր խմբի մարդոց: Այս բարի մարդն լուսահոգի տիրացու Օհանն էր, որ կոչեց.

- Տիրացու Շահրաման, սեղաններն պատրաստ են:
- Այո, պատրաստ է, անտես:
- Ուրեմն, տէր Ռըստակէս, հանդստեանն սկսէ, կերակուրն պատրաստ է: Տիրացու Շահրաման, տիրացու Աստուածատուր, տիրացու Գէորդ, տէրտէրին մօտ գնացէք և շարական կարդացէք. — ասաց լուսահոգին և ինքն ևս շարականի գլուխն անցաւ, զոր աւարտելէն յետոյ կերակուրներն կարդաւ սկսաւ մատակարարել:

- Տեսես, — կոչեց քահանայն:
- Հրամայեցէք, Տէր Հայր:
- Հաւասար տես. — շարայարեց խնդալով:
- Տիրացու Շահրաման, այ աղայ, տիրացուն իւր տէրտէրին այդպէս կը նայի, օղի լից, տէր հօր տուր, մի բաժակ ևս ինձ տուր. — կոչեց Օհանն և խօսքն քահանային դարձընելով ասաց.

— Տէր Ռըստակէս, օրհնէ խնածախու անդն, անդաստանն և պողաբերութիւնն:

Տէրտէրն բաժակն առնելով այսպէս օրհնութիւն տուաւ.

— Ժողովուրդ, հաւասարական ողջ և առողջ լինիք. սուրբ Բան որ հան բարեխօս լինի. Աստուած օրհնեսցցէ բոլոր Հայաստանի ժողովուրդն և պողաբերութիւնն. մանաւանդ զձեզ, և ձեր անլն ու անդաստանն, պողաբերութիւնն և առուտունն:

— Օրհնեա տէր, կարգի, պատարաւի հաստատա մնաս, փառաւոր լինիս, բարի ազօթբդ մեզմէ և մեր որդոց վերայէն անպակաս լինին. — ծերունիք և միջհասակ մարդիկ կարգաւ այսպէս ասելով բաժակներն ճաշակեցին, կերակուրն համեստօրէն կերան. վերջէն մեծ և փոքր ծունկ չօրած «Տէր օղորմա» արին արտասուախառն պողատանօք և մեծ ջերմնանդութեամբ, ասպառխտ անելով վերջին անգամ տուն դարձանք:

— Միրդայ, ձեր խօտերն երբ կը հարէք, — հարցուց Գասպարեանն:

— Քեռի, մի քանի օրէն պէտք է սկսենք հարելն:

Գ. ԱՌԻՆՈ Է.

ԽՈՏԱՀԱՐԲ

Յունիս ամսոյ մէջ եմք. գիւղին որ կողմն նայիս, գերանդաւոր և խոտահար մարդիկ և տղայք կ'երևին, մանաւանդ այդեստանաց մէջ: Հատու խոտերն կը հարեն, չորացածներն նախ տեղ տեղ ժողովելով թուփակներ կը գնեն, յետոյ գոմշասայլերով քաշելով գեղեցիկ ձեւերով կը զիզեն, անասուններն ձմրան խստութենէ ազատ սլահանելու համար: Արուեստաւոր գիւղացիք այսօրուանէ սկսեալ մինչև կալի վերջերն իւրեանց արուեստներն այլ ևս չեն գործեր, այլ տարեկան պիտոյքն հայթայթելու կը ջանան թէ իւրեանց և թէ անանոց համար:

Գարրին Աւաղն արգէն խնութիւն փակած իւրեանց այդոյն նորահաս ծառոց տակերն գերանդեաւ կը հարէ, որոյ հետ կ'աշխատի նաև Միրդայ իւր փոքրիկ գերանդեաւն: Այս այդին իւրեանց տանէն հազիւ թէ քարընկէց հեռաւորութիւն ունի: Պարտէզն փոքր է և քառակուսի ձև ունի, որոյ եզրքնէն մէջամէջ անկուած են կեռասի և տամնի ծառեր, որ ծանրաբեռնուած են առատ պտօրք: Իսկ մէջ տեղերն շար 'ի շար տնկուած են թթենիք, որոց նորախայծ պտուղք կաթուկ կը տան, և որոց վերայ ճնճղուկներն երամովին կը ճուռողան: Իսկ երբեմն երբեմն 'ի նոցանէ երկուքն կամ երեքն կուռի բւնուելով իրարու կատարէն ամուր կոցած՝ ծառոց տակերն կ'ընկնին և այնպէս սաղախիկ մի անշարժ կը մնան:

Գարբին Աւազն բարձրահասակ, յաղթանդամ, ուժեղ և մօտ յիսուն տարեկան անձ մի էր, որ Միրզայի մանր երգերով կը զուարճանար և եռանդով կը հարէր:

Սոյն այդիկն մի ճանապարհաւ միայն զատուած արտավայր մի կայ թանձր, բարձր և հասուն խոտերով, ուր հարիւրամեայ ծերունի մի կ'երևի շորերն շարվարին մէջ ժողոված, կաշիէ կամարն հասա մէջքն կապած, գլուխն լայն և կանաչ տերևներով զարդարած իբր շուքարան: Այս ծերունին այնպէս խոտ կը հարէ իւր լայնալիճ գերանդիւ, որոյ վերայ գիւղին քաջ տղամարդոց և եռանդուն երիտասարդաց նախանձն կը շարժի: Ըստ որում այս ծերունոյն երեսներն ուրիշ ծերունեաց պէս խորշումեալ, աչքերն լուսէ տկարացեալ, մէջքն կորացեալ, ծունկերն կ'ընկեալ և ձեռքերն գողահար չեն, այլ ընդ հակառակն երկու մեծ մեծ և լուսալիւր աչքերն կրակ ու բոց կը ցայտեն, լեցուն, կարմիր և առողջ այտերն և շրթունքն վարդի նման կը փայլին. վերջապէս գեռ բազուկներն զօրեղ են և մատուցն ուժեղ, միայն թէ ժամանակի անդուծ ածեղին սորա գլխոյն մազերն արմատախիլ սըրբած և տարած է: Սակայն այսու ամենայնիւ զեռ պնդակազմ, ժիր և զործէ անվախ է:

Ահա այս է Սէփերեան Յովհաննէսն:

Սոյն ալեօրի մօտ քսաներկու տարեկանէն քսաներեք տարին մանող մի նորահաս պատանի կայ, որ նոյնպէս խոտ կը հարէ գերանդեալ, որոյ թուխ ունքերով և թանձր արտեանունքով պատուած կապոյտ աչքերն դանդաղ կերպիւ կը փայլին. պարանոցն կարճ է և մեծ գլուխն երկու հաստ ուտոց մէջ մտած և փոքր ինչ կարճահասակ. իւր շարժուածքէն կատարեալ ծուլութիւն կը բուրէ:

— Սիրելի պապս, — կոչեց նա. — ամենայն ոք կէսօրածուլ արած է. երթանք տանձի ծառին հովանոցն ներքև փոքր ինչ հանդստանալք, մի լաւ քթախոտ քաշէ, մինչև մեր հայն դայ, ուտենք և դարձեալ զօրծի սկսինք:

— Այ տղայ, հասակեդ չեն ամաչեր, ես քո չափ եղած ժամանակս, երբ զօրծի կը մանէի, ոչ անօթութիւն կը զգայի և ոչ

ծարաութիւն, ոչ հանդստութիւն և ոչ քուն: Ինչ զօրծի մտնէի, առիւծի պէս կը կատարէի. շատ օրեր միայն առաւօտ և երեկոյ հաց կ'ուտէի և միայն ես երեք լաւ տղամարդի զօրծ կը տեսնէի: Ամեն մարդ իմ վերայ զարմանալով կ'ասէր. «Կեցցէս Վանէս ապեր, քո անձն երկաթ է, սրղպատ է, թէ աղամանդ է. դու անօթութիւն, յոգնութիւն չես իմանար», և ուրիշ շատ խօսքեր: Այժմ քո աչաց մին արեգակը կը զիտէ շարունակ, իսկ միւսն տանձի ծառին հովանին. ուշգ հանդստութիւնն զբաւած է, միտքդ հաց ուտելն. այլ քո զօրծն ինչպէս և երբ պէտք է յառաջ երթայ: Գոնէ քեզմէ փոքր տղայոց նայէ և 'ի նոցանէ ամաչիւր. գոնէ չորս կողմդ նայիր. տես դարբին Աւագին Միրզայ տղան, Աստուած պահէ, տես, թէ ինչպէս լաւ կ'աշխատի իւր հօր հետ, որ տակաւին քեզմէ շատ և շատ փոքր է:

Այլ չ'սօսեցաւ թուռն, այլ գլուխն կախած ահամայից կ'աշխատէր թուլամորթ կերպիւ: Իսկ ծերունին իւր թուռն աշխոյժն վառելու համար սկսաւ երգել.

Թէ այս օրեր, ժամեր զեռ երկարէին,  
Քառասուն յիսուն տարիքս յետ դառնային,  
Սուր գերանդիս առած դաշտ իջնէի  
Սարեր, ձորեր ինչպէս կը հարուէին:

Թէ իմ Արծիւն, Բագէն լծուած մեծ սայլին,  
Սապոնած անիւներն շուտ շուտ գառնային,  
Տեսնէիք ինչպէս կալիս չորս կողմերում  
Խոտաղէզներն թումրեր կը ձևանային:

Թող նրանից յետոյ յորդ տեղային  
Բորլոր տափերն էլ ձիւնով ծածկուէին  
Գոմէշ, տաւար, ձի, ջորի գոմումն  
Ամիսներով էլ փակուած մնային:

Օին երեք անդամ կուշտ խոտ կը տայի,  
Տակերն քերելով պարզ ջուր կը տայի,

Թող միշտ ձիաւոր հիւրեր էլ դային ,  
Գարձեալ առատ կերով գոհ կ'անէի :

Առաւօտ երեկոյ ես ժամ կ'երթայի ,  
Սուփրաս<sup>1</sup> շէն , կուլէն<sup>2</sup> կարմիր զինով լի ,  
Սաղն ձեռնիս , փափախս ծռած՝ տաք տանս  
Որդով , թոռներով միշտ քէֆ կ'անէի :

Է՛յ Սէփէրեան , դէ՛ փառք տուր Աստուծոյ ,  
Թէգուզ<sup>3</sup> էլ ծեր ես , երբ մանես գործոյ  
Գեռ մինակ կարող ես ջանալ , գործել  
Գործ , աշխատութիւն երեք , չորս մարդոյ :

Սոյն երգն երգելէն յետոյ ալևորին դէմքն արիւթեամբ փայլեցան , դերանդին սրեց , աջ ափին մէջն լեզուաւ թրջեց , երկու անգամ դերանդին ձեռաց մէջ շուրջ տուաւ և իւր թոռին շարն թողլով՝ փոքր ինչ վերէն նոր շար բացաւ և մինչև կերակուրի դալն խոտալայրին կէտն հարեց . մինչդեռ իւր թոռն հազիւ թէ կարողացաւ իւր համար թողուած փոքրիկ մասն հարելով վերջացրնել :

Մի այլ այգւոյ մէջ կեռասի ծառին հովանոյն ներքև ընկող մնած քսաներկու տարեկան գեղադէմ պատանի մի կ'երևի նիհար , արտում և տխուր : Չախ արմուկն գետնի յինած և ավին՝ ծնօտին , խորին մտածմանց մէջ է հիւանդագին : Գիմադրութենէն այնպէս կ'երևի , որ միաքն յղացեալ խօսքեր ունի և ծնանելու վերայ է : Այս պատանին օրիորդ մի սիրած է հարս առնելու և օրիորդն զինքն սիրած է և կը սիրէ , միայն թէ նորա ծնողքն չշանուելու հաճութիւն չեն տար : Պատանին յափշտակուած է մտածութեամբ , զիս չ'տեսներ , ես ուշի ուշով կը զիտեմ , նորա ողորմելի վիճակն գութս կը շարժէ , հետզհետէ կա-

1. Սուփրա . Սեղանի սփռոց :
2. Կուլայ . Գինոյ փարջ :
3. Թէգուզ . Թէև , թէպէտ :

րեկցութեանս աստիճանն կը բաղմապատկի , և ոչ ինչ չեմ կարող օգնել նորա բարոյական ցաւոց : Մի քանի կաթիլ գառն արտասուք թափեց և քանիցս թառանչ քաշելէն յետոյ սկսաւ բարակ և նուաղուն ձայնիւ երգել սոյն Մոտեմադն :

Նոր բացուած կարմիր վարդ ես  
Շաղն տերևին կոկոն կոկոն ,  
Գեղ ու համբաւդ աշխարհ բունեց ,  
Սէրդ միասին օրոն օրոն :

Չունիս նրման ոչ մի երկրում ,  
Արդեօք դու ի՞նչ նոր հրաճք ես ,  
Հասակաւ ես անման ,  
Գեղեցիկութեամբ դու մի հատ ես :

Եւայ ես դու նոր ստեղծուած ,  
Զարմանալի սիրոյ ԳԻՄԱՏ ես ,  
Կամ հրեշտակ ես երկնային  
Եւ կամ պատկեր աստուածային :

Թուխ թուխ ունքերդ երկնից կամար ,  
Թերթերունքդ սուր հրեղէն ,  
Նախշուն աչքերդ արև , լուսին ,  
Գէմքդ շամատան վառ լուսեղէն :

Խեղճ՝ նետահար պախրայի<sup>1</sup> պէս  
Ոչ մի տեղում գաղար չ'ունեմ ,  
Չեմ իմանում ի՞նչ անեմ ես ,  
Ա՛խ , սիրովըդ խորովուած եմ :

Գիշեր ցերեկ տեսոյդ կարօտ  
Տաղ եմ ասում վընկվընկալով<sup>2</sup> ,

1. Պախրայ . Եղջերու :
2. վընկվընկալ . Աղետալի ելևէջիւ երգել :

Ո՛՛Տ, սիրազատ պիւլպիւլի պաս  
Անունդ եմ տամ ծըլվզլալով:

Ամեն բոսկէ թէ դան անցնեն  
Իմ սուր մտքից հարիւր բաներ,  
Ըննուսուն ինն, իմնց, դու ես,  
Իսկ մինն էլ իմ մի հատ ակսպեր:

Թէդուզ օրըն հազար մարդիկ  
Եւ բիւր հրեշտակ եմ ես տեսում,  
Միշտ հանապազ քո նուրբ պատկերն,  
Ես իմ զէմըն, միայն եմ տեսում:

Ա՛խ, թէ մանեւ սիրաբոս, հողիս,  
Էն սեղ մինակ քեզ կը դանես,  
Թէ օրն ՚ի բուն լեզուս բլուլայ<sup>3</sup>,  
Մարեամ, Մարեամ միայն կը լսես:

Էշխիցդ<sup>4</sup> հիւանդացել եմ  
Անկողնում անյոյս հողեար,  
Այլ դեղերից յոյս չի մնաց,  
Մինակ դու ես իմ յոյսն ու ճար:

Ոչ մի բժիշկ չէ իմանում,  
Ո՛՛Տ, իմ ցաւն ուրիշ ցաւ ա,  
Ամեն դեղով չէ լաւանում,  
Ա՛խ, քո սուրբ սէրն ուրիշ դեղ ա:

Իմ ցաւըն միայն դու ես զիտում,  
Ե՛կ, բժշկիր ինձ էս ցաւից,  
Մահուս, կեանքիս միակ տէրն ես,  
Գէ՛ աղատիր ինձ էս մահից:

3. Բլբլայ. Շարունակ խօսիլ, լեզուի բերանի մէջ դառնալն:

4. Էշխ. Սէր:

Արի՛ մատաղ, մի սպանիր,  
Ճիւան<sup>5</sup> ջանիս եկ խնայիր,  
Գոնէ՛ անխ, վերջին շնչումս  
Գէ՛ մի բերան ինձ հետ խօսիր:

Պասպանձուի ոչ լեզուն քո հօր,  
Քարանայ ոչ սիրաբոս քո մօր  
Որ «Տալ չէնք քեզ էն սղային»,  
Ասում են միշտ քեզ ամեն օր:

Խեղդում եմ սիրոյ ծովում,  
Քեզանից զատ ոչ ոք չունիմ,  
Ազաչում եմ, եկ ինձ զըլմա՛,  
Մի՛ թողուր որ էսպէ՛ս մեռնիմ:

Ամաչում եմ երկար խօսիլ  
Էսքան շատ ա, բաւ համարիր,  
Ղատ վիճակում խեղճ հիւանդ եմ,  
Գէ՛ մի արի՛ հալս իմացիր<sup>6</sup>:

Չէլէպեանց Առաքելին այդոյն խոտերն երեք օր յառաջ հարուած և ծառոց տակերն խիստ լաւ մաքրուած են: Առաքել իւր ընտանեաց և Մակրտումեան Բարսեղին հետ թթենի ծառոց զովագին հովանեաց ներքեւ սեղանի նստած ուրախութիւն կ'անէ: Բարսեղն Առաքելի և նորա ընտանեաց հետ մեծ յարգանքով կը վարուի. իսկ Չէլէպեանցն և իւր կիներն, զողջէս ծնողական սիրով: Սեղանի կերակուրքն են խորոված ոչխարի միս, տապկած դետածուկն, սեր, ձիւաղեղ, կաթնասպուր և ձիւերես հաց. իսկ ըմպելիքն թէ՛ննէ կիւտի պատուական զինի և օղի, և ընդ նմին նորախայծ պտուղք:

Աննայ իւր Զումշիւս փոքրիկ եղբօր ծառէ ծառ կապուած ձօ-

5. Ճիւան. Կորահաս, մատաղաշ:

6. Հալ. Որպիտութիւն:

Ճանն կ'որորէ քնացրնելու համար, մանուկն իւր կապկպուած ձեռքերն քակելու ջանալով իւր քրոջ երեսն կը նայի. երբեմն գողարիկ կերպիւ կը ժպտի և երբեմն բոշոր մարմինն շարժելով ազատութեան ճիգ և ձայն կը հանէ : Ճառահիր յոտից վերայ կանգնած, միշտ իւր մօր ակնարկութեանց և հրամանին կրօպասէ, Հռիփսիմէ թէյ կը պատրաստէ. իսկ Բարսեղ դինոյ կուլէն իւր մօտ առած թէ կարդաւ բաժակ կը մատակարարէ և թէ կերակուր կ'ուտէ ամօթխած շարժմունքով :

Սեղանն կը վերջանայ, այգւոյն չորս կողմերն պտոյտ կ'աննն Առաքել, Թագուհի և Բարսեղ ՚ի միասին ասելով, խօսելով և նորահաս կեռաններէն հասուններն քաղելով և ուտելով. աղջկունք սեղանի նստած են, Զուճիտ մանուկն արթուն է թեւարձակ և կը խաղայ մի կաթնախնձորի հետ, զոր Աննայ կախած է ճօճանի վերեւէն : Կերակուրն վերջացած է, թէյն պատրաստի և արեգակն խոնարհած, անուշաբոյր ծաղկանց ածուներու եղբքն կարգաւ նստած թէյն կը խմեն. Բարսեղի աչքերն եթէ պատահմամբ Ճառահիրի աչաց հանդիպին, սաստիկ կը շեկնի, նոյնպէս Ճառահիրինն :

Աննայ նոյն ծաղիկներով իւր եղբոր ոսկեհեր գլուխն զարդարելով՝ տուն կը գառնան ամենեքեանքն ՚ի միասին :

Մօտակայ արտօրէից ասոր հասկերն գեղնած, զուարճալի տեսքով կը ծածանին, հունձն մօտ է :



ԳԼՈՒԽ Ը.

ՀՈՒՆՉ ԵՒ ԿԱԼ

Ամբնային աւուրց մէջ կը մտնենք. աւուրք զուարթագին են, եղանակն պայծառ, օդն մաքուր և արտօրայք հասած : Քեաթուս

կայ սարին կատարէն արեգակն չորս մասանց երեքն ելած է, որոյ առաջին ճառագայթքն շեղակի սփռուած են արտօրէից կիսոց վերայ, և որոց ծիրանագոյն նշուլից մէջ կը պարեն անթիւ հիւլէք (մանրամաղ փոշիք) զանազան ակնահաճոյ և հոգեպարար գոյներ ստանալով :

Հնձող տղամարդիկ առաջակապ, մանդաղ, մասնոց, հաց, քսակաւ քամած մածուն պայուսակներով շալակած Պառաւ Նանի արտերն կ'երթան հնձելու : Ճանապարհին միմեանց կը խօսին հնձոց վերայ, աշխատանաց վերայ և զիւղականաց նեղ վիճակի վերայ : Գլխաւոր խօսակոթ թիւնն այն էր, որ անձրևի և արևի տակ անդադար կ'աշխատին, բայց երբէք հանդիստ կեանք և ապահով վիճակ չ'ունին : Ղան զի սէրութեան տուրքն և սարապարհակ ծառայութիւնքն մի կողմէն և զիւղի խանինն միւս կողմէն իւրեանց կարողութիւնէն շատ վեր են : Թող Պարսիկ աւազակաց յափշտակութիւնքն և այլ վնասքն :

Խաչենու գոտալին, մանուսնոյ Ինձածախ զիւղին այս տաղնապալից վիճակն ամեն հասկացողաց խորին վիշտ կը պատճառէ. բայց ամենամեծ վիշտն այն է, որ մարդ չէ կարող խօսիլ կամ բողբոջել նոյն նեղութեանց համար, ուր գոտաւորք անիրաւ, հարկահանք անդութ, որք տէրութեան սահմանած արոց եռապատիկն կը պահանջեն ժողովուրդէն :

Ղարաբաղու թէ արք և թէ կանայք անպային գործերն միշտ երգելով կը գործեն. քանզի երգերն մարդոց թախձութիւնքն և վիշտքն կ'ամոքեն, որտից եռանգն կը վառեն և ջանքն, ոյժն ու զօրութիւնն կը կրկնապատկեն :

Բաղտասարեանց արախն մէջ քառասուն և վեց տարեկան բարձրահասակ հնձող մի իւր տեսնուէր ոչխարնի առաջակապն կապած, ճակատն լայն, գլուխն մեծ, աչքերն թուխ համանման յօնքով և հասա պիտիւրն գեղեցիկ ոլորուած : Այս տղամարդն Բաղտասարեան Գրիգորն էր, որ կարծես թէ հունձն եղնձի պէս կ'ուտէր, հետեւալ երգն երգելով.

Սիրոս սազ, թեւերն սիմ<sup>1</sup>, էշխ աշուղ, լեզուս թաղանայ<sup>2</sup>,  
 Ածեմ, կանչեմ, հնձեմ, ախ, էշխի ճանկով<sup>3</sup> եանայ եանայ<sup>4</sup>,  
 Օրեխն պարզ, քամին զով, արտերն հասած, արեն յառաջանայ,  
 Է՛յ Հայոց հնձուորք, օր, սիրտ, էշխ, զով միշտ էսպէս չեն մնալ :

Անգին մարդրիտ հասկերն խրչխրչում են ծղօտի վերայ,  
 Մին միւսի կուլով ընկնում քարն տալիս թաղի վերայ,  
 Երդում է ճիճին<sup>5</sup> ճի, ճի շուքարան ծառի վերայ,  
 Յօրեն, գարի, ճիճի, Հայոց հնձուորք, միշտ էսպէս չեն մնալ :

Առաջակապներն ամուր կապած ձեր էդ մէջքի վերայ,  
 Մասնոցներն կարգաւ շարուած ձեր զօրեղ մասների վերայ,  
 Մանդաղներն սրուած, արտերն հասած, մեր կեանքն մի մաղի վերայ,  
 Է՛յ հնձուորք, առաջակապ, մասնոց, կեանք միշտ էսպէս չեն մնալ :

Բռնեցէք ճանկերն<sup>6</sup> մեծ մեծ, եղբարք, ճանկն դրէք ճանկի վերայ,  
 Երեք կուտակն<sup>7</sup> մին կապեացէք, խուրձն դրէք խրձի վերայ,  
 Խուրձերն մի տեղ բերելով փանջաբն<sup>8</sup> դրէք թումբի վերայ,  
 Ինչու որ ճանկ, կուտակ, փանջաք միշտ էսպէս չեն մնալ :

Փանք քեզ Աստուած, քեզ փանք զթած, միշտ հանապաղ և ամեն օր,  
 Որ տաս դու մեզ արև, անձրև, առողջութիւն ինչպէս էս օր,  
 Հայ, կերակուր, զինի, օղի ամեն տարի միշտ նորանոր,  
 Ինչից աս, Տէր, առողջութիւն, հայ, կերակուր միշտ միապէս  
 չեն մնալ :

1. Սի՛մ. Լար պողպատի :
2. Թաղանայ. Սազ ամեղու կեռասի կեղեն :
3. Ճանկ էշխի. Հուր սիրոյ :
4. Եանայ եանայ. Սիրոյ կրակով վառուած :
5. Ճիճի. Ճպուռն, որ ճի ճի ձայն կը հանէ :
6. Ճանկ. Բուռն. բռնալիւր հնձեցէք կամի ասել :
7. Կուտակ. Վեց բռնալիւրն միմեանց վերայ կը դնեն և կուտակ կ'ասուի :
8. Փանձաք. Տասն որայք, որ մի տեղ զիգուած է :

Քո շուքն<sup>1</sup>, Աստուած, Հայաստանից ախ, անպակաս դու միշտ անես,  
 Կարկուտ, մարախ, թրթուր, ջրեակ մեր անդերից հեռու տանես,  
 Փանջաքն արաից, աշանն կալից, հացըն տաշտից պակաս չ'անես,  
 Մեր մեղքից աս աճապ, ամեն բաներ ածան, առատ չեն մնալ :

Քանի հոգիդ մարմնումդ է, ուստայ Գիւղի<sup>2</sup>, փափախն գլխիդ,  
 Մանդաղն ձեռնումդ, Վանէս<sup>3</sup> եղբայրդ կանգնած մօտիդ,  
 Գէ՛ ջանք արա, խուրձն դիր խուրձիդ վերայ, փանջաքն թումբիդ,  
 Չիւն<sup>4</sup> որ հոգի, մարմին, եղբայր միշտ անբաժան չեն մնալ :

Չօլեանց ցօրենարտին մէջ, որ Բաղտասարեանց արտէն բաւականին հեռու է,  
 քսան և հինգ տարեկան երիտասարդ մի ևս սոյն երզն կ'երգէ :

Թէգուզ<sup>5</sup> հարսըս Պալլուճան<sup>6</sup> աս,  
 Բայց էշխն ստումս, ինքրն տան<sup>7</sup> աս,  
 Սուրբ կրակով այրուում եմ  
 Հարայ, մատմթ<sup>8</sup> էս ինչ բան աս.  
 Աման ճար, հասէք ճար, մի ճար :

Ախ, էս ինչ հրեղէն վառ կրակ աս,  
 Սրտումս դնողն (մարդ չէ) Աստուած աս,  
 Թէգուղ Լողման ճարահն էլ գայ,  
 Պըրծնելու մի ճար չկայ. Աման ճար և այլն :

1. Շուք. Հովանի :
2. Գիւղի. Գրիգոր :
3. Վանէս. Յովհաննէս :
4. Չիւն որ. Որովհետև :
5. Թէգուղ. Թէպէտ :
6. Պալլուճայ. Այսինքն Պալլուճայ զիւղին մէջ է :
7. Տան. Տան մէջ է :
8. Հարայ, հասէք. Յօրնութիւն փութացէք :

Թէ դուզ էլ զան անհուն ծովեր,  
Թէ դուզ Գրախտի չորս մեծ դետեր,  
Թէ դուզ Մասսի գիզուած ձիւներ  
Անհար ա անցուցանել. Աման ճար:

Հինգու<sup>1</sup> տաքն է շիւի մօտ ինչ ա,  
Գծովքի կրակն սիրոյ մօտ ինչ ա,  
Մի ասող չկայ զքո ցաւն ինչ ա՞,  
Ա'խ, էրուում եմ, մի դեղ չը կայ. Աման:

Չորս ամիս ա հերանց<sup>2</sup> տան ա,  
Եարար<sup>3</sup> էս ինչ դատանտան ա,  
Աճապ սրբան ո՞վ կ'դիմանայ,  
Պողպատն անգամ չի դիմանայ. Աման:

Ով էս կրակն, որ ընկել ա,  
Իմ հալն միայն նա կ'իմանայ,  
Սիրտըս օճաղ<sup>4</sup>, էշխս կրակ ա,  
Հողիս թղթովս ճըլճըլում<sup>5</sup> ա. Աման:

Էշխի հիւնարն<sup>6</sup> ով դիտում ա,  
Նա ինձնից էլ չի նեղանայ<sup>7</sup>,  
Որ Լէյլի, Մէջնունի նրման  
Խաղ եմ կանչում եանայ եանայ. Աման:

1. Հինգ. Հնդկաստան:
2. Հերանց. Այսինքն հարսն չորս ամիս կայ, որ իւր հօր տան
3. Եարար. Ո՞վ Տէր Աստուած: մէջ է:
4. Օճաղ. կրակարան:
5. Ճըլճալ. ճենճերուիլ:
6. Էշխի հիւնար. Սիրոյ գօրուածիւն:
7. Նեղանայ. Այս տեղ զիս չմեղադրեր, բառի մտօք զործածած է:

Ես աշուղ չեմ, այ իմ Աննայ,  
Աշուղ պէտք է, որ իմանայ,  
Սաղով գովել քեզ գիտեմայ  
Օ'խ, էդ ինչ պոյ<sup>1</sup> ինչ պուսաթ<sup>2</sup> ա. Աման:

Աննայ, սէրդ ինձ աշուղ արաւ,  
Էս քեօս միաքս էշխովդ բացաւ,  
Սաղ չունիմ, գովեմ մանդաղաւ  
Ո'հ, քեզ նման էլ ո՞վ ծնաւ. Աման:

Թուխ թուխ յօնքերդ կամար կամար,  
Մեծ մեծ աչքերդ ջահ լուսավաւ,  
Սուր թերթերունքդ մի մի նշլար  
Չ'կայ սիրոյդ պէս քեամանտար<sup>3</sup>. Աման:

Սիւլկեալ<sup>4</sup> թուշերդ վարդեր բացուած,  
Կեռեքներդ<sup>5</sup> մարդրիտ շարուած,  
Էդ պուռններդ<sup>6</sup> շուշան ծաղկած,  
Գրախտիդ նուռ, շամամն հասած. Աման:

Չորս սուանի<sup>7</sup> ծամերդ կախուած,  
Լայն ճակատիդ ոսկի շարուած,  
Գէմքդ լուսնի պէս բոլորուած,  
Շիմշատ<sup>8</sup> պոյրդ լաւ զարդարուած. Աման:

1. պոյ. Հասակ:
2. պուսաթ. կերպարանք, տեսք:
3. քեամանտար. Որսորդ:
4. Սիւլկեալ. Ծիրանի զոյն:
5. կեռեք. Ատամն:
6. պուռն. Շուրթն:
7. Չորս սուանի. Բառահիւս:
8. Շիմշատ. Շիմշիր. բայց այս տեղ կը նշանակէ նրբակալմ:

Ալ միթանալ<sup>1</sup> Հընդստանայ<sup>2</sup>,  
 Գօտի ու չարղաթղ Թէհրանայ,  
 Մով հալաւըդ Ֆուանդստանայ,  
 Չէ քեզ պէս կեօզալն Կիրճստանայ . Աման :

Սար, ձոր փանջար կ'անեմ, Աննայ,  
 Գեռ մինակ չեմ, սուրբ սէրդ հետս ա,  
 Թէ որ մեռնիմ, Աստուած վկայ,  
 Էշխդ Առուսեալի գերեզմանն ա . Աման :

Մեր սիրելի Առուսեալէն սակաւ ինչ հետի Գասպարեան Գաբ-  
 րիէլն մեծ եռանդիւ կը հնձէ և բարձր ձայնիւ կ'երգէ :

Օգոստոսի տաքն Կովկասու ձիւնին ինչ անի<sup>3</sup>,  
 Մովթանու<sup>4</sup> կրակն Ովկիանոս ծովին ինչ անի,  
 Գժոխքի թօներն Սուրբ Լուսաւորչին ինչ անի,  
 Էս արեւն էլ գժոխք գառնայ, ինձ ինչ պէտք է անի,  
 Չիւնքի իմ սիրան միշտ քեզանով զով ա, Անթառամ<sup>5</sup> :

Թող ամեն հնձող Շաքար աղբիւրի ջրիցն խըմի,  
 Սառնով բրդուշ ուտի, ձիւնով թան խըմի,  
 Ցուրտ շարպաթով, անոյշ նապաթով հունձ անի,  
 Ես էլ անջուր արտերում հունձ անում լինէի,  
 Ինձ համար ձիւն, սառն, շարպաթ և նապաթ ես, Անթառամ :

Թող զալամքեար եօրդանում, փափուկ տէօշակում,  
 Կի լի բարձի վերայ երկու գլուխ մի սեղում

1. Միթանայ . Կանանց զգեստուց մի տեսակն է :
2. Հընդստանայ . Հնդկաստանէն, Թէհրանէն, Եւրոպայէն և Արաստանէն եկած :
3. Գարաբաղու ձիւնն Թի Գանի բայից կրասորականն իբրև ներքործական բորձ կ'աճուի, ինչպէս կը տեսնուի երբի որդեց ձիւն ա :
4. Մովթանու կրակ . Հրաբուրդն մի է Կասպից ծովին եզերքն :
5. Անթառամ . Գարրիէլի կնոջ անունն է :

Մինչև լոյս ճիտ արած քնանան մին մինի յրկում,  
 Ես էլ լինիմ գլուխս քարին, կողս տափին մինակ մի սարում,  
 Քո սուրբ սէրն ինձ համար եօրդան, տէօշակ, բարձ և ընկեր ա,  
 Անթառամ :

Թող ամեն մարդ Աստուծոյ նման հարուստ լինի,  
 Իմ բախտն խոռովի, տունս, տեղս և փողս յետ առնի,  
 Թագաւորն էլ բոլոր հողերս ձեռքիցս առնի,  
 Թաք<sup>1</sup> ապրինք ՚ի միասին, դու պառաւ, ես ձերունի,  
 Ինձ համար տուն, տեղ, փող և հարստութիւն ես, Անթառամ :  
 Թող աշխարհք էլ հիւրիներով, փարիներով<sup>2</sup> լի լինի,

Ամեն մարդ էլ նոցանցից հինգ, վեց հաս առնի,  
 Թող անգութ ծաղիկն էլ գայ քո էգ սիրուն գեղն տանի,  
 Աստուած վկայ, չեմ դանդաղտիլ, ուրիշն չեմ սիրել,  
 Իմ հիւրին, փարին, թագուհին և սուլթանն դու ես, Անթառամ :  
 Թող մին մինի հետ քե՛՛՛՛՛՛ քաշէ ամեն սիրական,

Մեճլիսով, սաղանտայով, քեամանչայով պատուական,  
 Եսիր<sup>3</sup> տանին ինձ Տաղստան և քեզ Ամերիկան,  
 Թաք լինիս դու իմ սրտումն ես քո, իմ սիրական  
 Մին մինու համար մեճլիս, սաղանտայ և քեամանչայ ենք, Անթառամ :

Գեղեցիկ զարդն՝ սեկն և տըղեղն ինչ անի,  
 Սիրունն էլմաս, մարձան, ոսկի զարդերն ինչ անի,  
 Տըղեղն Թէգուզ գնի անգին քարով մատանի,  
 Ոսկի կամար, մարդարտի շարան էլ լաւ սաղիլ չի,  
 Գու ոսկի, էլմաս, մարձան, անգին քար ես, Անթառամ :

Ին ինչ օր էր անի, երբ մեզ միասին պսակել տարին  
 Չեռք ձեռքի տուած ոխտ արինք առաջի սուրբ սեղանին

1. Թաք . Բաւական է, որ :
  2. Հիւրի, քարի . Առասպելեալ աննման գեղեցիկութիւն ունեցող
  3. Եսիր . Գերի :
- Հաւրժահարսուրք :

Մինչև մահ հաստարիմ մնալ ամուսնու թեան սուրբ կապին ,  
 Բո Գաբրիէն միշտ է նա , դու էլ կայ հաստար քո ուխտին<sup>1</sup> ,  
 Ես քեզ , դու ինձ համար ուխտ , կայ և սիրոյ սեղան ենք , Ան-  
 թառամ :

Այսպէս մեր հնձողք երգոյ աննման եռանդեալ վառուած ,  
 մեծ աշխուժիւ և քաջութեամբ կը հնձեն ցորեն և դարին և ու-  
 բայներ կապելով տեղ տեղ կը գիղեն : Երեկոյեան միջոցին դոմ-  
 շասայլերն լծուած կ'երթան օրուան հնձուած որայքն լցրնելով  
 կը բերեն և կալոց հով չ'փչող կողմերն առանձին առանձին գե-  
 ղեցիկ կը գիղեն , ուր արդէն կալոց միջի և գեղատեղեաց խո-  
 տերն և այլ բոյսերն բահերով մաքրուած և լաւ ջրուած են ,  
 տարեկան բերքերն առանց փոշոյ և հողոյ ժողովելու համար :

Երբ արշալուսոյ առաջին ճառագայթքն կը ծագին , այր , կին ,  
 հարս , օրիորդ և տղայ կալերն կը վաղեն , խուրճերն գեղերէն  
 քակելով կալոց մեծութեամբ աշան կ'անեն , զոյգ զոյգ եղինք  
 կամասայլից լծած աշանաց վերայ կը հանեն , որոց վերայ մանր  
 տղայք և աղջկունք և օրիորդք նստած երգելով կը կասեն : Տղա-  
 մար իկ դարձեալ հունձի կ'երթան , իսկ կանայք և հարսուհիք եր-  
 կու անցամ եղելով , մի անգամ հոսելով և վերջին անգամ  
 թիով եղելով (այս դորձիքներով աշանի տակն քանիցս կը դար-  
 ձնեն) լաւ կասել կը տան , կալեղերքն ցրուած հասկերն ցախ-  
 տելով աշանաց վերայ կը հաւարեն և կասելէն վերջն կալերու  
 աջողակ հողմ փչած կողմերն կը թափեն : Երեկոյեան ժամն տանն  
 և մէկին հնձուօրք կը դառնան արտերէն , և հոսելով կը քամն  
 աշաններն :

Ո՛վ , ի՞նչ զուարճալի է տեսնել զի զային կենաց այս տեսա-  
 բանն : Հողմուք աջողակ կը փչեն , ցորեն , դարի , դարնանի ,  
 հաճար և դարնապարի յարգերէն կը զատուին , յարգերն մղանով  
 տղայք մարագաց և կալապանից մ'ջ կը լեցընեն . կին , հարս ,  
 աղջիկ քամուած բերքերն կը շատարարեն կալից պարագ կող-

1. Ինչպէս նախնիաց երկու երգոյ մէջ , նոյնպէս այս երգին մէջ  
 ևս առելի կամ ոչպէս հանձնէր կան , բայց խախտել չուշեցի :

մերն . մշակ տղամարդիկ երբ կոյտ կոյտ գիղուած կը տեսնեն այս  
 տարեկան արգար վաստակն , բոլորովին կը մոռանան իւրեանց քա-  
 շած բոլոր նեղութիւնքն : Աստուծոյ լիարեան փառք տալով ,  
 չուալներով կը տանեն և ուրախ ուրախ հորերն կը լցնեն , որք  
 արդէն խողանով կողրուած պատրաստ են : Իսկ եթէ պատրաստ  
 չեն , տանց անկիւններն կը թափեն և յետոյ հորերն պատրաս-  
 տելով կ'ամբարեն :

Ամեն երեկոյ կաղ , կոյր , միակողմանի , ձեռնատ , աշուղ , տէւ-  
 րիշ , զորքողէ (չինկանայ) , օձարեր թովիչ մի մի պարկ , քսակ ,  
 տոպրակ , խուրճ , չուալ առած կալերէն առատ առատ ողորմու-  
 թիւն կ'ընդունին և գիւղին վերայ առատագեղ օրհնութիւն թա-  
 փելով զուարթագին կը մեկնին :

Կալերու վախճանին մտա Արժ . Տէր Արիստակէան տիրացու Աս-  
 տուածատուրին հետ կը գայ , կալերն կ'օրհնէ . Աղամէն սկսեալ  
 մինչև այն օրն , ինչ օրհնութիւն , զոր տուած է Աստուած մարդ-  
 կութեան , բոլորն ևս ժողովրդեան կը մատակարարէ , և իւրա-  
 քանչիւր կալէ մի մի լաք<sup>1</sup> (չափ մի է) ցորեան առնելով կը վե-  
 րադառնայ : Նոյնպէս սափրիչ տիրացու Օհանն մէն մի կալէ ցո-  
 րեան կ'առնու ՚ի վարձատրութիւն իւր տարեկան աշխատանաց :

Միտղայ և Աննայ աղբիւրի ճանապարհին միմեանց կը պատա-  
 հին , և իւրաքանչիւրն կըսկսի պատմել իւր արածն . երկուցունց  
 խօսակցութիւնն կալ կասելու և զեռ անձրեաց գալն չ'սկսած ,  
 քաջաբար շուտով լրացընելու կը վերաբերէր , և կալ կասելն  
 լրացընելէն յետոյ ՚ի միասին անտառներն երթալու և պտուղներ  
 ժողովելու :

Քանի մի շաբաթէն յետոյ աշնան հովերն սկսած էին փչել և  
 անձրեք տեղալ :

1. Ի նախնեաց անտի մեացաք սովորութեան մէ է այս , որան բլուտի  
 Կահանային մէ շաբ գորեան կը նուիրեն . իսկ սափրիչին մարդագլուտի մէ  
 շաբ . իսկ մանր պղպոց , որոց երեւներն գետն վէն ածիլտալի , կէս շաբ :  
 Այս էն սափրիչին և Կահանային վարչապարտութեանն քաց ՚ի շատանցն և  
 Ինտարքառն :

ՔԼՈՒԽ Ք.

ԷՇՈՒՆ

Արդէն ամեն մարդ յորեան, դարի, գարնանի, կորեկ և այլն կասելով պրծած է, աշխատաւոր անասունք, եղն և գոմէշ աղատ թողած են արօսներու մէջ: Իւրաքանչիւր տանէ մի այր և մի տղայ տարեկան զինի և օղի պատրաստելու համար յայգեկութի գնացած են. ոմանք Թէւնէկիւթ, ոմանք Աղտամ, ոմանք Շէլու և ոմանք Խրարրու: Այս տարուան այգեաց խողողներն այլ տարեաց հետ համեմատելով թէ առատ են և թէ պարարտ: Հրնձանք, օղեկաթնայք, գոմշասայլք և եղնատիկք պատրաստ են, մի կողմէն հնձանք կը կոխուին, աւաղաններն կը լցուին, կը քամուին, կը զտուին, օղի կը հանուին, և միւս կողմէն պատրաստուածներն զիւզն բերուելով տակաւաց մէջ կը լցուին: Նո՞ր զինիք կ'եփին, կը փրփրին և կ'եռան տակաւաց մէջ. օղիք կուպրուանի ձորակէն բաժակաց մէջ թափուած ժամանակ, մարդարտաց հատից պէս նոցա եղերքներով շարանաձև կը փայլին և տեսողք կը զուարճանան:

Անտառք գողցէս եղեմական հոտ կը բուրեն, վայրի պտուղք, տանձ, խնձոր, զղեար, տկողին և այլն թափուած և ծառոց տակ ցիր և ցան սփռուած են: Վայրենի խողողք զանազան ծառոց վերայ խիտ առ խիտ ողկու գներով ծանրաբեռնուած, տեղ տեղ անոր ճիւղերն ջախջախելով գետինն թափած են: Ամհի արջք իբրև անտառակալ թաղաւորներ մըթմըթալով կը շրջեն. թուհոց երդերն դադրած են, ձորոց միջէն վազող առատ ջրուէ ժներու ձայներն հողմաթափ տերեոց ձայնից հետ խառնուած լսողաց զուարճու թիւն կը պատճառեն:

Ինձաձախու կին, հարս, աղջիկ և մանր աղայք խուճբ խուճբ անտառներն ելած են միրգ ժողովելու մի քանի հրացանաւոր որսորդ սողամարդոց հետ, նոյնպէս Չէլէպեան և Աւագեան ընտա-

նիքն: Ամենայն որ չուալ, պարի, պայուսակ և տոպրակ պտուղներով լի տուն կը դառնայր, ոմանք անձամբ շալակած և ոմանք աւանակի բեռնած: Միրզայ Աննային կը հանդիպի վերագարձին, որոյ հետ թե թեի տուած խօսելով, խնդալով, իրարու մրդեղէններ նուիրելով խիստ ուրախ էին զմիմեանս զանելու համար: Եւ երբ զիւզին մօտեցան, Աննայ օրիորդն խնդրեց, որ Միրզայ իրեն հետ իւրեանց տուն երթայ. բայց Միրզայ, քեռիս կըռպասէ ասելով, բաժանեցաւ:

Երկու շաբաթէն յետոյ զիւզի շրջակայքն բոլորովին սև ցանքեր կ'երևէին և սերմանացան մշակ և հօտաղներ: Արդէն անձրեք իջած են, դուրանացելք փափկացած, եղն ու գոմէշ հանգստացած, եղանակն բարեխառն և օղերն դեղեցիկ: Միմեանց նախանձու երգելով կը քշեն անասուններն և իրարմէ շուտով վերջացնելու կը ջանան տակաւին ձիւներն տեղալ չսկսած: Միրզայ ևս իւր քեռուն հետ ցանքի ելած է, եղն ու գոմէշ լաւ խոտուէտ տեղեր կ'արածէ, ջուր կը տայ և ամենէն առաջ վերցացրուելու ջանքն ու եռանդն կը կրկնապատկէ: Աւերջագէս անդից և անդաստանաց մէջ մեծ շարժում և կենդանութիւն կը տեսնուի. երգոց և ձայնից ուրախութեան աղաղակներն կը լսուին և սերմուած ցորեանք և գարիք օղին մէջ սերմանելու ժամանակ կարմիր և սպիտակ, տարափի նման կը տեղան:

Կանայք, հարսնք և օրիորդք սերմացուներն մաքրելու, բուրդ և բամբակ դղելու, մանելու, ոլորելու և կծկելու կը զբաղին, երբեմն ևս ուրիշ անային դորձոց և պիտոյից. իսկ ծերունիք եկեղեցոյ գուռն ժողովուելով հին հին պատմութիւններ կը պատմեն, ոմանք քաջութեան, ոմանք սրտոտութեան, ոմանք անցուցած երիտասարդութեան, ոմանք զիւզի հարկաց ծանրութեան վերայ կը խօսին սրտի ցաւօք, և ոմանք Պարսից բռնութեան ժամանակի աղատութիւնքն այս միջոցի անաղատութեան նեղ վիճակի հետ բաղդատելով, տարբերութիւնն աւելի ծանր կը դաննեն ժամանակի պարագայից նկատմամբ:

Համարեա՛ թէ՛ սոյն միջոցին Ռուսայ Պօղոսն Ինձաձախ զիւզն մտաւ վարժարան բանալու համար:

ՊԼՈՒԽ Ժ.

ՄԻՐԶԱՅԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ ԿՐԹՈՒԹԻՒՆՔԻՆ

Արդէն իմացանք, որ Միրզայի հայրն արուեստիւ դարբին էր, զուգանի մեծ մեծ խոփերն, ձևիչներն և ուրիշ ծանր գործիքներն բովին մէջ և դարբնասալին վերայ մի ձեռքով այնպէս արագ և թեթև կը շարժէր, որոց վերայ տեսանողք մեծապէս կը զարմանային: Աւագ թէև գիւղացի, թէև արտաքուստ փոշոտուած և մրտուած, սակայն ներքուստ աստուածապաշտ, առաքինի և ճշմարտասէր անձ մի էր: Արուեստին մէջ անխարդախ, խոստման մէջ հաւատարիմ և յաճախորդաց հետ քողցրաբարոյ = թող այս, շատ անգամ աղքատաց համար աշխատասիրած գործիքներու որոշեալ վարձքն ամիսներով ոչ կը պահանջէր և ոչ չ'տուողներն կը նեղէր: Եթէ քանի մի ամիսէն յետոյ վարձք վճարէին՝ յիշեալ աղքատներէն ոմանք, ամենայն սիրով կ'ընդունէր. իսկ եթէ մի անգամ և երկիցս չ'վճարողք դարձեալ շինելու և նորոգելու գործիքներ բերէին, նորէն կը շինէր և զուարթօրէն ճանապարհ կը դնէր: Այնպէս, որ թէ չքաւօրք չէին ամաչելու առանց դրամի կրկին և կրկին գալու, և թէ նոցա պիտոյքն հոգալով իւրեանց գործերէն բնաւ ետ չէին մնար, որով միշտ օրհնելով կը մեկնէին խանութէն: Գարբին Աւագն բնաւ կարգալ և դրել չէր գիտեր. բայց իւր սիրելի Միրզային օրինաւոր ուսմանք և կրթութիւն տալու մեծ փափաք ունէր. սակայն գժբաղդաբար աղքատութիւնն և ընտանեկան անհրաժեշտ պէտքերն միշտ արդելք կը դառնային իւր այս բարի նպատակին: Շատ անգամ, մանաւանդ զիշերք երկարած ժամանակներն, կէս գիշերին ելնելով մինչև առաւօտեան ժամի ժամանակ խանութին մէջ կ'աշխատէր. զանգն զարկածին պէս տուն կ'երթար զՄիրզայ կ'արթնցընէր, և իւր հետ առած եկեղեցի կը տանէր: Գլխաբաց ներս մտնելէն յետոյ ծունր կրկնել, երեսն խաշակնքել, բազկատարած աղօթել, զկնի ժամ-

արձակին սուրբ Աւետարանն համբուրել, նոյնպէս քահանային ձեռքն և խորանի բեմն, մի ըստ միոջէ մեծ ուրախութեամբ կ'ուսուցանէր: Աւագին բոլոր աղօթքն «Հայր մերն» էր և այս պարզ խօսքերն. «Տէր Աստուած, դու իմ Միրզային շնորհք և իմաստութիւն պարզեես, իմ բանիս, գործիս յաջողութիւն տաս, թշնամաց ինձ (զիս) կարօտ չ'անես, անձիս առողջութիւն շնորհես, հոգւոյս արքայութիւն. հայն տաշտէս անպակաս անես, փողն քսակէս և ցօրենն հօրէս»:

Աւագ արուեստաւոր լինելով՝ միայն շարթ, կիրակէ և նախատօնակ եղած երեկոյներն եկեղեցի կ'երթար, իսկ առաւօտներն շարունակ: Գարբինն աղքատաց ողորմութիւնն և յաճախորդաց բերած նուէրներէն դրացեաց համար հանած բաժինն իւր որդւոյն ձեռօք կը տար, որպէս զի նա ևս ուսանի ողորմածութիւն, մարդասիրութիւն և ազնուասրտութիւն: Կերակրոյ ժամանակ զՄիրզայ իւր Սէնէմ քրոջ հետ ոտքի կը կանգնեցընէր, ձեռքերն կուրծքին վերայ դրած սեղանն օրհնել կը տար. իսկ կերակուրէն յետոյ բազկատարած «Հայր մերն» ասելէն և յԱստուծոյ շնորհակալ լինելէն վերջն՝ Միրզայ իւր քրոջ հետ այս մանկական աղօթքն կ'անէր. «Տէր Աստուած, հայրս, մայրս և բոլոր Հայոց ազգն երկար և խաղաղ կենօք պահես և ամեն փորձանքներէ ազատ: Տէր Աստուած, հօրս ուժ և կարողութիւն տաս և նորա աշխատանքն օրհնես»: Ապա իւր քրոջ հետ իւր ծնողաց և պատահեալ հիւրոց ձեռքերն համբուրելով կը նստէին:

Ուստայ Պօղոսի և ժողովրդեան հաճութեամբ Սէֆէրեան Յովհաննէսի գովին գերանամած սրահն որոշուած էր իրր վարժատուն, ուր ժողովուած էին քառասունի չափ մանկուք, որոց մէջ էինք նաև ես և Միրզայ: Յորտ օրերն, ինչպէս ամեն աշակերտք, նոյնպէս ես և Միրզայ ստիպուած էինք երեք չոր փայտ տանիլ վարժատուն վառելու համար: Փայտերէն այնքան կ'աւելանայր, զորս մեր վարժապետն ամեն օր և կիրակէ օրերն ևս կը վառէր առատօրէն: Ուստայ Պօղոսն մօտ քառասուն տարեկան, չլակն, միակողմանի, կարճահասակ և բարկացող անձ մի էր, որ միայն հասարակ կարգալ և գրել գիտէր, և միանգամայն սափրչութիւն

կ'անէր զիւղի ժողովրդոց համար . և ահա այս է պատճառն , որ Ուստայ Պօղոս կը կոչուի :

Արժատան վառարանի պատէն կախուած պատժական գործի մի կար ֆալսեայ անուամբ , որոյ աջ ու ձախ կողմերն շարուած էին մօտ տանն և երկու հատ զերիմաստի ճոպասներ : Բայ յայտցանէ ամեներկար ճոպատ մի ևս ունէր միշտ իւր մօտ , որով առանց տեղէն շարժուելու ուզած աշակերտին կը զարնէր : Այս ֆալսեայն և ճոպասներու տեսութիւնն և ներկայութիւնն աշակերտաց վերայ մեծ ահ և խորին սարսափ ձգած էին : Այն այն աշակերտին , որ իւր 'ի բերան ասած դասին մէջ մի կամ երկու սխալ խօսէր , աչքի բարին տեսնէ : Ահա երկու հասակաւոր աշակերտք Ուստայ Պօղոսի կայծակնացայտ ակնարկութեամբ ծունկ չորած տեղերէն վեր կ'ելնէին , սխալող աշակերտներն զեսնի վերայ կը տարածէին , ֆալսեան վար առնելով նոցա ոտքերն կ'ամրապնդէին , ուր եթէ փոքր ինչ ընդդիմացող լինէր , ֆալսեայն արջնի լարն այնքան կ'ոլորէին , որով տղայոց փափուկ ոտից մատղաշ կաշիներն տեղ տեղ կտրուելով արիւններն կը վազէին :

Իսկ զ՝ տղայք , բազէի ձեռքն ընկած որոց նման դողալով և կծկուելով պրկուած կը մնային : Ուստայ Պօղոսն զերիմաստի ճոպասներով անխնայ կը զարնէր և հետզհետէ կտրածներն կը փոխէր : Ծեծ ուտող մանկան աշխողորմ ձայն գրողըր դրացիս յօգնութիւն և յաղատութիւն կը հրաւիրէր . քարասիրտներն անպամ յաղատութիւն կը փութային և պրկուածն ազատելու ճար և հնար կ'որոնէին : Բայց ո՞վ կարող էր առիւծին ճիրաններու որս եղած զոհն ազատել : Շատ անգամ աչօքս տեսած եմ , ըստ որում ես ևս այն անիծեալ ֆալսեայն դառն մերոց բաժակն քամած եմ , որ Ուստայ Պօղոսին զթոթ կինն իւր մարդոյն անդթութեանց չ'զիմանալով և տղատութեան ուրիշ հնարք չ'դանելով կը վազէր լալով և ձեռ ուտողին ոտից վերայ կ'ընկնէր , և նոյն տղային պակաս մնացած ճոպատն ինչն ուտելով հազիւ կարող կը լինէր ազատել զնա : Կարճ ատենք , մեր վարժապետ Ուստայ Պօղոսն սոյն պատժական գործիքներով այն աստիճան սարսափ և սոսկում տուած էր աշակերտաց , մինչև անգամ խեղճ տղայքն դատ խօսե-

լու ժամանակ կը դողային : Ողորմելի տղայք ծայրայեղ սարսափէն աչքերն միշտ ճոպատին կը սեռուէին մինչ ցաւարտ դասախօսութեան , որ սափրիչին աջ ձեռին մէջ կը ճօճար շարունակ . մանկանց աչքն ճոպասներն կը զիտէին քան թէ խօսած դասերն :

Թէև շատ անգամ ձերուսիք և զիւղի Տէր Աբրահամ հարիւրամեայ փորձառու քահանայն յաճախակի աշակերտաց յայցելութիւն դալով և պատժուող տղայոց կրած նեղութիւնքն տեսնելով և համարի միջոցին նոցա խլրտումն , սոսկումն , սարսափն և դողն նկատելով կը ջանայր համոզել մեր վարժապետն քաղց խօսքերով .

— Ուստայ Պօղոս , թէպէտ մեք զիւղացի եմք և դու քաղաքացի , բայց այսու ամենայնիւ լաւ գիտեմք , որ ձե՛ծն և ճոպատն անասնոց կը վայելէ , քան թէ մարդոց : Մարդոց ամեն բան խօսքով կը լինի , իսկ անբան անասնոց փայտով : Լաւ գիտեմք , որ դու այս տղայքն շատ ձե՛ծելով , սոցա աշխոյժն պ'տը է մեռուցանես , եռանդն թմբրեցընես ուսումն առնելն մեռուցանես և վերջապէս քո և տղայոց ժամանակներն 'ի դժբանջօքուս պ'տը է վատնես :

Իսկ մեր վարժապետն նորա խօսքն ընդմիջելով կ'ասէր .

— Տէր հայր , դուք զիւղացի էք , տղայոց բնութիւնն լաւ իմացած չէք և չէք կարող իմանալ : Տղայք մինչև օրինաւոր ձե՛ծ չուտեն , օրինաւոր մարդ չեն կարող լինիլ : Լուսահօրի վարժապետս իմ վերայ քօան Ֆալսեայ կտորած է և երեք հարիւր ճոպատ : այնու ամենայնիւ հարիւրաւոր աշակերտք միշտ նորա մօտէն անպակաս էին , որոց ամեն մին մի մի օրինաւոր մարդ լինելով իրենանց նպատակին հասած են արդէն , և որոց ծնողք զիւրենք վարժապետիս բերած ժամանակ ոչսովս կը յանձնէին նմա . «Վարժապետ , ահա մեր տղայք , միսն քիզ , ոսկրն ու մորթն մեղ , բաւական է , որ լաւ գրել և կարդալ ուսուցանես» : Ես ևս այսպիսի ծնողք կ'ուղեմ , որ իրենանց տղայք բերած ժամանակ այսպէս յանձնեն ինձ :

Սոյն խօսքերէն ակներև կը տեսնուի , որ մեր գերիմաստ վարժապետին բարոյական առաքելութեան և կրթութեան հիմն ֆալսախային վերայ հաստատած էր և իմաստութիւնն ու գիտութիւնն ու-

սուցանելոյ եղանակն գերիմաստի<sup>1</sup> ճոպատին վերայ : Աերջապէս ինչպէս միւս աշակերաք, նոյնպէս ես և Միրզայ, որ գասընկեր էինք, երեք տարուան մէջ հասարակ կարգալ և գրել ուսանք :

Միրզային մայրն, մուսցանք ասելու, ամեն առաւօտ իւր որդւոյն հետ մինչև վարժարան կը գայր և զվարժապետն կը թախանձէր, որ իւր զաւակն շատ չ'ծեծէ. աչքն վախցած է, կ'ասէր, վարժատուն շատ դժուարաւ կը գայ, եթէ ես իւր հետ չ'գամ, երբէք վարժատուն չ'գար :

Այսպէս էր Միրզայի կրթութիւնն. խօսիմք այժմ Աննայի կրթութեան վերայ :

Թագուհի, Աննայի մայրն վարժարանի մէջ կրթուած և դաստիարակուհեաց ձեռօք դաստիարակուած չէր, այլ իւր դպրոցն եղած է միայն բնութիւնն : Թագուհի իւր բնական խոհեմութեամբ, ազնուասրտութեամբ, աշխատասիրութեամբ, անարարութեամբ և որդեանութեամբ այն հազուադիւս կիներէն մին էր, որք անապատի և հովտի շուշանին նման բնաձիր գեղեցկութեամբ կը փայլին : Չէլէպեան Առաքելն տարուան մեծ մասն տան մէջ չէր գրտնուիլ, բայց որում ճանեթալի Ռուսաց զօրքին տարեկան ուտելիք հացն դաշինքով իւր վերայ առած էր. վասն որոյ զաւակաց կրթութեան հոգն միայն իւր կնոջ վերայ մնացած էր : Թագուհի ամեն առաւօտ իւր աղջիկներն շուտով կը զարթոցանէր 'ի միասին, երեսներն լուանալ, սրբել և մաղերն սանտրել և ծամ անել կը տար. և ապա ինքն ևս նոցա հետ դէպ յարևելս կանգնելով միաբերան «Հայր մերն» ասել կը տար, զոր բերանացի ուսուցած էր նոցա : Սոյն պարզ աղօթքն ևս տէրունական աղօթքին կցել կը տար. «Տէր Աստուած, մեր ծնողաց շուքն մեր վերայէն անպակաս անես, մեր հօր, հօր եղբօր, բոլոր Հայ ազգի և մեր գիւղի ժողովրեան գործոց յաջողութիւն և երկար կեանք պարգևես, մեզ շնորհք, իմաստութիւն և խոհեմութիւն, մեր մօր

<sup>1</sup> Գրագի մեր ուսուցայ Պեղան այսպէս սորոգաբանած լինի գերիմաստի ճոպատն. արունց բերեմաստի ճոպատիւ շեծ ուրեւու, բերագոյն ինտորո-բիան ուսանին անհնարին է :

կարողութիւն, խաղաղ կեանք և զօրութիւն, և մեր արտօրէից առատութիւն տաս» : Յետոյ ամենեքին միաբերան, ամէն, ասելով և զիրեք խաչակնքելով իւրեանց մօր ձեռքն կը համբուրէին : Սոյնպէս կ'անէին նաև գործի սկսած, սեղանէն վերջն, և քնանալու ժամանակներն :

Աղջկանց գործքն էին բուրգ գզել, մանել, ոլորել, կծկել, հինել և գորգ, կապերա, պայուսակ, նախշուն դուլպայ, տանայ շալ և այլն գործել. փոխնուրդներ լուանալ, կարկատել և նոր զգեստներ կարել : Թագուհի իւր աղջիկներն բնաւ անգործ չէր թողուր. ամեն բանի մէջ կը զգուշանայր, որ իւր զաւակունքն լինին ճշմարտախօս, համեստ, հնազանդ, միմեանց հետ սիրով և ամեն գործի մէջ հաւատարիմ և խոհեմաշարժ : Այս ամենն նախ ինքն գործով կ'կատարէր և իւր օրինակաւ կ'ուսուցանէր զնոսա. եթէ պատահամք սխալէին տղայք այնպիսի գործոց և իրաց մէջ, զորս նոցա չէր ուսուցած ինքն կանխաւ, չէր բարկանալ երբէք : Նախ մի քանի անգամ լաւ կ'ուսուցանէր և ապա ուսուցածին համեմատ կ'պահանջէր :

Աննայ օրիորդն ամեն գործոց և շարժմանց մէջ իւր միւս քոյրերէն աւելի կանոնաւոր շարժողն, յառաջադէմն և շնորհալին էր. ուստի թէ 'ի նոցանէ շուտով կ'ուսանէր և թէ նախչէրն և զոյններն անսխալ կը գործէր : Աննայ օրիորդին միակ ջանքն և նպատակն էր յամենայնի իւր մօր նմանիլ, զոր շատ կը սիրէր, և միշտ կ'ուզէր նորա կամքն կատարել և 'ի նմանէ սիրուիլ :

— Հազար երանի՛ Չէլէպեան Առաքելին, որ այսպիսի կնոջ պատահած է. — կ'ատէին նորա տունն հանդիպող խաներ, պէյեր և շինականներ : Քանզի մեծապէս կը վարմանային, երբ տան միջերըրը կահ ու կարասիք խիստ վայելուչ և կանոնաւոր կարգաւորեալ կը տեսնէին :

Այսպիսի աննշան դիւրի մի մէջ Առաքելին աղջիկներն՝ լաւ գպրոցի մէջ կրթուած աղջկանց պէս կրթեալ, ազնուասիրտ, տնարար, անտեսապէտ և գործօնեայ էին շնորհիւ իւրեանց մօր : Սակայն Առաքել իւր կնոջ յարգն ու պատիւն իմացող չէր. իւր համար արժէք չ'ունէին այս առաքինութիւնքն : Հատ անգամ կը

խստանայր, և մի փոքր բանի համար կնոջ սիրան կը վշտացընէր. վերջապէս այն խելքի մարդիկներէն էր, որք կինն իբրև գերի գործ կ'ածեն և ոչ իբրև ընկեր հաւասար:



ԳԼՈՒԽ ԺԱ.

ՉՄԵՌՆ

Ամեն մշակ աշնացանքէն և ցելերէն պրծած էր, դինի և օղի բերողք այգեկութէն: Բոլոր գիւղացիք ձմրան պատրաստութիւն կը տեսնէին հանգիստ կեանք վարելու համար: Գիւղի մէջ ամեն տանեաց վերայ փուռած ցորեն, կորեկ, և գարնանի աղուն կը տեսնուէր, զորս կանայք և հարսուներ կը չորացընէին, խախալներով և մաղերով կը մաքրէին և չուալներու մէջ լցնելով ջրաղացներն կը յուղարկէին աղալու և ամբարելու համար. քանզի ձմեռներն ջուրք սառած լինելուն պատճառաւ աղօրիք չեն բանիր:

Փարդիկ և տղայք, ոմանք գոմշասայլերով, ոմանք ձիերով և ոմանք աւանակներով, չոր փայտ, կտրոն, կերան և ցախ կրելով սրահներու առաջքն փայտակոյտեր դիզած են: Իսկ ոմանք հասա և երկայն սորաններ բերելով իւրեանց տանց մօտերն կոյտ կոյտ դարսած են ձմրան սաստկութենէն աղատ մնալու համար:

Սոյն միջոցին անտառաց տերեք բազմազան դոյներով ներկուած կը տեսնուէին, որն կարմիր, որն դեղին, որն ծիրանի, որն դորշագոյն և որն աննկարողելի դոյներով: Թուչնոց երգերն իսպառ դողբած են, միայն ազուաւոյ և կաշաղակաց ձայներն անախորժ եղանակաւ կը լսուին երբեմն երբեմն:

Քամիներն կամաց կամաց կը սաստկանային, ծառք իւրեանց դեղեցիկ տերեւներէն կը մերկանային, ձորք, փոսք, փապարք, քարայրք և խուռչք տերեւակոյտներով կը լցուին, բնութիւնն կարծես

թէ իւր բոլոր դարդերէն կը մերկանայր: Վայրենի անասունք, սողունք, զեռունք և թռչունք իւրեանց համար պատսպարաններ կ'որոնէին. սար, ձոր, գաշտ և բլուր թանձր ձիւներով կը ծածկուէր և բնութիւնն սպիտակ սառան կը հագնէր:

Գետակաց և առուակաց մշտակոչ անոյշ ձայներն բոլորովին լուած են. քանզի միապաղաղ և թանձր սառոյցներն լուեցուցած էին ամենայն խոխոջիւն և կարկաչիւն. միայն աղբերականց բղխած տեղերն բաց են, վասն զի տաք լինելուն պատճառաւ սառած չեն:

Եղանակն սաստիկ ցուրտ է. գիշերք երկար են, օջաղներն<sup>1</sup> և բուխարներն<sup>2</sup> կը վառին. շինականք իւրեանց պարզ ընթրիքն աւարտած են: Գրացիք դրացեաց մօտ կը ժողովուին և կրակարանի շուրջն կը բոլորին: Տեղ տեղ առակներ կ'ստեն, տեղ տեղ հէփեր<sup>3</sup> կը պատմեն, տեղ տեղ ընտանեկան ապրուստի վերայ կը խօսին և անամնոց որպիսութեան վերայ զըոյց կը տան: Իսկ ծերունիք հին և նոր պատմութիւններ կը պատմեն: Ոմանք Ախտայ խանի և Հասան խանի վերայ կը խօսին, ոմանք ՄէյՏտի խանին և Ճափարղուլի խանին վերայ. ոմանք Վրացոց Գէորգ թագաւորին շատակերութեան վէպերն կը վիպեն և ոմանք Ռուսի Տէրութեան վերայ կը խօսին:

— Ո՛ր է Պարսից խաներու ժամանակի ազատութիւնն, ապահովութիւնն և հարկաց թեթևութիւնն, կը զօչէ մին, յորում Ղարաբաղու մէջ ոչ այսքան մարդասպանութիւն կար, ոչ այսքան դողութիւն, ոչ այսքան տուրք տալ, ոչ այսքան յաճախ կուռ<sup>3</sup>, պէկեաւ անել և ոչ այսքան Տէրութեան համար ձրի աշխատութիւնք: Մի կողմէն Մողղոյն<sup>4</sup> իւր անգութ եասաւուններն<sup>5</sup> և սպասաւորներն շարաթն հինգ անգամ գիւղերն կը յուղարկէ, որք

1 Օջաղ. երգիկաւոր տան կրակ վառուած կրակետն:  
2 Բուխար. Ծխնելուզաւոր վառարան:  
3 Կիւր, Պէկեաւ. Տարապարհակ աշխատութիւն. անկարեայ Տէրութեան:  
4 Մողղոյն. Գաւառապետ:  
5 Եասաւուն. Գաղաքական պաշտօնէից սպասաւոր, որ միշտ ձիով կը շրջի:

բունի հաց, դինի, օղի, ոչխար, հառ, ձու, գարի, յարդ կը ժողովեն: Մի կողմէն Նաչալնիկին<sup>1</sup> ետատու ընթին ձի, աանակ, մարդ, եզն և գոմշասայլ կը պահանջեն շարաթի տակին և զլսուոն: Միւս կողմանէ գողերն և աւաղակներն մարդ հանգիստ չունի: Գանդատ անես, Մողրովն չլսեր, թախանձես, Նաչալնիկն մաիկ չաներ. ինքդ դատաստան անես, սպանես, յաւիտեան Սիրիբ<sup>2</sup> կը քշուիս: Կեանք չէ այս, այլ տանջանք. քրախնք թափիր, տաւապիր, անձրեի և արևի տակ աշխատիր, և բոլոր վաստակդ Մողրովն, Նաչալնիկն և գողերն ուտեն, և քո զաւակներն անօթի և աղւոր մնան: Ա՛ր մէկ տարդին գիմանայ մարդ:

— Եղբայր, եղբայր, կ'ասէ միւսն, ձայնդ քեզ քաշէ, Ատուած օրհնէ Ռուսաց Տէրութիւնն, որչափ լինի քրիստոնեայ է, անօրէն հեթանոս չէ, մեզ լաւ կը նայի: Ատուած Ռուս թագաւորին սուրն կտրուկ անէ. իւր հովանին անպակաս լինի մեր վերայէն: Գու չ'գիտես թէ Պարսից խաներու ժամանակ ինչ նեղութիւններ կը քաշէինք. զէնքերն ձեռք առած հասաի պէս մեր տուններն ու ապրանքներն մենք պէտք է պահպանէինք: Հիմիկ գոհութիւն Ատուծոյ, Ռուսի ողորմած կայսեր շնորհիւ մեր զէնքերն ու էրաւնէն պատենն ելած չունին. ամեն բան ինքն կը անօրինէ. մեզ համար կը կուռի, մեզ համար կ'աշխատի և այլն և այլն: Աւազակներն օձին ծակէն գտնել տալով Շուշի քաղաքին մէջ բանտն կը գնէ: Ա՛վ կարող է գողերն, մարդասպաններն իսպառ վերջացնել. առած է կ'ասեն. «Անտան առանց աղուէսի չ'լինիլ»: Իսկ կուռն, պէկեալին, սուրբին և հարկաց համար, ՚ի հարկ է, մեր պարտքն է, սիրով պէտք է կատարենք Տէրութեան հրամանն: Տէրութեան մարդիկն էլ մեր տուրքով պէտք է ապրին. միթէ մեր հօր մշակն են որ ձրի աշխատին:

— Միայն Տէրութեան քրիստոնեայ լինիլն բաւական չէ, կ'արէ մի երրորդն, պարտաւոր է նաև քրիստոնէաբար հօգ և խնամ

1 Նաչալնիկ. Բաղաբասպետ. իբրև Փաշայ:

2 Սէբէբ. Սիպերեայ երկիրն արսորել:

տանիլ քրիստոնեայ ժողովրդոց: Քաղաւորն հասարակաց հայր է, պէտք է տեսնէ, թէ իւր որդիքն ինչ նեղութիւններ կը քաշեն Մողրովն և Նաչալնիկին ձեռքէն: Այն Տէրութիւնն, որ Տէրութիւններ, երկիրներ կը նուաճէ, միթէ չէ կարող, եթէ ուզէ, դատաւորներն սանձել և անիրաւութիւններն բառնալ: Այն Տէրութիւնն, որ զօրքեր և զօրապետներ կը ջնջէ, միթէ չէ կարող գողերն, մարդասպաններն և աւաղակներն ջնջել: Պարսից ժամանակ եթէ մի մարդ յանիրաւի քեզ վերայ սուր քաշէր, կամ ինչքդ յափշտակելու յանդգնէր, կարող էիր արձակ համարձակ այնպիսին մի գնդակի մատաղ անել, կեանքդ և ինչքդ ազատել և ապահովել: Խաներու ժամանակ, եթէ մի մարդ արդարութեան համար գանդատի երթայր, իսկոյն գասն կը վերջացնէ ին և ճանապարհ կը գնէին: Իսկ այժմ Ռուսի իշխանութեան ժամանակ, երբ մէկն գանդատի երթայ, զաւրիչ, զաւրիչ (վաղն, վաղն) ասելով հոգիդ կը հանեն և շատ անգամ պաշտ (կորսուիք) գոչելով դատարանէն դուրս կը հանեն. բան չ'ունիս տարիներով սպասէ, որ իրաւունքդ պէտք է ճանաչեն և անիրաւ պէտք է պատժուի: Ես քեզ մի բան ասեմ, եղբայր, աւելի լաւ է, որ մարդ տղամարդի պէս մեռնի, քան թէ լալկան պառաւի պէս այսօր Մողրովն դրան լայ, վաղն Նաչալնիկի դրան երախայի պէս վեցկվենկայ և միշտ հառաչանքով ապրի:

— Եղբարք, կ'ասէ մի չորրորդն, զարմանալի մարդիկ էք. մէկդ Պարսիկն կը պախարակէք, միւսդ Ռուսն: Աւելի լաւ է, որ մարդ իւր յոյսն իւր վերայ գնէ. ՚ի հարկ է օտար ազգերն այսպէս պէտք է վարուին. աշխարհիս մէջ իրաւունք և արդարութիւն կ'որոնէք, այլ ևս օտարէն: Շատ խեղճ մարդիկ էք. զօրաւորն ուլ է, արդարութիւնն իւր ձեռքն է. քանի որ Հայ ազգն օտարին ձեռքն կը նայի, ՚ի հարկէ միշտ պէտք է նեղուի: Մեզքն ոչ այս Տէրութեան է և ոչ այն, այլ մեր Ազգինն է, որ իւր յիմարութեամբ և գժբազդութեամբ ուրիշի ձեռքն ընկած է:

— Համայն փիլիսոփայութիւն արիւր հաս, կը գոչէ միւս հինգերորդն, այն մարդիկն մինակ կը խօսին, թէ արդեօք Պարսից իշխանութեան ժամանակ աւելի լաւ էին այս գիղերն, թէ Ռուսաց իշխանութեան. դու գնացիր ուրիշ բաներ մէջ բերիր:

— Ի՞նչ անենք, որչափ մարդիկ, այնչափ կարծիք, ամենքս մեր խելքի փչածն պէտք է խօսինք, որ ժամանակ անցընենք: Գու ևս կարող ես քո կարծիքն ասել. ի՞նչ անենք, որքո՞ր զլան էան շող շող, ցաւ ունինք, մեր ցաւին վերայ կը խօսինք: Ճշմարիտ դու էլ մեր Նաչաւնիկին կը նմանիս, եթէ երթաս, ցաւերդ յայտնես և ասես, «Մեր Մողորմիներն ու հարկահաններն մեր տուներն կը քանդեն, այս ընթացքով մեր դիւղերն կ'ոչնչանան, և այլն» բերանիդ թխելով՝ դուրս կը քէ և աստիկ պատուէր կը տայ, որ մարդ չհամարձակի Ռոսի Տէրութեան վերայ վատ խօսիլ, այլ միշտ գովել:

— Նաչաւնիկն իրաւունք ունի, մեք ո՞վ եմք, որ Տէրութեան վերայ խօսինք. աւելի լաւ է, որ ձայներս կտրենք, նստենք, որ նոր փորձանք չպատահի մեր դիւղն զլխուն: Աղն հարտանիք կայ, ատենենք ինչպէս պէտք է լինի:



ԳԼՈՒԽ ԺԲ.

ՀԱՐՍԱՆՈՒԹ

Կիրակէ երեկոյ մի էր, որ երկուշաբթի պէտք էր լուսանալ. Մակրտումին և Չէլէպեան Առաքելին տանց մէջ հարսանեաց պատրաստութիւնք կային:

Նուագածուաց խմբակն սկսած էին Մակրտումին սրահին մէջ մնացողն մորթելու եղանակն ածել և հրաիրական եղանակն կրտկոտին: Հրաիրեալք տան գլուխ մի մի մարդ կը հաւաքուին և կարգաւ կը բազմին, որոց մէջ տեղն դէմադէմ նստած են Տէր Արիտակէս քահանայն և Յարութիւն քէօվխան (գիւղապետն):

1 Թիւի. Զարնել:

Տունն տաք է, ծուխ բնաւ չկայ. ըստ որում խանձողներն դուրս տուած էին և միայն կրակին մեծ շեղջակոյտն մնացած է: Սուփրան փռուած է և բազմականք տան ձեով քառակուսի շարուած են: Լալաչ հացն, բաւականին խորոված, խաշու, եղինձ, պանիր, օղի և առատ դինի պատրաստ են: Սեղանն օրհնելէն անմիջապէս վերջն դինի խմելու կարգն քահանայէն կ'սկսի, և զորինչ օրհնութիւն տայ քահանայն, նոյն կը կրկնէ նաև ժողովուրդն:

— Օրհնեալ ժողովուրդ, հաւասարական ողջ լինիք և միշտ այսպիսի ուրախութեան մէջ. Մակրտում, աչքդ լոյս եղիցի, փեսայուն և հարսնացուն առաքինի զաւակներով և թոռներով ծլին, ծաղկին և ՚ի միասին ձերանան. — գոչեց քահանայն և բաժակն մի լաւ քամեց:

— Ամէն, ամէն, — պատասխանեց բոլոր ժողովուրդն:

— Օրհնեալ Տէր, կարգի, պատարագի հաստատ լինիս, զաւակն իմն չէ, Չերն է. օրհնութիւնդ անպակաս լինի. — գիւնոյ բաժակն ձեռքն առած գոչեց հայր Մակրտումն. և այսպէս ամենն ևս կարգաւ խմել սկսան:

Նուագածուաց խմբակն երգեցիկ երիտասարդօք սեղանին վարի ծայրն նստած զանազան եղանակներ կ'ածէ, ձայնաւոր երգիչք կարգաւ կ'երգեն, բոլոր բազմականք ուտելու, խմելու և զուարճանալու զբաղած են համամիտ և համակամ սրտիւ: Բարխուտարեանց Սարգիսն ամեն պարագայի մէջ իւր սրտակից Մակրտումեան խաչատուրին կ'օգնէ, որպէս զի ամեն բան ըստ օրինի լինի, ուրախութիւն, ընթրիք, երգ, եղանակ և մատակարարութիւն: Ընթրիքն իրստ վայելուչ և համեստ կերպիւ վերջացաւ և սեղանն օրհնութեամբ ժողովուրդեցաւ:

— Կառավարիչ, գոչեց քահանայն, փեսան ներս հրաիրէ, որ երեսն ածիլուի, որպէս զի ժամանակաւ խնամու տունն երթանք:

— Շատ լաւ, Տէր հայր, այս վայրկենիս:

Տան վերի կողմն ավու մի դրուեցաւ, ուր փեսան զալով իւր տանն և երկու փեսաւէրներով բազմեցաւ: Տիրացու Օհանն հազարով, խնդարով ածելին սրեց և մեծ գլխարկին տակէ կախեց ճակատին վերայ: Ածիլէն յետոյ փեսային բոլոր մերձաւոր բա-

րեկամբք և փեսաւերք զալով փեսային հետ համբուրուեցան և սափրիչ տիրացու Օհանին զանձարանն զրամով լեցուցին<sup>1</sup>, զի մեր վարժապետ ուստայ Պօղոսն երկու օր յառաջ քաղաքն դնացած և տակաւին վերալարձած չէր :

Յետոյ նուազածուք զուրան ցրուելոյ եղանակն անեցին , ժողովուրդքն մի բերան «Աստուած շնորհաւոր արասցէ» ասելով իւրեանց տուներն գնացին , քահանայ և շէշխայ Չէլէպեանի տունն . իսկ կառավարիչն պատրաստեց խնամու տուն տանելիք սեղաններն , որոց մէջ էին հարանցուի հագուստներն , կօշիկներն , տանն և հինգ հատ եղով դաթայ , մրգեղէններ և հարանամօր նուիրելիք մի թօփ կանաչ արային (մտաքսեայ կտոր) :

Փեսան վայելուչ հագուած էր զիւզի նկատմամբ . կանաչ և կարմիր խառն գործուած Խաչմալի շալվարին վերայէն զեղեցիկ արխալուզի (բարեղօտ) քղանցքն մինչև ծունկերն իջած էն : Բարակ մէջքն կապած կարմիր դօտին , ուղտբուրդ չէրքէղին (վերարկու) Պոխարայի կուզնոտ զգակն , նախշուն գուլպաներն և բարձրակրունկն սաղրի կօշիկներն Բարսեղի նուրբ հասակին մեծ շքելութիւն տուած էին : Այսպէս զարգարուած էին նաև ամեն փեսաւերք , խաչախպէր և փեսին եղբարքն և պատրաստ կառավարչին հրամանին կըստատէին : Գուրան երեք ջահեր և երկու լապտերք վառուած և սեղաններն երկու մեծադոյն պղնձեայ ափս ից մէջ պատրաստուած էին : Կառավարչին հրամանաւ նուազածուք չուի եղանակն հնչեցուցին , երիտասարդաց բազմութիւնն երկու ջահից լուսերով և նուազածուաց խմբով առաջքէն , իսկ փեսաւերք երկու լապտերաց և մի ջահից լուսով հանդերձ փեսայի և սեղանակիրներով ետէն 2' լէպեան Առաքելին տունն գնացին պարելով , երկելով և աղաղակներով :

Աղջկատիրոջ կառավարիչն համանման լուսերով զիմաւորեց տղայատիրոջ կառավարչին և ներս հրախրեց հարսանեաց ամեն

1 Չ'կարողացանք իմանալ թէ այս սովորութիւնն ինչ ժամանակէ մնացած է և ինչ նշանակութիւն ունի քիսայի բազմութեան մէջ աշխարհին , բարեկամաց և քիսաւերաց համբոյրն և սափրիչին դրամ արէ :

պարագայներն , ուր արդէն ամենայն ինչ կազմ և պատրաստ էր : Նորէն սեղանի նստան քահանայիւ , զիւղապետիւ և ժողովրդավ իսկ փեսան հանդերձ իւրայնովք առանձին սենեկի մէջ նստած էր : Աւետէն , խմելէն , պարելէն և խաղալէն յետոյ Արժ . Տէր Արիստակէս քահանան հարսի զգեստն օրհնեց , ժողովուրդն ցրուեցան , իւրաքանչիւրօք իւր տունն գնաց հանդէլու :

Միրզայ , որ փեսաւերաց մին էր , ամեն բան մտացած իւր սիրելի Աննան տեսանել միայն կը մտածէր . բայց հնարն չկար . զի նա շատ գործերով զբաղած էր : Աւապեան իւր սրատես աչքերն այս և այն կողմերն զարձընէն և իւր սիրելին չ'դտնէն յետոյ իւր քեռի Գարբիէլին ականջին սոյն խօսքերն կը փափսայ .

— Սիրական քեռիս , կ'աղաչեմ , քանի մի աղջկանց պարել տաք , տեսներք . քանզի լսած եմ թէ վերի թաղին աղջկունք լաւ կը պարեն :

Որչափ որ Միրզայ Աննայի անունն չ'տար , սակայն իւր քեռին կ'իմանայ նորա միտքն . ուստի գեղեցիկ ժպիտով մի կը պատասխանէ .

— Քեզ ինչ պէտք է աղջկանց պարելն . վերի թաղին աղջկունք լաւ կը պարեն , վատ կը պարեն քեզ ինչ փոյթ . դեռ քո նշանուելու ժամանակն չէ , որ ասեմ թէ մին հաւանելու և առնելու միտք ունիս : Յետոյ անմիջապէս կը յարէ . — Միրզայ , քեզ մատաղ , զով կը սիրես , որ պարել տամ :

— Գուր գիտես արդէն :

— Ես մեռնիմ , ազնիւ Միրզաս , զով կը կամիս , որ պարել տամ :

— Սիրական քեռիս , արդէն գուր գիտես թէ զով կը սիրեմ և զով կը կամիմ . ինչ կը հարցանես , նորա անունն իմ բերանէս լսելու համար :

— Այո՛ , այո՛ , կ'ուզեմ և կը փափաքիմ լսել :

— Աննան . — կ'ասէ Միրզան կմկմալով և ամօթխած ու թենէն գետինն կը նայի շտապուած :

Նոյն միջոցին Չէլէպեան կառավարիչն փոքր սենեակն մանուշակով զփեսան մեծ սենեակն հրախրեց իւր փեսաւերներով հան



չեց Առաքել բարձր ձայնիւ զայրադին — : Ես այսօր իշխանազուն մի եմ, ամեն անկ բարձր անուն ունիմ. եթէ փեսաս այս կէտերն մտածող լինէր, իմ չնչին նուէրս անգամ մեծ սիրով և ուրախութեամբ պէտք է ընդունէր : Իմ լոկ անունս իւր համար ոչ միայն մեծ նուէր կ'արժէ, այլ և փառք ու պարծանք է :

Մակրաուսման Խաչատուրն, որ ներկայ էր, այս միջոցիս իւր եղբոր, փեսային մօտենալով ականջին ասաց ցած ձայնիւ .

— Ես մեռնիմ, Բարսեղ, հաց կէր, նուէրի վերայ բնաւ մի մտածեր, ես ողջ լինիմ և դու, միմանց համար անդին նուէր եմք, բաւական է, որ քո սիրած հարսն մեր տուն կը սանիմք. ուրիշ ի՞նչ նուէր կ'ուզես : Շուտով կերէք, որ պսակի երթանք. վասն զի չ'լինի թէ մեր հարսնացուն լսելով նա և ս առադաստին մէջ արտմի :

Փեսայ Բարսեղն իսկոյն հնազանդեցաւ իւր մեծ եղբոր խօսքին և կարգաւ դինի խմել հրամայեց իւր ընկերաց :

Այս սովորութիւնն է, որ Հայաստանի զիւղլականաց մէջ կը կոչուի Բէրանքայէ : այսինքն փեսան այնքան ժամանակ բերանն չ'բանար, չ'խօսիր և չ'ուտեր, մինչև որ աներն իւր առաջնախն համեմատ պարզ և տայ :

Մի քառօրէ վերջն հարսն զարդարուած առադաստէն դուրս բերին և եկեղեցի տարինք պսակելու :



ՊԼՈՒՆ ԺԳ.

ՊՍԸԿ

Երկու հարսնաբոյր հարսուհի հարսին աջ և ձախ բազուկներէն բռնած՝ համաբայլ ծանր ծանր դէպ 'ի Եկեղեցին կ'երթային : Հարսին զեղին մով շապիկն իւր հասակին երկայնութեամբն է, որոյ

ծայրէն հաղիւ թէ կը նշմարուէին կանաչ սաղրի (դաւակ) կոշկաց ծայրերն իւր քայլերն փոխած ժամանակ : Հասկին վերայէն բաց կանաչ տարայի՝ աբխալաշ, որոյ վերայէն ալ մախմուր (լատիփայ) միթանայ՝ հաղած է, որոյ երկար և կախուած թեկերուն կիսէն վար շարուած արծաթեայ կոճակներն նոր ծագած արեղական շաուախդներէն կը փայլին :

Հարսին զլուին Ղարաբաղու ձեռով շինուած է և երեսն կարմիր, բարակ սաւանաւ ծածկուած :

Բազմութիւնն Եկեղեցին լցուեցաւ բաց 'ի նուազածուաց խմրակէն :

— Տէրտէր ջան, քեզ մատաղ, շուտով պսակէ և ճանապարհ դիր, ցրտէն կը մեռնիմք. — ասաց Խաչատուրն և փեսան ու հարսն դէպ 'ի դասն տարաւ :

— Ա՛յ օրհնուած, այս ներկարարի կարսն է, որ շուտ անեմ, գիբք, աւետարան, աղօթք, մաղթանք և շարականներ կան, զորս ամենն ասել պէտք է. հարսանեաց օրերն որչափ ցուրտ լինի, մարդ չի մրսիլ, ամենեցուն կանթեղներն վառուած են. — պատասխանեց քահանայն, յետոյ մի լաւ ընչախոտ քաշեց, ասպա պսակն սկսաւ :

Հարսանիքն շինամիջէն դարձեալ Առաքելն տունն կ'երթայ, որ տան առաջքէն կ'անցնի, 'ի պատիւ փեսային և հարսին, նոյն տանէն մի ափսէիւ մեղը, կարաղ, ձիւաղեղ, դինի, օղի, տապակած և եփած հաւեր կը բերէին, զորս կը վայելէին փեսաւէրքն : Գասպարեան Գարրիէլն փեսաւէրաց զլուին անցած հետեւեալ երդն կ'երգէր և փեսաւէրք ձայնակցելով և պարելով փեսային և հարսին առաջքէն կ'երթային :

Տեսարանն շատ զուարճալի էր :

Ա՛, ի՛նչ առաւօտ, ի՛նչ արև  
Ծիծաղելով տան բարև,

- 1. Տարայի. Մետաքսեայ կտոր մի է :
2. Միլանայ. Ղարաբաղու կանանց հազուատին մի տեսակն է :

Ո՛վ Տէր Աստուած, տո՛ր արև

Հարսին, փեսին շատ արև:

Ծափ տանք, ասենք, փեսաւէրք,

Շնորհաւոր հարսանիք:

Հարսն թաղուհի նո՛ր թագով,

Փեսան թագու՛ր պսակով,

Երկուքն սիրով միացած,

Վարդ մանիշակ նոր բացուած:

Ծափ տանք, պարենք, փեսաւէրք,

Շնորհաւոր հարսանիք:

Հարսն փեսին սրտովը,

Փեսան հարսին քեֆովը

Անցէք Գասպարենց դռնովը,

Կարմիր գինին մեծ փարչովը

Կոնծենք, կանչենք, փեսաւէրք,

Շնորհաւոր հարսանիք:

Հարսենց տունն բարձր տեղ,

Գինին, օլին ցրտի դեղ,

Մեղը, կարագ, ձիւազեղ,

Ուտենք, խմենք միատեղ

Պարենք, կանչենք, փեսաւէրք,

Շնորհաւոր հարսանիք:

Վայ, իրիցկին, բարով եկիր,

Սուփրայ սեղանով եկիր,

Մի ձեռնումը խորոված,

Մի ձեռնումը հաւ եփած:

Կոնծենք, կանչենք, փեսաւէրք,

Շնորհաւոր հարսանիք:

Հարսանիքն վեր ելաւ,

Հարսնամարն դուրս ելաւ,

Հարսն, փեսան նազենազ,

Զուռնայ, դաւալ, անկլպազ

Ածէք, թխէք, ուստաքեարք,

Շնորհաւոր հարսանիք:

Հարսանիքն այսպէս առօք, փառօք Առաքել խնամու տունն հասնելէն յետոյ, հարսն իւր հարսնաւէրներով իւր զարդարեալ առաջաստն բազմեցաւ և փեսան իւր փեսաւէրներով իւր առանձին սենեակն: Իսկ տան գլուխ մի մի հրաւիրեալ կանայք մեծ սենեկին մէջ ուտելէն, խմելէն և պարելէն վերջն, ՚ի սէր հարսին և փեսային բերած նուէրներն թմբկահարին ձեռօք սկսան կանչել տալ<sup>1</sup>:

Թմբկահարն հանդիսականաց մէջ տեղն նստելով՝ նուիրամատոյց կանանց անուններն և նուէրներն յականէ յանուանէ այսպիսի հարցմամբ կը յայանէ ՚ի լուր ամենեցուն

— Ա՛յ ժողովուրդ,

— Հրամմէ՛, — կը պատասխանէ նուազածուաց մին ՚ի կողմանէ ժողովուրդեան:

— Աստուծոյ հրամանքն ձեզ. շէն մնայ իրիցկինն. բերած է թագաւորին սիրուն համար մի մաննթ փող, մի ջուխտ նախշուն գուլպայ, և մի փողի քսակ, շէնն մնայ, շէնն մնայ:

— Շէնն մնայ, շէնն մնայ. — ամենեքեան միաբերան կը պատասխանեն: Բոլոր զիւրև կանանց նուէրներն այս ձևով յիշելէն յետոյ կը յիշէ նաև հարսնամօր հարսին նուիրած կարասիներն:

— Ա՛յ ժողովուրդ,

— Հրամմէ՛:

— Աստուծոյ հրամանքն ձեզ. շատ շէն մնայ հարսնամարն,

<sup>1</sup> Այսպէս մանր պարագայներն նկարագրելով օեր նպատին օեր օերէն ընթերցողներն յանրապշտել չէ, այլ Ղարաբաղու գեղային սովորութեանց աբրդղութեանն ծանօթացնելով, նոյա հեղափոխութեանն գործաշնչել:

Թագաւորին սիրուն համար բերած է մի լաւ խալիչայ, մի տրուխ-  
լու (նախշուն) կարպետ, մի տափակարպետ (միշտ դեանի վերայ  
փոռելու) մի ձեռք եօրդան, տէօշակ, երկու դիւլի բարձեր, մի  
աղաքակ, մի տափակ չուան, մի ջուխտ նախշուն մաֆրաշ և  
տասն և երկու ջուխտ նախշուն դուլպայ. շէէն մնայ, շէէն մնայ :

Կանչէն յետոյ հարսին վերաբերեալ այս բաժինքն մաֆրաշայ  
մէջ զետեղելով մի ձիոյ վերայ բարձին, հարսնեղայրն բեռին  
մէջ նստաւ, հարսն իւր առադաստէն և փեսան իւր փեսաւէրնե-  
րով իւր առանձին սենեկէն ելին. հարսն երեսն ամուր ծածկած՝  
իւր ծնողայ փարեցաւ և լալով նոցա ձեռքերն և իւր քեռց ու  
եղբոր ճակատն համբուրեց. իսկ սոքա բարի ճանապարհ և շատ  
օրհնութիւն մաղթելով նորա ճակատն : Կուսպածուք ճարաւ  
հայ հարսնամար, տալ չի պիտիւր հարսնամար՝ չուի եղանակն  
փշեցին. հինգ վարկէնէն յետոյ հարսանիքն Մակրտումին սրահին  
առաջքն կանգնած էր :

Հարսնեղայրն մի մանկութեան ընդունելէն յետոյ բեռին մի-  
ջէն վար իջաւ և ձին փեսայի եղբոր յանձնեց : Թաղաւոր, փե-  
սաւէրք, նուագածուք ամենն տուն մտին, միայն հարսն դրան շէ-  
մին դուրսն կանգնեցաւ. վերջապէս մինչև որ Մակրտումին կաթ-  
նատու կարմիր կոփն նուէր չընդունեց, սոքն ներս չ'փոխեց<sup>2</sup> :

Այս երեկոյ ևս տան զլուխ մի մի հրաւիրեալ անձինքներէ ըն-  
թրիքն կազմուեցաւ Թագաւորի տան մէջ. նուագածուց և ձայ-  
նաւոր երգասաց խումբն մի և ուրիշ տան մէջ Թագաւորին զիմայն  
նստած՝ բազմականներն զուարճացընելու համար տեսակ տեսակ  
քաղցր եղանակներ և երգեր կը փոփոխէին :

— Ուստայ Գէորդ, — գոչեց քահանայն բազմականայ վերի  
կողմէն :

- Հրամայեցէք Տէր հայր, — պատասխանեցի ես :
- Ժողովուրդն կը խնդրէ, որ ամուսնութեան վերայ մի տալ  
ասես :

1. Հնա-անդր սովորութիւնն է, նուէր չ'առած յիւն վար չ'իջնէր :  
2. Նոյնպէս այս ևս հնա-անդր է նոր հարսանց հասար :

— Շատ լաւ, Տէր հայր, բայց դիտեք, որ ես մի քիչ Թա-  
նաք (մեկն) լիզած եմ. տաղերս կարգացողն են, ժողովուրդն  
համ չ'առներ :

— Ես մեռնիմ, ուստայ Գէորդ, բերանդ բաց, ձայնդ մեզ  
բաւական է : Եթէ Թագաւորին արեն կը սիրես, ժողովրդեան  
խնդիրքն կատարէ. — միւս կողմէն վերայ բերաւ Գասպարեան  
Գաբրիէլն, որ մեծ եղբորս խիստ մտերիմն էր և յարեց. — այ  
տղայ, վարդապետ պիտի լինիս, վանական պիտի լինիս, Մակար  
ճգնաւորն ես, դու ինչ ես :

Քանի մի անգամ հազարով և կոկորդոս մաքրելով սկսայ եր-  
գել :

Երբ առաջին կոյսն և առաջին տղան  
Առաջին անգամ մին մինու Գրախումբ տեսան,  
Էն ինչ օր եղած է ան, և ինչ տեսարան,  
Ինչ նշանաւորք, ինչ պսակ, հարսանիք աննման.  
Այո՛ ամուսնութիւն, դու ես աննման  
Չկայ մե՛ծ խորհուրդ, քեզ նման, քեզ նման :

Ո՛վ Գրախտ, հրաշալեաց հանդիսարան,  
Հայր Աստուած կոյսն կուսին առաւ նշան,  
Ա՛, Բանն Աստուած էր պսակող քահանան,  
Հողին խաչեղբայր՝ ՚ի Հօրէ և յՈրդոյ անբաժան.  
Այո՛, ամուսնութիւն, դու ես աննման,  
Չկայ մե՛ծ խորհուրդ, քեզ նման, քեզ նման :

Ազամն էր Եւայ նոր հարսին նոր փեսան,  
Փեսաւէրք սերովբէք, քերովբէք վեցթեան,  
Նուագածուք հրեշտակապետք քառակերպեան,  
Երգասացք, պարերգուք հրեշտակք վերնական.  
Այո՛, ամուսնութիւն, դու ես աննման,  
Չկայ մե՛ծ խորհուրդ, քեզ նման, քեզ նման :

Էն հարսանեաց զարդեր մարդրիտ, ոսկի չէին անբան,  
 Այլ անմեղութիւն, զգեստ և զարդ անզուգական,  
 Որով զարդարուած երկու սիրական,  
 Այնչեւում էին միշտ պողոց սեղանն ագինական.

Այո՛, ամուսնութիւն, դու ես աննման,  
 Չկայ մե՛ծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

Քրիստոս գնաց հարսանիք կանայ Գալիլեան,  
 Գարձեալ պատուեց խորհուրդն ամուսնութեան,  
 Ջուրն զինի փոխելով օրհնեց հարսն ու փեսան,  
 Ի սէր և ՚ի պատիւ բոլոր մարդկութեան.

Այո՛, ամուսնութիւն, դու ես աննման,  
 Չկայ մե՛ծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

Գէ՛ է՛յ, Ուստայ Գէորդ Բարխուտարեան,  
 Գու էլ սրտով օրհնէ, զովէ մի բերան  
 Էս խնձոյից զարդն, հարսն ու փեսան,  
 Որ շատ զաւակներով ծլին, ծաղկին, ծերանան.

Այո՛, ամուսնութիւն, դու ես աննման,  
 Չկայ մե՛ծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

— Չայնդ անսպառ, Ուստայ Գէորդ. — զօչեցին այս կողմէն:  
 — Շնորհակալ ենք, շնորհակալ ենք. — ասացին միւս կողմէն:  
 Ընթրիքն վերջացաւ, ձերունիք և մանկունք պատից տակէն  
 քառակուսի նստան, նուագածուք Եւլլե՛ն<sup>1</sup> ամեցին, արք և երի-  
 տասարդք պար բոլորեցին. պարապետ Ղարիպն զերիմաստի ճո-  
 պասն աջ ձեռքն առած պարաւորաց զլուխն անցաւ: Այս պարին  
 նկարագրութիւնն դժուարին, բայց հետաքրքրական է: Նուագա-  
 ծուն ինչ եղանակ սր փոխէ, պարապետն նորա պէտք է հետեի,  
 և բոլոր պարաւորք իւրեանց պարազլինին: Պարուց բոլոր եղա-

<sup>1</sup> Այն պարին անունն է, որով ասան կա՛մ երեսան հոգե՛ւ փոխանց  
 յետեւն բռնած բուրբակ կը պարեն:

նակաց մէջ զրեթէ ամենէն զուարճալին, սրտաշարմն և զմայլե-  
 լին այս է Ղարաբաղու մէջ. որովհետեւ միատեղ պարող քսան  
 և երեսուն պարաւորք ոտք ոսից հետ, ձեռք ձեռաց, զլուխք  
 զլեռոց այնպէ՛ս միատեսակ կը շարժեն, որ մարդ կըզմայլի: Միր-  
 զայ իւր քեռուն ձեռքէն բռնած ամենէն թեթևաբայլ և լաւ կը  
 պարէր, որով ոչ միայն իւր ծնողք կ'ուրախանային, այլ և բո-  
 լոր զիւղացիք: Պարազլուխ Ղարիպ ապէ՛ն երբեմն երբեմն զեր-  
 իմաստի ճոպատն ճոճացընելով՝ պարելէ զազրող անձանց ձե՛ծ  
 կըսպառնար: Պարազլուխն շուտով մի տղայ առաւ իւր ուսոց վե-  
 րայ. և ահա իւրաքանչիւր պարաւոր մի մի պատանի ուսոց վե-  
 րայ առած պատրաստ գտաւ իւր կարգին: Միայն Աշուղ Ղարա-  
 եանց Թովմասն անմիջապէս տղայ չ'զտնելուն համար, քանի մի  
 փափուկ ճոպատ ուտելէն ստիպեալ՝ թեթև ձերունի մի առաւ իւր  
 ուսոց վերայ, որով բոլոր հանդիսատեսք չափազանց խնդալէն  
 կարծես թէ կը լային:

Եւլլին վերջացաւ, բազմութիւնն քաշուեցաւ. կառավարիչն  
 հետեւեալ օրուան կերակրոց պատրաստութիւն տեսնելու կը զբա-  
 ղէր քնաթաթափ աջօք:

Երեքշաբթի առաւօտ նորէն կոչնականք կոչնատիրոջ տան մէջ  
 բազմեցան, ուր ճաշէն յետոյ իւրաքանչիւրոք սկսաւ կանչել տալ  
 փեսային և հարսին սիրոյն համար բերած նուիրագրամն թմբկա-  
 հարին ձեռօք, զոր օրինակ հարսին հօր տան կանչել տուին կա-  
 նայք: Տարբերութիւնն միայն այն է, որ փեսայի տան մէջ կան-  
 չուածն բոլորն ևս զբամ են:

Նոյն երեկոյ հարսանիքն վերջացաւ. կարգն որսորդութեան  
 հասաւ:

Ղարաբաղու զիւղային այս սովորութիւնն աղքատաց մեծ զիւ-  
 րութիւն կը տայ ամուսնանալու համար. քանզի այսպէս զիւղո-  
 վին դրամ տալով՝ մասնաւոր զուճար մի կը գոյացընեն, որով  
 աղքատ զիւղային պարտքն վճարելով կ'ազատի, և հարսանիքն  
 ձրի վաստակ կը մնայ իւր համար:

ՓԼՈՒԽ ԺԳ.

ՈՐՍՈՐԳՐՈՒԹԻՒՆ, ՈՐ ԵՒ ԹՎԳՆԱՌՐԱՌՐՍ

Հարկ չկայ ասել, որ Ղարաբաղու Գլխորդից մէջ զէնք գործածելու սովորութիւնն պայեանական սովորութիւն է: Որսորդութիւն, զինաստիարակութիւն, ձիարշաւ, այս վարժութեանց մէջ զրեթէ մանկութենէ կ'ընդելանան:

Որ տուն, որ մտնես, սեանց ճակատէն կախուած կը տեսնես հրացան, ատրճանակ, թուր, երկայրի, վառօդաման, զնդակաման, կուրծքի զարդեր և այլն:

Ամենայն ոք իւր հրացանի չափն դիտէ. որքան վառօք լցնելու է, որ բուն նշան առած տեղին զարնէ կշռակի, ինչպէս մարուր պահպանել պէտք է այս զէնքերն և այլն:

Ամենայն նորաստեղծ փեսայ մինչև որ և իցէ որս կամ նշան չ'զարնէ և հասարակութեան բերանէն «կեցցէ թագաւոր» բառերն չ'լսէ, զրեթէ այն աստիճանի ցաւ և վեշտ կ'ըզզայ, զոր օրինակ կրզզայ թագաւոր ոմն, որ իւր թշնամոյն յաղթելու միջոցին յանկարծ կը զրկուի փառաւոր յաղթանակէն: Այս պատճառաւ իւրաքանչիւր նորաստեղծ թագաւոր իւր հրացանն իւր ձեռօք կը լցնէ ուրիշին չհաւատալով:

Ղաւաթեանց ընկուզի բարձր ծառի մի բարակ ձիւղէն որձակ մի երկու ոտքերէն գլխիվայր կախուած է, և ընկուզի ծառն բաւականին հեռու է նշանատեղէն:

Ինչպէս մեր Բարսեղ նորաստեղծ թագաւորն, նոյնպէս բոլոր փեսաւերք լին հրացաններով կազմ և պատրաստ են. որպէս զի, Աստուած մի արացէ, եթէ թագաւորի զնդակն շեղելու լինի, անմիջապէս նոքա կրակին և որձակն զարկին: Եթէ փեսաւերք ևս չ'կարողանան զարնել և ուրիշ մարդ զարնէ զայն, փեսաւերք և միանգամայն թագաւորին համար շատ և շատ մեծ ամօթ է Ղաւաթաբաղու մէջ:

— Սիրելի փեսաւերք իմ, հաւուն միսն անարատ պահպանելու համար, ահա նշան կ'առնում նորա պարանոցն, որպէս զի դանակաւ կտրածի նման զլուխն յիւրմէ հեռացընեմ:

— Ո՛չ, ո՛չ, սիրելի եղբայր իմ, — գոչեց այն կողմէն թագաւորին Ապրես եղբայրն. — ո՛չ, պարանոցն նշան մի առնուր, այլ կուրծքն. ըստ որում թէ հաւն երբեմն երբեմն կը փոփոայ և թէ ձիւղն կը տարուբերի. ուստի չ'լինի որ գնդակն շեղի և հաւն կենդանի մնայ:

Այսպէս խորհուրդ կը տային նաև երկոտասան փեսաւերք և թագաւորին ազգականք:

Եւ ահա հրացանն որոտաց, հաւուն զլուխն պարանոցէն զատուեցաւ և բազմութիւնն խնդաղին գոչեց.

— Կեցցէ Բարսեղ թագաւոր, կեցցէ իւր տղամարդութիւնն:

Փեսաւերաց կարդին մէջ ամենէն պատուաւորն մեծ եղբայրս Բարխուտարեանց Արապեան էր, որ առաջարկեց իւր ընկերաց.

— Արդէն թագաւորն իւր նպատակին հասաւ. եթէ կը հաճիք, սիրելի ընկերակիցք իմ, առանց ընկուզի ծառն մարդ հանելու, ես զնդակաւ նոյն հաւն պէտք է իջեցընեմ:

Սիրով ընդունուեցաւ այս առաջարկութիւնն փեսաւերաց և թագաւորի կողմանէ:

— Բայց որովհետև մեր թագաւորն որոշեց հաւուն միսն անարատ պահել. — խօսքն յարելով ասաց եղբայրս. — և ինքն հաւուն զլուխն կտրեց, ես ևս կը յարդեմ թագաւորին բարի կամքն. և ահա նշան կ'անեմ կապուած տեղի սակէն գնդակաւ կարել երկու ոտքերն:

Հազիւ թէ խօսքն վերջացուց, ձիւղ նշան արած տեղէն ոտքերն կտրուելով՝ հաւն գետինն ընկաւ:

— Կեցցէ Բարխուտարեանցն ևս. — գոչեցին փեսաւերք և բազմութիւնն: Իսկ ծերունի Մակրտումն գալով եղբորս ճակատն համբուրեց և իւր Եղիսարէթ մեծ աղջիկն եղբորս հարս տալ խոստացաւ:

— Այս հրացաններն մեր թագաւորի սիրոյն համար լցուցինք, եղբարք, — գոչեց այն կողմէն Աշուղ Ղարաբեանց թովմասն, —

պարպենք ուրեմն : Բողոքեբեան միասին հրայաններն կրակեցին մեծ աշտղակներով և այսպէս վերջացաւ թագաւորաւորսի հանդէսն , որ երեքօրեայ հարսանեայ վերջին օրն կը կատարուի և գրեթէ բոլոր դիւղականք ներկայ կը լինին և այնուհետև նորաստակներու թագերն կ'առնուին , փեսաւէրք վերջին անգամ կ'ընթերն միատեղ , թագաւորն կը սպասուորէ անձամբ հայկերութի ժամանակ և այսպէս կը վերջանայ հարսանիքն :

Մտացանք ասել , որ բոլոր դիւղականայ համար կատարուած թագաւորաւորսի հանդիսէն զատ , որ սովորաբար թաղ 'ի գլուխ կը կատարուի , թագաւորն շատ անգամ մակառններն (փեսաւէրք) կ'առնու և որսի կ'ենէ անտառներն կամ լեռներն և իւրեանց բերած որսի մասով կը կատարուի վերջին հանդէսն :

#### ԳՂՈՒՆԾԵ.

### ՄԻՐԶԱՅ ԵՒ ԱՆՆԱՅ ՄԵ՛Ծ ԱԼԲԻՒՐԻՆ ՎԵՐԱՅ

Միրզայ և Աննայ ամբողջ չորս տարիներ անցուցին միշտ ասելով , խօսելով , միմեանց ծաղկէ փունջեր և պտուղներ նուիրելով և մեանդամայն իրարու քաղցր տեսակցութիւնն վայելելով , առանց իրեանց նշանուած լինելն իմանալու :

Սէրն , որ ամեն էակաց միաւորիչ տարրն և հանգոյցն է , երկու կողմանէ այն աստիճան զօրացած էր այս երկու սրտից մէջ , մինչև անգամ կարող եւք զՄիրզայ Աննային սրտին մէջ երևակայել և զԱննայ Միրզային : Ըստ որում նոյա հասակի աճման հետ աճած էր նաև նոյն իսկ սէրն :

Սոյն թուականն Աւաղեանի տասն և ինն տարին կը կազմէր , իսկ Աննայ օրիորդին տասն և չորս տարին :

Ժամանակն Ղազարու յարութեան երեկոյին էր , որոյ հետևեալ առաւօտն Ծագկազարդ պէտք է լուսանայր :

Արդէն դիւղի բոլոր կին , հարս և օրիորդ շաբաթ օրուան անային գործերն վերջացուցած են ժամ յառաջ , աղբիւրներն երթալու և ջուր բերելու կը պատրաստուին երեկոյեան համար : Աննայ օրիորդն ամենէն յառաջ իւր պղնձեայ սափորն աջ ուսին գրած՝ ՄԵՃ աղբիւրն կ'երթայ ջուր բերելու : Օդն խիստ պայծառ է , արեգակն իւր վերջին ճառագայթներն աղբեր առաջանի ջուրց վերայ սփռած է , ուր նոյն իսկ արեգակն իւր ծիրանի ճառագայթներով կապուտակ երկնից հետ միատեղ կարծես թէ կը լողայ և ջրոց մէջ մեղմիկ տատանելով դողցէս կը խաղայ ցոլացեալ լեւրանց և ծառոց հետ : Աննայ օրիորդն հասած է և բնութեան այս սքանչելի տեսարանաւ այն ինչ կը զուարճանայր և իւր յոտից ցլլուխ զարդարուած պատկերն իբրև 'ի հայելոջ տեսնելով աւազանին մէջ կը զմայլէր , յանկարծ Միրզային կերպարանքն տեսաւ ջրոյն մէջ , որ կը տատանէր և շնորհալի ծիծաղով կը ժպտէր իւր հետ :

Սափորն իսկոյն դեմնին վերայ կը գնէ և լի զարմացմամբ աչքերն այս և այն կողմերն կը զարձընէ , սակայն ոչ զօք կը տեսնէ : Նորէն առաջնին կը նայի , ուր կրկին կը տեսնէ իւր սիրելին , որ միշտ դեղեցկաժպիտ դիմօք իւր վերայ կը նայէր : Գարձեալ իւր շուրջն կը նայի ահիւ և գողութեամբ , բայց մարդ չտեսներ : Սափորն կ'առնու դեմնէն , որ լցնէ և տանելով տուն դառնայ , վերստին Միրզայի պատկերն կը տեսնէ : Ուստի զարմանօք կը կոչէ ինքնին .

— Արդեօք , եթէ այս Միրզայի գէմքն և պատկերն է , ուրեմն ո՞ր պահուած է նա , որ չէրեիր . եթէ նորա գէմքն չէ , այլ ո՞րո՞յ գէմքն է այս և ինչ հրաշք : Մինչգեւ սոյն մտածմանց մէջ էր , յանկարծ զՄիրզայ կը տեսնէ աղբեր սարաւանդին վերայ և կը կոչէ .

— Վայ , դ՞ու ես , սիրելի Միրզայ . ինչպէս թփոց մէջ պահուելով խաղալու ժամանակ զիս ման ածելէն կը յոգնեցընէիր , այժմ ևս գեղեցիկ պատկերդ ջրոյս մէջ ցոյց տալովդ զիս կը յոգնեցընես : Այս քանի վայրկեան է , որ ես զքեզ կ'որոնեմ և չեմ գտներ :

Պատանին վար կ'իջնէ և օրիորդին ձեռքն բռնելով կը բարեւէ . երկուքն ևս շատ խնդալէն յետոյ Միրզայ կ'ասէ .

— Հնորհատոր եղիցի հազուստներդ և զարդերդ , բարեաւ վայելես , սիրելի Աննայ . և կը յարէ . ներեցէք ինձ , որ խափուսիկ միջոցներով ուշքդ ու միտքդ գրաւեցի :

— Հնորհօք լի կենաս , ազնիւ Միրզայ — կը պատասխանէ Աննայ . — բայց , Աստուած սիրես , ասա թէ ո՞ր տեղէն կը դաս , և ի՞նչպէս մտածեցիր այս հնարքն :

— Անտառէն կը գայի , երբ զքեզ հեռուէն տեսայ , շուտով եկի և այս տեղ նստայ . բայց երբ ես իմ պատկերս այս ջրոյ մէջ տեսայ , իսկոյն այս հնարքն մտածեցի , որ ձեզ զուարճացնեմ : Երբ զիս գտնելու համար չորս կողմերդ կը նայէիր , ես կռնակիս վերայ գեանի հաւասարութեամբ կ'երկարէի . և ահա այս էր պատճառն , որ զիս չէիր տեսներ :

Աննայ և Միրզայ 'ի միմեանց բաժանելով իւրեանց տուներն կ'երթան : Զրոքը սկսած էին աղբիւրներն յաճախել :

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԵՐԿՈՒ ԲԱՄԲԱՍՈՂ ԿԱՆԱՅԻ

Երբ այս երկու սրտակիցք միմեանց հրածիշտ կը տան , վերի թաղին հարս , օրիորդ , աղջիկ և կին , որն սափոր առած , որն դորակ , որն կուլայ և որն բարչ , խուճբ խուճբ մեծ աղբիւրն կ'իջնէին ջուր տանելու :

Արզէն աղբիւրն առատ կը վազէր , կարդաւ կը լցնեն ամաններն , յորոյ ոմանք անմիջապէս առն կը դառնան , ոմանք ծանր ծանր երթալով և տեղ տեղ կանգնելով , որն այրած սրտով իւր պատրուէն կը զանգատէ , որն իւր սկեսուրն , որն տաղրն , որն

տագրակինն , որն տալն և որն իւր դրացին : Իսկ երկու կանայք լի սափորներն մի մի կողմ դնելով , կ'երթան և մեծ քարին տակ կը նստին և քիթ քիթ սուած բամբասելով կը պախարակեն զՄիրզայ և զԱննայ այսպիսի նախապաշարեալ զոգացումներով և թիւր զաղափարներով :

— Կը տեսնես , Հռիփսիմէ , դարբին Աւազին տղան և Թազուհայն աղջիկն ի՞նչ աստիճան լրբացած են , որք պարտէզներու , այդիներու և արտերու մէջ օրերով և ժամերով միմեանց քիթ մտած կը խօսին , կը ծիծաղեն անամօթաբար , և որովք Կահիլէրու ևս վատ օրինակ կը լինին :

— Միատեղ ման դալէն , ասելէն և խօսելէն ի՞նչ մեղք պէտք է ծնանի , Եղիսաբեթ . — կը պատասխանէ միւս կինն — Միրզայ և Աննայ արդար , միամիտ և անմեղ գառնուկներ են և ողջախոհ տատրակներու նման անմեղ կեանք կը վարեն : Ես քեզ հաւատացնեմ , որ նոցա մտքէն դեռ մինչև ցայսօր չարութիւն անցած չէ . ուստի այդպէս մտածելն լաւ բան չէ : Միթէ դու այնպէս չէիր մանկութեանդ ժամանակ :

— Արդարեւ , այ քոյր , ասել , խօսիլն և իրարու ծաղիկ նուրբելն մեղք չէ . բայց միթէ տեղեակ չես , որ սոքա իւրեանց ծնողներէն նշանուած են : Միթէ կարելի է մեր դիւղի և բոլոր Խաչենու սովորութեան , որ նշանուածներն իրարու հետ խօսին :

— Ճշմարիտ կ'ասես , — կը հարցանէ զարմացմամբ Հռիփսիմէ :

— Այո , ճշմարիտ կ'ասեմ . վաղն առաւօտ «Փառք 'ի բարձրուն» ասելու ժամանակ լաւ նկատէ և տես թէ ի՞նչպէս Աւազին կինն Թազուհայն Աննայ աղջկան մի զոյգ վառուած նախշուն մեծ մեր պէտք է տայ , որ նշանտուրի առաջին նշանն է :

— Այո իմ օրիս և կեանքիս , վարսս կարուի , հոյն զլետուս , Եղիսաբեթ , ես մինչև այս վայրկեանս խմացած չէի , վայ զլետուս , կուրանաք ո՞վ աչքեր , խլանաք ո՞վ ականջներ , որ չ'ընէք այսպիսի բաներ , — ցաւօք սրտի միւս կնոջ ձեռքն կը բռնէ և աստու վախով կը կցէ . — Աստուած փրկէ , աղատէ , Եղիսաբեթ , այս ի՞նչ ժամանակի հասինք : Մինչև ցայսօր ո՞վ լսած է , ո՞վ տեսած է , որ նշանուած տղայ և աղջիկ միմեանց հետ նստին ,

ասեն, խօսին և կանգնեն: Եթէ Աստուած մեր գլխուն քար և կարկուտ թափէ, դարձեալ քիչ է: Ո՛ր գնաց մեր ժամանակի սովորութիւնն, որ նշանած կարող էր իւր նշանածին հետ խօսիչ հրապարակաւ. կամ այնքան կը կոտէին (կը ձեծէին), որ շան պէս կը սատկէր և կամ այնքան բամբասանք, նախատինք և ծանր խօսքեր կը թափէին գլխուն, որ ամիսներով չէր կարող առնէ գուրս ելնել:

— Շատ ճշմարիտ ասացիր, Հռիփսիմէ, մենք ևս նշանած ունեցած եմք. մեր նշանուած օրէն սկսեալ մինչև պսակի օրն երբ կը անսնէինք մեր նշանածն, կամ սկեսորն, տաղըն, խաչեղբայրն և պատրոնն (սկեսրայրն) տունէ տուն և ծակէ ծակ կը փախչէինք: Իսկ պսակուելէն յետոյ, ինչպէս սովորութիւն է, երեք ամիս հարսանեաց առաջատին մէջ փակուած կը մնայինք, տասն տարի անխօս կը մնայինք. ՚ի պահանջել հարկին նշանացի կը խօսէինք ՚ի ծնէ համբոյ նման: Աւերջապէս իմ խաչ բունող կնքահայրս տալաւին ոչ երեսու տեսած է և ոչ ձայնս լրած:

— Ես քեզ մի բան ասեմ, Եղիսարեթ, մեր գիւղին համն փախաւ և բոլոր գեղէցիկ սովորութիւնքն կը վերանան: Ար յիշէք արդեօք Տօրս ինձ տուած թակն (ծեծն): Ես արդէն երկու տարուան նշանուած էի. մի օր այս տեղ եկի ջուր տանելու, ուրիշ ջուր չկար. նշանածս յանկարծ այս քարին ետեւէն գուրս պրծաւ, դողալով չորս կողմերն նայեց, որ մարդ չ'տեսնէ. յետոյ մօտեցաւ, որ հետս խօսի, բայց ես թիկունքս դարձուցի: Խեղճն ճարահատեալ գրպանէն խնձոր ու տանձ հանելով գետին դրաւ և հեռացաւ: Ի հարկէ խնձորն ու տանձն ինձի համար թող տուաւ. երբ ուզեցի, որ ժողովեմ, դու մի ասեր հայրս վերի ճանապարհէն կը դիտէ: Տուն կը դառնամ, սափորս գետինն կը դնեմ և ըստ սովորութեանս Տօրս նոր ջուրէն կը տամ. նա երեսու անգամ չ'նայիր: Տեսայ, որ սաստիկ բարկացած է և փոթորիկ կայ իմ գլխուն: Թոնրատունն գնացի, որ խնձորներն և տանձերն մի տեղ պահեմ:

Աչքդ բարին տեսնէ, Եղիսարեթ, հայրս հին կացնի կոթ մը առած ինձ կրօնպատէր պատրաստի, այնքան ձեծեց, զորս զու պա-

տուիրեցեր: Եւ յետոյ այս ծանր խօսքերն թափեց գլխուս. — Լիբբ, անզգամ, նշանուած աղջիկն ամեն կերպիւ կոյս մնալու է մինչև իւր պսակն: Աստուած մի արասցէ, եթէ ուրիշ մարդ տեսնէր զքեզ, որ նշանածիդ հետ կը խօսիս և նա քեզ հետ չ'պսակուած մեռնէր, այնուհետև գլուխդ ո՛ր քարին կը տային: Մինչև մահդ քո եղբարց և նոցա հարսանց իբրև աղակին պիտի մնայիր և բոլոր կեանքդ՝ մի բերան նշանածիդ հետ խօսելուդ համար՝ ախով և վախով պիտի անցընէիր: Գու գիտես, որ մարդկան աղոյն չար լեզու է. լուն ուղտ կը շինեն և մարդ կը խայտառակեն»:

Աւերջապէս կարճ ասեմ, եթէ մայրս զիս չ'ազատէր Տօրս ձեռքէն, դուցէ ձեծելով անշնչացընէր, այնչափ բարկացած էր:

Հռիփսիմէ և Եղիսարեթ երկար բարակ խօսելէն և բամբասելէն զինի ռափորներն առին և տուն գնացին:

Միրզայի և Աննայի համարձակ շարժումներէն դայթակողդ ինքնաղով տիկինք իւրեանց բամբասանքն թերևս առաքինութեան պատգամ կը համարէին: Հիներն կը բամբասեն զնորերն. նորերն կը խորշին հիներէն: Ոչ նորերու շատախօսութիւնն պէտք է և ոչ հիներու համրութիւնն և սկեսուրի, տաղեր և այլոց հետ փոխանակ լեզուաւ խօսելու, նշանացի խօսիլն: Ասնացի համեստութիւնն ոչ համրութեան մէջ է և ոչ թեթևտղիկ շատախօսութեան: Համեստութիւնն վայելչութեան մէջ է:

ՊԼՈՒՍ ԺԷ.

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Գիշեր է, երկնից ընդարձակութեան վերայ համասփիւռ տաքածուած մեծ և փոքր աստեղք ազամանգի նման կը պսպղան: Լուսինն զեռ ելած չէ, գրեթէ կէս գիշեր է:

Երբեմն երբեմն այս կամ այն տանէն աքաղաղի սուր և երկայն ձայներ կը լսուին . զիւղի զանդակն կը հնչի և ժողովուրդն եկեղեցին կը հրաւիրէ :

Ամեն նոր հարսն և փեսայ , նշանած և նշանուած , ամուրի եւ ընտասարդք և օրիորդք կը զարդարուին ժամ երթալու : Աննայ օրիորդն արդէն զարդարուած իւր միւս քեռք կը սպասէ ժամ երթալու : Միրզայ ևս պատրաստուած և շուտով Եկեղեցին դնացած է : Մանկուիք և պատանիք , որն ճառան<sup>1</sup> առած և որն ճճանակ , երկու կարգի բաժանուած և եկեղեցւոյ ներքսխորանաց մէջ կարդաւ շարուած են : Իսկ Միրզայ դասին մէջ է և ՚ի շարս տիրացու երգչաց կ'երգէ :

Եկեղեցւոյ մէջ բնաւ կանթեղ չ'կայ վառուած , այլ մեղրամոմի աշտանակներով լուսաւորուած է Աւագ խորանն , երկու դասերն և ներքսխորաններն : Եկեղեցւոյ աւագ տիրացուն եկն , որոյ հետ ամեն տիրացու , ժողովուրդ և քահանայ շատ յարգութեամբ կը վարուի . այս էր մեզ նախածանօթ տիրացու Օհանն : Երկու ներքսխորանաց մանկուիք այս անձի լոկ անուանէն սաստիկ կը դողային : Աերջապէս մեր լուսահողի տիրացու Օհանն ներքսխորանաց յայցելութիւն դնաց , ճառանապետաց և ճճանակապետաց խստիւ պատուէր տուաւ , միասին ամեն և ամեն խորանի ճառան և ճճանակ իւր զիմացի դասապետ ժամասացին հետեի :

Այն ինչ «Յիշեցուք ՚ի գիշերի» երգն սկսաւ դասէ դաս երգուիլ , ճառաններն և ճճանակներն<sup>2</sup> ևս ճաւղ և ճիճիլ սկսան խորանաց մէջ :

1 Ճառան և ճճանակ տղայական գործիներ են :  
2 Այս գործիներն Յիշեցուքի , Առաստու լուսոյի , Օրհնութեան , Հարցի , Տէր երկնիցի և Նորաստեղծեալի ժամանակ դաս դաս կ'աժողան . իսկ Ջարբուոցեալի և Փառս ՚ի բարչունսի ժամանակ միասին կ'աժողան : Բայց ինչ այս սովորութեանն որ խորաններն մտած է Արարեալու Բիւրեղէնի մէջ , չ'կարողացան իմանալ ինչ և շատ հետազոտեցին :

Ճառան աստուած գործին չ'լաւով երկայնութեամբ ինչպէս քայտ մի

Սովորութիւն է եկեղեցւոյ մէջ փեսացուաց մայրերն կամ հասակաւոր քոյրերն նշանելի օրիորդաց վառուած մոմեր կը տան : Միրզայի մայրն Աննային նախուն մոմեր տուաւ . թէև շատերն կարծեցին թէ աւելի բարեկամութեան համար է . բայց շատ կանայք ևս սկսան միմեանց երես նայիլ զարմանօք . որովհետև Աննայ նշանուած չէր Միրզային և լոկ խօսքկապ կար երկոցունց մէջ և այն ծածուկ : Այս առաջին վայրկեանն էր , որ Միրզայ և Աննայ խօսակցութեան նիւթ եղան զիւղականաց մէջ , որ կամ նշանուած են և կամ պիտի նշանուին :

Ժամն արդէն արձակուած է . ամեն ոք այս զիշերուան քնոյ պահանորդն լցնելու համար կը քնանայ հանդիստ : Գարբին Աւագն իւր հարսնացու Աննային մոմերն տալու բոլոր պարագայներն իւր կնոջ պատմել տալով և մի ըստ միով լսելով անորոշ մտածմանց մէջ կ'երեւէր իւր տան մէջ : Գարբինն , որչափ որ անուս , աղքատ , հասարակ արուեստաւոր էր , այնչափ ևս հեռատես և փորձաւոր : Նա զիտէր , որ եթէ Չէլէպեանին հետ բարեկամանայ , Մաիրտումանին պէս ծանր պէտք է նստի իւր վերայ իւր որդւոյն հարսանեաց պիպոյքն : Գիտէր նաև , որ Միրզայ ՂԱննայ օրիորդն անհուն սիրով կը սիրէ . եթէ ինքն իւր կնոջ հետ կուտի , թէ ինչո՞ւ համար առանց իմ հրամանի , առանց ինձ հարցընելու մոմեր տուած ես այն աղջկան , անշուշտ իւր միակ աչքերոյս որդին պէտք է վերաւորուի : Աւստի Աւագելին կնոջ բարեսրտութեան վերայ վստահանալով կը սրտասոյղի և կը կոչէ .

— Աստուած շնորհաւոր արասցէ , Մարիամ , մեր սիրելի Միրզային նշանտուքն , Աստուած ՚ի բարին յաջողէ :

Միրզայ իւր ծնողաց խօսքերուն ունկնդիր կը դառնուի և կարծես թէ փոփոխութիւն կըզգայ իւր մէջ . վառն զի մինչև ցայն

է , որ իւր մէջ ժամացոյցի անոյ նման արածնաւոր անիւ ունի , անայն վերայ ինչպէ՞ր որակն մեր բեկեռստած փայտեայ լեղանակ մի , որ գործին արագ որարած ժամանակ կը ճառնայ : Իսկ ճճանակն երկու անկիւն և մի ինքնաւոր որսիտակներէ բաղկացած է ինչ լարերով , որ որսիտակէ յայն կը հանէ :

վայր իւր յարաբերութիւնքն Աննային հետ ընկերական էին և երբէք նշանուելու զաղափար չ'կար իւր մտաց մէջ: Այսպէս էր զարբին Աւագի տունն, տեսնենք Չէլէպեանց տան մէջ ինչէր կ'այնին:



ՔՂՈՒԽ ԺԸ.

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՐՔ

Չէլէպեանց ընդարձակ սրահին մէջ մօտ քառասուն հինգ տարեկան մարդ մի կը ձեմէ միջակ հասակաւ, որոյ կերպարանքն արտաքոյ կարդի զայրալիւր կը տեսնուի. թէև առաւօտեան օդն ցուրտ է, սակայն այս անձին զլուին բոլորովին բաց է և զոլորջի կը բարձրանայ, որով աւելի կ'արտայայտի բարկութիւնն: Այս անձն Չէլէպեանց Առաքելն, որ թէպէտ նոյն օրն եկեղեցի չէ իջած, բայց Աննային մոմեր տալու լուրն շուտով իւր ականջն հասած է:

Այն ինչ Չէլէպեան Յովհաննէսն իւր եղբօր կնոջ և Աննային հետ եկեղեցիէն տուն կը դառնայ և տան սրահին մօտեալով իւր եղբայրն զայրացած կը տեսնէ, շուտով յետ կը դառնայ, իւր հարս Թագուհին իւր հօրեղբօրենց տունն կը յուղարկէ, զուշակելով որ Առաքելի բարկութիւնն Թագուհւոյն դէմ է և թերևս զանակոծելով պիտի մեղքնէ. իսկ Յովհաննէս Անան հետն կ'առնու և տուն կը մտնէ:

— Ողորմի Աստուած, եղբայր իմ:

— Աննայ, մայրդ ո՞ր մնաց. — առանց իւր եղբօր պատասխանելոյ կը դօչէ Առաքել կատաղի դէմքով:

— Շուտով կը գայ, հայր իմ:

— Յովհաննէս,

— Հրամէ, եղբայր իմ:

— Չղիտեմ, այս տան մէջ քանի՞ մեծ կայ, ամեն ոք ինքնազլուխ բաներ կ'անէ: Մեր տան ոչ մեծն յայտնի է և ոչ փոքրն:

— Միտքդ չեմ կարող հասկանալ, սիրելի եղբայր իմ: Յովհաննէս իւր եղբօր միտքն շատ լաւ հասկացած էր, միայն թէ կ'ուզէր իւր եղբայրն խօսեցընելով բարկութիւնն իջեցընել:

— Գուք ո՞վ էք, — կը դօչէ Առաքել — որ իմ աղջկիս առանց իմ հրամանի կը նշանէք հարկատու տղային. իմ զաւակս նշանելու կամ տանս մէջ պահելու իրաւունքն ինձ միայն կը պատկանի և ոչ եղբօր կամ կնոջ: Իմ աղջկին դեռ տանս երեք կամ տասն և չորս տարեկան մանուկ է. ինչպէս յանդդնեցաք այս մանկան ձեռքն նշանի մոմեր տալ. և այն ո՞ւմ հետ նշանեցիք, քիթն մրոտ դարձնի տղային: Ո՛հ, Ելեան, Ծակ քար, Պողոսան (սարերու անուններ են) փլէք և զիս տակով արէք, որ ես ազատիմ սոցա ձեռքէն:

— Սիրելի եղբայր իմ, բոլոր բարկութիւնդ մի զոյգ մոմի համար է: Փա՛նօք Աստուծոյ, խեղքդ զլուխդ մարդ ես, մի զոյգ մոմով ինչ կը լինի: Մեր զաւակն արդէն մեր տան մէջ է. կ'ուզես, կը տաս. չես կամիր, չես տալ: Ուրեմն ինչո՞ւ բարկացած ես: Մեր դիւղի սովորութիւնն արդէն գիտես, որ Ծաղկազարդին աղջկանց մոմեր կը տան, մեր զաւակին ձեռքն ևս մի զոյգ մոմեր տուին. եթէ չհաւանինք, կարող ենք ուրիշին տալ մեր աղջկին:

— Եղբայր, հարկաւ մոմերն առնելու ժամանակ իւր մայրն իւր մօտ կանդնած էր. դիցուք թէ աղջկին դեռ ամեն բան չ'գիտէ, իւր մայրն ևս չ'գիտէր. ինչո՞ւ համար թող տուած է, որ առնէ այն մոմերն: Ամեն մարդ անուն, պատիւ և զգացում ունի. ամեն մարդ բարեկամ և թշնամի ունի. ինչո՞ւ համար թշնամիներս իմ վերայ խնդան և բարեկամքս ասեն. «Հազար ափսոս, Չէլէպեանց Առաքելն աշխարհիս մէջ տղայ մի չ'կարողացաւ դանել և իւր թաղաւորի արժանաւոր Աննայ աղջկին տարաւ մի քիթն փոշուտ և երեսն մրոտ դարձնի տղային տուաւ»:

— Սիրելի եղբայր, դուք գիտէք, որ եղբայրակիներս մեր դիւղի ամեն կիներէն խոհեմ, քաղաքավար և պատուաւոր է: Գուք գիտէք, որ նա պատիւ, զգացում, բարեկամ և թշնամին ինձմէ և

քեզմէ շատ լաւ գիտէ և կը ճանաչէ : Ես բնաւ չեմ համոզուիլ , որ նա քո պատուոյդ , անուանդ և մեծութեանդ արատ բերող դործոց մէջ մտնէ : Ուրեմն , եղբայր , զդուշայէք , որ նորա սիրան չ'վշտացընէք : Յետոյ իւր եղբօր ձեռքէն բռնելով կ'ասէ .

— Դուրսն ցուրտ է , ներս երթանք և մի մի բաժակ օղի խմենք : Օղին կը խմեն և տակաւ առ տակաւ կը հանդարտի Առաքելի բարկութիւնն :

Փոքր ինչ միջոց անցանելէն վերջն կը հարցանէ Առաքել .

— Մեծ հարսն ո՞ր մնաց , եղբայր Յովհաննէս :

— Հարկաւ կը գայ այժմ , ուր որ լինի :

— Սիրելի եղբայր , գուցէ դուք պատուիրած էք ուշ տուն դալու . քո անդին արևն վկայ , Զուճիւտին անդին արևն վկայ , բնաւ չեմ ձեռքեր . Աննան զրկէ , թող երթայ կանչէ :

Յովհաննէս Աննայ օրիորդն կը յուզարկէ մայրն կոչելու իւր եղբօր երդման վտահանալով :



ՔԼՈՒԽ ԺԹ.

ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Թագուհի ներս կը մտնէ փոքր հարսին և Աննային հետ , ուր Առաքել բարկութիւնէն հանդարտած լինելով կը հարցանէ .

— Թագուհի , Զուճիւտին անդին արևն սիրես , Ջշմարիտ խօսիր , ինչ բանէ ստիպեալ թող առ իր , որ աղջիկդ մոմերն առնէ Եկեղեցոյն մէջ :

Թագուհի ամենայն Ջշտութեամբ կը պատմէ իւր և Մարիամին ուխտադրութիւնքն , Միրզայի և Աննայի առաջին անգամ միմեանց պատահիլն , ծաղկեփունջեր նուիրելն , միմեանց վերայ մանկութենէ 'ի վեր ձգած սէրն և համակրութիւնն առանց պարագայ մի ձածկելու : Եւ յետոյ կը յարէ .

— Մարդ Աստուծոյ , քո աղջիկն Միրզայէն լաւ տղայի պէտք է տաս . նա այսօր եթէ երթայ քաղաքի մեծատուններէն անգամ աղջիկ ուզէ , չենք տալ ասող չ'լինիլ : Գու Աստուծմէ շատ շնորհակալ պէտք է լինիս , որ քո աղջիկն այնպէս տղայ կ'տանէ :

— Ես կը զարմանամ քո խելքին , որչափ լինի տկար խելքի տէր կին ես , թէ և հազար տարի ևս ապրելու լինիս , դարձեալ աշխարհիս սովորութիւնքն չես կարող ուսանիլ : Չես տեսնել , անխելք , որ ամեն մարդ իւր հաւատարմարդոյ հետ կը բարեկամանայ , կը նստի և կը կանդնի : Երբ մեր բարեկամներն լսեն , որ մեք մեր աղջիկն Աւաղին տղային տուած ենք , գիտես , ինչ պէտք է ասեն մեզ . պէտք է ասեն « Չէլէպեանց Առաքելն խաչնու դաւառին մէջ մի օրինաւոր տղայ չ'կարողացաւ գտնել իւր փեսացու . կամ թէ իւր աղջիկն գուցէ երեւելի և հարուստ տեղերէ ուզող չեղաւ , նորա համար անձար մնալով վերատաւ և աղքատ տղայի տուաւ . մինչդեռ ինքն միշտ խաներու և պէլերու հետ կը տեսնուի , կը ծանօթանայ , կը նստի և կը կանդնի . մինչդեռ ինքն Ռուսաց թաղաւորին ճանեաթաղի բոլոր զօրաց և զօրապետաց ցորենն տուող վաճառականն է » : Եւ այս մեզ համար մեծ տաց ցորենն տուող վաճառականն է : Ես իմ աղջիկն յախտեան Աւաղին տղային չեմ տալ . այլ կամ պէյղատի պէտք է տամ և կամ եթէ բարձրաստիճան տեղերէ ուզող և աւուղ չ'լինի , իմ տանս մէջ պէտք է պահեմ : Լաւ է տանս մէջ մնալով նորա վարսն սպիտականայ , քան թէ Աւաղին տղային տամ : Աւաղն ինչ ունի այսօր , Թագուհի , քեզ կը հարցանեմ , մի ծխոտ և մրոտ տուն ունի , մի քանի կտոր արտավայր , մի այդի , մի խարխլած խանութ , մի դարբնասալ , մի քանի արքան և մի քանի ուուն : Ահա քեզ Աւաղին բոլոր հարստութիւնն : Ուրեմն ուխտդ օղին տուր , և այսուհետեւ այսպիսի անվայել ուխտ չ'անես , որպէս զի ոչ ստիպուիս ուխտդ գրծելու , և ոչ ուխտադրութեամբ այլոց թշտառութեանց պաաճառ գառնալու :

— Այ մարդ , — Թագուհի մեղմով կը պատասխանէ . — գու իմ գլուխն ես , ես քո ոտքն : Փառք Աստուծոյ , քո աղջիկն գեռ քո տան մէջ է . կ'ուզես , կը տաս . չես ուզել , չես տալ . թող

իմ ուխտս ևս օրին մէջ ցնդի : Բայց իմացած լինիս , որ խանութիւն , պէյութիւն , իշխանութիւն և հարստութիւն ամենն ևս անհաստատ են , այսօր կան , վաղն չկան . այսօր երջանիկ , վաղն թշուառ են : Արուեստներն հաստատուն են . ամեն օր եթէ ոչ շատ , դոնէ մասնաւոր և արգար վաստակ ունին արուեստաւորք : Եթէ այսօր արուեստն , Տէրն մի արասցէ , լաւ չ'վաստակէ , արուեստաւորն հողադործութիւն և մշակութիւն կ'անէ առանց ամաչելոյ . և այսպէս իւր արգար վաստակով կ'ապրի առանց այլոց ծանրութիւն լինելոյ : Մեծ աղջիկդ Մակրտումեան Բարսեղին տուած ես , որ մի արուեստաւոր է . բայց այսօր թէ դիւզիս մէջ , թէ անուամբ միայն խաներու և պէյերու մէջ և թէ նոյն իսկ մեր տան մէջ , նորա պէս արգար վաստակով ապրուստ անող կայ , քեզ կը հարցանեմ . ձեռքդ խղճիդ դիւր և ինձ պատասխանէ : Հոիփսիմէ միջակ աղջիկդ Բաղասարեանց Սահակին տուած ես , որ ընաւ արուեստ չունի . և արդէն նշաններէն կ'երևի , որ առանց արուեստի վերջն մեծ թշուառութեանց մէջ պէտք է ընկնի : Արգարև Միրզայ հարստութիւն չունի , բայց քո ասածին չափ զուրկ չէ դիւզային հարստութիւններէ : Միրզայ այսօր իւր հօրէն դարբնութիւն ուսած է և Զատկէն յետոյ Շուշի պէտք է երթայ իւր հօրեղբօր մօտ պայտարութիւն ևս ուսանելու , որով երկու արուեստից տէր կը լինի : Այս ևս մի կողմ թող . Միրզայ այսօր նոյն ծաղիկ հասակին մէջ ունի համեստութիւն , պարկեշտութիւն , խոհեմութիւն և միանգամայն բարեկամութեան և ամուսնութեան ամենապիտանի հարստութիւնն , այսինքն ազնիւ հոյի և անկեղծ սէր : Ահա սոքա են ամուսնութեան և բարեկամութեան մէջ որոնելու բաներն :

Այսօր Միրզայ և Աննայ անանջատ սիրով և հոգով կ'ապուած են միմեանց հետ . եթէ կ'ուզես քո զաւակիդ համար թշուառ գերոյ կեանք պատրաստել , կարող ես Միրզայէն դատել և խանի ու պէյի զաւակի տալ : Այնուհետև պարսականն դու ես , իմ խելքիս կտրածն ես խօսեցայ :

— Թագուհի , դիցուք թէ Միրզայ շատ լաւ տղայ է , և դու քո ուխտագրութիւնդ կատարելու համար մեր Աննայ աղջիկն նմա

պէտք է տաս . բայց չէ որ Աննայի հայրն ես եմ : Ուրեմն պէտք չէր , որ դոնէ մի շարժ առաջ ինձ ևս իմաց տայիր , որ ես ամեն որպիսութեանց տեղեակ լինէի :

— Իմ ուխտագրութիւնն ծածուկ էր , վասն զի Միրզայ և Աննայ փոքր էին . ես վստահ էի , որ ժամանակին լսելով դու աւելի պիտի ուրախանայիր : Բայց իմ մեղքն է , որ փոխանակ ուրախանալու հազարաւոր մտքերու կ'երթաս :

Յովհաննէս , որ մինչև ցայս վայր ընաւ խօսած չէր , իւր եղբօր հաճութիւնն տեսնելով ուրախ և զուարթ կը կոչէ .

— Աւաղին հետ իմ բաժին բարեկամութիւնս Աստուած շնորհաւոր արասցէ :

— Իմ բաժին բարեկամութիւնն ևս . — կը կոչէ Թագուհի :

— Քանի որ ձեր մէջ ես միայն մնացի , ուրեմն իմ բաժինս ևս . — կը կցէ Առաքել :

Միրզայի և Աննայի վիճակն արդէն փոխուած կ'երևէր :



ՊԼՈՒՆԻ Ի .

ՄԻՐԶԱՅԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԿԸ ՓՈՒՈՒԻ

Ղարաբաղցոց և գրեթէ բոլոր Հայաստանցոց մէջ նախնական սովորութիւն է , որ երբ օրիորդ և երիտասարդ կը նշանուին , այնուհետև իրարմէ կը ծածկուին : Չեն կարող միմեանց հետ խօսիլ , չեն կարող համարձակ տեսակցիլ , այլ ևս չեն կարող ՚ի միասին ման դալ , նոտիլ և կանգնիլ : Հազիւ ուրեմն կը պատահի , որ տարին մի քանի անգամ տղան աղջկան տունն երթայ , և այն գրեթէ ծածուկ և գլխաւորապէս զոքանչին և կամ տան մէջ գտնուած կանանց միայն յայտնի : Խնամութիւնն կը կատարուի արձակ համարձակ . ինամիք խնամեաց ընծայներ կը յուղար-

կեն, բայց նշանուածներն տեսակցութենէ դարձած են. վասն զի ամօթ կը համարուի, եթէ միմանց հետ տեսակցին, խօսին, նստին և ման գան:

Միրզայ և Աննայ, որք առաջ իրարու համարձակ կը տեսնուէին տանց մէջ, պարտիզաց մէջ, այգեաց մէջ, արտօրէից մէջ և միանգամայն շինական զբօսանաց և աշխատանաց մէջ, իսկ այժմ նշանախօսութիւնն հրատարակուելէն զինի պարտաւորեցան, երկրի սովորութեան համեմատ թողուլ ամեն բան. իւրեանց սէրն իւրեանց մէջ ամփոփել և հեռուէն միայն սէր տածել միմանց վերայ: Իւրեանց նշանախօսութեան հետ իւրեանց միտքն ու զգացումն ևս փոխուեցան. առաջուան սէրն լոկ զբացիական, մանկական, համակրական և անապատակ էր. իսկ այժմ գիտեն, որ նշանուած են. գիտեն, որ մի օր պէտք է պսակուին. ուստի և յեղաշրջուած է իւրեանց վիճակն: Այժմ ամեն բանէ կ'ակնածին, ամեն բանի մկնուծիւն կը տան, ամեն քայլ նշանակութիւն ունի իւրեանց համար, մինչդեռ առաջ այնպէս չէր:

Միրզայ Ծաղկաղարդէն զինի Շուշի կ'երթայ պայտարութիւն ուսանելու իւր հօրեղբայր պայտարապետ Գրիգորի մօտ, որ Շուշի քաղաքի անուանի վարպետներէն էր: Միրզայ իւր հօրեղբօր տան այնպէս էր, ինչպէս իւր իսկ հօրեանական տան մէջ. ամենուն սիրելի էր, և նոյն ընտանեաց մէջ իբրև զառակ համարուած էր և սիրելի էր նա իւր աշակերտակցաց: Միրզայ ՚ի Շուշի էր, բայց իւր սիրտն և միտքն ՚ի Խնածախ: Օր չ'կար, յորում իւր Աննան միտքն չ'զար, չ'յիշեր և չ'մտածեր:

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՓՈՒՆԱԳԱՐԶ ՆՈՒԷՐ

Վիւրակէ է և ժամն եօթն (ըստ Ռուսաց մէկ): Շուշուայ մէջ ամենայն ոք ճաշն արած և զբօսանքի ելած է: Միրզայ, ըստ իւր

յաճախակի սովորութեան, քաղաքին հիւսիսային կողման բարձր պարսպին բրդան վերայ նստած և իւր աչքերն Խնածախ գիւղի կողմն յառած է, ուր Չէլէպեանի տունն միայն ամեն տուներէ պայծառ կ'երևի: Որովհետև օդն պարզ է, արեգակն իւր գեղեցիկ ճառագայթներն Առաքելի տան հարաւային որմին զարկած է, որով Աննայի սենեկին պատահանաց ապակիքն բիւրեղի նման կը փայլեն:

Միրզայի նստած բուրդէն ՚ի հեռուստ կը նշմարուին Աովկասեան լեռանց ձիւնապատ շղթաներն, ՚ի մօտուստ կ'երևին Քեաթուկայ բոլոր սարերն արևելեան կողմն. Աշարանդու գաւառի մի մասն արևելեան հարաւային կողմն. Խաչնու բոլոր գաւառն, լեռինք, բլուրք և դաշտավայրք հիւսիսային կողմն. իսկ Քիրտայ և Զարսուլի սարերն արևմտեան կողմն: Զարսուլի գետակն այս բրդան դիմացէն կը վազի, տեղ տեղ սրբնթաց, տեղ տեղ խաղաղ և տեղ տեղ բարձր ժայռերէ վիժելով: Թռչնոց երգերն, կանազարդ անտառներն, բիւրազան ծաղկանց անուշահոտութիւնքն չեն կարող զբաւել Միրզայի ուշադրութիւնն:

Միրզայ իւր սիրելի Աննային պատահանաց ճաճանչափայլ ապակիներն կը դիտէ և զինքն կը մեղադրէ ողջ տարի մի գիւղն չ'զառնալուն, և գոնէ մի անգամ բարեկամաց այցելութիւն չ'տալուն համար: Եւ ահա յանկարծ իւր քենակալ Բաղասարեանց Սահակն բրդան վերի աստիճանին վերայ կ'երևի:

— Օ՛ճօ բարով, Միրզայ, բարով, բարով քեզ, եղբայր, այս ի՞նչ է քո արածն: Եղբայր, գիւղն բոլորովն մոռացար:

— Բարեւ, բարեւ, հազար բարեւ քեզ, եղբայր Սահակ, այն տնաչէն, միթէ կարելի է ինձ գիւղն մոռանալ. վասն զի իմ հօգին գիւղին մէջ է և գիւղի հոյն իմ սրտի մէջ: Արդէն գիւղն մագնիսն չէ՞ զիս ամեն կիւրակէ այս բուրդն զողովն: Բայց ի՞նչ նայինք, ի՞նչպէս են գիւղի անձինք:

- Փա՛ռք Աստուծոյ, ամենքեանքն ևս շատ լաւ են:
- Հայրս, մայրս և քոյրերս:
- Նմանապէս:
- Արդեօք սիրելի Աննաս ի՞նչ վիճակի մէջ է:



— Գոհութիւն Աստուծոյ, ահա իւր առ ձեզ ուղղեալ նամակն: Աւագեան նամակն շուտով բանալով կարդաց.

«Ա՛խ, Միրզայ, որչափ երկար տարի մի անցուցի, Վարդի կարօտ պիւլպիւլի պէս ո՛՛հ քեզ կարօտ մընացի, Տեսոյդ կարօտած շատ ման եկի, քեզ չի տեսի, Ո՛չ բաղում և ոչ բախճում շուքդ էլ չի գտի:

Գիտեմ, Միրզայ, ուշ ու միտքդ տուած ես արուեստի, Գոնէ՛ քո սիրուն մէջ ինձ համար մի տեղ պահի. Խանութք ամբողջ նուիրած ես միւշտարիների<sup>1</sup>, Գոնէ՛ սրտումդ զիս ընդունելու մի անկիւն պահի:

Էդ նախշուն աչքերդ տուած ես նալի<sup>2</sup> զընտանի<sup>3</sup>, Ա՛խ, զզացումներիցդ ինձ մի բաժին հանի. Օթախդ<sup>4</sup> նուիրած ես քո ընկերակիցների, Գոնէ՛ հողւոյդ մէջ զիս հիւրընկալելու մի տեղ պահի:

Էդ ա<sup>5</sup> քեզ համար յուղարկեցի մի քսակ փողի, Միջուռն կապած շղաթաթախ մի փունջ ծաղկի. Ինձնից քեզ յիշատակ, Միրզայ, դէ՛ լաւ պահի, Գոցա վերայ կը տեսնես սիրտ ու հողին քո Աննայի:

՚ի 22 Ապրիլ ՚ի Խնածախ:

Միրզայ նախ քսակն կը բանայ և ծաղկէփունջն հոտոտելով գարձեալ քսակին մէջ կը դնէ: Կապարեայ գրիչն ձեռքն կ'առնու և ծոցէն մի կտոր թուղթ հանելով այսպէս կը պատասխանէ.

- 1 Մեշտարի. Թաճախորդ:
- 2 Նալ. Պայտ:
- 3 Զընտան. Պայտասալ:
- 4 Օթախ. Սենեակ:
- 5 Էդ. Ահաւասիկ:

ՍԻՐԵԼԻ ՆՇԱՆԱԾՍ

Գիտեմ, անշուշտ երկար տարի մի անցուցած ես, Ինչպէս ա՛խ, ես քո, դու էլ իմ տեսոյժ կարօտած ես, Բայց, Աննայ, ինչո՞ւ բաղում, բաղճում կ'սրոնես, Ինձ քո սրտի և հողւոյ մէջ միայն գտնել կարող ես:

Աննայ, թէ՛դուզ ուշ ու միտս արուեստիս տուած եմ, Բայց բոլոր սէրս քեզ համար միայն և ոչ ոքի պահած եմ. Թէ՛և խանութս միւշտարիների նուիրած եմ, Բայց կոյս սիրտս քեզ ընդունելու համար միայն պահած եմ:

Թո՛ղ իմ աչքերն, Աննայ, միշտ յառին նալին զընտանին Սակայն զզացումներս քո են միայն սեփական բաժին. Թո՛ղ օթախս էլ ինձնից առնեն, տան իմ ընկերակիցներին, Բայց հողիս քեզ համար միայն է հիւրանոց և ո՛չ ոքին:

Ո՛հ, Աննայ, երբ քսակն բացի և ծաղկէփունջն տեսայ, Շատ հոտ քաշեցի, բայց ափսո՛ս, դեռ չի կշտացայ. Ինչու որ նորա վերայ քո սուրբ սէրն, սիրտն և հողին տեսայ, Ա՛խ, ասես թէ, ես ինձ քեզ հետ ձեր բաղճում գտայ:

Ահա քեզ մի հայելի ինձնից նուէր փոխադարձ, Օթախիդ պատից, Աննայ, միշտ պահի կախած, Բանի վերան նայիս, Միրզագ յիչէ՛ անմուռայ Ուր կը տեսնես իմ սէր, սիրտ ու հողին քունին<sup>1</sup> հետ խառնուած: ՚ի 23 Ապրիլ ՚ի Շուշի:

Աւագեան նամակն գրելէն յետոյ Սահակին կը տայ, և զնա իւր հետ առնելով սենեակն կը տանի և իւր բարձին տակէն մի հայելի հանելով Բաղտասարեանցին կ'երկարցընէ և ծիծաղելով կ'ասէ.

<sup>1</sup> Այսինքն քո սիրոյ, սրտի և հողւոյ հետ խառնուած:

— Սիրելի քենակալս, այս հայելին առանց ճանապարհչին կոտրելու, մեծ զգուշութեամբ կը տանես և առանց ուրուք իմացընելու, իմ սիրելի Աննայիս կը նուիրես իմ կողմանէ ողջունիւ հանդերձ: Աննայիս կ'ասես, ես ոչ զինքն մոռացած եմ և ոչ զիւրի բոլոր բարեկամներս. այլ կը փափաքիմ քաղաքս աշակերտ դալէս յետոյ, վարպետ վերագառնալ զիւրն: Ահա մինչև յայսօր զիւրն չ'զալուս պատճառն: Եթէ ողջ մնայինք, վեց ամիսէն յետոյ աշակերտութեանս ժամանակն պէտք է լրանայ, և ես վարպետ օրհնուած զիւրն պէտք է վերագառնամ: Յուսամ թէ այս որոշումն ինձ և իմ բոլոր սիրելեաց և բարեկամաց համար աւելի պարծանք և պատիւ կը բերէ, քան թէ ամեն ամիս վազել զիւրն դալն: Սոյն խօսքերն նամակիդ մէջ գրած չեմ, կ'աղաչեմ, բերանացի ասէք քենուդ:

Քաղաքս արեւմտեան հայելին թաշկինակի մէջ ծրարելով պայուսակին մէջ կը զետեղէ և իւր քենակալին ձեռքն թոթոկելով կ'ասէ.

- Մնաք բարեաւ, սիրելի Միրզայ:
- Երթալք բարեաւ, ազնիւ քենակալս. հայելին քեզ առանդ և դուք Աստուծոյ. բայց մի բան պէտք է հարցանեմ, չեմ համարձակիլ:
- Արդէն ձեր հարցանելիքն Աննան ինձ ասած էր, բերանացի ձեզ հաղորդելու, բայց մոռացայ: Դուք պէտք է հարցանէիք. «Աննան զրեւ չ'գիտէ, ապա այս նամակն ո՞վ գրած է»:
- Այո, ճիշտ այդ էր իմ հարցանելիքն:
- Խօսքերն քենիս ասած է, և զիրն ես գրած եմ. ուստի ինչպէս որ Աննայ իբրև քոյր իմ դաղանապահութեանս վերայ վստահութիւն ունի, նոյնպէս դուք ես, խնդրեմ, ունենաք:
- Ամենայն համարձակութեամբ: Ուրեմն Տէր ընդ ձեզ:

335

ՔԱՆՈՒՄ ԻՔ:

ՆՈՐ ՕՐՀՆՈՒՆԾՎԱՐՊԵՏ

Աւագնանի անկեղծ սէրն, հմայելի դէմքն, հրապուրիչ և նրտազրաւ խօսակցութիւնն և հանգուցիչ ճշմարտախօսութիւնն թէ իւր վարպետին և ընկերակցաց, թէ բոլոր պայտարաց և թէ յաճախորդաց սիրտերն առ ինքն քաշած էր: Քաղաքին մէջ նշանաւոր նժոյգներ հեծնող խաներ, պէյեր, աստիճանաւորներ և միանգամայն նորահաս հեծելաւոր երիտասարդք Միրզայի խանութի կը յաճախէին նժոյգներն պայտել տալու համար:

Հայաստանի մէջ, երբ որ և իցէ արուեստաւորի աշակերտ իւր աշակերտութեան պայմանաժամն կը լրացնէ, անշուշտ պէտք է վարպետ օրհնուի և իւր արուեստակից վարպետաց ստորադրութեամբ վաւերացեալ վկայական ունենայ իւր ձեռքն, որով կարողանայ այնուհետև ինքնազուխ խանութ բանալ և ազատօրէն իւր արուեստն ՚ի զորձ գնել առանձին: Բայց եթէ չունի այս վկայականն, ո՛չ իւր քաղաքին մէջ իրաւունք ունի առանձին խանութ բանալու և ո՛չ այլ քաղաքաց մէջ՝ այլ կամ իւր վարպետին մօտ մասնաբաժին ընդունելով պէտք է պարապի և կամ ուրիշ վարպետի մօտ իբրև երկրորդական:

Օրհնութեան եղանակն այսպէս կը կատարուի: Օրհնող աշակերտք փառաւոր կոչունք կը տան իւրեանց արուեստակից վարպետաց և նոցա բոլոր աշակերտաց. իսկ իւրեանց վարպետաց արժանավայել ընծայ: Եւ վարպետք իւրեանց օրհնող աշակերտաց մի ձեռք արուեստին վերաբերեալ զորովք պէտք է շնորհն հանդերձ օրհնութեամբ, և նոցա վարպետութեան արժանաւորութիւնն պէտք է վկայեն ՚ի լուր ամենայն կոչ:

1 Չ'խորհրդանք իմանալ թէ այս աստիճան-թիւնն ե՞րբ հրատարակուած է և աստիճանի Հայաստանի մէջ:

նականաց, և ամենէն առաջ ինքեանք պարտաւոր են ստորագրել վկայականն :

Աւագեանի աշակերտութեան շրջանի վերջին աւուրց մէջ պայտարապետ Գրիգորն առանց իւր աշակերտին բան խօսելու, պայտար արուեստաւորաց համար կոչուոնքի պատրաստութիւն կը տեսնէ ամենայն պարագայիւք : Շարաթ երեկոյ հրաւիրակ կը հանէ բոլոր արուեստակցաց իմացընելու, որ հետեւեալ կիւրակէ առաւօտ իւրեանց աշակերտօք 'ի միասին սրբազան պատարային ներկայ գտնուելէն յետոյ՝ իւր տունն դալու բարեհաճին : Կիւրակէ առաւօտ ժամարձակէն զինի ժամն հինգէն վեց երթալու միջոցին պայտարապետին դստիկոնի վերայ կարգաւ բազմած էին հրաւիրեալք, որոց մէջ կը 'գտնուէր նաև զարբին Աւագն, և որոյ վերայ ամենայն ոք զարմացմամբ կը նայէր :

— Արդեօք այս դիւղացին ո՞վ է, որ մեր խումբին մէջ կը 'գտնուի. — կոչեց ցած ձայնիւ բազմականաց մին :

— Յակովբ, Յակովբ :

— Հրամայեցէք, վարպետ :

— Ո՞վ է այս շինականն. — կ'ասէ կոչողն Յակովբին ականջին :

— Միրզային հայրն է :

— Մի՞թէ, զարմանալի՛ բան, այնպէս տղային այսպէս հայր վերջապէս երանի՛ նորա, որ այսպէս 'զաւակ ունի. — շարայարեց նա, և պայտարապետի աշակերտ Յակովբն իւր գործին փութաց :

Կոչնականք դստիկոնի երկու եղբրքներէն նստած էին դէմագէմ, որոց առաջքէն նախշուն շիթէ երկար սփռանէր փռուած էին : Սեղանն ճոխ էր տեղական ամեն բարութեամբ. սպիտակ լօշ հաց, ընտիր խորոված, զինի, օլի և այլ ամեն բան առատ էր : Սեղանն օրհնելէն յետոյ առաջին բաժակն առաւ պայտարապետն և բոլոր պայտարայ կենացն խմեց. իսկ պայտարք խմբովին շնորհակալութիւն մատուցանելով՝ իւրեանց պետին փոխադարձաբար բաժակներ խմեցին : Յետոյ Միրզայի կենացն խմեցին թառնակիւտի կարմիր և զօրեղ զինիէն : Աւագեան իւր վարպետի հրամանաւ լի բաժակն առաւ, յարգանքն բոլոր կոչնականաց նուիրելէն

զինի՝ խմեց զինին : Ճաշն վերջացաւ, սեղանն օրհնուեցաւ, օրհնուող աշակերտն շառագունելով եկն և բազմականաց մէջ տեղն ձեռքերն սրտին դրած կանսնեցաւ :

Քահանայից մին կարգաց այն գերքն, ուր Եղիա մարդարէն իւր Եղիսէ աշակերտին կը հարցանէ. «Զինչ ինդրես Եղիսէ. — Եղիցի կրկին ոգի քո 'ի վերայ իմ' : Միւս քահանայն կարգաց. «Որդեակ իմ Տիմոթէոս, պահեա զաւանդն իմ' : Իսկ երրորդ քահանայն կարգաց. «Ահա ետու ձեզ իշխանութիւն» աւետարանն : Յետոյ «Սուրբ խաչիւս և Պահպանիչ» ապա օրհնութեան կարգն պայտարապետին եկն : Սա մի արքան և մի պայտառուն խաչաձև Միրզայի գօտոյն մէջ զետեղեց և Աղամէն սկսեալ մինչև այն օրն, ինչ օրհնութիւն, որ Աստուած առած էր հանուր մարդկութեան, մի ըստ միջէ իւր աշակերտին գլխոյն վերայ թափելէն զինի փափուկ ապտակաւ՝ վերջացուց իւր օրհնութիւնն : Միրզայ այս սպտակն ուտելէն վերջն իւր վարպետին ձեռքն համբուրեց, իսկ սա նորա ձակասն և այտերն :

Պայտարապետին յատուկ նուէրն բերուեցաւ, որ էր Ղարաբաղու ձևով կարուած մի պատուական Տաղստանի Կէ-է Է-ուէ շէր-է-է՛ Միրզայի վկայական թղթով հանդերձ, ուր ստորագրեցին քահանայք և բոլոր պայտար արուեստաւորք, որոյ ընդօրինակութիւնն ահա այս տեղ կը գնեմք, բանասիրաց հետաքրքրութիւնն զո՛հ անելու նպատակաւ :

ՎԿԱՅԱԿԱՆ

Ունող գրոյս այսօրիկ է բնիկ Խնածախցի Միրզայ Աւագեանն, որ իւր անխոնջ աշխատանօք ուսաւ զպայտարութիւն առ ոտս Պայտարապետ Գրիգորի. վասն որոյ ո՛չ ևս կոչուցի սա աշակերտ, այլ Ուստայ Միրզայ թէ՛ աստ, և թէ՛ յայլում քաղաքի : Այսու-

1 Այս ևս հասանք սովորութիւնն է, որով վարպետ մի իւր աշակերտն օրհնելէն յետոյ ապտակելով կը վերջացնէ իւր վարպետական օրհնութիւնն :

հետև ոչ ոք ունի իրաւունս պահանջել ինչ յուստա Միրզայէ . քանզի զպտուղ օրհնութեան սորա լիովին սասցաք և արժանապատիւ քահանայիւք և բոլոր պայտար վարպետօք օրհնեցաք դաս : Օրհնեցէ և Տէր Աստուած զտուս և զտուրս արին միշտ պահպանելով 'ի խնամս մարդասիրութեան իւրոյ :

'ի Շուշի 'ի 1833 (Մտորագրութիւնք)

Այս օրհնութեանց արտաքին ձևն է , որ թերևս ոմանց օտարօտի կը թուի , սակայն պէտք է իմանալ , որ ներկայ եղեալ անձանց և նոյն իսկ օրհնուող աշակերտաց սրտից և զգայմանց վերայ մեծ փառաբանութիւն և վսեմ ազդեցութիւն կը ներդրած է : Ուրովհետև կարգացուածոց մէջ աշակերտն կը փափաքի այս օրհնութեան միջոցաւ իւր վարպետի վարպետութեան կրկին շափ վարպետութիւն ստանալ Աստուծոյ անբաւ շնորհքներէն : Արպետան սոյն եկեղեցական օրհնութեամբ և նահապետական սովորութեամբ իբրև նուիրական աւանդ նորընծայ վարպետին կը յանձնէ ' իւր թէ՛ բանիւ և թէ՛ դործով տուած խրատներն , սրտուէրներն և արուեստին անխորդալս գործածութիւնն 'ի ներկայութեան բոլոր հանդիսականաց : Այնուհետև այս վսեմ զգայմամբ միշտ կը յիշեն օրհնուող նորընծայք , որ այս արուեստն իբրև սրբազան աւանդ մի է իւրեանց յանձնուած , կը յիշին թէ ինչեանք ևս պարտաւոր են այլոց ատանդել : Աերջպէս այնուհետև այս օրտակար զգացումն որպէս որդի փոխանցելով կը յարատևէ :

Ազնականք ջրուեցան . գարբին Աագն իւր եղբայրն և որդին համբուրելով տուն գարձաւ . նորընծան և իւր վարպետն միայն քնային :

— Սիրելի Միրզայ , — կ'ասէ վարպետն . — պայտարութեանդ վերաբերեալ գործիքն ամբողջ շինել տուած եմ , այսուհետև աշակերտ չես , այլ վարպետ : Ահա խանութն և բոլոր աշակերտք այսուհետև քո իշխանութեան տակ են . բայց , ազնիւ եղբորորդիս , պէտք է , որ այսօր ազատ կամբք ինձ յայտնես , որպէս զի իմանամ և տեսնեմ ինչ գաշամբ պէտք է բանես խանութի մէջ :

— Մեծապէս շնորհակալ եմ Ձեր հայրութենէ , որով խանութն և աշակերտներն բոլորովին ինձ կը նուիրէք , և զիս վարպետ կը կարգէք այս ամենուն վերայ : Միայն թէ շատ կը ցաւիմ , որ այսուհետև բանելուս համար գաշինք կը պահանջէք ինձմէ , զոր երբէք չեմ համարձակիլ տալ Ձեզ : Քանզի զես պարտաւոր եմ շատ ժամանակ ձրի ծառայել Ձեզ , Ձեր անշափ երախտեաց համար :

— Բնաւ մի ցաւիք իմ առաջարկութեանս վերայ : Բոլորովին վստահ եղիք իմ վերայ և որոշէ , տեսնեմ այսուհետև ինչպէս պէտք է բանես : Եթէ կ'ուզես , քեզ համար առանձին խանութ բռնեմ , նիստ և զատ բանիք . իսկ եթէ չես կամիր ինձմէ՝ զատուիլ , քո ազատ կամօք ինձ յայտնէ՛ միտք :

— Ո՛հ , ազնիւ վարպետս , — կը կոչէ Միրզայ . — քանի որ քաղաքիս մէջ եմ , անհնարին է ինձ Ձեզմէ բաժանուիլ և զատ խանութի մէջ առանձին նստիլ : Նոյնպէս քանի կենդանի եմ , անկարելի է ինձ այդպիսի գաշինք կամ սակարկութիւն անել Ձեզ : Հետևապէս քանի որ իմ վերայ այդ ատտիճանի դուրս , ինամբ և հոգատարութիւն ունիք , իմ կողմանէ որոշում տալն ինձ համար մեծ անխոհեմութիւն է : Արեմն ամեն բան Ձեզ յանձնելով , կ'աղաչեմ , որ այս նիւթի վերայ այլ ևս չ'խօսինք :

— Ատ , ուրեմն այլ ևս չ'խօսինք այս մասին . բայց բաւական ժամանակ է , որ բնաւ զիղն զնացած չես . գնա՛ մի անդամ ծնողքդ և բարեկամներդ տես :

Միրզայ կ'երթայ 'ի Ինսաճախ և ամեն աղկականք ու բարեկամք շատ կ'ուրախանան , և այս միջոցին Բաղտասարեանցի ձեռք նամակ կ'ընդունի :

ՓԼՈՒՆ ԻՓ.

ՆԱՄԱԿՆԵՐ

Միբղայ Ձէլէպեանց այրոյ մօտէն անցած ժամանակ Աննան տեսած էր այն տեղ, լուռ և մունջ սակաւ ինչ նայած էին իրարու վերայ, լեզուէն աւելի սրտով խօսելով: Ուստի երեկոյին Աննայ Խախանեանց Մահակին նամակ գրել տուած և Միբղային յուղարկած էր իւր վարպետ օրհնութիւն շնորհաւորելու համար: Նամակն զեղջուկ իմաստով ոտանաւոր մի էր, որ Միբղայի արուեստին կը վերաբերէր և է հետևեալն.

Ո՞ր տեղանց որ տեղ, Միբղայ, պատահեցար ինձ մեր այգում, Դու իմ հետ չխօսեցար, ես քո, դառ<sup>1</sup> թողոյ ցինք միմեանց սրտում, Սովորութիւնն<sup>2</sup> փակեց քոյդ քո, իմ լեզուն իմ բերանում, Բայց սէրն ու բնութիւնն կը ներեն մեզ խօսիլ նամակներում, Արանից վերջն ինձ համար սիրոյ դա թար<sup>3</sup>, զալամ և զալամտան<sup>4</sup> ես, Միբղայ ջան:

Միրելի նշանաձա, անտանի և համբաւոր, Նո՞ր օրհնուած ուստայութիւն<sup>5</sup> եղեցի շնորհաւոր, Ոսկի դատիս, իմ սիրական, հաղարաւոր և բիրաւոր: Անուն, փառք և մեծութիւն շահիս դու նորանոր, Արանից վերջն ինձ համար նո՞ր անուն, փառք, ուստայ և ուստաքեար<sup>6</sup> ես, Միբղայ ջան:

- 1 Դադ. Խարան, այրած նշան:
- 2 Սովորութիւն. Արգիլեալ աւանդութիւնն:
- 3 Դաբար. Տեարակ:
- 4 Ղալամտան. Թանազաման:
- 5 Ուստայութիւն. Վարպետութիւն:
- 6 Ուստաքեար. Արուեստագետ:

Օրհնութի, ուստայ, քո ոսկի փեշակին<sup>1</sup> չեաքիւճ<sup>2</sup> ու զընտանն<sup>5</sup>, Քեալփաթին<sup>4</sup>, սնթուաշ<sup>5</sup>, ձեիչ<sup>6</sup>, թիւքեան ու տեազկեահն<sup>7</sup>, Օրհնութի քո երկու ջեպերն, ու փողի նախուն քսակն, Միջիցն անդակաս լինի Հայր Աբրահամու բարաբաթն<sup>8</sup>, Քո չեաքիւճ, զընտան, սնթուաշ և քեալփաթինն ինձ համար բազրկեանի<sup>9</sup> թամպալէթ<sup>10</sup> ա, Միբղայ ջան:

Ինձանից նեղանաս, այ ուստայ ջան, մի բան ասեմ քեզ, Թէ գուղ շատ անգամ բաղերում, արտերում տեսած էի քեզ, Բայց էս օրուան պէս զեղեցիկ տեսած չէի ես քեզ, Երբ մօտէս դնացիր լուռ, մունջ, ո՛հ, սիրտս տարբար հետ քեզ, Ինձ համար Յովսէփ զեղեցիկ, Աբիսողոմ և աննման Աբայ ես, Միբղայ ջան:

Գիտեմ, գովասանքն սիրել չես, բայց իմն ղարուլ<sup>11</sup> արա, Թո՞ղ քեզ դովեմ, ուստայ ջան, ինձանից մի նեղանայ, Բոյդ<sup>12</sup> կանծչ սալբի<sup>13</sup>, ախ, էդ մատներդ ծիլ ծիլ ոսկի ա, Ունքերդ զառ<sup>14</sup> ղալամով քաշած, թերթերունքդ<sup>15</sup> թոփ ուեհան ա, Ինձ համար սալբի, ծիլ ծիլ ոսկի, և անուշահոտ ուեհան ես, Միբղայ ջան:

- 1 Փեշակ. Արուեստ:
- 2 Չեաքիւճ. Այս տեղ, պայտուռն:
- 3 Ձեիչան. Պայտասալ:
- 4 Քեալփաթին. Աղցան:
- 5 Սնթուաշ. Սմբակ տաշելու գործին:
- 6 Ձեիչ. Սմբակաց ծայրերը կտրելու գործին:
- 7 Տեազկեան. Խանութի ամբողջ գործինն:
- 8 Բարաբաթն. Անպատելի:
- 9 Բեազրկեան. Վաճառական:
- 10 Թամպալէթ. Հակ. բեռն:
- 11 Ղարուլ. Ընդունիլ:
- 12 Բոյ. Հասակ:
- 13 Սալբի. Նոճի ծառ:
- 14 Ձառ ղալամ. Ոսկեգրիչ:
- 15 Թերթերունք. Արանանունք:

Թշերդ<sup>1</sup> վարազած<sup>2</sup> խնձոր, աչքերդ լուսատու լալու ջավահիր<sup>3</sup> և,  
 Պուռներդ<sup>4</sup> շաքար, նապաթ, լեղուդ ծլվլացող<sup>5</sup> պիւլլիւլ և,  
 Ատամներդ զառնիշանով շարած մարդարիտ, արմատ<sup>6</sup> և,  
 Չանադ<sup>7</sup> ոսկե ջրած զարդ, սիխերդ նոր լուսնեակ և,  
 Ինձ համար ջաւահիր, շաքար, նապաթ, պիւլլիւլ, արմատ և  
 նոր լուսին ես, Միրզայ ջան :

Գլուխդ անդին քարերով լի ոսկի թատ, մաղերդ կիւրացաթին<sup>8</sup> և,  
 Ճակատդ պարզ երկինք, կուրծքդ բաղ, մէջքդ մարմար սիւն և,  
 Սիրտդ պալատ, հողիդ թագաւոր, միտքդ ուղեղ իշխան և,  
 Զգացումներդ պալատական և կամրդ ատալաթ<sup>9</sup> սուլթան և,  
 Ինձ համար իշխան, թագաւոր և ատալաթ շահ սուլթան ես,  
 Միրզայ ջան :

Թէզուդ աշխարհքում հազար սուլթան լինի, իմն դու ես,  
 Թէզուդ բիր հաքիմ լինի, իմ սրտի հաքիմ<sup>10</sup> ճառահան դու ես,  
 Անխոս սիրտս եարալու<sup>11</sup> և, լաւ մահճամ<sup>12</sup> դրած կը լինիս,  
 Ա՛խ, թէ որ արզս<sup>13</sup> դարուլ անես, դրիս մի պատասխան գրես.  
 Աննայիդ համար հաքիմ, ճառահան, դեղ և անսխալ մահճամ ես,  
 Միրզայ ջան :

- 1 Թշերդ. Այս :
- 2 Վարազած. Ոսկե դօծեալ :
- 3 Լալ ջաւահիր. Փայլուն ակունք :
- 4 Պուռ. Շուրթին :
- 5 Ծլվլացող. Քաղցրաձայն կարկացող :
- 6 Արմատ. Աղամանդ :
- 7 Չանադ. Ծնօտ :
- 8 Կիւրացաթին. Կլասպիտուն :
- 9 Ատալաթ. Արդարադատ :
- 10 Հաքիմ, ճառահան. Բժիշկ :
- 11 Եարալու. Վերաւոր :
- 12 Մահճամ. Սպեղանի :
- 13 Արզ. Գանդաւ. Իսկ այս տեղ կը նշանակէ խնդիրք, աղաչանք :

Միրզայի ծնողքն այնպէս կարծեցին թէ այս նամակն նորա վարպետէն գրուած է շուտով քաղաքն վերադառնալու համար, ուստի խօսք չբացին : Աւաղեան մեծապէս դո՛հ եղաւ նոցա այս լուսնեակն. որովհետեւ եթէ նամակի մասին հարցանէին, պէտք էր ակամայից ստիպեալ սուտ խօսէր, այսինքն այս նամակն վարպետէս եկած է, պէտք է ասեր :

Աւաղեանի այցելուք արդէն մեկնած էին իւր մօտէն, ժամանակն ուշ էր և անկողնիք պատրաստ էին :

— Գուք հանդատացէք, սիրելի ծնողք իմ, ինձ մի սպասէք, խնդրեմ, հանդատացէք. ես սոյն նամակի պատասխանն շուտով գրեմ և յետոյ ես ևս կը հանդիմ. — կ'ասէ Միրզայ, իւր ծնողքն կը քնայընէ և ճրագն իւր գէմն առնելով Աննային կը պատասխանէ .

Ո՛ր տեղից իմացար, Աննայ, իմ քաղաքից դալն,  
 Որ շուտով վաղեցիր, եկիր ձեր այն մեծ բաղն,  
 Թէպէտ սովորութիւնն փակեց մեր բերանն, մի պահեր դալն,  
 Ձիւնքի սէրն ու բնութիւն բացին մեր սրտից լեղու զալամն.  
 Սրանից վերջն ինձ համար սիրոյ բանալի, սրտի թաղանայ և ոսկի զալամ ես, Աննայ ջան :

Սիրելի նշանածս, ահա փոխադարձ քեզ կ'ասեմ որ,  
 Նոր օտայնագործութիւնդ եղիցի շնորհաւոր,  
 Կեապայ<sup>1</sup>, խալի, կարպետ և խորձ գործէ փառաւոր,  
 Նրանցով պատրաստէ հարսանեացդ համար բաժինք նշանաւոր.  
 Սրանից վերջն ինձ համար անման բաժինք և ճարտար ոստայնագործ ես, Աննայ ջան :

Օրհնուի, Աննայ, ոստանիդ ասպաթել, կոփիչ և թելատուն,  
 Ասպափայտն, առաջաթելն և կծիկներն թելոց նախշուն,  
 Օրհնուի քո շուլհակի դփին, ճոլլանք և մոքուհզն,  
 Քո արուեստից անպակաս լինին Աստուծոյ օրհնութիւնքն.  
 Քո ոստայն, կոփիչ, թելատու, դփի և մոքուհզն ինձ համար  
 Փռանդստանի տեաղկեա՛հ են, Աննայ ջան :

<sup>1</sup> Կեապայ, Գորգ :

Գու էլ ինձնից մի նեղանար, ես էլ քեզ մի բան ասեմ,  
 Թե՛ղուղ քաղաքում սիրուններ շատ և շատ տեսած եմ,  
 Բայց քեզ նման գեղեցիկ և սիրուն տեսած չեմ  
 Ճշմարիտ խօսիմ, երբ քո մօտից հեռացայ, դեռ քեզ կը մտածեմ.  
 Ինձ համար Աստուծոյ ձեռքից գեռ նո՛ր ստեղծուած Եւայ ես,  
 Աննայջան :

Ես քոյն զաբուլ արի, դու էլ իմն զաբուլ արա,  
 Ես էլ քեզ գովեմ՝ փոխադարձաբար, ո՛վ իմ՝ Աննայ,  
 Պօղ գուճաշ<sup>1</sup> չինարի<sup>2</sup>, մատներդ մոմի պատրիք ա,  
 Ունքերդ երկնային զալամով քաշած, թերթերունքդ սիրոյ թոր<sup>3</sup> ա,  
 Ինձ համար չինարի, լուսավառ մում, սուրբ սիրոյ թոր և որտորդ  
 ես, Աննայջան :

Կիւլիեալ թշերդ միխակ, շուշան, աչքերդ լուսին արեղակ ա,  
 Պոռոշներդ մեղր ու կարագ, լեղուգ ճարտարախօս թութակ ա,  
 Կեռեքներդ<sup>4</sup> Հինգ ու սատափ, խօսքդ շաքարի ծորակ ա,  
 Կուրծքդ դրախտ, դարուն ծաղկած, վարդ, մանուշակ ա.  
 Ինձ համար արեղակ, լուսին, թութակ, դրախտ և նոր բացուած  
 անուշահոտ վարդ մանուշակ ես, Աննայջան :

Գլուխդ խեղքի գանձարան, չարղաթդ սիրոյ պայտաղ<sup>5</sup> ա,  
 Ճակատդ ոսկի սինի<sup>6</sup>, ծամբդ սիմ ու շարպապ ա,  
 Սիրադ օթաղ, սերդ ճրագ, հողիդ սիրավառ փարվան<sup>7</sup> ա,  
 Զգուշացիր ճրագից թեւերդ չայրուին, սէր իմ՝ Աննայ.  
 Ինձ համար անման թանդարան, սիրոյ սրայտաղ և սիրավառ  
 փարվան ես, Աննայջան :

Թե՛ղուղ աշխարհք ունենայ հաղար Եւայ, իմն դու ես,

- 1 Գուճաշ. Բարակ, նուրբ :
- 2 Չինարի. Բարդի ծառն :
- 3 Թոր. Թուչուն որտալու գործի. (ուռկանաձև) :
- 4 Կեռեք. Ատամն :
- 5 Պայտաղ. Գրոշակ :
- 6 Սինի. Ափսէ :
- 7 Փարվան. ճրագի սիրահար թիթեուն :

Թե՛ղուղ ունենամ՝ բիւր առարկայ, սիրոյս առարկան միայն դու ես,  
 Թե՛ղուղ լինին միլեօն իշխան, սրախ իշխանն միայն դու ես,  
 Ահա գրեմ, իմացիր, զղացմանցս թաղուհին միայն դու ես.  
 Միրզայիդ սիրոյն, սրտին, կամաց իշխող թաղուհին, իշխանու-  
 հին և շահգատայ<sup>1</sup> սուլթանն դու ես, Աննայջան :

Հետեւեալ օրն Միրզայ 'ի Շուշի իւր վարպետի տունն կը գրտ-  
 նուէր. Պայտարապետի, Աւագի և Առաքելի տանց մէջ նշան-  
 տուքի պատրաստութիւնք կը տեսնուէին :



ԳԼՈՒԽ ԻԳ.

ՆՇԱՆՏՈՒՔ

Արդէն Միրզայի հայրն մի պարարտ ոչխար դնած, պատրաս-  
 տած էր, մայրն քաթայ, ձիւերես և լօշ հաց թխած էր, իսկ  
 վարպետն տանձ, ինձոր, մի գլուխ շաքար, մի կարմիր չարղաթ,  
 մի զոյգ կանաչ գաւակ (սաղրի) կօշիկ և մի զմրուխտ մատանի  
 պատրաստելով՝ Միրզայի հետ գիւղն զրկած էր, և ինքն ևս Միր-  
 զայէն երկու օր յետոյ գիւղն եկած էր :

Նախորդ օրն պայտարապետին կողմանէ Ձէլէպեանցի տունն  
 ազդարար ոմն յուղարկուած էր, իւր հաճութիւնն առնելու հա-  
 մար, որպէս զի հետեւեալ երեկոյին Միրզայի և Աննայի նշան-  
 տուքի հանդէսն կատարուի ըստ սովորութեան գիւղին : Պարոն Ա-  
 ռաքելն արդէն տունն լինելով հաճութիւն տուած էր : Հետե-  
 ւեալ երեկոյին ժամն տասին խոյն Աւագի տանէն Պարոն Առաքել  
 խնամու տունն յուղարկուեցաւ հնաւանդ սովորութեան համեմատ :

<sup>1</sup> Շահգատայ, Թագաւորազն :

Խոյի կուածոյ եղջիւրներէն կոթաւոր խնձորներով և անուշահոտ վարդերով զարդարուած շարաններ կախուած էին և կարդաւ զետեղուած ոսկեղօծ մոմերն կը վառուէին :

Ժամն տանն և երկուքին ուստայ Աւագն , պայտարապետն , Գասպարեան Մարտիրոսն և Միրզայի կնքահայր Բրուտեան Մկրտիչն Ձէլէպեանց տունն զնացին նշանաւորն կատարելու , երեք կուժ՝ զինուով , և վերոյիշեալ պատրաստութիւնքն երկու պղնձեայ մեծ ափսէներն կրող մարդիկներով : Առաքելի եղբայրն զիմաւորեց և պատուով ներս ընդունեց նորեկ Տիւրքերն , ուր բազմամ էին Տէր Արիստակէս քահանայն , Առաքելն , իւր հօրեղբայր Պետրոսն , կնքահայրն և մի քանի պատուաւոր շինականք :

— Բարով , հազար բարով , զալուսանիզ բարի եղիցի , խնամի Աւագ , խնամի Գրիգոր . — կանխեցին ներսիներն ամենեքեան ՚ի միասին . — հրամայեցէք , հրամայեցէք նստեցէք :

— Ա՛յ Աստուծոյ հազար բարին ձեզ , տէրտէր ջան , խնամի ջան , ձեր տեսութիւնն բարի եղիցի . — պատասխանելով նստան :

— Ի՞նչպէս էք , ուստայ Գրիգոր . — հարցուց քահանայն :

— Փանօք Աստուծոյ , տէրտէր ջան , շատ լաւ եմք Ձեր սուրբ աղօթիւք :

— Մեր Միրզան պայտարութիւնն լաւ սովորեց , թէ ոչ . կարծեմ թէ ինչպէս որ Բաղտասար Առաջնորդն ձեռն ընկած տուարած , որթարած , եղնարած և խողարած , և միայն «Խոնարհեցո և Ապրեցո» իմացող մարդիկ շատ անգամ բարեւարտութեամբ քահանայ կ'օրհնէր , և թող կը տար , նոյնպէս դու ևս ով որ ձեռքդ կ'անցնի , ուստայ կ'օրհնես և բաց կը թողուս :

— Տէրտէր ջան , Միրզան շատ շնորհալի էր և միանգամայն աշալուրջ . զինքն վարպետ օրհնել տուողն բոլոր պայտարաց վկայութիւնն է և ոչ ես : Եւ այժմ Միրզայ , համարեա՞ թէ , Պատարարու մէջ առաջին կարգի պայտար հուշակուած է :

— Խնամի Աւագ , ձեր գործն ի՞նչպէս է , յաջողակ է :

— Օրհնեալ է Աստուած , խնամի Առաքել :

1 Կոթ . Գինուոյ չափ է :

— Միրզայ առնն է , թէ քաղաքն զնայ :

— Քաղաքն զնայ :

Այսպէս զանազան նիւթոց վերայ խօսելէն փոքր ինչ յետոյ ընթրեաց սեղանն պատրաստուեցաւ նոյն իսկ խօսակցող անձանց սենեկի մէջ : Ներկայ անձանց ամենեցուն կենաց թաս խմելէն յետոյ խմեցին նաև փեսայցուի և հարսնացուի կենացն : Եւ ահա ընթրեաց վերջանալու մօտ Յովհաննէսն մի թիթեղեայ մաքուր ափսէիւ հարսնացուի նշանն , այսինքն մատանին , չարղաթն , կօշիկներն , որոց շուրջն լի էր մրդեղինօք , բերելով սեղանի վերայ դրաւ , յորոց կարդաւ ճաշակելով «Աստուած շնորհաւոր արասցէ՞» բառերով սենեակն թնդացուցին , և մի մի բաժակ զինի ևս խմելով վերջացուցին : Քահանայն նշանն օրհնելով ներս յուղարկեց և բազմականք թէյ խմելէն յետոյ խրաքանչիւր ոք իւր տունն դարձաւ :

Գիշերուան ժամն երեք ու կէսն է . Աննայ օրիորդն նշանի օրհնուած մատանին մասն դրած և չարղաթն զլիտոյն վերայ ձգած տեսնելով՝ հոգւով չափ ուրախ է , միայն թէ կը յաւէր , որ իւր սիրելի Միրզան նոյն միջոցին զիւզն չէր գտնուեր : Իսկ Պ. Առաքել շատ տրտում կ'երևի , իւր կնոջ մօտ կ'երթայ , ուր կը դանուի նաև իւր եղբայրն :

— Ինչո՞ւ տրտում էք , եղբայր , մեր խնամու կողմանէ եկած նշանաւորն պատրաստութիւնքն մեր յուսացածէն շատ և շատ աւելի էին զիւզին սովորութեան նկատմամբ :

— Ի՞մ արտմութիւնս պատրաստութեան համար չէ , այլ մեր փեսայի պայտար և աննշան մարդ լինելուն համար . — կը պատասխանէ Պ. Առաքել գովաւանկութեան շարժումներով և յատու լի ափսոսանքով :

— Եղբայր , եղբայր , միթէ մեք լոկ ազնուական անուամբ երջանիկութեան ծայրն հասած եմք . չէ՞ որ մեր պարտքն մինչև մեր պարանոյն հասած է և զրեթէ պարտուց ծովու մէջ խեղդուելու մօտ եմք : Գիշեր ցերեկ ազատութեան հնարք մտածելէն բնաւ հանդատութիւն չունիմք . այս համեմատութեամբ Աւագի աննշան ընտանիքն մեզմէ հազար անգամ երջանիկ են : Միրզայի արուես-

տաւոր համբաւն, անունն՝ մեր կասկածաւոր համբաւէն և անուանէն շատ և շատ հաստատուն դովական և պատուական են: Միթէ քո ընկերաց փեսայքն ողջ աղնուական ցեղերէ՞ են: Եթէ ինձ չես հաւատար, վաղն ճաշի ժամանակ խօսքն կարդի բերելով հարցուր. այն ժամանակ կ'իմանաս խօսքիս ճշմարտութիւնն:

Պ. Առաքել այլ ևս չխօսելով՝ նոյն արամութեամբ իւր սենեակն կը մեկնի քնանալու. Թաղուհի իւր տաղեր տուած պատասխանին վերայ գոհ լինելով՝ շնորհակալութիւն կը յայտնէ. իսկ Աննայ օրիորդն, որ այս առտնին խօսակցութեանց զաղտնի ունկնդիր էր, իւր սենեկէն ելնելով ներս կը մտնէ և իւր հօրեղբօր և մօր ձեռքերն համբուրելով կը կանգնի: Թաղուհի և Յովհաննէս օրիորդին այտից վերայ արտասուաց հետքեր և դիմաց վերայ արամութեանց ստուէրներ կը նշմարեն: Գլոխ մայրն առանձին միխթարելու նպատակաւ նոյն միջոցին բնաւ չխօսիր իւր դստեր հետ. իսկ Յովհաննէս չհանդուրժելով միխթարելու կը փութայ այսպիսի խօսքերով.

— Աննայ, աղնու զաւակս, քանի որ ես և մայրդ ողջ եմք, բնաւ մի հոգար և մի տրամիր: Ահա նշանածիդ յուզարկած չարզաթն գլխոյդ վերայ է և մատանին մատդ. փոխանակ ուրախանալու ինչո՞ւ կը տրամիս: Այս ի՞նչ է, աղջիկ, նոր չարղաթիդ տանոց վերայ արտասո՞րք թափած ես, որ այսպէս թրջուած են: Աննայ, դու երախայ ես, ի՞նչ ես: Չլինի՞ թէ հօրդ խօսքերն լսելով վշտայար և սրտիդ նեղութենէն լացիր: Հայրդ համուզեցի, այլ այսուհետեւ նա չէ կարող արդեւք լինել և ոչ քո սիրտն վշտացնելու խօսքեր խօսիլ. ամեն բան վերջացած է:

Օրիորդն այս խօսքերէն միխթարուելով՝ առանց խօսելու կրկին նոցա ձեռքերն կը համբուրէ. Յովհաննէս կը մեկնի ննջելու, ապահով լինելով, որ Աննայի տրտմութիւնքն և վիշտերն փարատուեցան: Իսկ թաղուհի տեսնելով, որ իւր աղջիկն ուրախ և զուարթ է, աւելորդ կը համարի այս մասին նորա հետ խօսիլ, այլ նորա ճակատն համբուրելով՝ հանդստանալ կը հրամայէ և ինքն ևս ննջելու կ'երթայ:

Օրիորդն երբ իւր սենեակն կը դառնայ և ճրագին լուսով մա-

տանւոյն վերայ երկու միացեալ սրտեր քանդակուած կը տեսնէ, կըսկսի խոր մտածել, իւր սիրտն և Միրզայի սիրտն կը տեսէ մատանոյն վերայ. «Հայր մեր» կ'ասէ և անկողին կը մտնէ քնանալու:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՅԱՏԱԿԱԳԻԾ

Մի կիրակէ առաւօտ ճաշէն յետոյ, երբ ամենայն ոք վստանալիք ելած էր, միայն Միրզայ և իւր վարպետն կը դանուէին տան մէջ առանձին: Վարպետն աշակերտին կը հարցանէ.

— Սիրելի զաւակս, ձեր դիմաց վերայ բաւական ժամանակէ ՚ի վեր մտատանջութիւն կը նշմարեմ, որք զիս կըստիպեն հայրաբար ձեզ հարցանել, նոցա շարժառիթն քննելով և վերհասու լինելով ելք դտնել: Արդէն մեր դորձքն յաջող կ'երթան, բոլոր արուեստաւորաց նկատմամբ մեր շահն ու վաստակն ամենէն աւելի է. և այս վեցամեայ շահած գրամովդ ձեր տան ամեն պակասութիւնքն և պիտոյքն հողալով ապահով դրեց մէջ դրած ես ծնողացդ կենցաղավարութեան վիճակն:

— Բաղմերախտ վարպետս, երեք պատճառ ունիմ, որք զիս մտատանջութեան մէջ ձգած են. հօրս մասնաւոր պարտուց վճարումն, ծնողացս և քեռիս տարեկան պարեն հողալն և իմ հարսանեացս ծախք պատրաստելն: Եւ միթէ փոքր պատճառք են սոքա. — կը պատասխանէ Միրզայ և զլուխն կը կախէ:

— Ա՛հ, Միրզայ, Միրզայ, շատ կը ցտիմ, որ ժամանակէն շատ կանուխ սկսած ես ընտանեկան ծանր մտահոգութեանց տակ ճնշուիլ: Արդէն պահ մի առաջ ասացի քեզ, որ տանդ պիտոյից վիճակն ապահոված ես, հօրդ պարտքն, ինչպէս ասացիք, մասնաւոր բան մի է, կարելի է որոշեալ ժամանակի վերածելով

հետ ղհետէ հատուցանել և հարսանեացո պատրաստութիւնն օր աւուր պատրաստել :

— Յաւօք սրտի ստիպուած եմ ճշմարիտն խօսիլ, արդէն մօրս շուայլ բնաւորութիւնն դիտէք . քանի նա անասագիտութեան մէջ ոչ չափ ունի և ոչ կշիռ, ոչ խնայողութիւն դիտէ և ոչ բաւականասիրութիւն, հետևապէս անկարելի է ինձ այսպիսի վիճակի մէջ հօրս պարտքն վճարել, տանս վիճակն ասպհոյվել և հարսանեացս ծախքն պատրաստել այժմէն : Եւ որովհետև այս գրութեան մէջ կը գտնուիմ, հարկաւ չեմ կարող անդղայ և անհօգ մնալ : Աւրեմն ես չմտածեմ, ո՞վ մտած է :

— Շատ ճշմարիտ են քո դիտողութիւնքն, սիրելի որդեակս . բայց շատ մտածելով ի՞նչ հնարք կարող ես գտնել, շատ հոգալով ի՞նչ գարման կարող ես տանիլ այդ դժուար ցաւոյ :

— Հնարք և գարման տանելու միջոցն ՚ի վաղուց պատրաստած եմ :

Ահա յատակագիրն : Յօտարութիւն պէտք է երթամ երեք տարի մնալու պայմանաւ :

— Յօտարութիւն, երեք տարի, — կը մտմուայ քթին տակէն վարպետն զարմացած . — այդ հասակի մէջ յօտարութիւն գնալ, կամաւ թշուառութեան դիմել և օտար մօր խորթ զրկաց կոյր զկուրայն ասպաստանիլ : Անկարելի բան, սիրելի որդեակ իմ, անկարելի է ինձ թողուլ զքեզ : Օտարութիւնն որքան որ հրապուրիչ ձևերով թևերն կը տարածէ օտարականներն իւր զրկաց մէջ սիրով ընդունելու, զգուելու և սնուցանելու և հաղար ու մէկ բարիք կը խոստանայ, այնու ամենայնիւ իւր սիրոյ մէջ թոյն կը նկատուի, հրապուրանաց մէջ դառնութիւն, բարեաց մէջ թշուառութիւն և զրկաց մէջ սոսկալի մահ : Յանկալի Հայաստանն, մեր սիրելի հայրենիքն աւերակ դարձնողն օտար զրկաց հրապուրիչ սէրն է . Հայաստանի զաւակունքն աշխարհիս չորս կողմերն ցրուող մեծ թշնամին՝ նորա առերևութապէս հեռուէն փայլող բարիքն են : Ասող, սիրելի Միրզայ, վարդին զեղեցիկ տեսքն և սքանչելի գոյնն հեռուէն չափազանց սրտազբաւ և հրապուրիչ են, բայց երբ մօտենաս ՚ի նմանէ մի հատ քաղելու, փուշերէն

խայթուելով ցաւ կըզղաս, և փոխանակ նորա տեսքն, զեղեցիկութիւնն և անուշահոտութիւնն վայելելու, խայթ, ցաւ և կսկիծ կը վայելես : Սիրելի զաւակս, վարդն և փուշն օրինակի համար միայն յառաջ կը բերեմ . օտարութիւնն վարդի փուշէն հաղար անդամ վատ է և դառն :

— Ազնիւ բարերարս, մեր մօր Հայաստանի զրկէն դուրս պէտք է չդնամ . Իկտիր պէտք է երթամ Ձեր անդրանիկ աշակերտ Գասպարին մօտ . ուր, յուսամ յԱստուած, առաջի տարւոյն մէջ հօրս պարտքն վճարել, երկրորդին մէջ մեր տան պիտոյքն հոգալ, իսկ երրորդին՝ հարսանեացս ծախքն :

— Միթէ այս տեղ մնալով չէ՞ք կարող այդ կարողադրեալ ժամանակն դործադրելով օգուտ քաղել :

— Ո՛չ . այս տեղ եթէ մնամ, աւուր շահած գրամս նոյն օր պէտք է ծախուի : Իսկ օտարութեան մէջ այնպէս չէ . տարիէ տարի պէտք է յուղարկեմ . եթէ Աստուած յաջողէ, այս ձևով նպատակիս կը հասնեմ և կարելի է դրամ ևս յետ ձգել իբրև մասնաւոր դումար ապագայի համար :

Վերջապէս վարպետն հաւանութիւն կը տայ և զՄիրզայ իւր ծնողաց մօտ կը յուղարկէ, որ երթայ նոցա օրհնութիւնն առնէ և ապա Շուշի գառնալով՝ այն տեղէն յիկտիր երթայ :



ԳԼՈՒԽ ԻԶ.

ԳԼՂՏՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Պայծառ գիշեր մի է, լուսինն տակաւին ելած չէ, միայն թէ աստեղք լայնածաւալ երկնից անհուն հեռաորութենէն պսպղուն կը փայլին : Արևմտեան կողմանէ կենսատու զեփիւռք կը փչեն, զիւղն մէջ համարեալ թէ ամենայն ոք քնացած է և ժամն չորս սէն հինգ կը սահի :

Աւագեան իւր անկողին մտած վայրկեանէն մինչև այս վայրկեանն՝ զԱննայ օրիորդն անբասիր միջոցաւ տեսնելու վերայ խորհած էր : Այս մասին գրեթէ մտածմանց ովկիանոսին մէջ քաջ լուրջորդի մէն մի ձևն և շարժմունքն 'ի գործ գնելով, իւր խորհրդոց մէջ որոշման կայան և կամ կուռան մի տակաւին գտած չէր : Գժբաղ- դարար իւր ծնողքն ևս մտայուզութեան պատճառաւ երբեմն երբեմն հազարով և արթնութեան շարժմունք անելով՝ նոյն զիշեր ուշ կ'քնանան : Աւագեան լաւ դիտէր ժամանակն գնահատել և 'ի նմանէ օգուտ քաղել առանց մանրերորդ կորուսանելու : Այն ինչ իւր ծնողաց առաջին և թանձր քունն կը գիտէ ուշադիր նկատմամբ, իւր անկողինէն թեթևակի դուրս կը թռչի քան թէ կ'ենէ, զգուշութեամբ դուռն առանց ձայնի կը բանայ և փակելով՝ իւր ընթացքն գէպ 'ի Ձէլէպեանց տունն ուղղելով ինքնին կ'ասէ .

— Անձամբ երթալէն պատուաւոր միջոց չկայ երբէք, ուր ոչ մեղք կը նշմարուի և ոչ դայթակղութիւն :

Միրզայ այսպէս խորհելով և ինքնին խօսելով սափրիչ Խորայէ- լի կալին միջէն անցած ժամանակ յանկարծ կանգ կ'առնու և վերստին ինքնին կ'ասէ .

— Արդէն փեսայութեամբ տարին մի քանի անգամ իւրեանց նշանա- ծի ծնողաց այցելութեան կ'երթան, թէ և ոչ յայտնապէս : Ետ տակաւին գնացած շունիմ, այժմ ևս պիտի չ'երթայի, եթէ յԵկ- տիր երթալու նպատակս չ'լինէր : Աշխարհք է, ո՞վ գիտէ, մահ կայ, մահտարածամ կայ : Գոնէ միանգամ Աննա տեսնեմ, զո- քանչիս ձեռքն համբուրեմ, մնաս բարեաւ ասեմ և այնպէս եր- թամ : Բայց ո՞հ, գեռ ամենամեծ դժուարութիւն մի կը զիմաւորէ ինձ, գեռ կասկածալի կարծիք մի կըստպառնայ ինձ մի հարուածով տապալել իմ յատակագիծս և բոլոր կարգադրութիւնքս . այս է, արդեօք նշանածս ևս պէտք է ընդունի՞ որոշումս, արդեօք համա- հաճ կը գտնուի՞ եռամեայ բաժանմանս, թէ ոչ : Ահա այս է բո- լոր դժուարութեանցս կեղրոնն : Բարէ, այս կէտն աւելի կը յու- սաբեկէ զիս . կ'երկնչիմ, որ ահաճութիւն ցոյց տայ ինձ այս մա- սին նշանածս, կամ բոլորովին արգիլէ զիս յօտարութիւն երթա- լէ : Այնուհետև աւելի դառն պէտք է լինի իմ վրձակս և ես

այս այցելութեամբս աւելի դժբաղդ պէտք է լինիմ, քան թէ երջանիկ :

Տասն վայրկեանի չափ այսպիսի մտատանջութեամբ վարանելէն զինի զինքն կը քաջալիբէ .

— Անշուշտ Աննայիս մայրն ինձ յօղնութիւն կը փութայ, իւր աղջիկն կը համոզէ, երթամ, երթամ ուրեմն զիշերն կ'անցանի . — ապա կը շարունակէ իւր քայլերն :

Թաղուհի սովորականէն առաջ երախայոց ընթրիքն տալով կը քնացընէ և իւր բնազգման թելադրութեամբ գողցէս Միրզայի գալուստն կը գուշակէ . ուստի շանց լակ և կեր տալով շնորջին մէջ կը փակէ : Թաղուհին արած այս նախապատրաստութիւնքն Աննայ օրիորդին տեսութենէն վրիպած չէին, միայն թէ պատ- ճառն իւր համար շատ մութ էր . զի նա Միրզայի գիւղն գալն տա- կաւին չէր իմացած և բնաւ չհամարձակեցաւ այս մասին հետա- քրքիր լինիլ և իւր մօրէննոյն պատրաստութեան պատճառն իմանալ :

Աննայ արդէն քնացած էր, իսկ Թաղուհի իւր անկողնոյ մէջ գեռ արթուն, ըստ որում իւր ենթադրութիւնքն զուգորդելով՝ հաղար ու մէկ տեսակ մտածմանց ենթարկած էր զինքն, որով և մտովին կ'ասէր .

— Արդեօք ի՞նչ կարելի է լինել խեղճ սղային տարածամ գալն :

Գրեթէ նոյն վայրկեանին Առաքելի տան դուռնահարն մեղմ ձայ- նիւ կը հնչի, անսովոր անձի զարկն արդէն յայտնի էր . Թաղու- հի մինչև գրան մօտ կը հասնի, դուռնահարն վերստին կը կրկնի առաջինէն փոքր ինչ տարբեր ձայնիւ, դուռնն կը բացուի, զար- նողն ներս կը մտնի իբրև գող դողահար : Եկողն Աւագեանն էր, որ լուսոյ շնորհիւ իւր զօրանչն ճանաչեց : Խոհեմ Թաղուհին իս- կոյն հասկացաւ Միրզայի անակնկալ գալստեան պատճառն, որ կ'ուզէ իւր նշանածն տեսնել, ուստի և երկիւղն փարատելու հա- մար կ'ասէ .

— Անկասկած ներս արի, զուակս, այրս և տագրօ ճանեա- թաղ գնացած են, իսկ իմ տաղերակին իւր հօր տունն է . քան- զի իւր հօրեղբայր Համբարձումն ծանր հիւանդ է :

Աւաղեան Աւաքելի, Յովհաննու և Նախշունի բացակայութիւնքն լսելով հոյի կ'առնու, և իւր զոքանչի ձեռքն համբուրելէն յետոյ կը նստի: Նոյն միջոցին Աննայ օրիորդի սենեկին գուռնն, որ մեծ սենեկին մէջ կը բացուէր, թեթև ձայնիւ կը ձուռայ, բայց չբացուիր: օրիորդն դրան բանալոյն տեղէն զՄիրզայ կը տեսնէ և սիրան թուռդ կ'եննէ:

Միրզայ իւր նպատակն իւր զոքանչին յայտնելէն զկնի, որ յօտարութիւն պէտք է երթայ, և նորա հաճութիւնն ընդունելէն զկնի, կը խնդրէ Աննան կոչել սակաւ ինչ տեսակցելու և վերջէն հրաժեշտն տալու համար: Թագուհի զԱննան կը կոչէ:

ՓԼՈՒՆԻ ԻՔ.

### ԹԱԳՈՒՀԻ, ՄԻՐԶԱՅ ԵՒ ԱՆՆԱՅ

Քանի մի վայրկեանէն յետոյ Աննայ օրիորդն պարզ և վայելուչ հագուած մեծ սենեակն կը մտնէ, ուր Միրզայ անհամբեր կըստպասէր: Աւաղեան նստած տեղէն կը կանգնի, երկուքն ևս սաստիկ ամօթխածութենէ և երկիւղէ վարանելով արձանացած կը մնան:

— Միրելի զաւակունք իմ, մի շփոթիք, մի վարանիք, թէև ձեր այս շփոթութիւնն և վարանմունքն մեծ գովութեան արժանի են, բայց այժմ տեղոյ, ժամանակի և պարագայից նկատմամբ ներելի է ձեզ միմեանց հետ խօսիլ:

Պատանին և օրիորդն շիկնելով զերար կ'ողջունեն, յորոց մին Թագուհւոյն աջ և միւսն ձախ կողմն կը նստին: Գովելի պատկառանքն և համեստ ամօթխածութիւնն այս երկու ամլոց զլուխներն իւրեանց կրծոց վերայ կը խոնարհեցընէ:

Արդէն Թագուհի գիտէր Միրզայի առաջարկեալ խնդիրն. մի-

այն Աննայ օրիորդն անհամբեր կըստպասէր նոյն խնդրոյ առաջարկութեան, որոյ ուշադրութիւնն դրաւ իւր երկու ժամէ 'ի վեր: Թէպէտ շատ ջանացած էր դրան ետեկն լսել Միրզայի խօսքերն, սակայն շատ ցած ձայնիւ խօսելոյն պատճառաւ երբէք իմացած չէր նորա առաջարկելի խնդիրն:

Միրզայ յանգուցն յուսոյ և երկիւղի մէջ կը տատանի և խնդիրն առաջարկելու համար կը տագնապի, թանկագին վայրկեանք կը սահին և վայրկեանական խոր լուսութիւն մի կը տիրապետէ: Պատանուոյն և օրիորդին կենաց շղթայի նշանաւոր օղակ կազմող այս վայրկեանքն 'ի բիւրաւոր վայրկեանից գողացեալ, փափաքելի, երջանկաւետ և հանդուցիչ վայրկեանք էին: Երկար բացակայութենէ յետոյ երբ այս գիշեր զինքեանս միմեանց մօտ առ մօտ նստած կը տեսնէին, երբ միմեանց վերայ մերթ ընդ մերթ քաղցր ակնարկ կը ձգէին, կը զմայլէին. վասն զի երկօրեան ևս հասակաւոր եղած էին: Միրզայ անաղան ուրեմն իւր յօտարութիւն երթալու գիտաւորութիւնն Աննային ևս յայտնեց: Աննայ շատ տրտմեցաւ, բայց երբ ամենն բացատրուեցաւ, ինքն ևս ծածկելով իւր արամութիւնն համաձայն գտնուեցաւ: Թագուհի իւր բերանին հետ իւր սիրան ևս բացաւ և սկսաւ ասել.

— Միրզայ, սիրելի զաւակս, յօտարութեան մէջ քո բռնած քարն՝ անդին ակն դառնայ. քո բռնած փայտն՝ արծաթ, և երկաթն՝ ոսկի: Գատարկ կ'երթաս, լիք վերագաւառաս, բարեաւ երթաս, ողջամբ գաս: Աստուած քեզ հետ, զաւակս, Աստուծոյ փէշն (ձործն) ամուր բռնէ և գնա:

Յետոյ Թագուհի ձիազեղ, մեղր ու կարագ և թէյ կը պատրաստէ, երեքեանն ևս 'ի միասին կ'ուտեն, կը խմեն, քաղցր զրոյցներ անելով և միմեանց վերայ գուրգուրալով:

## ԳԼՈՒԽ ԻԸ.

## ԱՆՋԱՏՄԱՆ ԺԱՄՆ ԳԼՈՒԽ Է

Միրզայ տեսնելով որ արշալոյսն բացուելու վերայ է, կ'աճապարէ շուտով բաժանուիլ, քանի որ զիւղացիք տակաւին քնացած են: Միրզայ և Աննայ զողալով միմեանց կը փարին, կ'արտասուեն առանց իօսելու. և ապա Միրզայ Թաղուհիին ձեռքն համբուրելով կը բաժանուի և խրեանց տուն կ'երթայ:

Արշալոյսն կը բացուի, ճանապարհի պատրաստութիւն կը տեսնեն Միրզայի համար, գաթայ, եփած հաւ, ձու և մի ամանով մեղր ու կարագ, ընտիր պանիր և մսապոխտ:

Միրզայ իւր հայրական տանն մէջ ևս իւր ծնողաց և քեռց խանդաղատանաց մէջ պահ մի մնալէն և նոցա հետ նախաճաշելէն զկնի, պայուսակն ձիոյն վերայ կը դնէ, ամենուն հետ լալով կը համբուրուի և նոցա սիրտն իւր սրտի հետ առնելով ձին կ'աշտանակէ: Ամենքն իւր ետեւէն կը նային և ինքն քանի մի անգամ թաց աչօք յետ նայելէն զկնի այգուց մէջ մանելով այլ ևս չերևիր: Երբ բոլորովին միայնակ կը մնայ, սրտի սաստիկ նեղութենէն կըսկսի տխուր եղանակաւ երգել Առաքելի այգույ մօտէն անցնելու ժամանակ, ուր կանուխ աճապարած էր Աննայ օրիորդն իւր Միրզային սիրելի դէմքն վերջին անգամ տեսնելու: Միրզայի ձայնն լսելով՝ Աննայ կ'երևի, և նորա երգի խրաքանչիւր տան ինքն ևս կը պատասխանէ:

Միրզայ. Մնաս բարեաւ, քաղցր Խրեանձախ,  
Իմ հարսնացուն քեզ աճապարէ,  
Մնաս բարեաւ, Աննաջան, ախ,  
Սէրս, հոգիս, դէ, քեզ աւանդ,  
Բաղդն ինձ շուտով Իկտիր կանչեց,  
Ո՛հ ինձ քեզնից վաղ բաժանեց:

Աննայ. Ողջոյն քեզ, հիւրընկալ Իկտիր  
Իմ փեսացուն քեզ աճապարէ,  
Երթաս բարեաւ, Միրզայ, միտ դէր,  
Աստուած վկայ մեր մէջ հաստատ,  
Սիրով, Սրտով միշտ քեզ հետ եմ,  
Ուր դու գնաս, ես էն տեղ եմ:

Միրզայ. Հայոց Արև, Հայոց Լուսին,  
Հայոց աստղեր, Հայոց երկին,  
Ձեզ եմ յանձնում իմ Նազելին,  
Իւր հայրենի բաղի միջին.  
Ախ, հայրենի սարեր ձորեր,  
Բա՛ երբ ես ձեզ կը տեսնեմ մին էլ:

Աննայ. Հայոց երկինք, Հայոց Աստուած,  
Պահ՛ եմ տամ քեզ իմ նշանած,  
Քեզ հետ տանես ձեռքից բռնած,  
Քեզ հետ բերես հարուստ, մեծցած.  
Ախ, ո՛վ կը գայ, աչքալոյս տայ,  
— Թէ ահա եկն փեսայդ Միրզայ:

Միրզայ. Վերջին անգամ, քաղցր հայրենիք,  
Մնաս բարեաւ, բաժանում եմ,  
Վերջին անգամ, էյ թթենիք,  
Աննաս ձեր տակ միայն թողնում եմ,  
Ձեր յիշատակն ինձ հետ կը տանեմ,  
Հոգիս կուսին հետ ձեզ կը թողնեմ:

Աննայ. Վերջին անգամ երթաս բարին,  
Ինձնից ողջոյն Մասիս սարին,  
Երբ դու հասնես Էջմիածին,  
Բարեխօս առ Լուսաւորչին,  
Շուտով անցնի երեք սարին,  
Բարեաւ գաունաս Մայիս ամսին:

Յանկապատին վերայէն Միրզայ և Աննայ կը փոխեն միմեանց հետ իւրեանց թաշկինակներն . որպէս զի երբ զերար յիշեն և լան , նոյն թաշկինակներով սրբեն իւրեանց արտասուքն : Յետոյ Միրզայ ձին կը մտորակէ , վախնալով մի գուցէ մարդ վերայ հասնի և տեսնէ , որ երկու նշանուած իրարու հետ կը խօսին :

— Ո՛վ , որչափ դառն է անջաման բաժակն . — կը կոչէ Աւագեան իւրովի , որ միայնակ կ'ուղևորէր : Այս մենաւորութիւնն , տխուր մտածմունքն , սրտի վշտացումն և սաստիկ երեակայութիւնն զինքն կը նեղեն , բայց արդէն 'ի Շուշի իւր վարպետի սան զբան մտեցած կը լինի : Միրզայ ձիէն կ'իջնէ , իւր վարպետին և բնատանեացն ևս իւր շնորհակալիքն կը յայտնէ . և որովհետև կարավանն արդէն ճանապարհ ելած էր , վարպետին և կնոջ ձեռքն կը համբուրէ և ձին կը հեծնէ :

Պայտարապետ Գրիգորն իւր հայրական խրատն այս համառօտ խօսքերով կ'աւարտէ .

— Վիրակէ օրերն ժամէ և պատարագէ յետ չմնաս , թէ ձեզ , թէ ծնողացդ և թէ մեզ համար աղօթես , ժիր աշխատէ , զոր ծիւղ արի կաց և խստամանդ հաստատ : Մաքուր ապրէ , չափաւորութիւն սիրէ , որ կարողանաս ծնողացդ օգնել և ապաղային մէջ հանդիստ ապրիլ :

ՊԼՈՒՆ ԻՓ.

ՄԻՐՁԱՅ ՏԻԳՐԱՆԻ ՀԵՏ ԿԱՐԱՎԱՆԻՆ ՄԻՋ

Միրզայ իւր ճանապարհորդութեան ընկեր կ'ունենայ Տիգրանն անուն մի երիտասարդ , որոյ հետ խիստ սերտ բարեկամութիւն կը կապէ և կըսկսին զանազան առարկայից վերայ խօսակցելով ճանապարհին ծանրութիւնն թեթևացրնել :

Առաջի բարեկամութիւնն այսպէս կը բացուի : Միրզայ կը հարցնէ .

— Կարելի՞ է շնորհել ինձ Ձեր անունն :

— Տիգրան է :

— Յորմէ՞ քաղաքէ էք , Տիգրան Աղայ :

— Թիփլիզեցի եմ , եղբայր Միրզայ , արդէն ձեր անունն վարպետէդ լսած եմ , բայց կ'աղաչեմ , որ այսուհետև այդ Աղայ բառն միւսանդամ չ'ասէք ինձ , զոր ամենեին չեմ սիրեր :

— Բայց ներեցէք ինձ ասել , որ մեր քաղաքին մէջ յաճախակի 'ի զործ կ'ածեն ոչ միայն Աղայ բառն , այլ և Բէյ , Խան և այլն :

— Ոչ միայն ձեր քաղաքին , այլ և ամեն տեղ կայ այս սովորութիւնն . շատ տեղ Աղայ , Բէյ , Խան կը կոչեն . շատ տեղ Պարան , Էֆէնդէ , Խախան , Տարու , Հանը՞ , Աղջիկ-Պարան : Բայց ըստ իս լու սովորութիւն չէ այս : Ամեն մարդ մկրտութեան անուն ունի , պէտք է այնպէս կոչել : Ուստի եթէ աւելի վայելուչ , աւելի յարգական և աւելի նուիրական անուն կ'ուզէք 'ի զործ դնել , ընտրեցէք Եղբայր բառն հասակակցաց համար , Հայր բառն՝ ծերոց համար , Բայրն՝ օրիորդաց կանանց համար , իսկ Մայրն՝ հասակաւոր և պառաւ կանանց համար , որք շատ և շատ վայելուչ , համեստ և բնական են , մինչդեռ միւսքն կեղծ ու պատիր բաներ կ'երևին :

Կարավանին երթալիք ճանապարհն զառ 'ի վեր դիրք մի ունէր և խոր ձորէ վազող զետակէն մերթ այս և մերթ այն կողմն օձապտոյտ կ'անցանէր : Չորոյն երկու կողմերէն շատ առուակներ սահելով զետակն կը թափուէին . ճանապարհին երկու կողմէն բարձր ծառոց տերևշատ ոստքն զերար զրկած՝ փառաւոր հովանի կազմած էին , այնպէս , մինչ զի , կարծես թէ , կարավանն բնական և անձեռադործ տաղավարի տակէն կը ճանապարհորդէր՝ ազատ 'ի ջերմութենէ արեգական : Օդն պարզ , արևն պայծառ , եղանակն բարեխառն և զուարճութիւնքն անթերի էին : Գարունն իւր անհամեմատ հրապուրանօք՝ աննկարագրելի զմայլմամբ լցած էր անցորդաց սրտերն ու հոգիներն , բիւրազան թուջուրք ձուռողելով , կանաչադոյն անրեք փոփոալով , բարձրահօս ջրվէժք շուշալով :

անուշաբոյր հովեր ծաղկանց վերայ գուրդուրալով: Հոգեղմայլ անուշահոտութիւնք սար ու ձոր բռնած էին: Իջևանին մօտ հասած էին:

Բեռներն վար կ'առնուն, գրաստներն և նծոյդներն ծաղկալի յարօտն կը քշեն, տեղ տեղ խարոյկներ կը վառուին, փայտեայ շամիրօք ոչխարամիսք կը խորովուին և ճանապարհորդք ընկերաւ ընկեր աստ և անդ բոլորակ կը նստին գալարադեղ խոտոց վերայ և նահապետական ձեռով մարտական ճաշ կ'անեն:

Մի ժամէն յետոյ կարավանն իւր ուղին կրկին կը շարունակէ և Տիրգրան Միրզային կը հարցանէ.

— Աղնիւ եղբայր Միրզայ, մեր Հայկազանց նահապետութեան, թագաւորութեան, նախարարութեան և զօրավարութեան վերայ ինչ տեղեկութիւն ունին:

— Մասնաւոր տեղեկութիւն ունիմ, եղբայր Տիրգրան, և այն համարեալ թէ հարեանցի և անհիմն են, ըստ որում բերանացի միայն լսած եմ: Մեր զիւղի և քաղաքի մէջ, դրեթէ, պատմութեանց հետևողք սակաւ են: Ես կը տեսնեմ, եղբայր Տիրգրան, որ Աստուած ձեզ շնորհք տուած է և ձեր խօսքերէն կ'երևի, որ դուք ուսեալ մարդ էք, շատ բան գիտէք, եթէ ինձ ևս պատմէք, շատ շնորհակալ պէտք է լինիմ ձեզմէ: Տակաւին ութ աւուր ճանապարհ ունիմ մինչև Երևան, ուր կ'ասէք թէ ձեզմէ պէտք է բաժանուիմ. — կը յարէ աշխուժի Աւագեան, — այս ութ աւուրց մէջ շատ բան կարող էք պատմել ինձ, եթէ կամենաք: Ձեր հազուատի ձեռն և մօրուաց կարճութենէն յայտնապէս կ'երևի, որ վարժապետ էք. այնպէս ընդունեցէք, որ ես ևս Ձեր աշակերտաց մին եմ. և իմացէք, որ Ձեր բարիքն բնաւ չեմ մոռանալ:

Տիրգրան Միրզայի փափաքն լցուցանելու համար կրօնի Հայոց պատմութեան զլխաւոր կտորներն կարգաւ պատմել: Երբ Քիրս լերին գաղաթն կը հասնին, Աւագեան կը կոչէ.

— Վարժապետ, կ'աղաչեմ, որ ներողամիտ լինիք ինձ, զի ստիպուած եմ պատմութեանդ թեւն առ ժամանակ մի ընդհատել: Ապա ձիէն իջնելով դէպ ՚ի Ղարաբաղ կը դառնայ, երեք ան-

գամ դետինն կը համբուրէ, կ'արտասուէ և վերջին անգամ «Մնաս բարեաւ Ղարաբաղ, մնաս բարեաւ իմ Վերան, իմ Հայրենիք» ասելով վերստին ձին կ'աշտանակէ. և ահա իւր սիրելի Հայրենիքն իւր աչաց տեսութենէն կ'աներևութանայ:

— Եղբայր Միրզայ, — զարմացած կը կոչէ Տիրգրան, — այս տեղ ինչո՞ւ համար երեք ծունր կրկնեցիր և երեք անգամ հօզն համբուրեցիր. միթէ այս տեղ սրբավայր մի է:

— Այո, այո, ինձ համար սրբավայր մի է այս լերին գաղաթն. միթէ հարկ է հարցանել. միթէ չգիտես ինչ նշանակութիւն ունի Հայրենեաց հօզն իւր դրկէն բաժանուող զգայուն որդոյ համար: Մարդոյ համար սուրբ է իւր Հայրենեաց հօզն ու ջուրն, սուրբ է սարն ու ձորն, գաշան և բլուրն: Եղբայր, եղբայր, այն որ քարասիրտն է, որ իւր հայրենի ծոցէն բաժանուած ժամանակ սիրտն չ'ընթաց, աղիքն չ'զարարին, աչաց լիճերն չ'լցուին արտասուօք և Հայրենեաց անմուտց յիշատակն իբրև անջնջելի կնիք չ'գրոշմուին նորա հօգոյ, մտաց և սրտի վերայ:

Միրզայի այս խօսքերու վերայ Տիրգրանի սիրտն կը շարժուի, արտասուքն կը ձորեն և սրտաշարժ ձայնիւ կը կոչէ.

— Միրզայ, աղնիւ ընկեր, ձեր հայրենասիրութեան վսեմ զգացումն տեսնելով սիրտս և հոյիս ուրախութեամբ լցան. չափազանց ուրախութենէս կը լամ: Երանի թէ մեր ազգի բոլոր գաւազակունքն ձեր հայրենասիրութեամբ վառուած լինէին: Բայց աւաղ, եղբայր Միրզայ, դեռ այսօր քանի՞ քանի հայազգի անձինք կան, որ Հայաստանի ծոցէն բաժանուելէն յետոյ, անմիջապէս կը մոռանան այն դրախտավայր երկիրն, որ զինքեանս սնուցած է իբրև մայր, կը մոռանան, այո, այն օդն, զոր իբրև կաթն ծծած են ՚ի մանկութենէ: Ո՛հ, կ'ուրանան այնպիսիք իւրեանց սիրելի ազգն, Հայրենիքն, հօզն և ջուրն. և օտար աստեղաց տակ կը թափառին, օտար քաղաքաց մէջ երկար ժամանակ կը դէղերին, մերթ անօթի, մերթ ծարաւ, երբեմն մերկ և երբեմն ցրտահար, իւրեանց հայրենեաց մէջ աչքն ճանապարհի, սիրտն կարօտ, հոգին վշտահար, միտքն մոլորած թողլով ոմանք հայրեր, ոմանք միամօր մայրեր, ոմանք խնամակարօտ զաւակներ, ոմանք կենակից

բնտանիք , ոմանք նոր պսակուած յառադաստի հարսներ և ոմանք սիրավառ նշանածներ : Բարէ՛ , աղնիւ Միրզայ , ցաօք սրտի ստիպուած եմ աւելի մեծն ասել , ոմանք ևս կ'ուրանան մեր նախանձելի կրօնն , Առաքելական Եկեղեցին և սքանչելի արարողութիւնքն : Ինչպէս որ ճրագի սիրահար անմիա թիթեօն միայն լուսոյ արտաքին սրտագրաւ գեղեցկութեան զարնուելով և նորա ծախիչ և մահատու վտանգն չնշմարելով՝ կուրօրէն մեծ բաղձանքով դէպ 'ի լոյսն կը վազեն և այրուելով կ'ոչնչանան , նմանապէս օտարամոլութեան սիրահար Հայք կուրօրէն մեծ բաղձանքով խորթ մարց գիրկն կը վազեն : Նոցա արաաքին ճոխութեանց և շքեղութեանց զարնուելով՝ ամենայն սիրով կը փարին , նոցա հրապուրիչ շողբորթութենէ անսպառ դանձ և անսղիւտ երջանկութիւն գտածի պէս կըզմայլին : Անկարող կը լինին թափանցել և տեսնել այն տարափոխիկ և համաճարակ ախսն , որ յորդոց յորդիս փոխանցելով կը ճարակէ Հայութիւնն : Ա՛ր մէկն ասեմ , Միրզայ , աւելի լաւ է ուրիշ բանի վերայ խօսիլ : Աւրիշ անգամ այս կողմէն ճանապարհորդած էք , եղբայր Միրզայ :

— Ամենեին ո՛չ :

— Ա՛վ , ի՛նչ գեղեցիկ տեսարան բացած են մեղ համար Չանկեազիւրի , Ղափանի և Պեարկիւշատի սքանչելի գիրքն : Տես ահա պատմեմ քեզ : Արևմտեան կողմն երեցած սարն , որ հարաւէն հիւսիս ձգուած է , Սալաթիւն կ'անուանի . իսկ նորա ծայրէն սկսեալ և արևելեան հարաւ երկարացեալն՝ Տաթևու սար , որոյ ստորոտն կ'երևի նոյն իսկ Տաթևայոյն գեղեցկաշէն վանքն : Տաթևու սարին արևելեան կողմն Ղափան և Պեարկիւշատ գաւառներն են , որոյ բնակիչք մեծ մասամբ հայ են : Իսկ վանքին մօտ խոր ձորէն վազող ջուրն Տաթևու գետ կը կոչուի , որ մումուալով , սահելով Չապուղ գետոյն կը խառնուի և նորա հետ միանալով Երասխ մեծ գետն կը թափին : Հիւսիսային կողմն երևեալ լեռինք մեծ մասամբ Թիւրքմանաց ամարանոցն են : Արևելեան հարաւ տեսնուած խիտ առ խիտ վաղեմի անտառաց մէջ Ալիկանլու կոչուած աղզն կը բնակի , հինգ տուն այս տեղ , վեց տուն այն քեղ , երեք տուն մի ծառի տակ , երկուքն միւս : Համարեալ թէ

առ հասարակ գող են . և ահա այս պատճառաւ է , որ տուն տուն առանձնանալով ազատօրէն գողութիւն կ'անեն : Եւ եթէ պատահի այնպիսի օր , յորում արտաքուստ գողօն չ'գտնեն , նոյն օրն կամ դիշերն չեն հանդուրժիլ առանց յափշտակութեան անցուցանել , այլ 'ի միմեանց կը գողանան : Ահա այս է չար ունակութեան յատկութիւնն : Այս տեղէն սկսեալ մինչև Տաթևու գետն Չանկեազիւրի գաւառ կը կոչուի , որոյ բնակիչք նոյնպէս մեծամասնութեամբ Հայ են և խիտ աշխատասէր ու գործօնեայ անձինք առ հասարակ թէ արք և թէ կանայք :

— Հատ շնորհակալ եմ , եղբայր Տիգրան , որ բոլոր տեղերն յականէ յանուանէ ինձ ներկայացիք , ուստի եթէ կարելի է , դարձեալ Հայոց պատմութեան թեւն շարունակեցէք :

Տիգրան կը շարունակէ պատմութիւնն , և այսպէս քաղցր պատմութեամբ և զրոյցով ճանապարհին երկայնութիւնն սպառելով հին Նախիջևան կը հասնին , ուր պատմութիւնն ևս կ'աւարտի :

Աւագեան գողցէս Հայոց քաջաց հետ կը քաջանայ , վշտակրաց հետ կը վշտանայ , արիացելոց հետ կ'արիանայ , վատաց դէմ կը սրտմտի , ուրացողաց դէմ կը զայրանայ , սուրբ նախանձով վառելոց հետ սուրբ նախանձով կը վառի և փառաստիչ , օտարամոլ , հայասեաց դէմ կը բարկանայ : Կարավանն Նախիջևանու ընդարձակ դաշտն կը հասնի և Արարատ կամ Մասիս սարն կ'երևի :

— 288 —  
ՊԼՈՒՍ Ա .

Միրզայի սիրան արդէն Հայոց պատմութեան անցքերէն խոր կերպիւ շարժուած էր . երբ Մասիս սարն ևս կը տեսնէ կիսով չափ սև ամպով ծածկուած , բոլորովին կը յուզուի և կ'այլալի :

Արդէն ասացինք թէ Միրզայ հասարակ կարգալ և գրել գիտէր, բայց սիրան փափուկ էր և անարատ, և ասես թէ բանաստեղծութեան աւիւն կը կրէր, ինչպէս յատուկ է Ղարաբաղու բնակչաց մեծ մասին: Մասիսի տխուր տեսքն Աւագեանի վերայ մեծ տպաւորութիւն կ'անէ. ուստի երբ կարավանն կ'իջևանի, ինքն կըսկսի մոմուալով երգ շինել Մասիսի վերայ: Միրզայ Ղարաբաղու զաւակ էր, և ինչպէս ասացինք Ղարաբաղ տեսակ մի երգոց և խաղոց երկիր է: Կարգացող, չ'կարգացող ամենքն ևս երգ հանելու սէր ունին: Միրզայ, որ առ վայր մի առանձնացած էր, Տիգրանի մօտ կը դառնայ և հետեւեալ երգն, որ մի կողմէն մոմուալով և միւս կողմէն թղթի վերայ խաղիկաձ էր, Տիգրանին կը սայ կարգալու: Տիգրան շատ կ'ուրախանայ այս պարզ շինականի զգացման վերայ և ինքն ևս Մասիսի բերանէն Միրզային կը պատասխանէ:

## ՄԻՐՁԱՅ ԱՌ ՄԱՍԻՍ

Ո՛վ Մասիս, Մասիս, դու ի՞նչի էդպէս  
Սիպտակ<sup>1</sup> գլուխդ սև քողով ծածկել ես,  
Սգաւոր կնկան<sup>2</sup> նման սուգ նստած  
Գիշեր ցերեկ անմխիթար լալիս ես:  
Ի՞նչի էդքան ո՛հ, գոռու մս ես, գոչում,  
Լալով, ողջալով աշխարհ խրոովում,  
Դարերով աչացդ լոյսըն մըթացնում,  
Հարսն, մաղաթ<sup>3</sup> միշտ էդ ո՛ւմ ես կանչում:  
Փա՛ռք Աստուծոյ, Դրախտ ունիս ծոցումդ,  
Նոյեան տապանն էդ բարձր, ծեր գլխումդ,  
Էջմիածինն աջ, Իւջքիլիսէն ձախումդ,  
Բարթողիմէոս, Թաղէոս կրունակումդ:

<sup>1</sup> Սիպտակ. Սպիտակ:

<sup>2</sup> Կնկան. Կնոջ:

<sup>3</sup> Հարսն, մաղաթ. Յողնութիւն հասէք, ո՛վ Աստուածասէրք:

Արաղած, Սեպուհ, Սիփան վեհ սարերն  
Պատած են քո ամեն կողմերն,  
Եփրատ, Տիգրիս, Փիսոմիլ, Արաքս դետերն  
Ողողում են քո աննման հողերն:

Գեռ շէն են դիւզ ու քաղաքներդ,  
Սուրբ աթոռներդ, պայծառ վանքերդ,  
Արթուն հայրապետք, ժիր վարդապետներդ,  
Գեռ մայրենի գրկում զաւակ ու թոռներդ:

Էլ ի՞նչ է քո ցաւն, թագուհի Մասիս,  
Հերիք էդքան լաս, սղաս ու կոծիս,  
Գէ՛ արի իմ սիրտըն մի կոտրի:  
Սև շորերդ փոխիր, որ դէմքդ ծիծաղի:

Չմեռն անցաւ, Մասիս, Մարտն հետը,  
Մայիսն եկն՝ կարմիր վարդն հետը,  
Մարդ, անասուն ողջ ուրախ են,  
Ի՞նչի քո դէմքն միայն տխուր են:

Իմ քաջ Մասիս, զարդ Հայաստանի,  
Արի քեզ մատաղ, էլ դարտ<sup>1</sup> մի անի,  
Աստուած գթած է, ողորմութիւն կ'անի,  
Էս յուսով կ'ապրի Միրզայ պատանի:

## ՄԱՍԻՍ ԱՌ ՄԻՐՁԱՅ

Գնա՛, անշարժ թող, ազնիւ պատանեակ,  
Քո Մասիսի սև քնարն ողբերդակ,  
Մի շարժեր սրտիս սպաւոր թելերն,  
Որպէս զի չը լսես տխուր եղանակ.  
Էլ քո Արարատ ի՞նչպէս սուգ չ'անի,  
Երբ իւր Հայաստան էս հալում<sup>2</sup> տեսնի:  
Ա՛լս, Միրզայ, Միրզայ, սիրուն պատանի,

<sup>1</sup> Դարտ. Հող. ցաւ:

<sup>2</sup> Հալում. Վիճակի մէջ:

Մուսայք երգարան խեղճ Հայաստանի,  
Ցաւերս բիւրաւոր, վշտերս դարաւոր,  
Այրի թագուհիս մայր Հայաստանի .

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,  
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի :

Ո՛ւր է իմ թագըն, ո՛ւր իմ դաւազան :  
Ո՛ւր իմ թագաւորք, ո՛ւր գահ անասան,  
Ո՛ւր որդիք, թոռուք, ո՛ւր իմ քաջազունք,  
Ո՛ւր իմ ծիրանի, զարդեր զանազան .

Էլ քո Արարատ ինչպէս կոծ չ'անի,  
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի :

Խողեր պղծեցին իմ ծոցի Գրախար,  
Օտարք քաղեցին Պարտիզիս վարչը,  
Ա՛խ, վարդի կարօտ պիւլպիւլ մնացի,  
Նենգեցին դրացիքս, մոռացաւ զիս բաղըլը .  
Էլ քո Արարատ ինչպէս կոծ չ'անի,  
Երբ իբր խեղճ պիւլպիւլ անվարդ կ'այրի :

Սեպուհ, Արադած, Սիփան վեհ սարերն  
Են իմ արիւնոտ թշուառ կողերն,  
Եփրատ, Տիգրիս, փիտոն, Արաքս գետերն  
Են աչքիցս վազող պղտոր ջուրերն .

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,  
Երբ իւր շրջապատն էս հալում տեսնի :

Է՛ս փառքն ունէին զիւղ ու քաղաքներս,  
Սուրբ Աթոռներս, անման վանքերս,  
Է՛սպէս Հայրապետք, է՛սպէս վարդապետք,  
Է՛սպէս ցիր ու ցան զառակ ու թոռներս .

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,  
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի :

Ես մե՛ծ վէրք ունիմ վեց հարիւր տարուան,  
Որ միշտ մնում են անբոյժ, անդարման,  
Սևս ինչպէս փոխեմ, սիրուն Միրզայջան,  
Առանց իմ սրտի ներքին խնդութեան .

Էլ քո խեղճ Մասիս ինչպէս ծիծաղի,  
Մինչ անբուժելի շատ վէրքեր ունի :

Իմ Մայիսն անցաւ վարդ, միխակն հետը,  
Չիւն, ձմեռ եկին մշտատե Մարան հետը,  
Փախան լալաղին իմ անտէր թոռներ,  
Իմ սիրան էլ տարան, ա՛խ, իրանց հետը .  
Էլ քո խեղճ Մասիս ինչպէս ծիծաղի,  
Մինչդեռ իւր թոռներն թշուառ կը տեսնի :

Ո՛ւր իմ Հայկազուն քաջայաղթ արքայք,  
Ո՛ւր Չարմայր, Տիգրան, Հայկ և Արմենակ,  
Ո՛ւր Խոսրով, Տրդատ, ո՛ւր Վաչէ, Արշակ,  
Ո՛ւր Վահագն, Գաղիկ և ո՛ւր Վաղարշակ .

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,  
Երբ իւր Հայաստան անտէր կը տեսնի :

Ո՛ւր իմ զօրավարք յաղթող ախոյեան,  
Ո՛ւր Վարդան, Տաճատ վեհ Մամիկոնեան,  
Ո՛ւր Խորեն, Մուշեղ, Արաակ, Հմայեակ,  
Ո՛ւր Սուրէն, Սմբատ և հուժկուն Վահան .

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,  
Երբ իւր զօրավարք ննջած կը տեսնի :

Ո՛հ, կար ժամանակ իմ մեծ Տէրութեան,  
Որով սարսում էին Տէրութիւնք համայն,  
(«Չայն տուք դնգին Ասքանաղեան,  
Թագաւորութեանն Արարատեան») <sup>1</sup>

Գոչում էր յերկնից բարձր ձայն Աստուծոյ,  
Մահ սպառնալով ազգին Տիտանեան .

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,  
Երբ Հայկայ երկիրն անտէր կը տեսնի :

Ո՛չ որ չէ կարող խմել իմ բաժակ,  
Բանդի դառն է յոյժ զերթ լեզի խառնակ,  
Ո՛չ որ չէ կարող սոկալ իմ ցաւոց :

<sup>1</sup> Երեմ. ԾԸ ԳԼ 27 Հատար :

Սոսկում կը նիւթէ նոցայն խիստ ճաշակ .  
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,  
 Որ ցաւոց լեղի մրուրքն կը քամի :  
 Ի՞նչ են , Միրզայ , վէրք , ցաւք , կսկիծք Յովբայ ,  
 Անթիւ , անսահման ցաւոց մօտ Մասսայ ,  
 Յովբ փոքր ինչ յետոյ կորուսածն դտաւ ,  
 Իսկ իմն յախտեան անդիւտ կը մնայ .  
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,  
 Երբ էսպէս անդիւտ մեծ կորուստ ունի :  
 Բարէ՛ , ինչ են ողբ , սուգ Երեմիայ ,  
 Անբաւ ողբոց մօտ խեղճ Արարատայ ,  
 Ի՞նչ կարճ գերութիւն զաւակաց Յուդայ ,  
 Անվերջ գերութեանց մօտ թռանց Հայկայ .  
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,  
 Երբ իւր զաւակներ միշտ գերի տեսնի :  
 Վասն զի ազատիչք Հըրէից ազգին  
 Իրանց հետ պատրաստ , անբաժան կային ,  
 Մովսէս իբր աստուած Փարաւոնի մօտ ,  
 Եսթեր թաղուհին Արտաշիսի մօտ ,  
 Սուրբ Եղեկիա Տաճարին միջում  
 Եւ մեծ Գանիէլ Բաղտասարի մօտ :  
 Իսկ մատնիչք իբր ցեց անբաժան յազգիս ,  
 Բարէ՛ , Գազկայ մօտ լըրք վեսան Սարգիս ,  
 Սուրբ Սահակի մօտ չար երէցն Սիւրմակ ,  
 Քաջ Վարդանի մօտ Սիւնին Վասակ ,  
 Մեծն Ներսիսի մօտ Պապ թունաւորիչ ,  
 Վեհ Սմբատի մօտ նենդող Մեհրոթան ,  
 Աշտարակեցոյն մօտ Գիբսաս զաւաճան .  
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,  
 Երբ իւր ծոցում իժ օձեր կը տեսնի :  
 Չորս անգամ մեռաւ նենդ մարդոց ձեռօք ,  
 Չորս անգամ յարեաւ քաջ անձանց ձեռօք ,  
 Հզօր Տէրութիւնս , անխ , հողին փշեց

Վերջին անգամ , ո՛հ , վատ մարդոց ձեռօք .  
 Էլ քո Արարատ ինչպէս չի կոծի ,  
 Երբ իւր Տէրութեան թշուառ մահն տեսնի :  
 Երբ իմ զաւակներ օտար հողերում  
 Մասիս , Հայաստան , կանչում , անխ քաշում  
 Աչքերն պղտորում , սրտերն խորովում ,  
 Չեռքերն խաչ անում , հողիքն աւանդում .  
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,  
 Երբ իւր զաւակներ էս հայում տեսնի :  
 Բայց , Միրզայ , երբ Աստուած ողորմի ,  
 Եւ իմ նախնի փառք ու պատիւ նորոգի ,  
 Ա՛հ էն ժամանակ քո Մասիս սարըն  
 Մեծ ուրախութեամբ սեւերն կը փոխի .  
 Էլ քո Արարատ միթէ սո՛գ կ'անի ,  
 Երբ իւր Հայաստան նորոգուած տեսնի :

## ԳԼՈՒԽ ԼԱ.

## ՄԻԲԶԱՅ ԲԱԳՏԻՆԱՆՅ ՄՕՏ ԻՍՏԻՒ ՄԷՔ.

Միրզայ Տիգրան վարժապետի հետ մինչև Երևան կը ճանապարհորդէ , ուր այս ազնիւ մարդէն լալով բաժանուելով կը դիմէ յիկտիր և ուղղակի Բաղտիեանց պայտար Գասպարի խանութն կ'երթայ , և ուր իւր հետ բերած նամակներն Բաղտիեանցին կը տայ : Գասպար նամակներն կ'առնու ճանապարհորդէն , կը հասկանայ , որ իւր երկրէն է , որում երկար ժամանակէ ՚ի վեր կըսպասէր : Նամակաց մին կը կարդայ և կը տեսնէ , որ իւր վարպետ Գրիգորէն յանձնարարական մի է Աւագեանի համար : Այս նամակն ծալելէն և իւր պահարանի մէջ դնելէն յետոյ , միւս նա-

մակի կնքամոմն կոտրելով կը բանայ և կը տեսնէ, որ իւր փոքր եղբորէն է, զոր կարդալով շատ կ'ուրախանայ: Գասպար իւր աշակերտին կը հրամայէ թէյ պատրաստել և ինքն կըսկսի Միրզայի հետ խօսիլ:

— Ձեր անակնկալ դալուսան մեծ ուրախութիւն պատճառեց ինձ, Միրզայ, Նախահնամութիւնն զՁեզ ինձ համար թե և թիկունք յուղարկեց: Մեր գործն Ձեր յուսացածէն աւելի յաջողակ է. Աստուծով մի քանի ամիսէն յետոյ հօրդ պարտքերն վճարած կը լինիս, նաև ծնողացի համար ևս մտխելու մասնաւոր դամար մի կարելի է յուղարկել: Այս վայրկենէն Ձեզ կ'իմացնեմ, ազնիւ Միրզայ, խանութն ամբողջ Ձերն է, որքան կ'ուզէք, աշխատեցէք: Ձեր համբաւն թէև արդէն լսած էի, բայց մեր վարպետն ևս զբած է և մեծ գովութեամբ կը խօսի Ձեր վերայ: Պայտից և բեկեպաց ծախքն վճարելէն յետոյ, ամեն արդիւնք հաւասար բաժին կ'անենք մեր մէջ:

Միրզայ խորին շնորհակալութիւն կը մատուցանէ Գասպարին և նորա խնդրանօք կըսկսի իւր ճանապարհորդութիւնն համառօտիւ պատմել:

— Փոռնակօթի և հին Նախիջևանի վերայ եկինք, ուստայ Գասպար, Թիփլիզեցի լաւ ուսեալ ընկեր մի ունէի, որ մեր քաղաքէն մինչև Երևան զիս շատ հանդիստ և անվնաս բերաւ, ճանապարհին շարունակ լաւ պատմութիւններ անելով: Զիս այս կողմն ճանապարհի դրաւ և ինքն Երևանու մէջ մնաց: Երևանէն կառքով Սուրբ Էջմիածին եկի, ուր Ս. Հռիփսիմէ, Հողակաթ և Գայիանէ կուսանաց վանուց և Սուրբ Էջմիածնին ուխտ արի: Ղարաբաղ գնացող կար նամակներ դրեցի ծնողացս և վարպետիս (այս տեղ Միրզայ ամաչելէն ոչ իւր նշանածին գրած նամակն կը յիշէ և ոչ նորա անունն): Շատ կը փափաքէի մեր Սրբազան Աթողիկոսն (Մատթէոս) տեսնել, նորա օրհնութիւնն վայելել և ապա մեկնիլ Եջմիածինէն. բայց անկարելի եղաւ. զի քանիցս գնացի, Աեհարանի սեմին վերայ արգիլեցայ Նորին Սրբազանութեան սպասաւորներէն. «Փոքր ինչ տկարութիւն ունի Աեհարան, մարդ չի ընդունում» ասելով միշտ զիս յետ կը դար-

ձընէին: Աերջապէս առանց տեսնելու և օրհնութիւնն վայելելու ակամայից մեկնեցայ մի վարձաւոր ջորեպանի հետ, Սև ջուրէն անցանք, Մարգար գիւղի մէջ իջնելով ճաշեցինք և հասինք այս տեղ, տեսնելով Նրասին և մեր Հայաստանի սիրուն տեղիքն:

Յետոյ Գասպարին զանազան հարցմանց, որ իւր ընտանեաց և քաղաքին վիճակին կը վերաբերէր, կը պատասխանէ և ընթրիքն անելէն վերջն Միրզայ կը քնանայ հանդստանալու, վասն զի ճանապարհին շատ յոգնած էր:

ԳՂՈՒՆ ԼՔ.

ՍՊԱՍԵՆԱԼ ՆԱՄԱԿՆԵՐ

Աննայ օրիորդն իւր սիրելի նշանածին մեկնելէն յետոյ լի օրերն ուստայնագործութեան արուեստն կատարելագործելու կըզբաղէր մեծ եռանդեամբ, իսկ կիւրակէ օրերն անային մանր գործերն լրացնելէն յետոյ իւրեանց այգին կ'իջնէր: Ըստ որում նոյն այգւոյ մէն մի ծառերն, ծաղիկներն և դիմացի հորիզոնն իւր մտաց մէջ Աւայեանի քաղցր յիշատակներն կը զարթուցանէին: Օրիորդն Միրզայի ման եկած տեղիքն ման գալով, նստած տեղիքն նստելով, վարդ քաղած վարդենեաց թուփերէն վարդ քաղելով կարծես թէ կը մխիթարուէր:

Միրզայի մեկնելէն համարեալ թէ մի և կէս ամիս անցած էր, յորմէ բնաւ նամակ ստացած չէին ոչ օրիորդն և ոչ նորա ծնողքն: Մի կիւրակէ աուր կէսօրէն վերջն Աննայ ըստ սովորութեան այգին իջած էր, բայց նոյն օրն սովորականէն շատ աւելի տրտում կ'երևէր: Յամրաքայլ կը ճեմէր նա, բայց մեղամաղձութիւնն երթալով կը սաստկանայր և իւր դիմաց կուսական փայլունութիւնն տրտմութեան անպերով կը մթազնէր:

— Ա՛՛՛՛, վեց կիրակիներ անցան, — յանկարծ կանգ առնելով և գլուխն ցաւագին շարժմամբ կը կոչէ ինքնին —, այո՛ վեց կիրակիներ անցան, սակայն դեռ սիրելի նշանածէս նամակ մի չըստացայ : Նա խոստացաւ ինձ նամակ դրել մտած քաղաքներէն : Արդեօք սիրելի Միրզայս հիւանդացա՛ւ և մի գիւղի մէջ պառկեցա՛ւ, արդեօք գողոց և աւազակաց հանդիպելով վերաւորեցա՛ւ և իւր զգեստներէն մերկացա՛ւ, արդեօք զինքն պաշտպանելու համար հրացանն կռուի մէջ աւազակաց կողմն ուղղելով և նոցա հրացանի գնդակէն զարնուելով, ընկերներն զինքն միայնակ թողլով փախան և ինքն ամայի անապատի մէջ անխնամ մնալով արիւնաքամ ընկա՛ւ և իմ անունս յաճախ կրկնելով մեռա՛ւ. անտէր և անտերունջ : Ա՛՛՛՛, ինչ սև սև խորհուրդներ կը պաշարեն միտքս ու հոյիս :

Նոյն վայրկենին Աւագեանի վերջին անգամ աներևոյթ եղած հորիզոնէն մի կաշաղակ թուած եկն և օրիորդին դիմացի ծառին վերայ իջնելով՝ սկսաւ շարունակ կղկղալ : Աննայ իւր սիրուն կուրծքին վերայ տրամութենէ ծռուած գլուխն բարձրացուց կաշաղակն գիտելու, աւետաբեր՝ մի սեսաւ իւր կարմիր լաշակին զանդրուկէն՝ իւր սրտի վերայ կախուած :

— Ա՛՛՛՛, որչափ բարի ես, Արարիչ իմ Աստուած, — կոչեց նա զգածուած —, գոհանամ զքէն միշտ և հանապօք, որ այս աւետաբեր հրաւիրակներն յուղարկեցիր իմ սև սև խորհուրդներս փարատելու և իմ ակարութիւնս յանդիմանելու քաղցր զթութեամբդ. ըստ որում երկուքն ևս մի և նոյն բանն կ'աւետեն ինձ. այսինքն այսօր սիրելի Միրզայէս նամակ պէտք է ստանամ :

Մինչդեռ օրիորդն երախտագիտութեամբ լի այս բառերն կ'արտասանէր, մի ձիաւոր երեցաւ վերոյիջեալ հորիզոնէն. եկողն

1 Ղարաբաղացի, Թիֆլիզցի և Ղափանու քառասուց մէջ նահապետական ասանդուութեան մի է այս, երբ կաղաղակն մի տան կամ մի մարդոց հանգրեւոյն կարկաչէ, հիւրէ մի քաղաքեան անշուշտ նշանն է : Իսկ երբ ասանդուութեան (արքայի սպային փոքր տեսակն է) երդրիկ կամ մի անջի գլուխէն կախուի, բարի լուր աստուծոյն նշանն է :

Բաղտասարեանց Սահակն էր, որ զԱննայ իւրեանց այգոյ մէջ միայնակ տեսնելով ձին մտրակեց և անմիջապէս այգին մտնելով ուրախութեամբ կոչեց .

— Բարև քեզ, Աննայ, աչքդ լոյս եղիցի, այսօր նշանածէ՞գ մի նամակ ստացայ :

— Առ իս ուղղեալ նամակ չկա՞ր Ձեր գրոյն մէջ, փեսայ, նա ինձ խոստացած է Ձեր նամակաց միջոցաւ ինձ ևս նամակ յղել :

— Ի՞նչպէս չէ, աւսիկ նայէ՛, դեռ կնիքն շարժած չեմ :

Օրիորդն առաւ նամակն ուրախ և զուարթ, նորա կնքամոմն կոտրեց և Սահակին երկարցնելով ասաց .

— Ա՛՛՛ և կարգա՛, տեսնեմ ի՞նչ գրած է :

— Աննայ, նշանածիդ ձեռքն դպած է այս սիրուն նամակին, ա՛ռ և մի քանի անգամ աչքերդ քսէ՛, շուտ, շուտ. — ասաց Սահակ և բարձր ծիծաղով խնդաց :

— Է՛՛՛՛՛՛, փեսայ, դու ևս շատ զարմանալի մարդ ես, ա՛ռ և շուտով կարդա՛ :

— Ես արդէն լաւ գիտեմ, որ քո մօտէն հեռանալէս վերջն այս նամակն ոչ միայն աչքերդ պէտք է քսես, այլ և սորա թուղթն հաղար անգամ համբուրելով ճակատիդ պէտք է դնես և իբրև մասունք արկղիդ մէջ սուրբ սուրբ անելով պահես. ուստի կը փափաքեմ, որ մի անգամ իմ մօտ համբուրես և աչքերդ քսես, որպէս զի աչքքս տեսած լինիմ :

— Է՛՛՛՛՛՛՛ փեսայ, կատակիդ չափն անցուցիր, գիտես, բաւական է. սիրտս մի հատցններ, ա՛ռ և կարգա՛, տեսնեմ ի՞նչ գրած է. հերիք զիս չարչարես. — գոչեց Աննայ նեղանալով : Բաղտասարեանցն նամակն առաւ և կարդաց :

Բարև քեզ, սէր իմ Աննայ,

Այսօր մըտի էջմիածին,  
Եւ ուխտ արի Իջման տեղին,  
Լուսաւորչի սրբոյ աջին  
Եւ կուսանաց սուրբ վանքերին :

Իմ խնդիրքն Աստուածանից  
 Ո՛չ ոսկի էր և ոչ արծաթ,  
 Ո՛չ մեծութիւն ճոխ անհաստատ:  
 Ո՛չ հարուստ դանձ և աղամանդ:  
 Ա՛խ, խնդրեցի ես Նորանից  
 Կենօք պահել մեզ հաւասար,  
 Քեզ ինձ համար, ինձ քեզ համար,  
 Քեզ էդ, ինձ էս տեղ համբերատար:  
 ՅՈՒՍԱ՛, ՀԱՄԲԵՐԻ՛Ր, ՍՊԱՍԻ՛,  
 Երեք տարին շուտով կ'անցնի,  
 Կէ՛ միշտ զբաղինք բարի գործի,  
 Որ ժամանակն պարտալ չ'անցնի:  
 Էգոց<sup>1</sup> իրիկուն<sup>2</sup> ես Իկտիրում,  
 Շուտով կը լինիմ իմ խանութում,  
 Ո՛հ չեմ կարող այս նամակում  
 Սիրտըս բանալ մանրապատում:  
 Միայն էս եմ ասում, որ իմանաս,  
 Գիշեր ցերեկ միշտ հանապազ,  
 Քեզ եմ յիշում ես անմուտց,  
 Քնումս անգամ զորդ գիտենաս:  
 Մեծ քաղաքներ և շատ գիւղեր,  
 Խոր խոր ձորեր, մեծ մեծ սարեր,  
 Անհուն ծովեր, վարար դետեր,  
 Հեռու հեռու շատ երկիր:  
 Թող բաժանեն ինձ քեզանից,  
 Եւ Հինգ քցեն մեր աշխարհից,  
 ԾՆՈՂՔ, ԱՆՆԱՅ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ  
 Միշտ անբաժան են իմ սրտից:  
 Որչափ լինիմ ես կենդանի,  
 Իմաց այս է իմ ուխտ սրտի,

1 Էգոց. Վաղն:  
 2 Իրիկուն. Երեկոյին:

ՄԻԲԶԱՅՈՎ ապրիմ, ուր և լինիմ,  
 ՄԻԱՆՔ յիշելով հանդիստ մեռնիմ:  
 Ինձնից քեզ այս վերջին խրատ,  
 Բոլոր գրերս քեզ ամանաթ,  
 Թղթերն սնտկում, խօսքերն սրտումը  
 Միշտ պահպանիր ինչպէս աւանդ:  
 Մնաս բարեաւ, սիրուն Աննայ,  
 Ձեր բախճային բարև արա՛,  
 Երբ դու ման գաս միջում դորա,  
 Ա՛խ չմոռնաս յիշել Միրզայ:

— Կ'երևի թէ նշանածդ այս գիրն գրած ժամանակ սիրովդ այնքան յափշտակուած եղած է, մինչև անգամ ամսաթիւ գրելն մոռացած է. — նամակի կարդացումն աւարտելէն յետոյ կը յարէ Սահակ բարձր ծիծաղով:

— Գարձեալ սկսար, լաւ միտքս ընկաւ: ապա դու ինչու համար նշանած ժամանակդ քրոջս Հռիփսիմէին միշտ նամակներ կը գրէիր Խանքեանտիէն: Ուրեմն դու ևս զնա չափազանց կը սիրէիր, բայց միթէ սիրելն ամօթ է:

— Ես չասացի թէ սիրելն ամօթ է, և ոչ միայն այն ժամանակ կը սիրէի քոյրդ Հռիփսիմէն, աւելի այժմ ևս կը սիրեմ և առանց նորա մի օր ապրիլ չունենամ աշխարհիս վերայ. այլ ասացի թէ ամսաթիւ գրելն մոռացած է: Բայց առ իս ուղղեալ նամակին մէջ Մայիս մէկ գրած է: Նամակաբերն ըստ որում վաճառական մարդ է, ճանապարհին տեղ տեղ ուշացած է. վերջապէս հոգ չէ, որ նամակներն ուշ մեր ձեռքն կը հասնին, այլ բաւական է, որ անկորուստ կըստանամք: Իմ նամակիս մէջ քեզ և զդրանչիս բարև գրած է:

— Յիրաւի շատ լաւ արիք, որ Ձեր նամակն յիշեցիք, ես բոլորովին մոռացած էի հարցանել, թէ Ձեզ ինչ գրած է:

— Գլխաւորապէս մի բարի և ուսումնական անձի հետ մինչև Երևան հանդիստ ճանապարհորդելն կը գրէ. բայց եթէ ճշմարիտն խօսիմ, Աննայ, ազնիւ քեներս, պէտք է ինձմէ դարձեալ

նեղանան . արդարև դու ևս նշանածիդ վերայ այնքան սէր ձգած ես , որով ամեն բան կը մոռանաս և միայն զՄիրզայ մտացդ մէջ կը պահես : Ուրեմն խնդրեմ ինձ ականջ արա՛ , արի այդ նամակն իմ մօտ աչքերդ քսէ , որ մոռացկիտութիւնդ սուր յիշողութեան փոխուի :

— Աստուած սիրես , փեսայ , մի՛ ծաղրեր զին , զիտես , որ կը նեղանամ :

— Լաւ լաւ , Աննայ , մի՛ նեղանար , ես զուարճարանութեան համար կատակ կ'անեմ . այսօր ուրախութեան օր է . զարձեալ կ'աղաչեմ , մի՛ նեղանար :

Սահակն գործ ունէր , շուտով զարձաւ և Աննայ միայնակ մնաց այդուոյն մէջ :



ՔԼՈՒԽ ԼԳ.

ՊԱՏԱՍԻՆՆ

Աննայ օրիորդն միայնութեան մէջ սկսաւ հազարաւոր բաներ մտածել , լալ , ուրախանալ : Շատ և շատ կ'յտաւէր , որ ինքն կարգալ և զրել չ'զիտէ , որ իւր ուզածին պէս իւր սիրելի Միրզային նամակներ գրէ : Երեկոյեան գէ՛մ երբ տուն զարձաւ , իւր փեսային խնդրեց , որ իւր ուզածին պէս մի լաւ նամակ գրէ Միրզային : Նամակն գրուեցաւ և Ատդեանի յուղարկուեցաւ , որ գրեթէ վեց ամիսէ 'ի վեր միշտ նամակի կըսպասէր և գրածին պատասխանն անդամ չընդունելով սրտամաշ կը լինէր : Միրզայ մի օր Իկաիրի սարէն վերադառնալով՝ յաշակերտաց մին ծրար մի կը ներկայացընէ , որ կը բանայ և կըսկսի կարգալ .

ՄԻՐԶԱԶԱՆ ,

Իջմիածնից գրած զիրդ էս օր առի ,  
Մեր փեսային ծածուկ բախճում կարգալ տուի ,  
Լաւ խորհելով , մտածելով միտքն առի ,  
Թուղթն զու թում , խօսքն սրտումս աւանդ զըրի  
Լալ , ճաւահիր լաւ պահպանող սովտաքեարի նրման<sup>1</sup> :  
Էս էլ չօքի , աղօթք արի , սրտում , մըտքում ,  
Մարմնով բախճում , հոգւով , սրտով Իջմիածնում ,  
Էս խնդրեցի համբերատար մի սուրբ վարքում ,  
Որ պահպանէ քեզ Իկաիրում , ինձ էս տեղում ,  
Մարմնով հեռի , հատաքով մօտ ուխտաւորի նրման :  
Հօգուոյց մատաղ , կը համբերեմ , հոգ մի անի ,  
Գիշեր ցերէկ ես գործում եմ կարպետ խալի ,  
Թէ որ դաս ս'չ երեք տարում , Աստուած չ'անի ,  
Էս կըսպասեմ սիրուդ համար չօրս հինգ տարի ,  
Շահ-Ղարիպին հաւատարիմ Շահ-Սանամի նրման :  
Քո սիրտն , Միրզայ , սուփրի նման միշտ բացուած ա ,  
Անգին խօսքերդ զառ զալանով պարզ գրուած ա ,  
Գիւրն մի աթլաս քսակում ճտիցս<sup>2</sup> միշտ կախուած ա ,  
Միշտ սերտում եմ , համարս անգիր արած ա ,  
Առած դասերն լաւ սովորող աշակերտի նրման :  
« ԱԶԳ , ՀԱՅՐԵՆԻՔ , ԾՆՈՂՔ , ՆՇԱՆԱԾ » ինչանգին բան<sup>3</sup>  
Ա'խ , թէ լինէր ամեն սրտից ուխտի նշան ,  
Մեր Հայազգի մարդոց , կանանց , տղի<sup>4</sup> , աղջկան ,  
ՍՐԱՆՅՈՎ ապրին , ՍՐԱՆՅՈՎ մեռնին անմահանան ,  
Հայ անունին արժանաւոր մի ուխտապահ ազգի նրման :  
ԱԶԳ , ՀԱՅՐԵՆԻՔ , ԾՆՈՂՔ , ՄԻՐԶԱՅ թող ինձ համար ,

1 Սուրբաբար . վաճառական :  
2 Ճիւր . Պարանոց :  
3 Բան . Բանն այս տեղ նշանարանի մտօք գրուած է :  
4 Տղի . Տղայի :

Լինին ուխտիս հաստատ նըշան միշտ մուղարար<sup>1</sup>,  
 Ուր որ ապրիմ՝ ՆՈՅԱ յիշեմ ես անդադար,  
 Թէ որ մեռնիմ, աղօթք անեմ վերին աշխարհ  
 Սուրբ աղօթքով միշտ պահապան մի հրեշտակի նըման :  
 Մնաս բարով օտար երկրում, ան, Միրզայջան,  
 Գործդ յաջող, փորդ կուշտ ա, թէ փարիշան,  
 Գլուխդ քարին, կողկրդ տափին, թէ մի լաւ տան,  
 Ամն սըհամ էս ա մտածում քո խեղճ Աննան  
 Մի հոգատար և ջրատար նշանածի նըման :  
 1 Ի Խնածախ դիւղ :

Աւաղեան սոյն նամակն այն աստիճան երևակայութեամբ յափշտակուած կը կարգայ, որպէս թէ Աննայ օրիորդն, իւր սիրակցորդ նշանածն ներկայ է : Կարծես թէ Միրզայի համար ամեն իր իւր Աննան կը ներկայացընէ, թոչնոց գեղեցիկաց մէջ Աննայի գեղեցիկանքն, հողմոց հնչիւններու մէջ Աննայի ձայնն, ուտոց շարժմանց մէջ Աննայի ձեռաց շարժումն և արարածոց մէջ Աննային սքանչելի դէմքն ու պատկերն միայն կը տեսնէ, կը լսէ և կը վայելէ :

Մինչդեռ Միրզայ և Աննայ իւրեանց փոխադարձ նամակներով կը մխիթարուէին մեծ բարեկենդանն արդէն հասած էր, որ Ղարաբաղու շինականաց համար մեծ հրապոյր ունի և այսպիսի երևոյթներով և խաղերով կը կատարուի, զորս նկարագրելն աւելորդ չեմք համարիր :

1 Մուղարար . Հանապաղ, միշտ :

ՔԼՈՒԽ ԼԳ.

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԿԱՆ

Բուն բարեկենդանի ութ օր մնացած է, և Խնածախ դիւղի մէջ շատ ձիւն իջած է : Արեգակն իւր շողշողուն և անզօր ճառագայթներն սփռած է ձեան վերայ, որ աստեղազարդ եկից նման սպողալով կը ցոլայ : Մեր, այսինքն Բարխուտարեանց տան ետին մի սայլի մէջ գեղեցիկ դորդեր փռուած են, որոց վերայ իբր թաղաւոր յաղթանգամ ոմն բազմած է ոչխարենի երկայն մուշտակն հագած, երկար պարանոցով մուճակներն մինչև ծունկերն քաշած, արդյրէ աստեղազարդ կամարն կապած, յորմէ կախուած թուրն վեհանախարար գիրկն առած է և որոյ շինծու իբրև կլապիտոն կախուած ծոպերու հետ ձախ մատերով կը խաղայ : Աջ ձեռքն իբր դաւազան սպիտակ փայտ մի բռնած է և մուշտակին վերայ երեք իբրբու կարուած աղուէսենի ձգուած է որպէս թէ թագաւորական ծիրանի : Մեծադիր գլխոյն վերայ գոյնզգոյն ապակիներով և սպողուն ուլունքներով զարդարուած գլխարկ մի դրած է որպէս թէ ակնանկու թագ . մեծ և հաստ քթին վերայ սրուակաց տակի բլրակաձև ապակիներէն շինուած ահագին ակնոց մի դրած է, որ խիստ կը վայելէ իւր լայն և բոլորակ դիմաց, մեծ մեծ աչաց և փառահեղ մօրուաց և միանգամայն ահարկու տեսիլ կ'ընծայէ գիւղականաց :

Այս սայլին առաջի կողմն նստած է նուագածուաց խումբն, և որոյ լծուած են տան և երկու հատ ուժեղ տղամարդիկ : Սոյն սայլի ետև ուրիշ սայլ մի ևս կայ, որոյ մէջ երեք մաքուր հագուած երիտասարդք կան իբրև ատենադպիր և գրագիրք, որոց մօտ չորս չորս ոչխարենի սպիտակ կաշիէ (մէշիւն) իբր թղթէ կարուած տետրակներ կան, ուր պէտք է գրուին ժողովրդոց բողոք, աղերսանք և խնդրուածքն . նաև մի մի հատ կճոճ իբրև թանաքաման և նոցա մէջ հաստ հաստ և կանգնաչափ երկայնու-

Թեամբ եղէգններ իբրև գրիչք : Իսկ այս սայլին վեց տղամարդիկ լծուած են :

Վեց լաւ զինուած տղամարդիկ իրարմէ զանազան հեռաորու- Թեամբ արշաւասոյր կ'երթան շինամիջէն իբրև սուրհանդակ գո- չելով :

— Թաղաորն կը դայ , պատրաստ եղիք , ժողովուրդ , ձեր խնդիրքն կամ բողոքն մատուցանելու :

Եւ ահա բոլոր ժողովուրդն սրահներու , դա իթներու առաջքն և շատ տեղ թաղաորին անցանելու ճանապարհին վերայ կըսպա- սէ պատրաստ :

Նուազածուք շեփորներն կը հնչեցրենն իբրև թաղաորական փողք , լծուած մարդիկ երկու սայլերն գրեթէ փոստայի կառաց արադու թեամբ կը վազցրենն , թաղաորն ահարկու կերպիւ փոքր ինչ կռնակին վերայ թեքած է և յամենայն կողմանց խորին խո- նարհութիւններ կ'ընդունի վեհանախարար : Սայլերն տեղ տեղ կը կանգնին և ճանապարհի երկու կողմերէն իբր աղերսագիր , կամ բողոքագիր շատ թղթեր կը ներկայացունին ատենապետին : Իսկ միւս զրադիրք ստացած նամակաց թուահամարներն կ'արձանագրեն և երբեմն որբոց և այրեաց բերանացի բողոքներն կը նշանակեն եղէգնեայ զրչօք ոչխարենեաց վերայ իբրև թղթոց վերայ : Չորս ձիաւոր և չորս հետիոտս զարդարուած քաջեր առաջի սայլին այս և այն կողմէն կ'երթան իբր թիկնապահ զօրք : Չ'մոռանանք ա- սել ժողովրդոց միջէն նոքա , որք ուտելիք և խմելիք ունին , սի- բով կը մատչին առ թաղաորն և մինչև դետին ծուռելով նմա երկրպագութիւն անելէն յետոյ իբր թաղաորի , ոմանք ոչխար կը նուիրեն , ոմանք երինջ , ոմանք արջառ , ոմանք կարատով դի- նի , ոմանք բեռներով ալիւր և ոմանք հակով պրինձ : Նոյնպէս կանանց կողմանէ ոմանք հաւ , ոմանք կճուճով արդար եղ , ոմանք կողովով ձու , ոմանք մեղր , կարպ , սեր , պանիր , մածուն և այլն : Իսկ նորա , որք այսպիսի նիւթեր ունին և տալ չ'կամենա- լով տանց անկիւններն կը պահուին , աչալուրջ թիկնապահաց ձեռօք անմիջապէս թաղաորին կը ներկայացունին իբր յանցապարտ և մանաւոր պատժով կրկնակի կը տուժեն , և հազիւ հազ պա-

տուաւոր անձանց խնդրանօք շղթայէ կամ բանտարկութենէ կ'ա- զատին : Եւ այսպէս ամբողջ գիւղն շրջելէն յետոյ , բոլոր նիւ- թերն մի մեծագոյն տան մէջ ժողովելով ալիւրն հաց , կաթնայ և ուրիշ խմորեղէն կ'եփեն , ոչխարներն , երինջներն և հաւերն ա- լուր օղտելու չափ կարգաւ կը մորթեն , կերակուրներ կը պատ- րաստեն , քահանայով , տան տէրով և միանգամայն մեծ և փոքր ժողովրդով հաւասարական ուրախութիւն կ'անեն մինչև վերջին կիւրակէ երեկոյին :

Տէր Արիստակէս քահանայն բազմականաց զուխն նստած է , որոյ հանդէպն է նոյն իսկ թաղաորն (Աթայեան Առստամն) իւր համազդեսաւր . երեկոյեան ընթրիքն պատրաստ է իւր ամեն տե- սակ կերակրօք , մատակարարօք և մատուակօք : Նուազածուք եր- գոց և պարուց զանազան և սրտաշարժ եղանակներ կը փոփոխեն , քաղցրածայն երիտասարդք , տղամարդիկ և ձեռք կարգաւ կ'եր- դեն պարսկախառն տաճիկերէն լեզուաւ , Մակրտումեան ազնիւ Բար- սեղն առ իս ակնարկելով կը կոչէ .

— Ինձ թաղես<sup>1</sup> , Առստայ Գէորք , բարեկենդանի վերայ մի լաւ հայերէն երգ ասա :

Նոյն միջոցին Արժ . քահանայն դուչեց .  
— Իմ օրհնած թասն սու , խմիր և թաղաորի նուիրած խնձորն բաժակիդ վերայ վայելելով գինույ վերայ մի լաւ երգ ասա :  
Իսկոյն տեղէս կ'երնեմ , քահանային աջն կը համբուրեմ , թա- գաւորին խոնարհութիւն կ'անեմ և տեղս վերադառնալով բա- ժակս կը խմեմ և խնձորն վայելելով կ'երգեմ .

Միշտ ման եկի Շաքի , Շիրուան , Շամախի ,  
Գիշեր , յերէկ քաղքից քաղաք չորս տարի ,  
«Ամեն ցառոց ինչ է դեղ» ես հարցրի ,  
Ողջ բժիշկներ ինձ ասացին «Լաւ ԳԻՆԻ» .

<sup>1</sup> Ինձ թաղես բառերն , Ղարաբաղս նկատմամբ Էրբանեցոցանէ- լու յե ֆ է :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգին :

Ա՛խ, տէր տէր ջան, ես էն օրից ուխտ արի,

Հացի վերայ միշտ գործ ածել լաւ գինի,

Փորձով տեսի հողով մարմնով հիւանդի,

Մի հաս բժիշկ գեղ ու ճարն է լաւ գինի :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի :

Ազնիւ գինի, ո՛վ կարող է քեզ գովել,

Քո յատկութիւնքն մին մին կարգաւ լոխ՝ շարել,

Աշխարհ ողջ թուղթ ծմակ զալամ էլ լինին,

Ոչ ոք կարէ քո գովասանք լի գրել :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի :

Ազնիւ գինի, երբ քո շիրան՝ կարասում,

Կրճ պրծում՝ է, եռում, եփում պրճալքում՝,

Երբ կուլայից՝ ձայն ես տալիս քրլքրլում՝,

Կեանք ես կանչում, անմահութիւն խոստանում :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի :

Ազնիւ գինի, դու անմահ երկնային,

Յատուկ շնորհուած մի մեծ պարգև ես անդին,

Ո՛ւժ, զօրութիւն, խեղճ և շնորհք ամենին,

Միշտ դու կը տաս քեզ չափաւոր խրմողին :

1 Ա՛ջ, ա՛ծել. Լից, լցրնել :

2 Լոխ. Բոլոր, ամբողջ :

3 Շէրայ. Նոր քամած գինի :

4 Կճ-պճ-ալ. Եփելու ժամանակ փայլել :

5 Պճ-պճ-ալ. Եռալ :

6 Կուլայ. Գինուց հողէ աման :

7 Քրլքրլ. Նեղ պարանոցով ամանէ թափուած գինուց քրլքրլ ձայն :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց ողջ չափաւոր խրմողի :

Ազնիւ գինի, երբ քեզ խրմէ խեղճ մշակ,

Կը մոռանայ աւուր քաշած աշխատանք,

Դու կը բանաս նորա փակուած ախորժակ,

Ցամաք հացըն հէնց կը զգէ մեղը, կարագ :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց ժիր մշակաց Հայ ազգի :

Ազնիւ գինի, երբ քեզ խրմեն ծերերը,

Իսկոյն կ'ուղղեն նոցա ծրուած մէջքերը,

Կը սղալեն՝ իւրեանց մօրուք, պէխերը,

Եւ կը սկըտին լաւ պատմութեանց հիւները :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց ողջ ծերունեաց Հայ ազգի :

Ազնիւ գինի, երբ քեզ խրմեն պառաւներ՝

Շուտով փայլին նոցա աչաց մութ բիբեր,

Տեսնես ինչպէս կը վզովզան լիսեւներ՝,

Եւ կը դիզուին բուրդ, բամբակի կծիկներ :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք բաժակ ողջ պառաւանց Հայ ազգի :

Ազնիւ գինի, երբ քեզ խրմեն զըզերներ՝,

Շուտ կը տընկուին նոցա կախուած գլուխներ :

Մի վայրկենում պտոյտ կ'անեն ողջ տուներ,

Պատուէր կը տան ինչպէս Հահի վէզերներ :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ գինի,

Խրմենք կենաց բոլոր զգրաց Հայ ազգի :

Ազնիւ գինի, երբ քեզ խրմեն զօրականք,

Մատաղ կ'անեն ՚ի սէր ազգի մահ ու կեանք,

Արիւնք եռան, սրտեր թնթան կարդ ՚ի կարդ :

1 Սղալել. Յղկել, շտկել :

2 Լիսեւն. Ճախարակի լիսեւն :

3 Գզէր. Գիւղապետին երկրորդն :

Վազեն յառաջ ՚ի թշնամեաց մեծ բանակ,  
 Սուրբեր շողան, թօփեր տեղան շատ գնդակ,  
 Չօրք որոտան, սարեր կրկնեն արձաղանք,  
 Ա՛խ, մատուակ, ո՛ւր զօրականք Հայ ազգին,  
 Ո՛ւր է բաժին նոցա կենաց թունդ<sup>1</sup> զինին:

Ազնիւ զինի, երբ քեզ խրմեն Տիւանդներ,  
 Գէն կը դըցեն<sup>2</sup> բարձ ու տէօշակ, եօրդաններ,  
 Կը փըլփըլան վարդի գունով երեսներ,  
 Եւ կըստանան նոր կեանք, ոգի՛, նոր սրտեր.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց ողջ Տիւանդաց Հայ ազգի:

Ազնիւ զինի, երբ քեզ խրմեն հայրսուրբներ,  
 Վարուց Սրբոց կը լինին քաջ պատմիչներ,  
 Առակներով կը տան սիրուն խըրատներ,  
 Լիանալով կը զարմանան լըսողներ.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց կրօնաւորաց Հայ ազգի:

Ազնիւ զինի, երբ քեզ խրմեն քահանայք,  
 Մաշտոցն առած շուտ կը վազեն տունօխնանք<sup>3</sup>,  
 Անդիր<sup>4</sup> կ'ասեն աղօթք, մաղթանք, շարականք,  
 Սըրտով կ'օրհնեն տաշտ ու կարաս, եղամանք.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց քահանայից Հայ ազգի:

Կարմիր զինի, երբ քեզ խրմեն տիրացուք,  
 Պիւլպիւլի պէս կ'անեն պէս պէս ծըլվըլուկ,  
 Երգեր, խաղեր, տաղեր կ'երգեն կըլկըլուկ<sup>5</sup>,  
 Կը զարգարեն կընունք, հարսնիք ու խընձոյք.

1 Թունդ . Չօրեղ :  
 2 Գցեն . նետեն , նետել :  
 3 Տունօխնանք . Տուն օրհնէք :  
 4 Անդիր . Այսինքն գոց , ՚ի բերան :  
 5 Կըլկըլուկ . Գեղղեղանք :

Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց բոլոր դպրաց Հայ ազգի:

Կարմիր զինի, երբ քեզ խրմեն աշուղներ,  
 Կ'եռան, կ'եփին և ջուշ<sup>1</sup> կը դան սուրբ էշներ,  
 Լեզու կ'եւնեն սաղ, քեամանչայ, սանթուրներ,  
 Կ'ածեն, կանչեն լաւ ու ընտիր շատ երգք.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց ողջ աշուղաց Հայ ազգի:

Կարմիր զինի, երբ քեզ խրմեն սաղանդէք<sup>2</sup>,  
 Չայն կը հանեն փող, տընկըլազ<sup>3</sup> և զուռնէք<sup>4</sup>,  
 Եալլե կը տան քաջ տղամարդք և փեսէք,  
 Պար կը բռնեն հարօրն ու ալջիկ և տղէք.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց սաղանդայից Հայ ազգի:

Ազնիւ զինի, գու գատաւոր արդար ես,  
 Ո՛վ քեզ խրմէ իւր չափից դուրս, կը պատժես,  
 Յետի, ձիւնի, փոշոյ միջում կը թաթխես,  
 Եւ կատարեալ ՄՈՒՐԱԹԱՒԱԼ մի կ'անես.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք կենաց ողջ չափաւոր խըմողի:

Ո՛վ սուրբ զինի, գու ամենից կը սիրուիս,  
 Դո՛ւ օրհնուած ես, դարձեալ Տէրից օրհնուիս,  
 Ա՛խ, կը կանչեմ բոլոր սրտով Քրիստոսիս,  
 Որ անպակաս Հայ սեղանից դու լինիս.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ անձ զինի,  
 Խըմենք, փա՛ռք տանք երկնից երկրիս մեծ Տէրին:

Ինչ սեղանում քո բաժակներ զըտնուին,  
 Ղարիպ եղբարց անուններն կը յիշուին,

1 Ջուշ քալ . Բանաստեղծական աւիւնն շարժիլ :  
 2 Սաղանդէք . Փողահարք , քնարահարք , և այլն :  
 3 Տընկըլազ . Նաղարայ , որսուլ :  
 4 Չուռնայ . Շէփոր :

Բաժակ բաժկի ճընկճընկալով կը թխուին<sup>1</sup>,  
 «Խերով, բարով դան» ասելով կը կոնճուին.  
 Ա՛խ, տէր տէր ջան, լի բաժակներ էս գինին,  
 Խըմնը կենաց ողջ զարիսպաց Հայ ազգին:

Ազնիւ գինի, երբ դու չը դաս ՚ի սեղան,  
 Տխուր կ'անցնին կընունք, հարսնիք, բարեկենդան,  
 Իսկ հողեհաց կամ ժամահաց երբոր քեզ հետ միանան,  
 Յնձան երեսք, փայլին աչեր, բերանք լինին օրհնաբան.  
 Ա՛խ, տէր տէր ջան, լի բաժակներ էս գինին,  
 Խըմնը հողուց ննջեցելոց Հայ ազգին:

Ո՛վ սուրբ գինի, ո՛վ կարէ քո արժանին,  
 Գովել խօսքով, կանչել ձայնիւ բիւրից մին,  
 Կերիք քո խեղճ ծառայ ՈՒՍՏԱՅ ԶԱՄԱԼԻՆ՝<sup>2</sup>,  
 Որ շատըն թողուց երկրս լըսողաց սուր խեղքին.  
 Գէ՛, մատուակ, լի անապակ թաս վերջին,  
 Ա՛ծ, որ խըմնք, պատուով վերջ տանք մէճլիսին:

Մէճլին կամ խնձոյքն կը վերջանայ և այսպիսի հանդէսներով  
 կ'աւարտի բարեկենդանն: Ջարմանալի են ժողովրդեան խաղերն ու  
 խնձոյքներն: Ուրախութեանց մէջ կ'երևին աւելի մարդոց փա-  
 փաքներն: Ուրախ ժամանակ դերին ազատի կերպարանք կը զգե-  
 նու, ծառան՝ տիրոջ, հպատակն թագաւորի: Խնածախի խեղճ  
 ժողովուրդն ևս իւր բարեկենդանին միայն թագաւորի հանդէս կը  
 կատարէ: Իւր ստեղծած թագաւորի ուղածներն կը տայ, նորա  
 կառքին կը լծուի, բայց յոյս ունի, որ ինքն պէտք է թագա-  
 ւորի հետ նստի, խօսի և վայելէ: Երևի թէ բարեկենդանական  
 խաղերկուծիւններն շատ հին են. և երևի թէ առաջին թագաւոր-  
 ներն շատ անգամ նստելով իւրեանց հպատակաց հետ ուրախու-  
 թիւններ արած են: Աւանդութեանց արտաքին կերպերն կը փո-  
 խեն դարերն, բայց էութիւնն նոյն կը մնայ: Ուրախութիւնքն ժո-

1 Թիւլ. Ջարնել բաժակ բաժկի:

2 Զ.ա.ա. Ուստայ Գէորքի աշուղական անունն է:

ղովրդեան ներքին զգացման պատկերներն են: Ռուս զինուորք երբ  
 կ'արբենան, կըսկսին մերթ զօրապետի պէս որոտալ, մերթ հրա-  
 մանատարի պէս հրամաններ տալ և յաճախ կրկնել «Ես զբա-  
 պեար է՛, էս հրամանաւոր է՛, էս իշխան է՛ և այլն»: Երևելի մար-  
 դուն մէկն ասած է թէ «Ռուսաց զինուորն միայն խմած ժամա-  
 նակ աղատութիւն կը զգայ»: Բայց միայն զինուորներն չեն, որ  
 այսպէս են, գրեթէ բոլոր ժողովուրդն այսպէս է: Ազատութեան  
 տեսչն բնական է ամեն մարդոյ, բայց ճնշուած է և միայն ու-  
 րախ ժամերու մէջ նշոյլներ կը ցոլացընէ: Ով չգիտէ, որ բա-  
 րեկենդանի հետ Խնածախի ազատութեան ցոլմունքներն ևս կը  
 նսեմանան: Եթէ ժողովրդային ուրախութիւնքն և հանդէսքն չ'ը-  
 նին, ժողովրդեան համար գրեթէ միշտ ծով է և պահք: Նա ոչ  
 կը խօսի, ոչ կը զգայ, իւր սիրտն փակ կը մնայ, իւր կեանքն կը  
 հիւժի և կամաց կամաց կը մեռնի:

Խնածախ ինչ որ քսան տարի առաջ էր, այժմ այնպէս չէ.  
 Իւր ուրախութեանց հետ իւր կենդանութիւնն ևս նուազած է:  
 Շատ անգամ կ'արդիւուին իւր շինական խնձոյքներն, որ ըստ ա-  
 մենայնի անմեղ են և անմեաս: Այն ժողովուրդն, որ ուրախու-  
 թիւն չունի, ինչպէս կարող է կեանք ունենալ: Գիւղերն ճեմա-  
 րաններ չունին, որ գիտնականներ ու բանաստեղծներ ունենան և  
 իւրեանց պապերու վարքն ու արարքներն գրեն և պահպանեն.  
 Իւրեանց քաջերն երգեն, իւրեանց ննջեցեալներն անմահացընեն:  
 Նոցա գիրն և մատեանն իւրեանց խնձոյքն է ու իւրեանց տաւ-  
 դական սովորութիւնքն. նոցա բանաստեղծական քնարն է իւրեանց  
 դիւնոյ բաժակն, որ ձեռք առնելով բանաստեղծ կը կտորուի,  
 սէր կը թափեն, օրհնութիւն կը սան, ննջեցեալներն կը յիշեն,  
 կենդանիք կ'օհնեն, սիրտ կը տան և սիրտ կ'առնուն:

Երանի՛ այն ժողովրդեան, որ ուրախութիւնն չմեռնիր իւր մէջ:

~\*~

ՊԼՈՒՆ ԼԵ.

ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՂԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Աշխարհիս մէջ կարծես թէ առողջութիւնն և հիւանդութիւնն, յաջողութիւնն և անյաջողութիւնն զիշեր և ցերեկի նման մարդկային կենաց շրջանի մէջ իբրև անբաժան ընկերք միմանց կը յաջորդեն :

Այսօրէն սկսեալ բաղդն Աստուծոյ թշուառութիւն կը ստանայ և անյաջողութիւնն՝ խորին տրամոթիւն : Համարեալ թէ մեծաւ մասամբ այս եղած է առաքինեաց բաժինն : Բայց Միբղայ այնպիսի անձանց կարգէն էր, որք ծովեզերն ցցուած քարի նման ծովուն կատաղած ժամանակ՝ նորա լեռնակուտակ ալիքներէն, զոսում ու գոչումներէն և փոթորկաց ահեղասաստ ձայնէն անդրդուելի մնալով՝ ծաղր կ'անեն ամեն հի ծովն : Միբղայի ընտիր յատուութիւններէն մին էր անյաջողութեանց ժամանակ առանց տրանջելու համբերել, ձախորդութեանց ժամանակ չ'ուսաստախլ և հիւանդութեանց ժամանակ ուրախ և զուարթ լինիլ՝ իւր շրջակայ անձանց սիրտերն չ'վշտացընելու և իւր առաքինութիւնքն անխախտ պահելու համար :

Աստուծոյ ամբողջ երկու տարի հիւանդութիւն կը կրէ : Իկտիր զիւզաբաղաքի իշխան Գրիգոր Ազա մահտեսի Աստուծոյ Միբղային առաքինի վարքն և բարքն տեսնելով արգէն շատ կը սիրէր զնա : Իսկ երբ կը հիւանդանայ, իշխանն զթալով, մեծ սիրով իւր սուռն կ'ընդունի զՄիբղայ, որպէս զի նորա հիւանդութեան առաջքն շուտով առնել տայ : Թէպէտ այս բարեպաշտ անձն ամեն ջանք, խնամք, հոգատարութիւն և զգուշութիւն ի գործ կը զնէ Միբղայի առողջութեան համար, սակայն Միբղայի սկաւորութիւնն այնքան զգուշութեանց և հոգատարութեանց հակառակ օր աուր կը սաստկանայ : Արովհետև զիւզաբաղաքին մէջ օրինաւոր բժիշկ չ'գտնուելով, հիւանդն ստուռ կանանց և ծերու-

նեաց նահապետական բժշկութեան ապաստան կը լինի, յորոց մին գալով կ'ասէ .

— Միբղայի հիւանդութիւնն ջերմ է . ուստի բարկ քայտախի մէջ մի բուռն աղ լցընելով զիշերային հոլին մէջ կը դնէք, և առաւօտուն անօթի փորով կը խմցընէք . Աստուծով կ'անցանի :

Միւսն զալով կ'ասէ վստահութեամբ .

— Միբղայ սաստիկ նապար առած է . մի քանի առաւօտ և երեկոյ աղօթել տաք, շուտով կը լաւանայ :

Մի ուրիշն թէ,

— Այս վարպետն սաստիկ վախած է, սորա սրտին վերայ՝ եկեղեցւոյ կիսայրեաց մոմէն՝ հալել տաք այս խնամք կնոջ, շատ շուտ կը լաւանայ և ինչ բանէ վախած լինելն հալած և ջրոյ մէջ թափուած մոմի կերպարանքէն յայտնի կը լինի :

Այլ ոմանք թէ,

— Երեք առաւօտ անխօս բերանով զՄիբղայ տանէք և ինքնասպանի զերեզմանի վերայ ոտքերն և ձեռքերն լուանաք, և փոքր ինչ ջուր խմացընէք հիւանդին . մի քանի օրէն կը լաւանայ : Ոմանք թէ,

— Գողն եկած ժամանակ կարմիր և սև սղպեղներ մի մեծ բաժակ օղոյ մէջ լցընելով և լաւ խառնելով խմացընելու է : Ոմանք թէ,

— Գողն բռնած ժամանակ անմիջապէս ծածուկ մի կուժ ցուրտ ջուր լցուցէք հիւանդին վերայ, որով սարսելով՝ գողն իսպառ կը հալածուի :

Միւս ոմանք թէ,

— Զերմն գալու օրն Երասխ գետի մօտն կը տանիք զՄիբղայ, և գողի գալն զրացած միջոցին ցուրտ գետին մէջ լողացընէք, սուրի նման կը կտրէ ջերմն :

Այլք թէ,

— Չուի գեղնոցն, ձմերուկի ջրոյ և լեմոնի ջրոյ հետ լաւ խառնելով՝ զիշեր գուրսն դրէք և առաւօտուն զանդի ժամանակ խմացուցէք, դանակի նման կը կտրէ :

Եւ այլք շատ այսպիսի ստուռական զեղեր և բժշկութիւններ

ի գործ կը դնեն ողորմելի հիւանդին վերայ և նա բնաւ չ'լաւանար :

Միրզայի հիւանդութեանց երկարիւն տեսնելով՝ ապնիւ Բաղրամեանն Գրիգոր աղային հետ կը խորհրդակցի, Երեւան քաղաքէն մի բժիշկ բերել կը տան և վերջապէս մի քանի շաբաթէն հաղելովէ հիւանդն օտքի վերայ կ'երևնէ : Բայց նոյն բժշկի յատուկ դալ և վերադառնալն Աւագեանի վերայ մեծապումար ծախք կը նստի . և գրեթէ խեղճ Միրզայ ամբողջ երկու տարիներ դանկ մի անգամ չ'վաստակելով և նախորդ տարուան վաստակն բժշկաց և դեղորէից ծախելով՝ մասնաւոր գումար մի միայն կը մնայ իւր մօտ : Նոյն միջոցներն Աւագեան իւր ծնողաց և վարպետին կողմանէ նամակներ կը ստանայ, որովք ՚ի Ննածախ վերադառնալ կը թախանձեն պատկուելու համար : Եւ կը յաւելուն թէ հարսանեաց պիտոյքներն երկու կողմանէ անթերի պատրաստուած են, միայն թէ Գասպարին հետ հաշիւներդ, եթէ ունիս, վերջացընես և ճանապարհ ելնես :

Այս նամակներն համարեալ թէ երկամեայ կրած հիւանդութենէն աւելի կը ճնշեն ողորմելի Միրզային սիրան, որ դեռ նոր ՚ի նորոյ կազդուրուած էր : Իշխանի բարեպաշտուհի կինն Սէլլի և զաւակուքն, Աւագ, Մկրտիչ, Թորոս, Սահակ և Մատթէոս ըստ իւրեանց յաճախակի սովորութեան Աւագեանի սենեակն յայցելութիւն կ'երթան և զնա իւր բնաւորութեան ներհակ փոքր ինչ տրտում և տխուր վիճակի մէջ գտնելով կ'առնուն և իւրեանց այլին կը տանին զբօսընելու, և զբօսընելով զուարճացընելու, թէ և տրտմութեանց պատճառն իւրեանց յայտնի չէր :

Օրն Աւարգավառ էր և Ձան կիւլիւմի՞ ձայներ կը լսուէին Եկտիբի մէջ :



ԳԼՈՒԽ ԼԶ.

ՂԱՐԳԱՎԱՐ

Տապանակի տօնախմբութեան շաբաթ երեկոյնն՝ հարս, օրիորդ և աղջիկ կ'երթան այլիներէն Աւարգավառի ծաղիկ՝ կը հաւաքեն, փունջ փունջ խաշաձե կը կապեն և մի ամանի մէջ զգուշութեամբ ծածուկ կը պահեն, որպէս զի տղայք տեղն իմանալով չ'զողանան : Այս խաշիւնը ծաղիկն զողանալու համար տղայք և երիտասարդք այն աստիճան հետամուտ են, մինչև անգամ եթէ հարսզատ եղբայրն իմանայ թէ ո՞ր պահած է իւր քոյրն նոյն ծաղիկփունջն, անխնայ կը զողանայ և իւր ընկերաց կը տանի : Եթէ տղայք յաջողին զողանալ կամ յափշտակել այս ծաղիկն, այնուհետև ջան կ'իւլիւմի եղանակաւ յաղթական երդեք կ'երդեն . և հարսունք, օրիորդք և աղջկունք կը պարտաւորին ուսեստներ պատրաստել տղայոց համար : Իսկ եթէ անկարող լինին զողանալ կանանց հսկողութեան պատճառաւ, մեծ քաջութիւն կը համարուի հարսանց և օրիորդաց համար :

Աւարգավառի աւաւօտեան արշալոյսն բացուելու միջոցին մի քանի նոր հարսունք և մի քանի նշանուած օրիորդք զարդարուած՝ յիշեալ ծաղիկփունջն, եթէ զողացած չեն, թաղցուցած տեղէն առնելով կը տանեն ազբեր կամ գետակի ջրով կը շողտեն և գարձեալ բերելով կը թաղցընեն : Եթէ աղբեր ճանապարհի վերայ մի տղայ միայն կարողանայ յափշտակել, քաջութիւն կը համարուի . իսկ եթէ մի քանի տղայք լինին, մեղադրանաց արժանի : Ճաշէն յետոյ շաղաթաթախ ծաղիկն հանելով մի յարմար տեղ կը դնեն և նորան շուրջն բոլորած Ձան կիւլիւմի՞ կ'եր-

1 Այս ծաղիկն երկու դեակ է և խաչաձև ճիւղեր անի, մի գեղեցիկ ծաղիկն է և մեան սև ու սպիտակ քոյներով ծաղիկն, որ տեղական Բաղրամեան կիւլիւմի՞ հայի ծաղիկն կը կոչուի :

դեն հարս, օրիորդ և աղջիկ առանձին, տղայք և մանկուհք առանձին: Ապա ճինձեխ կամ ճլորթի<sup>1</sup> ընկնելով կը խաղան:

Մեր գիւղի խաչփունջ ծաղիկն Աննայ օրիորդին յանձնած էին պահելու, ինչպէս վերջէն իմացանք. վասն զի Աննայ խելահաս եղբայր չունէր, որ հետազօտէր, խաչփունջի տեղն իմանայր և ծածուկ գողանայր: Աննայ օրիորդն այս պատուոյ առանդն զգուշութեամբ պահպանելով՝ իւր ընկերակցաց յանձնած էր մեծ ուրախութեամբ և յամենեցունց կողմանէ խորին շնորհակալութիւններ ընդունելով:

Ճաշէն մի ժամ անցած է. փոքր աղբեր ճանապարհի վերայ մեծ ընկուզի ծառէն ճինձեխ կամ ճլորթի (սալւանձաղ) ձղուած է, որոյ հովանոյն մի կողմն գիւղային կերակուրք կ'եփուին և միւս կողմն հարս, օրիորդ և աղջիկ բոլորակ նստած միաբերան ջան կիւլում կ'երգեն. իսկ տղայք միւս ընկուզի ծառի տակ, որ աղջկանց ծառին մօտ է նոյն ճանապարհի վերայ:

Յաղթութիւնն հարսանց և օրիորդաց կողմն է. ուստի աւելի աշխուժիւ և սրտով կ'երգին:

Աննայ օրիորդն, ըստ որում կերակուր եփելն լաւ դիակէր, կախտայից մօտ նստած, կերակուր պատրաստելու միջոցին մի կողմէն քթին տակէն մտով ձայնիւ երգ մի կ'երգէ յիշելով Միրզայի երկար բացակայութիւնն, սուած սրայմանածամբ անցումն և վերադարձի ուշացուցումն, և միւս կողմէն կերակրոց կը նայի: Գրեթէ նոյն զրացմունքով երգ մի յօրինելով թղթի կ'առնու նաև Միրզայ Կիտիր գիւղի մէջ տեղոյն հարսանց և աղջկանց ջան կիւլումն լսելով:

Ահա երկոցունց օրինակքն.

Աբաւն եկն, նստեց քարին,  
Աղիղալով կանչեց մարին,  
Անցաւ, դնայ երեք տարին,

<sup>1</sup> Այն խաղն անունն է, որ բարձր ծառի զտան կաշելով կը նստին կամ կը կանգնին վերան և իբրև խաչփունջ կ'երկնելին օդին մէջ:

Գեռ ես կարօտ Միրզայ եարին<sup>1</sup>.  
Չէ ինձ համար էս Աարդավաւ,  
Չեն ինձ համար տօն տաղավար:  
Պիւլպիւլն<sup>2</sup> կանչեց մեր բարումըն,  
Քունըս կարեց իմ տեղումըն,  
Մինակ Միրզաս չէ գեղումըն,  
Աճապ<sup>3</sup> ո՛ր է, ո՛ր հողումըն.  
Չէ ինձ համար էս Աարդավաւ,  
Չեն ինձ համար տօն տաղավար:  
Ո՛հ, չորս տարին ինչպէս անցաւ,  
Գեռ իմ Միրզան տուն չի դարձաւ,  
Եարապ<sup>4</sup> մրսեց, հիւանդացմ,  
Թէ Կիտիրից էլ հեռացաւ.  
Չէ ինձ համար էս Աարդավաւ,  
Չեն ինձ համար տօն տաղավար:  
Առունկ, ծիծեռ<sup>5</sup> անցան, դարձան,  
Չատիկ, սուրբ Խաչ եկին անցան  
Ամեն դարիպ տուներ դարձան  
Աարօտ սրտեր սիրով լըցան.  
Չէ ինձ համար էս Աարդավաւ,  
Չեն ինձ համար տօն տաղավար:  
Անաչացան ձորեր դաշտեր,  
Ալ բացուեցան շուշան, վարդեր,  
Գեռ անծաղկի, ողորմած Տէր,  
Երկու կոկոն դժբաղդ սրտեր.  
Չէ ինձ համար էս Աարդավաւ,  
Չեն ինձ համար տօն տաղավար:

1 Եար. նշանած, իւր փեսայն:  
2 Պիւլպիւլ. Սոխակ:  
3 Աճապ. Արդեօք:  
4 Եարապ. Ո՛վ Տէր Աստուած:  
5 Ծիծեռն, Ծիծեռնակ:

Խաչ ծաղիկն փունջ փունջ կապած ,  
 Մեծ աղբիւրի ջրով ցօղած ,  
 Հարս ու աղջիկ լաւ դարդարուած  
 Ճինձն ի կ'ածնն կերած , իրմած .  
 Չէ ինձ համար էս Աարդամաւ ,  
 Չեն ինձ համար տօն տաղավար :  
 Գոցէ լսում ա Իկտիրում ,  
 Օտար աղջկանց նա ջան կիւլիւմ ,  
 Աննայ ասում , թառանչ քաշում ,  
 Միրան խորոյում , աչքն սղատրում ,  
 Չէ ինձ համար էս Աարդամաւ ,  
 Չեն ինձ համար տօն տաղավար :  
 Բայց երբ Միրլան դառնայ ուրախ ,  
 Չիոյն վերայ նրստած դուվրախ ,  
 Ա'խ , էն օրին հօղին մատաղ ,  
 Էլ չեմ անիլ ես ախուախ ,  
 Ինձ համար ա էն Աարդամաւ ,  
 Ինձ համար են տօն տաղավար :

Ա'խ , Աարդամաւ , սուրբ Աարդամաւ  
 Հայոց համար մե՛ծ տաղավար ,  
 Ի յիշատակ քո սիրավառ ,  
 Պատանք փնջնն վարդ վառ . ի վառ .  
 Չէ ինձ համար էս ջան կիւլիւմ ,  
 Քանի որ եմ ես Իկտիրում :  
 Օտարութիւն երբ սիրեցի ,  
 Խեղքս էն օրից ես թռուցի ,  
 Իկտիր սիրով պինդ գրկեցի ,  
 Բանդ ինձ համար ես շինեցի .  
 Չէ ինձ համար էս ջան կիւլիւմ ,  
 Քանի որ եմ ես Իկտիրում :  
 Կեանքս մաշեց օտարութիւն ,

Սիրարս խանձեց կարօտութիւն ,  
 Հօգիս էրեց ձախորդութիւն ,  
 Մարմինս հալեց հիւանդութիւն .  
 Չէ ինձ համար էս ջան կիւլիւմ ,  
 Քանի որ եմ ես Իկտիրում :  
 Չի կայ հնար ազատութեան ,  
 Չի կայ նշոյլ առողջութեան ,  
 Չի կայ գեղ էս հիւանդութեան ,  
 Լեզի բաժակ օտարութեան .  
 Չէ ինձ համար էս ջան կիւլիւմ ,  
 Քանի որ եմ ես Իկտիրում :  
 Հարս ու աղջիկ սղջ բաղերում ,  
 Ազափ<sup>1</sup> տղայք անխ , թաղերում ,  
 Ծաղիկ գրած նոր մաղերում  
 Կանչում , ասում են ջան կիւլիւմ .  
 Չէ ինձ համար էս ջան կիւլիւմ ,  
 Քանի որ եմ ես Իկտիրում :  
 Ա'՛՛՛ , ես էս տեղ , Աննա էն տեղ ,  
 Միմեանց կարօտ , մեր սրտեր նեղ ,  
 Ա'խ քաշելուց<sup>2</sup> չի մնաց եղ ,  
 Բայց ինչ օղոտ , չի կայ մի գեղ .  
 Չէ ինձ համար էս ջան կիւլիւմ ,  
 Քանի որ եմ ես Իկտիրում :  
 Բայց երբ տեսնեմ իմ նշանած ,  
 Ոտքից գլուխ լաւ դարդարուած ,  
 Ծաղկի փունջեր ձեռքում բռնած ,  
 Աղջկանց միջում ուրախ կանգնած .  
 Ինձ համար ա էն ջան կիւլիւմ ,  
 Էլ չեմ լինիլ ես Իկտիրում :

<sup>1</sup> Ազափ . Ամուրի . ոչ նշանուած և ոչ պատկուած :

<sup>2</sup> Գաշելուց . Գաշելէն :

Ինձածախ Գիւղի Հարս, օրիորդ, աղայ և աղջիկ երկու կողմանէ երգելէն և ճինճեի խաղալէն յետոյ կը նստին կերակուր կ'ուտեն և ապա խրեանց տուներն կ'երթան:



ԳՂՈՒԽ ԼԷ.

ՄՐՏԸՃԲԼԻԿ ՆԵՄԸԿ ՄԻ

Քանի մի օրէն յետոյ Աւաղեան փոքր ինչ կաղզուրուելով՝ երբեմն երբեմն Գասպարին մօտ կ'երթայ, խանութի մէջ կը նստի և միայն զրօսանքի համար պայտ և բեեռ կը ձեծէ: Թէ պէտ Բաղասիկեանն բնաւ հաճութիւն չ'տար, որ Միրզայ նոյն վիճակի մէջ ձեռքն գործի զարնէ, սակայն Աւաղեան իւր սրտի նեղութենէն ստիպեալ կ'աշխատի:

Գրեթէ Միրզայի առողջանալէն զկնի ամիս մի կ'անցնի, և ինքն դեռ Գրիգոր Աղայի տան մէջ կը բնակի առողջութիւնն լաւ կազդուրելու համար: Օրն կ'իրակէ է, ժամն եօթն, ամենայն որ այգիներն գնացած են. պաղոց խիտ լաւ ժամանակն է. զուարճութիւնքն անթերի են: Միայն Միրզայ, չ'զիտեմ ինչ պատճառաւ այսօր իւր սենեկին մէջ փակուած կը մնայ, և երկայնութենէ յերկայնութիւն ձեմելով՝ պղտոր պղտոր խորհրդոց և հոգեմաշ մտածութեանց մէջ կը տառապի:

— Արդեօք իմ գրած երեք նամակներն սիրելի Աննայիս ձեռքն հասած են, թէ ոչ. — կը կոչէ խորովի —: Եթէ հասած են, ուրեմն ինչո՞ւ համար պատասխաններն չ'ստացայ. քայց եթէ հասած չեն, ո՛հ, հազար ափսոս, նամակներս օտարաց ձեռք գերի մնային, որոց մէջ բովանդակուած էին սրտիս միջի բոլոր զաղտնիքն, հիւանդութեանս ժամանակ օտարութեան, խղճութեան և թշուառութեան դառն զգացմունքն և սուրբ Միրոյ անմահութիւնն:

Սակայն լաւ, զիցուք իմ նամակներս սիրելի նշանածիս ձեռքն չհասան, միթէ նա այսքան ժամանակ կարող է համբերել առանց նամակ գրելու: Ո՛ր զիտէ, թէ նա ևս նամակներ գրած չէ՞ առ իս, որք իմ նամակացս պէս անշուշտ կորուսած են: Բայց երանի՛ թէ իմ և նշանածիս նամակներն իսպառ կորուսեալ չ'լինին. միայն թէ Աննաս առողջ լինէր, նամակաց կորուստն բնաւ չէի հոգար:

Նոյն միջոցին մի օտարական սենեկի դռնէն ներս կը մտնի, զմիմանս կը գրկեն և օսատիկ կը լան: Եկողն Աւաղեանի փեսայ Նիկողոսեան Օհանն էր, որ նամակներ ևս բերած էր: Միրզայ Աննայի սոյն նամակն կը կարգայ լալով:

Միրզայ, Միրզայ,

Ոտանաւոր գրելու սիրտ չունիմ:

Ա՛խ, իմ սիրուն Միրզայջան, եթէ ինձանից հարցանես, եթէ իմ ահվալն<sup>1</sup> իմանաս, եթէ ցաւս ասեմ, կը լան սարեր, եթէ սիրտս բանամ, կ'որոտան ամպեր:

Երեք տարի ժամանակ տուիր, հինգ քարի անցաւ. ամեն օտարութիւն գնացող եկին, դու եկիր ո՛չ: Աճապ առողջ ես, թէ հիւանդ. ուրախ ես, թէ արտում. կո՛շտ ես, թէ սոված:

Միրզայջան, Միրզայջան, ա՛խ, իմ սիրուն Միրզայջան, եթէ տեսնես<sup>2</sup> սև թուխպերով պատուած երկինք, իմ ողորմելի գլուխս ա էն:

Թէ որ տեսնես երկու կեռ, կեռ<sup>3</sup> սարեր ախուր մշուշներով մին միտի կպած, իմ թշուառ տնքերս ա էն:

Թէ որ մտածես մօտ մօտի միշտ տալըայ<sup>4</sup> տալիս երկու կէօլեր<sup>5</sup>, արտաստորով լի աչքերս ա էն:

- 1 Ահաւալ. Որդիսութիւն:
- 2 Տեսնես. Այսինքն երևակայծ:
- 3 Կէռ, կէռ. Աղեղնաձև:
- 4 Տալըայ Գալ. Ալեկսանդր:
- 5 Կէլ, Լճակ. փոքրիկ խորտ թիւն տնեցող ջուր:

Թէ որ մտածես երկու պղտոր վաղող աղբիւրները, աչքիցս վաղող արիւերն<sup>1</sup> ա էն: բոլոր թանկան մարտա ա՛մ ինչի մտաւ:  
 Թէ որ տեսնես անանդանելի կրակով միշտ վառուած թոնիր, քո սուրբ սիրոյ կրակով վառուած սիրտս ա էն: թանկան ինչ որ  
 Թէ որ տեսնես այն կրակի կայծերով այրուող, խորովուող աղանձնի մի, սիրավառ հոգիս ա էն: թանկան ինչ որ  
 Թէ որ տեսնես նիհար և դեղնած կոյս մի, շատ մտածելուց ոտքի վերայ հիւանդացած, նազելիք ա էն: թանկան ինչ որ  
 Թէ որ տեսնես հինդ տարուան բանտարկուած տուտօաղ<sup>2</sup>, քո սիրոյ տուտօաղանում<sup>3</sup> ըխովուած<sup>4</sup> ջրագար Աննադ ա էն:  
 Եւ չեմ կարողանում գրել տալ, էլ չեմ կարողանում խօսիլ, էլ չեմ կարողանում լալ, իմ սիրուն Միբղայ ջանս . . . . :

Յետոյ օրիորդին նամակին լուսանցն կը տեսնէ, որ այս խօսքերն գրուած էին. «Այս նամակից առաջ չորս գիր էլ գրել տալով յուզարկիւած եմ Ձեզ, բայց և ոչ մինի պատասխանն չեմ ստացիլ»:

Աւաղեան իւր ծնողաց նամակն կը բանայ, որ գրեթէ նախորդ նամակին միտքն ունէր, և տարբերութիւնն միայն այս էր, որ յայտնապէս Միբղայի վերադարձն կը խնդրուէր: Իսկ իւր վարպետի նամակին մէջ շատ թախանձանօք գրուած էր առանց ժամայաճառ լինելու՝ անմիջապէս Ղարաբաղ դառնալ և ըստ գլուղային սովորութեանց աչնան վերջին աւուրց մէջ պսակուիլ, որոյ ամեն պատրաստութիւնքն արդէն տեսնուած է երկու կողմանէ, կը գրէր իւր վարպետն:

Միբղայ նամակներն կը ծալէ և խորին մտածմանց մէջ կը ծփայ. այս պատճառաւ իւր փեսային կ'ատէ.

— Միրական փեսաս, փոքր ինչ ներէք ինձ, շուտով կը վերադառնամ:

1 Արի. Առուակ:  
 2 Տուտօաղ. Բանտարկեալ:  
 3 Տուտօաղ խօսակց. Բանտ:  
 4 Ըխովուած. Ըղթայակաց:

Աւաղեան մօտաւոր պարտեղ մի կը փութայ առանձինն խորհիլ և հայրենիք վերադառնալու կամ չ'վերադառնալու որոշումն կանխաւ հասուն խորհրդով պատրաստել: Այս որոշումն Միբղայի համար շատ դժուարին, շատ ծանր և շատ կնճռոտ կ'երևի. ուրովհետև Միբղայ ամեն բանի և խնդրոյ վերայ լաւ խորհող և սկսելիք դործերն նորը մտածութեամբ չափող, կշռող և խոհեմութեամբ նոցա հետևութիւնքն միմանց հետ բաղդատող մարդոց կարդէն էր: Միբղայ բառական ժամանակ խորհելէն և ամեն բան կշռելէն զինի կ'որոշէ Ղարաբաղ վերադառնալ. ուստի և իւր փեսային մօտ վերադառնալով իւր որոշումն կը յայտնէ և հետեւեալ օրն իւր սիրելի ընկերին, նորա աշակերտաց, Գրիգոր Աղային բոլոր ընտանեաց և այլ ծանօթ եղբարց հրաժարական ողջջոյն տալով և Բաղարիկեանէն իւր բաժին գումարն առնելով կ'ուղևորի ՚ի հայրենիք, ում մինչև Երասխ գետն կ'ողղկցին շատ Իկաիրիք և այնպէս կը բաժանին, կարծես թէ իւրեանց շատ մերձաւոր ազգականներէն:

Ութ օրէն յետոյ Միբղայ Շուշի քաղաքն իւր վարպետի տան մէջ կը գտնուէր:

ԳՂՈՒՆ ԱԲ.

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԻՔ

Պայտարական և իւր ընտանիքն մեծ ու բախտ թեամբ և ջերմ սիրով կ'ընդունին ՂԱ աղեանն: Երեկոյան հացէն յետոյ երկու ծրար կը բերեն, որոց միոյն մէջ Միբղայի հարսանեաց հագուստներն գարսուած էր, իսկ միւսին մէջ՝ Աննայինն, զորս ամեն կարգուալ Միբղային կը ներկայացրենն զուարթօային պիտօք:

Այս հագուստներն էին Աննային համար.

Կարմիր մախուր<sup>1</sup> միթանէ<sup>2</sup>, մետաքսեայ ալ շարդած, մետաքսէ կարմիր ու կանաչ գործուած դօտի, կանաչ տարայի արխալուղ, մով շապիկ, կանաչ սաղրի կօշիկներ և ճակատին շարունակէք ոսկիքն :

Իսկ Միրզային համար .

Պոխարայ<sup>3</sup> դղակ, ֆեօպաչի չուխայ<sup>4</sup> շանավիզ արխալուղ, ծիրանի դօտի, մաքուր հտորէ սպիտակ շապիկ, ուղտէբուրբ շալվար, սև սաղրի (ղաւակ) կօշիկներ և վաթսուս մանէթ փող իբրև յուզին կտրելէք<sup>5</sup> դրամ խնամուն տալու համար :

— Միրզայ, ազնիւ դաւակս, — կը կոչէ պայտարապետն . — այս բոլոր զգեստներն և ոսկիներն քո վերջին յուզարկած գումարի մի մասովն պատրաստուած են, որոյ մի փոքր մասն քո ծնողաց տալով, իսկ մեծ մասն վարձու տալով շահեցընել տուած եմ ապագայիդ համար :

— Ի բոլոր սրտէ շնորհակալ եմ ՚ի ձէնջ, երկրորդ ծնողք իմ, որ ամեն բան հեռատես խորհրդով կարգաւ և կանոնիւ պատրաստած էք կանխաւ ներկայիս և ապագայիս համար : Յետոյ իւր բերած գումարն ևս վարպետին կը յանձնէ զրեթէ տրամադին ամօթխածութեամբ . որպէս թէ իւր անտան, համբաւոյն և հինգ սարուան շրջանին նկատմամբ չնչին գումար մի լինէր իւր բերած գումարն : Բայց ուստայ Գրիգոր զուարթօրէն կ'ընդունի զրամներն և կը դովէ իւր աշակերտի հոռամեայ վաստակն և շահն, և երկա-

1 Մախուր . Ղարիֆէ :

2 Միթանէ . Բալը հաֆուսարէյ վերայէն կը հաֆնին, որոյ եղերէն կապիտոն յապաւենով, և ինէրն արքաբէտայ կոճակներով զարդարուած կը լինին :

3 Պոխարայ Կապալէն բերուած հորթի կարուած գրակ :

4 Տաղարանայ ֆեօպաչի Կապալէն բերած շալի շախայ, որոյ ինէրն երկար են և կախուած :

5 Յուզի . կը կուտէ ձեռացոյն կողմէն հարմարացուի ծնողաց օրուած այն գումարն, որով ըստ Ղարաբագոս նախնի սովորաբնեան, հարուստ օրակէ բաժնէն կը պարտաստին :

մեայ հիւանդութեանց դէմ արիաբար ՚ի դործ զրած համբերութիւնն և քաջութիւնն : Աւագեան բաւականին կըսփոփուի իւր վարպետի մխիթարական խօսքերէն և նախապատրաստութենէն . ապա իւր խուրջէն հանելով բերած նուէրներն, յորոց մին իւր վարպետին կը նուիրէ, իսկ միւսն նորա ամուսնոյն, որք կ'ընդունին մեծ սիրով :

Հետեւեալ օրն բոլոր պայտար արուեստագորք պայտարապետի տունն փութալով՝ Միրզայի գալուստն կը շնորհաւորեն մեծ համակրական ցոյցերով, որովք Միրզայ խիստ երջանիկ էր, և համարեալ թէ իւր հայրենի երկիրն ոտք կոխելէն յետոյ՝ առաջին անգամն էր, որ կատարեալ առողջութիւն, կատարեալ մխիթարութիւն և ուրախութիւն կը զգար :

Պայտարապետն և իւր ընտանիքն շուտով զՄիրզայ զիւղն փութացընելու կը ջանան նորա ծնողաց և ազգականաց կարօտակէզ փութաբքն լցուցանելու համար : Միրզայ Շուշիէն Խնածախ իջաւ, իւր ծնողքն և ազգականքն և բարեկամքն տեսնելով՝ պատկուելու պատրաստուեցաւ : Բայց սոյն միջոցին իւրեանց երկու եղինք գողացան և ինքն Միրզայ ստիպուեցաւ դաւառապետին դիմել, զողերն բռնելու և եղներն վերագարձընելու համար նորա ազգու միջամտութիւնն ինդրել . վասն զի զրեթէ գողերն յայտնի էին . բայց առանց դաւառապետի միջամտութեան անհնարին էր ձեռք ձգել : Գաւառապետք, եթէ կամինս կարող են ամեն գողեր իսկոյն ձերբակալել և գողութիւններն անմիջապէս իսպառ վերջացընել . բայց եթէ չ'կամին, ամբողջ զիւրականք անգամ եթէ միանալով ոտք երնեն, անհնարին է : Վասն զի գողք շատ անգամ գաւառապետաց զխտութեամբ և խորհրդով կը շարժին :

անգոր

ԳԼՈՒԽ ԼԹ.

ՄԻՐԶԱՅԻ ՊԸՏԵԼՆԵՐ ԳԺԲԵՎԳԻՌԻԹԻՒՆՆ

Ղարաբաղու մէջ գրեթէ առ հասարակ լաւ զէնք գործ ածել գիտեն. և ով որ այս արուեստն լաւ տեսալ չէ, կամ ուսանելու երանդ չունի, ամեն կողմանէ մեղադրանք և անարգանք կը լսէ: Այս սովորութիւնն համարեալ թէ ՚ի նախնեաց անտի մինչև ցայսօր կը շարունակուի, թէպէտ վերջին ժամանակներս մոռցուելու վերայ է:

Մերոյ շատ լաւ զէնք կը պահպանէր և բնաբն գործածութիւն գիտէր: Աւագեան մի նժոյգի վերայ նստած, Բաղչասարայ հրաշքանն թիկանց վերայ կախած, Զիլֆիխար թուրն, փղոսկրեայ կոթակ որ երկայրին ձախ աղղեր վերայ կախած, Խորթ արծաթապատ զոյգ ստորձանակներն թամբին աջ ու ձախ կողմերն ձգած, արծաթեայ սաւառ արած աստեղանիշ վառօղանունն և զնդակամանն կուրծքէն խոչաձև ձգած և Մուղպի զգական ծուռ գրած իւր երկու ընկերաց հետ արշաւասոյր կը վարէ իւր ահիպարանոց նժոյգն դաւառապետին երթալու:

Այն ինչ սոյն երեք անձինք Ռիզուն-տէրէ կոչուած ձորն կը հասնեն, որ ամայի ձոր մի է և Թստնաղիսի փոստային մօտ, և ահա վեց զինեալ Պարսիկ աւազակներ կը շրջապատեն:

Ամենէն առաջ Միրզայ իւր հրացանն պարանոցէն թեթևակի հանելով և կայծահասն վերի սպին քաշելով՝ աւազակաց միջէն ամենէն յանդուզն զողին կ'ուղղէ ասելով.

— Եթէ առանց ձայն հանելու ձեր ճանապարհն չ'շարունակէք, մի ակնթարթի մէջ ամենու գլխակն գետնի վերայ փոռած պէտք է տեսնէք: Միրզայի ընկերքն, որ աղղաւ Հայ էին, անմիջապէս Միրզայի օրինակին կը հետեին: Աւազակապետն ևս կատաղի յանդուզն թեամբ Աւագեանի հրացանն կ'ուղղէ և ահարկու ձայնիւ յոտից ցլլուխ մերկանալ կը սպառնայ առանց ձիդ մը հանելու:

ուժ կը հետեին միւս զողք: Միրզայի ընկերքն թէև քաղաքապետին քաջասիրտ սպասաւորներէն էին, բայց որովհետև նոյն աւազակներն կը ճանաչէին, որք շատ արիւն թափած էին, մանստանդաւազակապետն, որոյ համար մարդ մի սպանելն գրեթէ մի ճընձղուկ սպանելու չափ արժէք ունէր. ուստի հայերէն լեզուաւ, զոր չէին հասկանար զողերն, կըսկսին յորդորել զԱւագեան, որպէս զի եթէ հնար է, առանց դիմադարձութիւն անելոյ, կերպիւ իւրիւր ազատին այն բարբարոսաց ձեռքէն: Սակայն Աւագեան իւր դրութեան մէջ անխախտ կը մնայ, ոչ աւազակաց սպառնալիքներէն կ'երկնչի, և ոչ իւր ընկերաց թախանձանաց և յորդորանաց կը զիջանի. այլ իւր նժոյգին մի մտրակ զարկելով՝ աւազակաց շուրջն հինգ անգամ սրտոյս կ'անի արշաւասոյր և հինգ հրացան և տասն արծանակ յօդս կը կրակէ: Եւ վերջին շրջանի մէջ դարձեալ հրացանն և ստորձանակներն լցնելով կը դայ և սուսջին ձեռով իւր սեղն կը կանգնի և վերստին իւր խօսքն աւազակապետին ուղղելով՝ յորդորանօք կ'սսէ.

— Կարձեալ կը հրամայեմ ձեզ, որ եթէ սարկի կ'ուղղէք տակալին, ձեր ճանապարհն շարունակեցէք: Երկէն իմացաք, որ ես մարդոյ արիւն թափել չ'կամեցայ և բնաւ թափելու կամք չունիմ. ապա թէ ոչ, իմ տասն և հինգ զնդակաւս կարող էի ձեզ նման տասն և հինգ աւազակապետ սպանել:

Աւազակապետն Միրզայի այս քաջութիւնն տեսնելով, անշուշտ կըզգայ Աւագեանի անկեղծ ճշմարտախօսութիւնն, և աներկիվտ կը համոզուի, որ Միրզայ կարող էր իւր ասած խօսքերն գործովք կատարել, կըզգայ, որ Միրզայ ինտից, մինչդեռ ինքեանք շատ անգամ այսպիսի պարագայից մէջ շարաշար և անխնայ ՚ի գործ անցած են իւրեանց կատաղութիւնն. հրացանն դարձեալ իւր պարանոցէն կը կախէ, իւր մարդոց յետ քաշուիլ կը հրամայէ և իւր վերջին խօսքն Աւագեանի ուղղելով կ'սսէ.

— Ես մնանիմ, սոյ նորահաս տղամարդ, ո՞ր սեղաջի ես ւստի կը գաս և ո՞ր կ'երթաս. գիտեմ աղղաւ Հայ ես, բայց նունդ ինչ է. ինձ թաղես, ճշմարիտն ասա. շատ կը փափանամ քո անունն իմանալ. քանի տարի կայ, որ ես աւազակա-

պետ եմ, բայց շատ քիչ անդամ պատահած եմ քեզ նման քաջի :

— Ո՛չ իմ անունս քեզ իմանալ պէտք է և ո՛չ ուր տեղացի լինելու . — կը պատասխանէ Միրզայ վեհանաճարբար և կը յարէ . — Չոր օրինակ ես ձեզ խնայեցի, դուք ևս այսուհետև խնայեցէք ձեզ նման մարդոց և բնաւ արիւն չ'ըծափէք :

Աւազակքն այլ ևս չըփոխելով՝ իրեանց ճանապարհն կը շարունակեն :

Իսկ Միրզայի ընկերքն նորա քաջարտութեան վերայ զարմանալով և մրանդամայն վերջին ծայր ուրախանալով՝ շնորհակալութիւն կը մատուցանեն Աւաղեանի, որ ոչ միայն զինքեանս կենդանի ազատած էր այն արիւնարբու դաղանայ ձեռքէն, այլ և վատութեան և վեհերօտութեան կեղտ անուն չէր թողած իւրեանց վերայ : Արկին ուրախ և զուարթ ճանապարհն շարունակելով Թաւուսից կը հասնեն Աւաղեան և իւր ընկերքն, որ այդիք ամեն աշնանային բերքերով, մանաւանդ անոյշ նուրերով ծանրաբեռնուած էին :

Մի այդպէս մօտէն անցանելու ժամանակ լաւ հասուն և մեծ մեծ նուրերու կը պատահին մեր ճանապարհորդք, որ և փոքր ինչ կանգ կ'առնուն : Միրզայ հրացանն իւր պարանոցէն կը հանէ և դձին ցանկապատին մօտ քշելով՝ ձիւն նուան ծառին կողմն կը ծռուի մի քանի հատ նուր քաշելու դիտարտութեամբ : Չին իւր տեղն կարծես թէ անշարժ կը բեկուտի : Աւաղեան հրացանն կ'երկարացընէ ձիւն քաշելու համար և մի քանի անգամ կը փորձէ, բայց չ'աջողիր . բայտ որում ձիւն կը մօտենայ և դարձեալ յետ կը փախչի : Ուստի կըստիպուի հրացանի կոթին ծուղ տեղովն իրեն քաշել զձիւն . սակայն դժբաղդաբար հրացանի ոտքն ուրիշ ձիւղի մի հանդիպելով՝ կայծահասն յանկարծ կ'իջնի և հրացանն որոտալով՝ դնդակն Միրզայի ձախ ազգեր վարի ծայրի, այսինքն փոքր փոքր վարի կողմն դպչելով մսին մէջ կը մնայ :

— Ի՞նչ եղաւ, ի՞նչ եղաւ, Միրզայ, ի՞նչ եղաւ . — ասելով ընկերքն աղաղակ կը բառնան վրդովուած սրտիւ :

— Ո՛չ ինչ, ո՛չ ինչ, բան չ'կայ, մի շփոթիք և մի վախնաք,

սիրելի ընկերակիցք իմ . — կը պատասխանէ Աւաղեան և անմիջապէս ձիւն վար իջնելով՝ թաշկինակաւ ամուր կը կապէ վերաբերանն և վերստին նժոյղն կ'աշտանակէ և ճանապարհն կը շարունակեն :

Համարեա՛ թէ Թաւուսիցի փոստան կը հասնին, և ահա Միրզայի ընկերքն կը տեսնեն, որ նորա ձախ ոտէն յորդ արիւն կը վազէր, իսկոյն վար կ'ընկնին և զՄիրզայ ևս թախանձանօք վար կ'իջուցանեն, բունի վէրքն կը բանան, արիւնն չ'արդիլուիր, Միրզայ թաշկինակին չոր կողմն ուղղելով նորէն աներկիւզ վերաբերանն կը խցէ և իւր ընկերաց դօսիներն խցեալ թաշկինակի վերայէն ամբասխնեղ կապելով, վերջապէս արիւնն կը դադրի հոսելէն :

Թաւուսիցի փոստայի ձիերով սայլակ (ֆուրգոն) լծել կը տան և այնպէս Խնածախ կը բերեն զՄիրզայ : Ծնողք, ազգականք, բարեկամք և դրացիք իսկոյն կը ժողովուին . վասն զի իսկոյն դիւղին մէջ լուր տարածուեցաւ, որ Միրզայ վտանգաւոր կերպիւ վերաւորուած է : Միրզայ ցաւոց անտանելի տաղանայներու մէջ է, բայց վեհանաճարբար իւր ցաւերն և վիշտերն կը ծածկէ զինքն շրջապատող անձանց սիրտքն չ'վհատեցընելու համար : Գիւղին մէջ բժիշկ չ'կայ . միայն սափրիչն կայ, որ իբրև բժիշկ ճանաչուած է, այս սափրիչն կը կոչուի, բայց նա իւր կարողութենէն վեր կը համարի գնդակն հասնին, միայն թէ մի քանի դիւղային բժշկական հնարքով արիւնն իսպառ կը դադրեցընէ, որ դարձեալ սկսած էր հօսիլ : Խանքեանտի Ռուսայ վերաբուժին ետեէն առաջարանօք մարդ յուզարկուեցաւ կոչելու, և խեղճ Միրզայ անոյս վիճակի մէջ է :

~\*~

ԳԼՈՒԽ ԵՍ.

ԳԱԳԱԼ Ն


Միրզայ Բկտիրէն Շուշի և Շուշիէն խնամախ վերադարձած ժամանակ միջոց չէր ունեցած Աննային հետ տեսութիւն անելու, թէև Աննայ ծածուկ տեղերէ երբեմն երբեմն տեսած էր ՂԱԳԱԼ զայ, իւր ազդակնաց և բարեկամաց այցելութիւն տուած ժամանակ, մանաւանդ երբ իւր զէնքերով և զարդերով զարդարուած, կատուած, նծոյղին վերայ նստած Գաւառապետին կ'երթար երկու ևսուտով իւր հետն առած: Երբ Միրզայի վերադարձելու լուրն տարածուեցաւ զիւրին մէջ, խեղճ Աննան կարծես թէ կաթմուածար եղաւ: Արդէն երկու օր կար, որ ողորմելի օրիորդն տխուր և օրտամաշ նախազգացումով չարաչար կը տաղնապէր, բայց սաստիկ ամօթխածութենէն և համեստութենէն և ոչ որի բնաւ չէր յայտնէր: Աննայ, որ հինգ տարի սիրով սպասած էր Միրզայի վերադարձին, Աննայ, որ քանի օր յառաջ հարսանեաց, պսակի և իւր սիրելի փեսային հետ 'ի միասին երջանիկ տարիներ վայելելու շողշողուն յոյսերով լի էր, այսօր Միրզայի վտանգատուր վիճակին վերայ խօսքեր լսելով շատ և շատ անդանդիստ էր. սիրտն կը թռթռար, հոգին կը խուփէր, միտքն կը ծփար, աչքերն կը սղտորէր, կարծաակէզ սէրն, սրտի մեծ վիշտն զինքն կը հաղէր կը մաշէր, իւր նշանածն զոնէ վերջին անգամ տեսնել և նորա հետ մի բերան խօսիլ կ'ուզէր, բայց անհնարին էր. զիւրի մէջ բնաւ սովորութիւն չ'կայ, որ նշանուած աղջիկն փեսայուի տունն երթայ, թէև փեսան մահամերձ վիճակի մէջ լինի: Աննայ օրիորդն արդէն զիսէր, որ Ռուսաց մեծ վերաբուժին ետեւէն մարդ յուզարկած են, բայց կը լսէր, որ վերաբոյժն եկած չէ, և այն սրտաճառաւ աւելի տաղնապաց մէջ էր: Միրզայի վիճակին աւելի վշտահար էր խեղճ Աննայի վիճակն, որոյ թշուառ մայրն մերթ Միրզայի մօտ կը վազէր, և մերթ վազելով

Աննայի մօտ կը վերադառնար, զնա տեսնելու և սփոփելու: Բայց Աննայ զգայուն էր, ամեն բան կը զգար, ամեն բան քննելով կ'իմանար. վասն զի աւելի իւր մօր զիմաց կը նայէր, քան թէ խօսքին, աւելի նորա աչաց հայուածքին կը հաւատար, քան թէ լեզուին: Նա կը զգար, որ Միրզայի վէրքն վտանգաւոր է և մահատու, նա կը զգար, որ մօր խօսքերն ոչ այլ ինչ են, եթէ ոչ սուտ սփոփանք, մտիթարութիւն և առ երեսս սնտոյի յոյս:

Միրզայ նոյն երեկոյ հոգին աւանդեց, բայց խեղճ Աննայ օրիորդին չ'իմացուցին: Ո՛հ, ողորմելի օրիորդն ամբողջ զիշերն չ'քնացաւ: Գլուխն բարձին կը դնէր, աչքերն կը փակէր թէ չէ՝ իսկոյն դարձեալ վեր կը թռչէր, զարհուրելի դող կը գար իւր վերայ, սև սև խորհուրդներ միտքն, սոսկալի սարսափ սիրտն, աղէտալի տաղնապ երեւկայութիւնն խստիւ պաշարած էին: Նոյն զիշերն իւր համար, կարծես թէ, մի դարի չափ երկայնութիւն ունեցաւ, ամեն մի ժամն՝ մի տարի, և ամեն մի վայրկեան՝ մի ամիս: Առաւօտեան տխուր արշալոյսն երբ բացուեցաւ, Աննայ իւրեանց հօրեղայր Պետրոսին տանիքն ելաւ, որ իւրեանց տան սրահին մակերևութին հաւասարութեամբն է, սիրտն տրոփելով ահանջ դրաւ, իւր շուրջն նայեցաւ բան մի իմանալու, բայց չ'իմացաւ: Թագուհի, օրիորդին մայրն մի քանի խօսքեր ասելով և զԱննայ իւր անհանգստութեան պատճառաւ յանդիմանելով՝ զնայ Աւագենց տունն:

Հաղիւ թէ մի քանի վայրկեանք անցած էին, և թհա զիւրի փոքրիկ զանգակի տխուր ձայնն լսուեցաւ. Աննայ թռթռակ սրտիւ Պետրոսի տան սրահին աւելի մօտեցաւ, սղտորած աչօք դէպ 'ի Միրզայեցի թաղն նայեցաւ, յանկարծ բազմութիւն մի տեսաւ և բազմութեան միջէն զազաղ մի, որ դէպ 'ի Եկեղեցին կը յառաջէր:

Ո՛հ, Միրզայի զազաղն էր այն:



ՅԱՆԿ ԳԼՈՒՑ



ԳԼՈՒԽ	ԵՐԵՍ
Ներածութիւն . . . . .	7
Ա. Խնածախ դիւղն . . . . .	13
Բ. Միրզայ և Աննայ առաջին անգամ զմիմեանս կը տեսնեն	16
Գ. Արկին հաստատութիւն նախընթաց ուխտագրութեան . . . . .	20
Դ. Գուղաններ . . . . .	24
Ե. Քաղհան . . . . .	31
Զ. Ուխտագնացութիւն . . . . .	37
Է. Խոտահարք . . . . .	41
Ը. Հունձ և կալ . . . . .	48
Թ. Աշուն . . . . .	58
Ժ. Միրզայի և Աննայի կրթութիւնքն . . . . .	60
ԺԱ. Չմեռն . . . . .	66
ԺԲ. Հարսանիք . . . . .	70
ԺԳ. Պսակ . . . . .	76
ԺԴ. Որսորդութիւն, որ և թաղաւորաւորս . . . . .	84
ԺԵ. Միրզայ և Աննայ Մեծ աղբիւրին վերայ . . . . .	86
ԺԶ. Երկու բամբասող կանայք . . . . .	88
ԺԷ. Ծաղկազարդ . . . . .	91
ԺԸ. Երկու եղբարք . . . . .	94
ԺԹ. Այր և կին . . . . .	96
Ի. Միրզայի և Աննայի վիճակն կը փոխուի . . . . .	99

ԳԼՈՒԽ	ԵՐԵՍ
ԻԱ. Փոխադարձ նուէր . . . . .	.100
ԻԲ. Նոր օրհնուած վարպետ . . . . .	.105
ԻԳ. Նամակներ . . . . .	.110
ԻԴ. Նշանաւորք . . . . .	.115
ԻԵ. Յատակադիծ . . . . .	.119
ԻԶ. Գաղանի այցելութիւն . . . . .	.121
ԻԷ. Թաղուհի, Միրզայ և Աննայ . . . . .	.124
ԻԸ. Անջատման ժամն դառն է . . . . .	.126
ԻԹ. Միրզայ Տիգրանի հետ կարավանին մէջ . . . . .	.128
Լ. Միրզայ և Մասիս . . . . .	.133
ԼԱ. Միրզայ Բաղտիեանց մօտ Իկտիրի մէջ . . . . .	.139
ԼԲ. Սպասեալ նամակներ . . . . .	.141
ԼԳ. Պատասխան . . . . .	.146
ԼԴ. Բռն բարեկենդան . . . . .	.149
ԼԵ. Հիւանդութիւն և գիւղային բժշկութիւն . . . . .	.158
ԼԶ. Վարդավառ . . . . .	.161
ԼԷ. Սրտաճմլիկ նամակ մի . . . . .	.166
ԼԸ. Բարեկամական այցելութիւնք . . . . .	.169
ԼԹ. Միրզայի ճատահաս ղ ժբաղդութիւնն . . . . .	.172
Խ. Դազարն . . . . .	.176

« Ազգային գրադարան »



NL0255016

